

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2007

ՀՏԴ 809.198.1 (07)

ՊՄԴ 81.23 y 7

Ա 791

**Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի գիտական խորհուրդը**

**ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Խմբագիր՝

ՍԵՐԳԵՅ ԳՎԼՍՏՅԱՆ

Գրախոսներ՝

**Ռուբեն Սաքապետոյան
Կարո Առաքելյան**

Ավետիսյան Յու.

Ա 791

Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն. – Եր., Երևանի համալս. հրատ., 2007 թ. – 288 էջ:

Զեռնարկը ներկայացնում է արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական պատկերը. ընդգրկում է արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից: Նախատեսված է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողության, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և, առհասարակ, բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արևմտահայերենով:

Ա 4602020100 2007 թ.
0003(01)–2007

ՊՄԴ 81.23 y 7

ISBN 978–5–8084–0859–3

© Յու. Ավետիսյան, 2007 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Չ եռնարկն ամփոփում է գրական արևմտահայերենի քերականությունը, որն ընդգրկված է բուհերի բանասիրական ֆակուլտետների արևմտահայերենի դասընթացի ծրագրերում:

Այն ներկայացնում է հայոց լեզվի գրական երկու տարբերակների զուգադրական պատկերը՝ արևմտահայերենի ձևաբանության և շարահյուսության հիմնական առանձնահատկությունները՝ արևելահայերենի համեմատությամբ:

Քերականական մի շարք իրողություններ, բնականաբար, տրվում են համադրությամբ՝ և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն տարբերակներով՝ ավելի տեսանելի դարձնելու համար երկու գրականներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Արևմտահայերենին բնորոշ լեզվական իրողությունները ներկայացնելիս կարևորություն ենք տվել բնագրային օրինակներին, որոնք քաղված են արևմտահայ գեղարվեստական գրականությունից, սփյուռքահայ պարբերական մամուլից և արևմտահայերենի քերականության դասագրքերից. դրանք առավել համոզիչ և ընկալելի են դարձնում ներկայացվող լեզվական իրողությունները:

Ձեռնարկը՝ իբրև այդպիսին, այսինքն՝ իբրև հայոց լեզվի երկու տարբերակների զուգադրական-նկարագրական քննություն, առաջին փորձերից է:

Հնարավոր բացթողումների ու վրիպումների վերաբերյալ սիրով կընդունենք դիտողություններն ու առաջարկությունները:

ՆԵՐԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Գրավոր հայերենն անցել է զարգացման երեք հիմնական շրջափուլ՝ գրաբար (5–11 դդ.), միջին հայերեն կամ կիլիկյան հայերեն (12–16 դդ.), աշխարհաբար կամ նոր հայերեն (17–ից մինչև մեր օրերը):

Լեզվաբանական աշխատություններում ընդունված է նոր հայերենի ժամանակագրությունը սկսել 17–րդ դարից: Նույն ժամանակաշրջանն էլ սովորաբար համարվում է **միասնական հայերենի** շրջան և միաժամանակ աշխարհաբարի երկու տարբերակների տարանջատման սկիզբ: Իսկ 18–րդ դարը նշվում է որպես երկփեղկման դարաշրջան (տե՛ս **23, 112–145**):

Միասնական հայերեն ասելով՝ երբեմն նկատի են ունենում այնպիսի հայերենը, որտեղ իբր հավասարակշռում են արևմտահայ և արևելահայ լեզվատարրերը: Դիտարկումները ցույց են տալիս, որ ո՛չ նախորդ շրջանի, ո՛չ էլ 17–18–րդ դարերի որևէ հեղինակի ստեղծագործություններում աշխարհաբարը ա՛յդ չափով և ա՛յդ իմաստով միասնական չէ: 17–րդ դարի և՛ բանավոր հաղորդակցման ընդհանուր հայերենը (միջբարբառային խոսակցականը, որն անվանվեց նաև «միջնաշխարհի լեզու»), և՛ գրավոր մատենագրության մի շարք աղբյուրների լեզուն միասնական են այնքանով, որքանով դրանցում առավել կամ պակաս չափով գործառու են և՛ արևմտահայերենի, և՛ արևելահայերենի տարրերը:

Երկու գրականների ձևավորման ու զարգացման փուլերն ընդհանուր առմամբ համընկնում են, միայն այն տարբերությամբ, որ արևմտահայերենը մշակվեց և՛ գրական լեզու դարձավ փոքր–ինչ ավելի վաղ, քան արևելահայերենը:

18-րդ դարում արևմտահայերենը, ինչպես և արևելահայերենը, երկրորդական գրավոր լեզու էր: Առաջնությունը պատկանում էր գրաբարին, թեև հրատարակվում էին նաև աշխարհաբար կամ աշխարհաբարին մոտ լեզվով գրքեր: **Յովհաննես Կոլոտի** պատրիարքության տարիներին միայն (1715–1741) Պոլսում և հայկական այլ գաղթօջախներում հրատարակվել է 90 անուն գիրք: Դրանց մի մասը նոր հայերենով է, ինչպես **Մխիթար Սեբաստացու** «Գիրք քրիստոնեական վարդապետութեան», Վենետիկ, 1727, 1731, 1771 թթ., Պոլսի հրատարակություններից՝ «Գիրք դարութեան եւ տաղարան վայելուչ եւ գեղեցիկ», 1723, **Յակոբ Նալեանի** «Գիրք կոչեցեալ Քրիստոնեական...», 1737 Նն: «Եվ ընդհանրապես ամբողջ 18-րդ դարում տպագրվել է երկու տասնյակից ավելի աշխարհաբար գիրք (մի քանիսը սոսկ աշխարհաբար հատվածներ ունեցող), դրանցից միայն երեքը արևելյան գրական լեզուն են ներկայացնում, մյուսները կա՛մ լիովին արևմտահայերեն են, կա՛մ ունեն արևմտահայ խոսքի գերակշռություն» (23, 126):

Նոր հայերենով շարադրված այդ գործերի լեզուն հարուստ է գրաբարի ու բարբառների լեզվատարրերով: Ահա մի հատված Պաղտասար Դպիրի աշխարհաբարի քերականության («Գիրք քերականութեան», Կ. Պոլիս, 1760) առաջաբանից. «Ասկից առաջ ողորմութեամբն. >Աստուծոյ< մեր տկար խելքին կեօրէ քերականութիւն մի շարադրեցինք բացկեկ շարադրութենով որ փէք դօլայ կու հասկըցվի. անճախ ինչ դատար բաց շարադրութիւն լինինէ, կէնէ չիւնքի գրոց շարադրութիւն է, փոքր տղայքն կամ այլք՝ որ տահա գրոց լեզուն չեն գիտեր դիժարկեկ կու հասկընան: Անոր համար թէքրար զայս փոքրիկ քերականութիւնս ալ նոր շարադրեցինք **աշխարհի բառիւ**, որ գրոց բան հասկընալու սէր ունեցող փոքրիկ տիրացուներն՝ կամ թէ՛ ով ոք և իցէ՛ ասով մտնեն ՚ի մեծ քերականութիւն...» (31, 2):

19-րդ դարի սկզբներից ընդլայնվում են արևմտահայ գրական աշխարհաբարի գործածության սահմանները: Արևմտահայերենը աստիճանաբար մուտք է գործում ժողովրդի կենցաղ, ծագում է դառնալ ընդհանուր գրավոր և բանավոր հաղորդակցման, նաև դպրոցի լեզու: Մասնովի լեզվում այն մրցության մեջ է մտնում գրաբարի հետ: Օրվա խնդիր է դառնում աշխարհաբարը «հասարակաց լեզու» ճանաչելը: Գրապայ-

քարում ձևավորվում է երկու ուղղություն, ինչպես արևելահայ հատվածում էր առաջադիմական (Ն. Զորայան, Ն. Ռուսինյան, Գ. Զիլինկիրյան, Դ. Սվաճյան, Ա. Այտընյան, Մ. Մամուրյան) և հետադիմական (Գր. Օտյան, Գ. Այվազովսկի): Երկրորդները առաջարկում էին ընդհանուր խոսակցական լեզու ճանաչել աշխարհաբարը, իսկ գրաբարը՝ մատենագրության լեզու և հատուկ խավի հաղորդակցման միջոց: Առաջինները անվերապահորեն պաշտպանում էին աշխարհաբարի իրավունքը: 1853-ին հրատարակվեց Նահապետ Ռուսինյանի «Ուղղախոսութիւն» (խոսքը քերականության մասին է) գիրքը, որն արդեն ձևավորվող արևմտահայերենը կանոնարկելու առաջին փորձերից էր:

50-60-ականներին «զարթոնքի սերնդի» ջանքերով աշխարհաբարը իր իրավունքներն է հաստատում մամուլի լեզվում, ձգտում է հիմնավորվել նաև գեղարվեստական գրականության մեջ: Իրենց գործերի մի մասը աշխարհաբարով են գրում Ղևոնդ Ալիշանը, Մկրտիչ Պեշկաբաշյանը: Լեզվական առաջընթացի ապացույց էր Արսեն Այտընյանի քերականությունը «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1868), որը արևմտահայ աշխարհաբարի գիտական քննության առաջին լուրջ փորձն էր:

Արևմտահայերենը վերջնականապես կանոնարկվեց և գրական լեզու դարձավ 19-ի վերջին և 20-ի սկզբներին մի խումբ տաղանդավոր գրողների ջանքերով՝ Ա. Արփիարյան, Լ. Բաշալյան, Երվ. Օտյան, Գ. Զոհրապ, Ա. Զոպանյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Ինտրա, Վ. Թեքեյան, Ռ. Սևակ և ուրիշներ: Համեմատելու համար արևմտահայ աշխարհաբարի՝ վերը բերված մոուլի հետ՝ ստորև ներկայացնում ենք մի փոքրիկ հատված 1895-ին Կ. Պոլսում հրատարակված «Ծաղիկ» հանդեսի ծրագիր-հայտարարությունից, որ կարելի է համարել կանոնարկված գրական արևմտահայերենի օրինակ. «Ծաղիկի խմբագրութիւնը խորապէս համոզուած է թէ ցեղի մը հոգեկան դաստիարակութիւնը իր գրականութեամբը միայն կը կատարուի, պայմանով որ այդ գրականութիւնը մտածման ու գեղեցկին սնուցանող ու մեծցնող տարրերն ունենայ: Պիտի ջանայ իր աշխատակիցներուն տաղանդաւոր գործակցութեան շնորհիւ զարգացման ճամբան ընդարձակել մեր արդի գրականութեան, զոր Հայրենիք քանի մը տարիէ ի վեր ծաղկեցուց եւ սիրցուց ժողովուրդին:

Ծաղիկը ճշմարիտ հանդեսի մը հանգամանքները պիտի ունենայ... Անիկա սահմանուած է մանաւանդ ընդարձակ ու աշխատուած գրականութեան» (25):

Ինչո՞ւ առաջացաւ արևմտահայ և արևելահայ երկփեղկումը, որո՞նք են այն գործոնները, որ պայմանավորեցին աշխարհաբարի բաժանումը երկու հատվածների:

Հայաստանի պատմաաշխարհագրական տրոհումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387 թ.) պատճառ հանդիսացաւ, որ մեր երկրի երկու հատվածները՝ արևմտյան և արևելյան, զգալիորեն առանձնանան տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքով: Այդ բաժանումը տևեց հարյուրամյակներ:

Հրաչյա Աճառյանը մեր լեզվի երկփեղկվածության պատմաքաղաքական հիմնական պատճառներից մեկը համարում է Բագրատունյաց հարստության վերացումը XI դարում. «ԺԱ դարի կեսին (1046 թ.) Բագրատունյաց թագավորության կործանումով,— գրում է նա,— ջնջվեց հայ պետականությունը մեր երկրից: Այնուհետև ընդհանուր հայության միարար կապը եթե կար, վերացաւ և գաղթականության պատճառով էլ լեզվական անջատականությունը ծայրագույն աստիճանի հասաւ: Այն բոլոր լեզվական միությունները, ընդհանուր միօրինակությունները՝ որ նկատում ենք այսօր հայերենի զանազան բարբառներում, թե՛ երկրի ներսում և թե՛ մանավանդ դրսում, չէին կարող գաղթականությունից հետո առաջացած լինել՝ միարար կապի բացակայության պատճառով» (9, 435):

Նախորդ դարերի պատմաքաղաքական իրադարձությունների արդյունքում հայության երկու հատվածների միջև աշխարհագրական ու քաղաքական որոշակի երկփեղկվածություն արդեն կար: Այն ավելի խորացաւ Բագրատունյաց թագավորության կործանումով:

Պատմաաշխարհագրական տարանջատվածությանը հաջորդում է բուն լեզվական—մշակութային առանձնացումը:

Պատմական—մշակութային այդպիսի միջավայրում որոշակիորեն մեծանում է **գերիշխող լեզվի դերը**: Արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղաւ թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսերից սկսած,

Ֆրանսերենի ազդեցությունը: Դա նկատվում է ինչպես բառապաշարի, այնպես էլ առանձին քերականական ձևերի կազմության մեջ, որոնց մասին կխոսվի: Արևելահայերենի վրա մեծ է եղել ռուսերենի ազդեցությունը՝ սկսած 19-րդ դարի կեսերից: Դա նկատելի է բառապաշարի մեջ և շարահյուսական առանձին կառույցներում:

Այսպիսով՝ արևմտահայ և արևելահայ գրական լեզուները ծնավորվեցին ու զարգացան երկու տարբեր մշակույթների և տարբեր լեզուների ազդեցության ներքո, թեև այդ ազդեցությունը երկու դեպքում էլ մեծ չի եղել:

Անդրադառնալով աշխարհաբարի ծնավորման ընթացքին՝ Հրաչյա Աճառյանը պաշտպանում է շրջանառվող այն տեսակետը, ըստ որի՝ 19-րդ դարի 50–60–ական թվականներին արևելահայ գրական գործիչների, հիմնականում Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանողության ջանքերով մշակվող արևելահայերենը չշարունակեց արդեն ծնավորված աշխարհաբարի ավանդույթը և զգալի չափով հեռացավ արևմտահայերենից: «Այն ժամանակ (նկատի ունի 19-րդ դարի 50–ականներին նախորդող ժամանակաշրջանը — Յու. Ա.) մեր երկու հատվածների միջև չկար այնպիսի անջրպետ, ինչպիսին առաջացավ շատ ավելի ուշ, — գրում է Հր. Աճառյանը: — ... Արևելահայ գրական գործիչները կարող էին ընդունել արևմտահայ գրական լեզուն, որ արդեն պատրաստ էր, և փոքր աշխատանքով հարմարեցնել արևելահայ ժողովուրդի լեզվական պահանջներին: Բայց այդպես չեղավ: Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երևանի բարբառն է, և որի հեղինակն է համարվում Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանողությունը: Այստեղ ամեն կողմից հավաքված հայ աշակերտները սովորական գործածության մեջ հետզհետե կոկում են իրենց լեզուն, մասնավորը տեղի է տալիս ընդհանուրին, և կամաց կամաց այդ կոկված մաքուր լեզուն դառնում է խոսակցական ընդհանուր լեզու նույն դպրոցի սաների մեջ» (9, 497):

Դժվար է համաձայնել այս տեսակետին: Նախ՝ անհամոզիչ է թվում այն պնդումը, թե նշված ժամանակաշրջանում արևմտահայ գրական լեզուն «արդեն պատրաստ էր», և մնում էր ընդամենը այն հարմարեցնել արևելահայ հատվածի պահանջներին: Այդ շրջանում գրական արևմտահայերենը տակավին մշակման գործընթացի մեջ էր և գրական լեզվի որակ ձեռք բերեց շատ ավելի ուշ՝ 19-րդ դարի վերջին և 20-ի սկզբնե-

րին: Բացի այդ, ինչպես նշվել է ն' արևմտահայ, ն' արևելահայ գրական գործիչների ու լեզվաբանների կողմից, գրական լեզուների առաջացումը լեզվի պատմական զարգացման հետևանք է, և արևելահայ ու արևմտահայ տարբերակների առաջացման գործում մտավորական այս կամ այն սերնդին պատասխանատվության մեծ բաժին հատկացնելը գիտական չէ (տե՛ս 38, 6):

Աշխարհաբարի տրոհումը երկու հատվածների ուներ նաև պատճառներ, որոնք զուտ լեզվական բնույթի են և պայմանականորեն կարող են կոչվել **լեզվական գործոններ**:

1. Հայոց լեզվի տարբերակներից յուրաքանչյուրը **յուրովի է կապվում մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին**: Արևմտահայերենը հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով սերտ առնչություններ ունի միջին հայերենի հետ, մինչդեռ արևելահայերենը նույն հատկանիշներով ավելի մոտ է գրաբարին:

Միջին հայերեն—արևմտահայերեն ընդհանրությունները բավական շատ են: Պատահական չէ, որ արևմտահայ աշխարհաբարի գիտական քննության առաջին հեղինակը՝ Արսեն Այտընյանը, աշխարհաբարի «կամ արդի հայերեն լեզվի» ձևավորման սկիզբը հասցնում է վաղ միջնադար՝ 13—14—րդ դարեր՝ իր խոսքերով՝ **ռամկական հայերենի** շրջան: Իսկ առանձին լեզվաբաններ արևմտահայ աշխարհաբարի ժամանակագրությունը սկսում են 12—13—րդ դարերից (տե՛ս 29, 51—91):

2. Երկրորդ գործոնը սերտորեն առնչվում է առաջինի հետ: **Տարբեր են երկու գրականների բարբառային հիմքերը**: Արևելահայերենը հիմնվում է հայերենի ամենատարածված բարբառներից մեկի՝ **Արարատյան (Երևանյան)** կամ ում ճյուղի, իսկ արևմտահայերենը՝ **Պոլսի** կամ կը ճյուղի բարբառի հիմքի վրա:

Այս դեպքում ուշադրության է արժանի մի կարևոր խնդիր. ինչո՞ւ հենց Պոլսի բարբառը դարձավ գրական արևմտահայերենի հիմքը:

Նախ և առաջ դա պայմանավորված էր Պոլսի՝ քաղաքական և մշակութային խոշոր կենտրոն դառնալու հանգամանքով: Դեռ 15—րդ դարում Պոլիսը հայկական մեծ գաղթօջախ էր: Մինչև թուրքերի մուտքը հայերն այստեղ ունեին դպրոց, եկեղեցի և եպիսկոպոս: Բյուզանդիա-

յի անկումից հետո 1453 թ., Ֆաթիհ Սուլթան Մեհմեդի վարած հատուկ քաղաքականությամբ Պոլիսը, որ վերանվանվեց Ստամբուլ, շատ արագ վերածվեց հայ արհեստավորների գաղթօջախի: Ակսեցին ծնավորվել հայոց ազնվականության հատուկ դասեր՝ **մահտեսիներ, չելեպիներ, խոջաներ** են: 17–18–րդ դարերում արդեն Պոլիսը հայերի համար դառնում է մշակութային–հասարակական կենտրոն: 19–րդ դարի սկզբներին պոլսահայերի թիվը հասնում է 250 հազարի: Դրանք տարբեր գավառներից գաղթած հայեր էին, որոնց հաղորդակցման համար աստիճանաբար ծնավորվում է մի ընդհանուր խոսակցական լեզու՝ պոլսահայերենը: Գավառների ժողովուրդը, շարունակ Պոլիս պանդխտելով, սովորում էր Պոլսի բարբառը: Այդ լեզվի կրողները, հեռանալով Պոլսից, իրենց հետ տանում էին արդեն բավականաչափ մշակված մի լեզու՝ **միջնաշխարհի հայերենը** (Պոլսի խոսակցական լեզուն): «Պոլսի բարբառը պիտի հաղթանակեր առանց որևէ պատճառաբանության, լոկ տեղի և հանգամանքների բերմամբ: ...Պոլսի բարբառի դիրքը՝ իբրև հիմք գրական լեզվի քերականության՝ վճռված էր» (Յր. Աճառյան):

Երկրորդ հանգամանքը կապվում է պոլսահայ բարբառի բուն լեզվական յուրահատկությունների հետ:

1. Պոլսահայ բարբառը արևմտահայ մյուս բարբառների համեմատությամբ **ավելի վաղ է դարձել գրավոր լեզու**, արևմտահայ քերականների արտահայտությամբ՝ «կանուխ է արթընցեր»: Ավելի շուտ դրվելով գործածության մեջ՝ բարբառը ժամանակի ընթացքում հղկվում, մշակվում և ավելի է մոտենում գրական լեզվի չափանիշներին: Ինչպես արդեն նշվեց, միայն 18–րդ դարում արևմտահայ աշխարհաբարով և նրան մոտ լեզվով, որ է նաև պոլսահայ խոսակցական լեզուն, հրատարակվել են մի քանի տասնյակ գրքեր¹:

¹ Դրանցից են Պաղտասար Դպիր, «Բարեւագիրք», Կ. Պոլիս, 1752, Նույն հեղինակի՝ «Օրինակ բարեւագրաց նորապէս շարադրեցեալ», Կ. Պոլիս, 1786, Յակոբ Նալեան, «Գիրք կոչեցեալ զեն հոգեւոր», Կ. Պոլիս, 1757, Պոլսի իրատարակություններից «Տետրակ, որ կոչի ակնոց աչաց սրտի», Կ. Պոլիս, 1780, Տրիեստի Մխիթարյանների կազմած «Քրիստոնեական վարդապետութիւն համառօտ», Տրիեստ, 1776, Խաչատուր Սիրմէլեան, «Համառօտ թուրքանութիւն աշխարհաբառ», Վենետիկ, 1788, Ղ. Ինժիճյան, «Տետրութիւն յամառօտ ինն եւ նոր աշխարհագրութեան», Վենետիկ, 1791 են:

2. Իր բնույթով պոլսահայ բարբառը ավելի մոտ է հին գրական հայերենի ոգուն ու կանոնին: Այն չի կրում հնչյունական մեծ փոփոխություններ, ինչպես Վանի, Ագուլիսի, Ղարաբաղի բարբառները: Վերջիններում, օրինակ, ընդունված **խաց, հոց, ծիւր, մօթ** և նման ձևերի դիմաց պոլսահայերենը ունի **հաց, չուր, մարթ** ձևերը: — Պոլսի խոսակցական հայերենը, — նշում է Աճառյանը, նույնիսկ որոշ իմաստով («չատ կետերում») ավելի «մաքուր» է Երևանի բարբառից. Արարատյան անախորժ ա–ի դիմաց պոլսահայերենը ունի եմ օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի է ձևը, որ և հատուկ է հին և միջին գրական հայերեններին, ինչպես՝ **աղուոր է, ասանկ է**: Պահպանում է երկբարբառների՝ գրաբարին և գրական աշխարհաբարին մոտ արտասանական ձևերը. Արարատյան բարբառում ունենք **քիր, լիս, արին, հաղալ, էթալ, պտի, հէր, մէր** ևն, Պոլսի բարբառում՝ **քուր, լուս, արուն, խաղալ, էրթալ, պիտի, հար, մար** ևն (տե՛ս 9, 475):

Ընդհանրապես պետք է նկատել, որ արևմտահայ գրականը ավելի հարազատ մնաց իր բարբառային հիմքին. գրականն ու խոսակցականը անհամեմատ մոտ են իրար: Գրական լեզվում պահպանվեցին պոլսահայ բարբառային–խոսակցականում առկա բազմաթիվ բառեր (**ասիկա, ատիկա, անիկա, ակռա, աղէկ, աղուոր, խածնել, լմննալ, խպնիլ, կռնակ, հոս, հող**), քերականական կազմություններ (**գրեր է, իմ գիրքս, մերինները, տուներնիս, տղաք, մարդեր**) ևն:

Նույնը չենք կարող ասել արևելահայերենի մասին: Գրական արևելահայերենի ձևավորման ու մշակման առաջին իսկ քայլերից «Հյուսիսափայլը» դավանեց բարբառներից խստագույնս սահմանազատվելու խնդիրը. «Մեր նորախոս լեզուն, — գրում է Ստեփանոս Նազարյանցը, — է՛ն ոչ մի քաղաքի մասնավոր կամ առանձին բարբառ, այլ, մոտավորապես, այն մաքուր և հստակ հայախոսությունը, որ լսվում է ազգի մեջ հարյուրավոր և հազարավոր լավ խոսողների բերանից՝ ուր և գտնվեին նոքա» (28, 5–6): Այդ մասին է վկայում հենց միայն այն փաստը, որ արևելահայ գրեթե բոլոր բարբառներում գործող **ա** օժանդակ բառը չանցավ գրական լեզու, կամ **էս–, էդ–, էն–**ը և դրանցով բաղադրված բառերը՝ **էստեղ, էնքան, էսպես, էդպիսի**, մնացին որպես գրական արևելահայերենի համակարգից դուրս իրողություններ: Նույ-

միսկ Հովհաննես Թումանյանի փորձերը՝ իրար մոտեցնելու արևելահայ գրական և խոսակցական լեզուները (տե՛ս 24, 234–275), մնացին անարդյունք:

Հայերենի երկու հատվածներում էլ խոսակցական լեզուն՝ որպես միջբարբառային հաղորդակցման միջոց, ձևավորվեց հայրենիքում, այդ թվում նաև գավառներում, սակայն հայոց գրական լեզուն՝ իբրև գրավոր և բանավոր հաղորդակցման միջոց, կազմավորվեց հայրենիքից դուրս: Արևելահայ խոսակցականը ձևավորվեց բուն Հայաստանում, բայց իբրև գրական լեզու մշակվեց Մոսկվայում, Աստրախանում, Թիֆլիսում, իսկ արևմտահայերենը Մուշի, Ալաշկերտի, Արաբկիրի, Խարբերդի գավառներում և Պոլսում ձևավորվելուց հետո մշակվեց ու գրականացավ նաև Պոլսում, ապա՝ Վենետիկում, Վիեննայում, ավելի ուշ՝ Սփյուռքի գաղթօջախներում: Սա է նաև պատճառներից մեկը, որ մեր գրական լեզվում առանձնացվում են լեզվաճակատային տարբեր ուղղություններ՝ **տարաշխարհիկ** և **բնաշխարհիկ**: Դա ավելի տեսանելի է արևելահայ հատվածում: Բնաշխարհիկ ուղղությունը ընդհանուր գծերով արտահայտվում է Աբովյան – Պոռշյան – Սունդուկյան – Աղայան – Թումանյան շարքով, տարաշխարհիկը՝ Նազարյան – Նալբանդյան – Շահազիզ – Նար–Դոս – Տերյան և ուրիշներ: Այս տրամաբանությամբ՝ արևմտահայերենի բնաշխարհիկ ուղղությանը պետք է դասել Գարեգին Սրվանձտյանց – Թլկատինցի – Արտաշես Հարությունյան – Ռուբեն Զարդարյան – Մնժուրի խումբը, իսկ տարաշխարհիկ ուղղության՝ Ղևոնդ Ալիշան – Մկրտիչ Պեշկեթաշյան – Սիամանթո – Դանիել Վարուժան – Երվանդ Օտյան – Վահան Թեքեյան և ուրիշներ:

Այս բաժանումը խիստ պայմանական է և չունի գիտական հիմք, եթե, իհարկե, **բնաշխարհիկ** և **տարաշխարհիկ** հասկացությունների հիմքում դրվում է գրողի բնակության տեղի խնդիրը: Թումանյանը, Աղայանը, Իսահակյանը տարիներ շարունակ ապրել, գրական դաստիարակություն են ստացել ու ստեղծագործել գաղթօջախներում: Սիամանթոն տարաշխարհիկ գրող չէ, թեև նա ստեղծագործել է Երկրից դուրս: Պետրոս Դուրյանը հայրենիքում ընդհանրապես չի ապրել:

Բնակության վայրը այստեղ էական դեր չի կատարում: Էականը ազգային ոգու և բնաշխարհիկ լեզվամտածողության առկայությունն է գրողի ստեղծագործություններում:

ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ

ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՐՉԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Արևելահայերենը և արևմտահայերենը մեկ ազգային լեզվի երկու դրսևորումներ են, մեկ միասնական լեզվի տարբերակներ կամ ճյուղեր: Դրանցից որևէ մեկը մյուսի նկատմամբ գերազանցություն չունի, չկա բարբառ – գրական լեզու հակադրությունը: Երկուսին էլ հատուկ են գրական լեզվի հատկանիշները. երկուսն էլ բավարար չափով մշակված են, կանոնարկված և ծառայում են հայոց լեզվով խոսող հանրության գրավոր և բանավոր հաղորդակցմանը: Այլ խնդիր է, որ այսօր գրական **արևելահայերենը** համեմատաբար մշակված է և բառապաշարով ավելի հարուստ: Պետական լեզու է և հասկանալի պատճառներով ունի զարգացման ավելի մեծ հնարավորություններ: Առավել մշակված են նրա գործառական տարբերակները, մասնավորապես՝ պաշտոնական և գիտական ոճերը:

Արևմտահայերենը սփյուռքի հայության ընդհանուր հաղորդակցման լեզուն է՝ բացառությամբ իրանահայերի: Ջարգանում է սփյուռքահայ մտավորականության, բարեգործական–մշակութային միությունների և սփյուռքահայ գործիչների ու գիտնականների ջանքերով, ինչպես նաև Հայաստանում այդ ուղղությամբ իրականացվող հատուկ քաղաքականության շնորհիվ: Դպրոցի, մամուլի, գեղարվեստական գրականության լեզու է: Գիտական և պաշտոնական ոճերում քիչ է մշակված, կանոնավորման ինչ–ինչ հատկանիշներով զիջում է արևելահայերենին, հարուստ է զուգածություններով: Արևմտահայերենը չունի պետական հովանավորություն: «Ներկայիս՝ արևմտահայերենը լուրջ այլ դժուար խնդիրներ ունի, իր գոյութեան ու զարգացումի ճամբուն վրայ: Ատոնցմե մեծագույններն են՝ շրջապատող լեզուներուն, ի մասնաւորին Անգլերէնի գօրաւոր ազդեցութիւնը, միասնական «հսկիչ» կեդրոնի մը բացակայութիւնը (որուն հետեւանքով յաճախ դժուար կ'ըլլայ, չըսելու համար անկարելի, լեզուի մաքրութեան պահպանումին հետեւիլը), Ղազիկեաններու, Օշականներու, Թէքէեաններու, Շահնուրներու, Վահէ Վահեաններու... ըսել է թէ՛ ճիշդ ու տիպար արեւմտահայերէնի գիտակներու չափազանց մեծ պակասը...» (33, 6):

Արևմտահայերենով ստեղծված է հարուստ մշակույթ, գեղարվեստական և գիտական գրականություն, որ, ինչպես ասում են, կարող է արդա-

րացնել մեկ առանձին ազգի գոյությունն ու պատմությունը: Դուրյանի, Պարոնյանի, Մեծարենցի, Վարուժանի, Շահնուրի գրական ժառանգությունը ապացույց է այդ լեզվի հարստության ու մշակվածության:

Այսպիսով՝ արևմտահայերենը և արևելահայերենը մեկ ընդհանուր լեզվի երկու դրսևորումներ են և միայն պայմանականորեն են անվանվում լեզուներ: Դրանք ունեն մաս պայմանական այլ անվանումներ՝ հայոց լեզվի երկու տարբերակներ (հատվածներ), երկու գրականներ (կամ արևմտահայ և արևելահայ գրականներ), ռուսահայերեն և թուրքահայերեն (տաճկահայերեն), արևելահայերեն և արևմտահայերեն են: Տարբերակումների հիմքում, ինչպես նկատվել է, հիմնականում դրվում է աշխարհագրական գործոնը, սակավ դեպքերում՝ լեզվականը, և դա բնական է ու հասկանալի՝ վերը նշված պատճառներով: Առավել ընդունելի է վերջին անվանումը՝ **արևմտահայերեն և արևելահայերեն**, որով նկատի են առնվում մեկ լեզվի երկու գրական տարբերակները:

Վերջին տարիներին հաճախ է խոսվում երկու գրականների մերձեցման մասին:

Այս հարցը մտահոգության առարկա է դարձել դեռ աշխարհաբարի ծնավորման շրջանում: 19-րդ դարի 60-ականներին, երբ քննարկվում էր խնդիրը, Ստ. Նազարյանցը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ ասվում էր, որ այս տարաբաժանումը պետք է ընդունել առանց ցավի՝ որպես իրողությունների պատմական զարգացման հետևանք: Եվ հետո, ըստ նրա՝ բոլորովին էլ վատ չէ մի ծաղկի փոխարեն երկու ծաղիկ ունենալը:

Հարցը նորից քննարկման առարկա դարձավ 19-րդ դարի 80-90-ականներին: «Էջմիածին» պարբերականի տեղում ծավալուն հոդվածով հանդես է գալիս Մ. Աբեղյանը: Հայտարարելով, որ անհմաստ է խոսել ծուլման մասին երիտասարդ արևելահայ լեզվաբանը մերձեցման ուղիները նշելիս զիջումներ է պահանջում հիմնականում արևմտահայերենից (տե՛ս 1): Դա առաջացնում է արևմտահայ մտավորականների բուռն դժգոհությունը:

20-րդ դարի չեմին հասկանալի պատճառներով առավել սրությամբ է դրվում հարցը: Արևմտահայ պարբերական մամուլում («Արևելք», «Մասիս», «Անահիտ», «Ազատամարտ» են) հանդես են գալիս ժամանակի և՛ արևելահայ, և՛ արևմտահայ ճանաչված մտավորականներ՝ Ա. Շիրվանզադե, Ա. Զո-

պանյան, Վրթ. Փափազյան, Դ. Վարուժան, Ռ. Ջարդարյան, Զ. Քյուֆեճյան (Զ. Օշական), Դ. Աղայան, Մ. Վարանդյան և ուրիշներ: Ընդհանուր կարծիքն այն էր, որ պետք է խոսել միայն հնարավոր մերժեցման մասին, իսկ միացումը պետք է տեղի ունենա քաղաքական փոփոխությունների արդյունքում:

Արևմտահայերենի և արևելահայերենի մերժեցման տեսանկյունից այսօր քննարկվում է նաև միասնական **ուղղագրության խնդիրը**: Իբրև թե մեր երկու գրականների և առհասարակ հայության երկու հատվածների մերժեցման հիմնական խոչընդոտը առկա ուղղագրական տարբերություններն են. առաջարկվում է «մեկ լեզու, մեկ ազգ» կարգախոսով դարձ կատարել դեպի գրաբարի կամ ավանդական ուղղագրությունը: Մինչդեռ արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բուն տարբերությունները միայն ուղղագրությամբ չեն պայմանավորված: Տարբերություններ առկա են լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական–արտասանական համակարգից մինչև ձևաբանություն և շարահյուսություն: Ուղղագրության խնդիրը եղած տարբերությունների ընդամենը մի հատվածն է: Բացի այդ, մերժեցման իրական հնարավորությունները ստեղծվում են տնտեսական ու հոգևոր–մշակութային շփումների արդյունքում: Իսկ երկու գրականների միացման համար հիմքեր կարող են ստեղծվել միայն բուն քաղաքական–պատմական խնդիրների լուծման դեպքում, ընդհանուր պետականության և միասնական լեզվական միջավայրի ձևավորման պայմաններում: Անհիմն են նաև այն պնդումները, թե երկու գրական տարբերակները փոխադարձաբար անհասկանալի են: Արևելահայերիս համար այսօր էլ որևէ դժվարություն չկա կարդալու և հասկանալու Վարուժան կամ Համաստեղ: Իսկ Սփյուռքի հայը լիարժեք հաղորդակցվում է արևելահայի հետ: Այլ հարց է, որ պետք է ընդլայնել շփումները, փոխադարձաբար օգտվել լեզվական հարստություններից, մասնավորապես բառապաշարից, իսկ մնացածը ժամանակի խնդիր է²:

² Գրական արևմտահայերենի ձևավորման մասին տես Արս. Այտընեան, Զննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, Գր. Աճառյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, II մաս, Երևան, 1951, Վ. Աճեմյան, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Երևան, 2002, Ռ. Սաքսապետյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004 ՆՈՒ:

ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃԱԿԱՆ ՄԱՍ

Հայտնի է, որ հայ բարբառների տարբերակման հիմքում դրվում է նաև ձևաբանական հատկանիշը՝ սահմանական ներկայի կազմությունը (Հր. Աճառյան): Սա ինքնին ենթադրում է, որ ձևաբանական տարբեր հատկանիշներ ունեցող բարբառների հիմքի վրա ճնաշխարհում մեր գրական լեզվի երկու տարբերակներում քերականական տարբերությունները առավելապես վերաբերում են ձևաբանության ոլորտին:

Բառն իբրև ձևաբանության ուսումնասիրության առարկա

Յուրաքանչյուր բառ ունի երկու կառուցիկ իմաստ՝ մասնավոր և ընդհանուր: Մասնավոր իմաստը միայն տվյալ բառին հատուկ բուն իմաստն է, որ նաև նրա բառարանային իմաստն է: Ընդհանուր իմաստը բնորոշ է ոչ թե մեկ բառի, այլ բառերի մի ամբողջ խմբի: Այդ իմաստը կոչվում է բառի քերականական իմաստ: Բառագիտությունն ուսումնասիրում է բառի բառական իմաստը, իսկ ձևաբանությունը՝ բառի քերականական կամ ընդհանուր իմաստը: Ամենաընդհանուր քերականական իմաստը **խոսքիմասային իմաստն է:**

Ձևաբանության մեջ քննվում են բառակազմական հարցեր, եթե դրանք ունեն, այսպես կոչված, քերականական բովանդակություն: Այսպես՝ բառի ձևային հատկանիշ է միավանկ կամ բազմավանկ լինելը, իսկ դա պայմանավորում է հոգնակի թվի կազմության յուրահատկություններ: Հետևաբար, բառի ձևային այդ հատկանիշը ևս պետք է քննարկման առարկա դառնա ձևաբանության մեջ:

Բառը խոսքի մեջ ենթարկվում է ձևային փոփոխությունների: Դրանք առաջացնում են ձևաբանական կամ բառական իմաստի փոփոխություններ կամ երկուսն էլ միաժամանակ: Հնարավոր են երեք կարգի փոփոխություններ՝ ա) փոխվում է բառական իմաստը, սակայն անփոփոխ է մնում քերականական իմաստը՝ **համակարգ – ենթահամակարգ, վարիչ – վարչութիւն** (գոյ.), **վարժ – անվարժ** (ած.), **արագ – արագօրէն** (մակբ.), բ) փոխվում է բառական իմաստը, փոխվում է նաև քերականական իմաստը՝ **գեղեցիկ – գեղեցկութիւն, հերոս – հերոսաբար, բարձր – բարձրանալ**, գ) փոխվում է քերականական իմաստը, չի փոխվում բառական իմաստը (սկզբում տրվում է արևելահայերեն տարբերակը. նշվում են նաև համընկնող ձևերը)՝ **ջուր>ջրի / ջուրի, ջրից / ջուրէն, ջրեր / ջուրեր, ջուրը / ջուրը**:

Քերականությունն ուսումնասիրում է ձևային այն փոփոխությունները, որոնք առաջացնում են քերականական իմաստի փոփոխություններ: **խօսք – խոսքի / խօսքի, խոսքից / խօսքէն, խոսքով / խօսքով, խոսքեր / խօսքեր**. այս ձևափոխություններում **խոսք** բառի բառական մասնավոր իմաստը չի փոխվել, փոխվել է բառի քերականական իմաստը՝ **խօսք – անորոշ առում, խօսքը – որոշյալ առում, խօսք – ուղղական հոլով, խօսքի – սեռ.–տրական հոլով, խոսքից – խոսքէն – բացառական հոլով** են:

Այս հարցում, ինչպես տեսնում ենք, որևէ տարբերություն չկա երկու գրականներում:

Քերականական իմաստ և քերականական ձև. դրանց փոխհարաբերությունը

Քերականական իմաստներն ունեն իրենց արտահայտության ձևերը, որոնք էլ կոչվում են քերականական ձևեր: Քերականական ձևերի կազմության ընդհանուր միջոցները երկու գրականներում նույնն են՝ **մասնիկավորում, օժանդակ կամ սպասարկու բառեր, բառի ներքին փոփոխություն, տարարմատություն, բացասական կամ զրո ձև**: Տարբերություններ կան քերականական որոշակի ձևերի կազմության մեջ: Առանձին դեպքերում էլ քերականական ձևերը երկու գրականներում չեն համընկնում իմաստային դաշտով:

1) **Մասնիկավորում** կամ **մասնիկների կցում**. երկու գրականներում էլ քերականական իմաստների արտահայտման միջոցներն են հոդերը, խոնարհման և հոլովման վերջավորությունները, հոգնակերտները, բայական եղանակիչները, ածականի գերադրական աստիճան կազմող մասնիկները, բայական քերականական ածանցները՝ կրավորական ու (վ) ածանցը, բազմապատկական ածանցները, բաղադրող քերականական ածանցներից *ն-ն* և *չ-ն*, *են*.

արևել. **գիրքը, գիրքս, գրքեր, գրեցի, խոսեցի, գրեք // գրեցեք, մարդիկ, կգրեմ** (ենթադր. եղանակ), **չգրեմ, գերծանր, լավագույն, ամենամեծ, նկարվել, ցատկոտել** են,

արևմտ. **գիրքը, գիրքս, գիրքեր, գրեցի, խօսեցայ, գրեցէ՛ք, մարդեր // մարդիկ, կ'ըսեմ** (սահմ. եղանակ), **չգրեմ, գերծանր, լաւագոյն, ամէնամեծ, նկարուիլ, ցատկոտիլ** են:

Քերականական մասնիկները լինում են մենիմաստ և բազմիմաստ: Այսպես՝ **պատասխան-ներ-է-դ** բառաձևում յուրաքանչյուր ընդգծված մասնիկ արտահայտում է մեկ իմաստ՝ **ներ-հոգն. թիվ, է-բաց. հոլով, դ-ստացական առում**: Մոտեցաւ բառաձևում ընդգծված և մասնիկն արտահայտում է միաժամանակ մի քանի քերականական իմաստներ՝ **եղանակի** (սահմ.), **դեմքի** (երրորդ դեմք), **թվի** (եզ. թիվ), **ժամանակի** (անց. ժամանակ): Լ-ն այստեղ բազմիմաստ քերականական մասնիկ է:

Քերականական բազմիմաստությունը և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում առավել բնորոշ է բայական համակարգին, իսկ մենիմաստությունը՝ գոյական խոսքի մասին:

2) **Օժանդակ** կամ **սպասարկու բառեր**, որոնք ձեռք են բերել քերականական մասնիկի արժեք. երկու գրականներում էլ դրանք են **եմ** օժանդակ բայը իր խոնարհված ձևերով, արգելական հրամայականի **մի՛**, արևել. հարկադրականի, իսկ արևմտ. սահմանականի **պիտի**, արևմտ. սահմանականի **կը** եղանակիչները, **մի / մը** անորոշ հոդը, ածականի համեմատության աստիճան կազմող **աւելի, առաւել, ամենից / ամէնէն** բառերը են.

արևել. **գրել եմ, մի՛ գիր, պիտի գրեք, մի մարդ, ավելի խոշոր, ամենից մեծ** են,

արևմտ.՝ գրեր եմ, մի՛ գրեր, պիտի գրեք, մարդ մը, աւելի խոշոր, ամենէն մեծ, կը գրեն նն:

Այս խմբում կարելի է դասել նաև կապերը:

Գործածելով հիմնականում նույն օժանդակ կամ սպասարկու բառերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը առանձին դեպքերում դրսևորում են դրանց քերականական նրբիմաստների հետաքրքիր տարբերություններ: Շատ բնորոշ է կը և պիտի մասնիկների օրինակը, որոնց մասին Արտեմ Սարգսյանը անում է հետևյալ ուշագրավ դիտարկումը. «Որպես երկու գրականների միջև առկա էական տարբերություն՝ պետք է նշել, որ արևելահայերենի կ(ը) և պիտի եղանակիչները (անունը արդեն մատնանշում է) ոչ թե ժամանակների, այլ եղանակների կազմության մեջ դեր ունեն. այնինչ արևմտահայերենում այդ մասնիկները հանդես են գալիս միայն սահմանականի խոնարհման հարացույցում և ժամանակային ձևեր են կազմում՝ կը—ն ներկայի և անկատարի, պիտի—ն ապառնի ժամանակի: (Ուրեմն, կ(ը) և պիտի մասնիկները արևելահայերենում եղանականիշ են, արևմտահայերենում՝ ժամանականիշ): Արևմտահայերենի սահմանական եղանակի ժամանակային ձևերի հարացույցում կը—ի խաղացած դերը մեծացնում է համադրականության ցուցիչը: Այսպիսով՝ նույն ձևական մասնիկները երկու գրականներում միանգամայն տարբեր գործառնություններով են բնութագրվում՝ եղանականիշ կամ ժամանականիշ: Եթե արևելահայերենում ժամանակային տարբերությունները դրսևորվում են վերջավորությունների միջոցով, ապա արևմտահայերենում այդ առումով զգալի դեր ունեն նախամասնիկները կը—ն և պիտի—ն» (34, 229–230):

3) Բառի ներքին փոփոխություն և հերթագայություն. առաջին դեպքում նկատի ունենք ներքին հոլովումը և այդ հոլովման ենթարկվող գոյականները, որոնք երկու գրականներում և՛ քերականական ձևով, և՛ իմաստով համընկնում են՝ հայր – հոր / հօր, մայր – մոր / մօր, եղբայր – եղբոր / եղբօր, երկրորդ դեպքում նկատի ունենք հոլովման ժամանակ արևելահայերենում արտաքին թեքման ի // ու, ք // ց, իսկ արևմտահայերենում միայն ք // ց հերթագայությունները՝ գինի – գինու // գինիի, Վարդանանք – Վարդանանց: Բայական համակարգում երկու տարբերակներում էլ ունենք դառնալ // դարձի՛ր:

4) **Տարարմատություն**. որոշ բայերի և դերանունների քերականական ձևերի կազմությունը՝

արևել. **գալ – եկ, ուտել – կեր, լինել – եղ, ես – իմ – ինձ, դու – քո – քեզ, մենք – մեր – մեզ** են,

արևմտ. **գալ – եկ, ուտել – կեր, ըլլալ – եղ, ես – իմ – ինձի – ինձ // գիս, դուն – քու – քեզի, մենք – մեր – մեզի – մեզ** են:

5) **Բացասական կամ զրո (զրոյական) ձև**. չունի առանձին ցուցիչ, վերջավորություն չի ստանում, ներքին փոփոխություն չի կրում, հաճնկնում է բառի ուղիղ ձևի հետ (քերականական իմաստի արտահայտություն՝ առանց նշված միջոցների): Իր կազմում կարող է ունենալ այս կամ այն քերականական ձևությոն, ինչպես՝ **կարդաց, սովորեց / սորվեց**, որոնցում **աց–ը** և **եց–ը** հիմքակազմիչ ձևությոններ են, որոնք առկա են նաև 1–ին և 2–րդ դեմքերի բայածներում՝ **կարդաց–ի, կարդաց–իր, սովորեց–ի / սորվեց–այ, սովորեց–իր / սորվեց–ար**:

Սա երկու գրականներում էլ քերականական բազմիմաստ ձև է, և դրա իմաստը արտահայտվում է քերականական այլ ձևերի հետ ունեցած հարաբերության կամ հակադրության մեջ, ինչպես՝ **օրենք–օրենքը**. առաջինը ունի քերականական զրո ձև, երկրորդը կազմված է մասնիկավորմամբ և արտահայտում է որոշյալ առման քերականական իմաստ. այս հարաբերության մեջ առաջինը արտահայտում է անորոշ առման իմաստ: Կամ ունենք **գիրք – գրքեր / գիրքեր**. այս հարաբերության մեջ առաջինը՝ բառի զրոյական քերականական ձևը, արտահայտում է եզակի թվի իմաստ: **Գիրք – գրքի** հարաբերության մեջ իր տրական զուգահեռի համեմատությամբ նույն զրո ձևը արտահայտում է ուղղական հոլովի իմաստ:

Քերականական ձևը և քերականական իմաստը գործուն փոխհարաբերության մեջ են: Այդ հարաբերությունը ունի դրսևորման մի քանի եղանակներ, որոնք երկու գրականներում սկզբունքորեն համընկնում են: Տարբերություններ կան արտահայտության որոշ ձևերում:

1. Քերականական մեկ ձևով կարող է արտահայտվել մեկ իմաստ.

արևել. **գիրքը** – որոշյալ առում, **քաղաքով** – գործ. հոլով, **քաղաքում** – ներգ. հոլով, **գրքեր** – հոգն. թիվ, **պիտի մեկնի** – հարկադրական եղանակ, **խոշորագույն** – ած. գերադրական աստիճան,

արևմտ. **գիրքը**—որոշյալ առում, **քաղաքով**—գործ. հոլով, **գիրքեր**—հոգն. թիվ, **պիտի մեկնի**—սահմանական եղանակ, **խոշորագույն**—ած. գերադրական աստիճան:

2. Նույն քերականական իմաստը կարող է արտահայտվել տարբեր ձևերի միջոցով: Դրանք կոչվում են **լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևեր**: Այդ ձևերը բնորոշ են և՛ արևելահայերենին, և արևմտահայերենին, սակայն ընդհանուր առմամբ ձևերի բազմազանությանը առավել աչքի է ընկնում արևմտահայերենը: Երկու գրականներում էլ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ են սեռական—տրականի՝ **ի, ու, ան, ոջ, վա / ուան** են, բացառականի՝ արևել.՝ **ից, ուց**, արևմտ.՝ **է, մէ, և** գործիականի՝ արևել.՝ **ով, բ, Կրևմտ.՝ ով, բ, մով** մասնկները:

Նույն բառը տվյալ քերականական իմաստն արտահայտելու համար ինչու գոավաններում էլ լայորոք է տարբեր ձևավորում ստանալ, ինչպես՝ արևել.՝ **օրի // օրվա, օրից // օրվանից, պարոններ // պարոնայք, արյունով // արյամբ, ձեզնից // ձեզանից, սյունի // սյան են,**

արևմտ.՝ **օրի // օրուան, օրէ // օրուընէ, պարոններ // պարոնայք, արիւնով // արեամբ, սիւնի // սեան են:**

Արևմտահայերենում զուգաձևերը ավելի հաճախ առկա են գոյական խոսքի մասի համակարգում՝ հոլովում, հոգնակի թվի կազմություն են: Օրինակ՝ այլ հոլովումների պատկանող գոյականների գերակշռող մասը արևմտահայերենում հոլովվում է նաև ի հոլովմամբ՝ **տուն – տան // տունի, նաւ – նաւու // նաւի, ծով – ծովու // հովի, շարժում – շարժման // շարժումի, անուն – անուան // անունի, գարուն – գարնան // գարունի, ձուկ – ձկան // ձուկի** են: Կամ՝ մի շարք գոյականներ արևմտահայերենում ունեն հոգնակի թվի զուգաձևեր՝ **մարդեր // մարդիկ, հարսներ // հարսեր, նուռեր // նռներ, կիներ // կանայք** են: Եվ հակառակը՝ արևմտահայերենի բայական համակարգը ավելի կուռ է և առանձնապես աչքի չի ընկնում զուգաձևություններով: Այսպես, եթե արևելահայերենում մի շարք անկանոն բայերի համար անցյալ կատարյալում ունենք անցյալի հիմքից կազմված զուգահեռ ձևեր՝ **բերի // բերեցի, դրի // դրեցի, տվի // տվեցի, զարկի // զարկեցի, թողի //**

թողեցի նն, կամ **ե** խոնարհման անցերածանց բայերի համար հրամայականում գործածում ենք ներկայի և անցյալի հիմքերից կազմված զուգահեռները՝ **գրեք // գրեցեք, խօսեք // խօսեցեք** նն, ապա արևմտահայերենում պատկերը փոքր-ինչ այլ է. այստեղ նշված ժամանակաձևերից յուրաքանչյուրի համար ունենք կանոնական մեկ ձև, ինչպես՝ **բերի, դրի, տուի, զարկի, թողուցի**, կամ՝ **գրել— գրե՛ք, խօսիլ — խօսե՛ք, կատարել— կատարե՛ք**: Սա, անշուշտ, չի նշանակում, որ արևմտահայերենի բայական համակարգը չունի զուգաձևեր: Դրանք կան ն՝ դերբայական կազմություններում, ն՝ խոնարհված ձևերում: Օրինակ՝ **ի** խոնարհման բայերի ժխտական դերբայը ունի երկու ձև՝ **ի** և **ե** լծորդ ձայնավորներով՝ **խօսիլ — խօսիր // խօսեր, երգուիլ — երգուիր // երգուեր**: Խոնարհման համակարգում զուգահեռ ձևեր ունեն **չ** սոսկածանց ունեցող բայերը՝ **կը փախիմ // կը փախչիմ, փախիմ // փախչիմ, մի՛ փախիր, մի՛ փախչիր, կը դպեի // կը դպչեի, դպեի // դպչեի, մի՛ դպիր, մի՛ դպչիր** նն: Կամ, օրինակ, **թողուլ** պակասավոր բայն ունի հոգնակի հրամայականի՝ ներկայի և անցյալի հիմքից կազմվող ձևեր (**թողե՛ք // թողուցե՛ք**) նն:

3. Քերականական նույն ձևով արտահայտվում են տարբեր քերականական իմաստներ: Այս երևույթը կոչվում է **քերականական համանունություն**: Առաջացման պատճառները երկու գրականներում էլ նույնն են. «Լեզվում քերականական համանուններն առաջանում են կամ այն բանի հետևանքով, որ տարբեր մասնիկները լեզվի պատմական զարգացման ընթացքում հնչյունափոխվելով նույն ձևն են ստանում, կամ այն պատճառով, որ նույն մասնիկը, պահպանելով իր նախնական իմաստը, ձեռք է բերում մի նոր, լրացուցիչ քերականական իմաստ» (17, 12–13):

Քերականական համանունության մի շարք դրսևորումներ արևելահայերենում և արևմտահայերենում համընկնում են, առանձին դեպքերում ի հայտ են գալիս յուրահատկություններ. քերականական համանուններից մի քանիսը տարբերվում են համանունային շարքի անդամների քանակով, մյուսները՝ համագիր կամ համահունչ լինելու հանգամանքով, այլ քերականական համանուններ բացակայում են մեկում կամ մյուսում: Այսպես՝ արևելահայերենում **ե** խոնարհման պարզ, կրա-

վորական և բազմապատկական բայերի անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված չեն և կազմում են համանուն ձևերի շարք. ել մասնիկը կազմում է անորոշ դերբայներ՝ **երգել, նկարել, խոսել, ասել, վազել** ևն, միաժամանակ կազմում է նաև վաղակատար դերբայներ՝ **երգել (են), նկարել (են), խոսել (են), ասել (են), վազել (են)** ևն: Մինչդեռ արևմտահայերենում քանի որ վաղակատար դերբայը կազմվում է ր մասնիկով, ուստի անորոշը և վաղակատարը չեն առաջացնում համանունային շարք, ինչպես՝ անորոշ դերբայ՝ **երգել, նկարել, խօսիլ, ըսել, վազել**, վաղակատար՝ **երգեր (են), նկարեր (են), խօսեր (են)** (փոխվում է լծորդ ձայնավորը՝ **ի-են**), **ըսեր (են), վազեր (են)**:

Արևելահայերենում և արևմտահայերենում քերականական լիակատար համանուններ են անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածները՝ **գրելու, կարդալու, մօտեցնելու, հարցնելու, խորհելու**, և ապառնի դերբայները՝ **գրելու, կարդալու, մօտեցնելու, հարցնելու, խորհելու**:

Համանունության՝ անկատար դերբայով և ներգոյական հոլովով տիպարը՝ **գործում / գործում, երգում / երգում** ևն, արևմտահայերենում բացակայում է, քանի որ արևմտահայերենը չունի ո՛չ ներգոյական հոլոված, ո՛չ էլ ում-ով անկատար դերբայ:

Արևելահայերենում քերականական համանուններ են մի շարք միավանկ գոյականների հոգնակները՝ **երգ – երգեր, գիր – գրեր, ջուր – ջրեր, սուր – սրեր, ջարդ – ջարդեր, վազ – վազեր, ներկ – ներկեր, վարձ – վարձեր** ևն, և նույն գոյական բայափոխքով բաղադրված բայերի ըղծական անցյալի ապառնիի եզակի երրորդ դեմքը՝ **երգել – երգեր, գրել – գրեր, ջրել – ջրեր, սրել – սրեր, ջարդ – ջարդեր, վազել – վազեր, ներկել – ներկեր, վարձել – վարձեր** ևն: Մինչդեռ արևմտահայերենում քերականական նույն կազմությունները մասնակի համանուններ են. այն գոյականները, որոնք հոգնակին կազմում են անհնչյունափոխ հիմքով, ինչպես՝ **ջուր – ջուրեր, սուր – սուրեր, գիր – գիրեր**, բնականաբար չեն կարող կազմել համանունային զույգեր:

Բացի այդ, հոգնակիի նշված կազմությունները արևմտահայերենի ըղծական անցյալի ապառնիի հետ կազմում են քերականական համա-

հունչ և ոչ թե համագիր համանուններ, քանի որ ունեն գրության տարբերություն. արևմտահայերենում ըղծական անցյալի ապառնիի ձևերը գրվում են է–ով **երգեր, ջրեր, ջարդեր, վազեր, ներկեր, վարձեր**: Բայց դրա փոխարեն արևմտահայերենում նշված գոյականների հոգնակի թիվը՝ **երգ – երգեր, ջարդ – ջարդեր, կար – կարեր, ներկ – ներկեր, վարձ–վարձեր**, համանուն է համապատասխան բայահիմքով բայերի վաղակատար՝ **երգել – երգեր (են), կարել – կարեր (են), ներկել – ներկեր (են), վարձել – վարձեր (են)**, ինչպես նաև ժխտական դերբայների հետ՝ **(չեն) երգեր, (չեն) ջարդեր, (չեն) կարեր, (չեն) ներկեր, (չեն) վարձեր**:

Արևելահայերենում ժխտական դերբայը քերականական համանունություն է կազմում ե խոնարհման բայերի դեպքում ըղծական ապառնիի եզակի երրորդ դեմքի հետ **երգել – երգի / երգի, իսկ ա խոնարհման բայերի դեպքում բացի ըղծական ապառնիից՝ խաղալ – խաղա / (չեն) խաղա, նաև հրամայական եղանակի եզակի թվի բայածների հետ՝ խաղալ – խաղա / խաղա, այսինքն՝ արևելահայերենում ունենք եռանդամ համանունություն **խաղալ – խաղա (ըղծ.) / խաղա (ժխտ.) / խաղա՛ (հրմ.)**: Արևմտահայերենում ժխտական դերբայը ունի ր վերջնամասնիկը՝ **խաղար, կարդար**, ուստի նշված ձևերի հետ համանունային շարքի անդամ չի կարող դիտվել: Բացի այդ, մյուս երկուսը՝ **խաղա (ըղծ.) / խաղա՛ (հրմ.)**, արևմտահայերենում ունեն գրության տարբերություն. հրամայական ժամանակածնը գրվում է առանց յ–ի՝ **խաղա՛, գնա՛, կարդա՛, մնա՛**, իսկ ըղծականը՝ յ–ով՝ **խաղայ, գնայ, կարդայ, մնայ**: Դրանք արևմտահայերենում կարող են համարվել համահունչ համանուններ:**

Արևմտահայերենում քերականական համանուններ են նաև ե խոնարհման աններածանց բայերի ըղծական ապառնիի եզակի երրորդ դեմքը և նույն բայերի եզակի հրամայականը՝ **գրե (ըղծ.) և գրե՛ (հրմ.)**, ձայնավորով սկսվող բայերի անկատար ներկայի ժխտական եզակի երրորդ դեմքը և ըղծական անցյալի ապառնիի եզակի երրորդ դեմքը՝ **չ'ուզեր (ներկա չի ուզում) և չուզէր (ըղծ. չուզեր) նն**:

Ծանոթություն: Ինչ վերաբերում է **գնալ** բային, ապա արևելահայերենում գործող համանունությունը՝ **գնա (ըղծ.) / գնա՛ (հրմ.)**, արևմտահայերենում բացա-

կայում է, քանի որ **գնալ** բայի ըղծականի ձևերը արևմտահայերենը բաղադրում է **երթալ** տարբերակով՝ **երթամ, երթաս, երթայ**: Կան նաև այլ տարբերություններ, որոնց մասին կխոսվի համապատասխան իրողությունները քննարկելիս:

Այս տարբերությունների պատճառները ժամանակի ընթացքում գրաբարի, բարբառների կամ միջին հայերենի ազդեցությամբ ձևավորված քերականական տարբեր իրողություններն են, մասամբ էլ՝ ուղղագրական տարբերությունները: Այսպես՝ **եա>ե** հնչյունափոխության հետևանքով գրաբարյան անցյալ դերբայի **եալ** ձևը՝ **գրեալ, երգեալ, ծաղկեալ**, վերածվում է **ել–ի**՝ նույնանալով անորոշի ձևին՝ **գրել, երգել, ծաղկել**: Մեկ այլ հնչյունափոխությամբ՝ **լ>ր**, միջին հայերենում առաջանում է վաղակատարի **եր** վերջավորությունը: «Միջին հայերենում վաղակատար դերբայը գտնում ենք ն՝ –ել, և՝ –եր վերջավորություններով: –ել վերջավորությունն, անկասկած, առաջացել է գրաբարի անցյալ դերբայի –եալ վերջավորությունից **եա>ե** հնչյունափոխությամբ, ինչ որ գտնում ենք **գրեաց – գրեց, ցորեան – ցորեն**, ապա և բարբառային՝ **լեարդ – լերդ, սարեակ – սարեկ** և բազմաթիվ այլ բառերում: Մեկ անգամ որ առաջացել էր –ել դերբայական մասնիկը, **լ>ր** ձայնորդների հնչյունափոխությամբ (մի բան, որ հայերենին հատուկ է) առաջացել է նաև վաղակատարի –եր վերջավորությունը» (7, 307–308): Եվ այսպես՝ վաղակատարի **ել–ով** ձևը արևելահայերենում համանուն է կազմում անորոշի հետ, իսկ **եր–ով** ձևը, միջին հայերենից փոխանցվելով, համանուն է դառնում արևմտահայերենի ժխտական դերբայի հետ: Ուղղագրությամբ պայմանավորված տարբերությունների մասին արդեն խոսվել է՝ **երգեր – երգեր, կարդա – կարդայ** ևն:

Քերականական կարգ

Քերականական արտահայտության ձև ունեցող քերականական իմաստները կոչվում են քերականական կարգեր: Յուրաքանչյուր քերականական կարգ ունի երկու հատկանիշ՝ քերականական ձև և քերականական իմաստ: Քերականական կարգի առկայության համար պահանջվում է հակադրվող կամ տարբերվող իմաստների և ձևերի գոյություն: Եթե չկան քերականական իմաստի արտահայտման համապատասխան

քերականական ձևեր, ապա քերականական կարգի գոյության մասին չենք կարող խոսել: Այսպես՝ հայոց լեզվի երկու տարբերակներում էլ բայն ունի սեռի քերականական կարգ, քանի որ առկա է ն՝ իմաստային եռաստիճան հակադրություն (1. գործողությունն անցնում է առարկային՝ ներգ. սեռ, 2. գործողությունն անցնում է ենթակային՝ կրավ. սեռ, 3. գործողությունը չի անցնում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին՝ չեզոք սեռ), ն՝ առկա են համապատասխան քերականական ձևեր (կրավորական սեռն ունի ու (վ) ածանց, ներգործականը՝ չունի, բայց կարող է ստանալ ու (վ) ածանց՝ դառնալով կրավորական):

Հայերենի երկու տարբերակներում էլ գոյականը ունի **թվի քերականական կարգ**. առկա է մեկի ու մեկից ավելի իմաստային հակադրություն, և դրանցից յուրաքանչյուրն էլ ունի իր արտահայտման համապատասխան ձևերը. եզակին կազմվում է գրո ձևով, հոգնակին՝ վերջավորություններով: Բայց ն՝ արևմտահայերենը, ն՝ արևելահայերենը չունեն գոյականի սեռի քերականական կարգ, ինչպես, օրինակ, ռուսերենում է, քանի որ գոյականների այդ իմաստի արտահայտման համար չունեն քերականական ձևեր: Գոյականների առանձին շարքերի իմաստային համակարգում առկա տեսակասեռային տարբերությունները երկու գրականներում էլ արտահայտվում են բառական և ոչ քերականական միջոցներով, ինչպես՝ հայր – մայր, եղբայր – քույր, ուսուցիչ – ուսուցչուհի, արու – էգ, տղամարդ – կին, զարմիկ – զարմուհի, զամբիկ – մտրուկ, հաւ – աքաղաղ ևն:

Արևմտահայերենը և արևելահայերենը իրենց քերականական կարգերով համընկնում են: Տարբերություններ կան առանձին քերականական կարգերի արտահայտության (քերականական ձևի) կամ բովանդակության (քերականական իմաստի) կամ միաժամանակ և՛ քերականական ձևի, և՛ քերականական իմաստի որոշակի դրսևորումներում: Դրանց մասին կխոսվի համապատասխան քերականական կարգերը դիտարկելիս:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Խոսքի մասերի որոշման հիմունքները

Խոսքի մասերը բառերի այնպիսի խմբեր են, որոնք ունեն իմաստային, ձևային և գործադրական ընդհանրություններ:

Տեսական գրականության մեջ հայոց լեզվի երկու տարբերակների համար ընդհանուր առմամբ սահմանվում են խոսքի մասերի դասակարգման նույն սկզբունքները կամ հիմունքները:

1. **Շարահյուսական հիմունք.** ըստ այս հիմունքի՝ բառերը խոսքի մասերի դասակարգելիս պետք է հաշվի առնել դրանց շարահյուսական դերը, նախադասության մեջ ստանձնած շարահյուսական պաշտոնը. ենթակայի դեր են կատարում գոյականները, ստորոգյալի դեր՝ դիմավոր բայերը, պարագաներ են դառնում մակբայները ևն: Այս սկզբունքը պաշտպանում են առավելապես քերականության ավանդական կամ դասական դպրոցի ներկայացուցիչները: Խոսքը դիտվում է որպես նախադասություն, իսկ խոսքի մասը՝ նախադասության անդամ:

Այդ սկզբունքը ունի թերություն. նույնացվում են խոսքի մասը և դրա շարահյուսական պաշտոնը: Մինչդեռ խոսքում այդպիսի պարտադիր համապատասխանություն գոյություն չունի. նախադասության մեջ ենթակա կարող է դառնալ ո՛չ միայն գոյականը, կամ պարագայական կիրառություն կարող են ունենալ նաև գոյականը, դերանունների և ածականների մի մասը, որոշչի պաշտոն են կատարում ո՛չ միայն ածականները: Բացի այդ, այս սկզբունքով չի ճշգրտվում այն բառերի խոսքիմասային պատկանելությունը, որոնք չեն դառնում նախադասության անդամ, ինչպես, օրինակ՝ կապը, շաղկապը, ծայնարկությունը:

2. Ձևաբանական հիմունք. ըստ այսմ՝ խոսքի մասերը դասակարգվում են իրենց ձևաբանական հատկանիշներով. եթե բառը խոնարհվում է, ուրեմն բայ է, եթե հոլովվում է, ուրեմն գոյական է, համեմատության աստիճան է կազմում՝ ածական է ևն: Այս սկզբունքը նույնպես ունի թերություններ. ինչպես՝ առաջնորդվել այն բառախմբերի հարցում, որոնք չունեն այդպիսի ընդհանուր տարբերակիչ հատկանիշ (ինչպես՝ մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ծայնարկություն), բայց սկզբունքորեն տարբեր են իրենց մյուս իմաստային-քերականական հատկանիշներով:

3. Բառակազմական հիմունք. այս դեպքում հաշվի է առնվում բառի կազմությունը: Հայերենի համար դա ընդունելի չէ, քանի որ հայերենում խոսքիմասային բառախմբերը, բացի բայից, կազմության տարբերակվող յուրահատկություններ չունեն: Այլ կերպ ասած՝ բառի կազմությամբ բոլոր դեպքերում չենք կարող որոշել դրա խոսքիմասային պատկանելությունը: Կազմության յուրահատկություն ունի միայն բայը (սկզբնաձևում ունի ել, ալ (արևմտ.՝ նաև իլ) ածանց-վերջավորություններ՝ գրել, կարդալ, խօսիլ, մտածել, մօտեցնել): Սա, անշուշտ, չի նշանակում, թե հայերենում բառակազմական յուրահատկություններ ունեցող խոսքի մասեր չկան: Ունենք, օրինակ, ածանցներ, որոնք կերտում են միայն այս կամ այն խոսքի մասը, և դա բնորոշ է երկու զրականներին էլ, ինչպես՝ գոյականակերտ ածանցներ՝ **–ութիւն՝** ուրախութիւն, **–ունք՝** բարձունք, **–մունք՝** հարցմունք, **–ուհի՝** ուսուցչուհի, կամ՝ մակբայակերտ ածանցներ՝ **–բար՝** հերոսաբար, **–պէս՝** անմիջապէս, **–օրէն՝** մտերմօրէն, **–ովին՝** ազգովին, թվականակերտ ածանցներ՝ **–երորդ՝** հինգերորդ, **–րորդ՝** երրորդ ևն: Բայց ունենք ածանցներ, որոնք հանդիպում են տարբեր խոսքի մասերի կազմության մեջ, ինչպես՝ **–իչ՝** դիւթիչ (ած.), բրիչ (գոյ.), **–ական՝** հերոսական (ած.), հոգեւորական (գոյ.), **–ենի՝** վագրենի, թթենի (գոյ.), **–հայրենի** (ած.), **–անի՝** առածանի (գոյ.), լեզուանի (ած.) ևն: Այս հիմունքը հայերենի երկու հատվածների համար էլ, բացի բայից, գործածելի չէ:

4. Իմաստաբանական հիմունք. սրա էությունն այն է, որ բառերը ըստ խոսքի մասերի խմբավորելիս պետք է առաջնորդվել դրանց ընդհանուր իմաստներով: Այսպես՝ գոյական են համարվում այն բառերը, որոնք անվանում են առարկա կամ առարկայացված հասկացություն, բայ են

կոչվում գործողությունն ցույց տվող բառերը, մակբայ են գործողության հատկանիշ ցույց տվողները են: Սակայն այս սկզբունքը նույնպես ունի թերություններ. բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշվում է խոսքից դուրս, զուտ լեզվական մակարդակում:

Որոշ լեզվաբաններ նշված հիմունքներից առաջնությունը տալիս են իմաստաբանական հիմունքին, քանի որ բառի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները առավելապես պայմանավորված են բառի արտահայտած ընդհանուր քերականական իմաստով. այն բառերը, որոնք արտահայտում են առարկայի իմաստ, ձևաբանորեն բնորոշվում են նրանով, որ հոլովվում են, նախադասության մեջ սովորաբար դառնում են ենթակա, խնդիրներ են, գործողություն ցույց տվող բառերը խոնարհվում են, նախադասության մեջ դառնում են ստորոգյալ, առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը ածականներ են. կարող են ունենալ համեմատության աստիճաններ (որակական ածականները), նախադասության մեջ դառնում են որոշիչ են:

Հաճախ միայն իմաստաբանական հիմունքով դժվար է որոշել բառի խոսքիմասային պատկանելությունը: Շատ բառեր խոսքային գործածության մեջ արտահայտում են միաժամանակ մեկից ավելի խոսքի մասերին հատուկ իմաստներ: Օրինակ՝ **հայերեն** բառը արտահայտում է մի քանի իմաստներ. առարկա («Հայերենը աշխարհի հնագույն լեզուներեն է»), գործողության հատկանիշ («Հայերեն կը խօսիմ»), առարկայի հատկանիշ («Հայերեն բառեր հնչեցան»): Կամ՝ **մինչեւ, նախքան, չնայած** բառերը ունեն և՛ շաղկապի, և՛ կապի իմաստներ. կարող են իրար կապել և՛ նախադասության անդամներ, և՛ նախադասություններ: **Երիտասարդ, հարուստ, դպրոցական, զինուորական, բանակային, սուտ, մութ** և բազմաթիվ այլ բառեր կարող են դրսևորել երկու խոսքի մասերի՝ գոյականի և ածականի իմաստային հատկանիշներ. անվանում են առարկա, բայց ցույց են տալիս նաև առարկայի հատկանիշ:

Այսպիսի դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել նաև մյուս սկզբունքները՝ ունեցած քերականական կարգերը, շարահյուսական գործառույթը են: Օրինակ՝ **որ** բառը «Եկած է, **որ** տեսնէ գործընկերը» նախադասության մեջ շաղկապ է, իսկ «Նամակը, **որ** ստացուեր է Երեւա-

նեն» նախադասության մեջ՝ դերանուն. առաջինում արտահայտում է քերականական հարաբերության իմաստ, կատարում է շաղկապական դեր, երկրորդում ունի նյութական, առարկայական իմաստ, կատարում է դերանուն–գոյականի դեր՝ ենթակայի շարահյուսական պաշտոնով, կարող է հոլովվել (որու, որմէ, որով) և հոդ ստանալ (որը):

Այսպիսով՝ ընդհանուր մոտեցումն այն է, որ խոսքի մասերը դասակարգելիս պետք է հիմնվել բառերի արտահայտած ընդհանուր իմաստների վրա՝ չանտեսելով դրանց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

Պետք է նկատել սակայն, որ արևմտահայ առանձին քերականներ (Ջ. Մելքոնյան, Էդ. Տասնապետյան և ուրիշներ), ինչպես ընդունված է դասական քերականության մեջ, հակված են նախապատվությունը տալու շարահյուսական հիմունքին: Այդ իսկ պատճառով քերականության դասագրքերում հաճախ թվականը առանձին խոսքի մաս չի համարվում և ներկայացվում է որպես ածականի տարատեսակ՝ **քանակական ածական**, կամ որպես ընդհանուր **մականուն** խոսքի մասի առանձին տեսակներ են դիտվում ածականը և թվականը՝ **որոշիչ մականուն**, **թվական մականուն**: Գործում է այն տրամաբանությունը, որ թվականը նախադասության մեջ կատարում է ածականի շարահյուսական դեր, դառնում է գոյական անդամի լրացում՝ որոշիչ:

Խոսքի մասերի փոխանցումներ. փոխանունություն

Քերականական այս իրողությունները գործում են և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում:

Խոսքի մասերի փոխանցումը լեզվական այն երևույթն է, երբ լեզվի զարգացման ընթացքում բառը ձեռք է բերում նոր խոսքիմասային իմաստ՝ պահպանելով նախկին խոսքիմասային իմաստը կամ կորցնելով այն: Մի խոսքի մասից անցնելով մյուսին՝ բառը ձեռք է բերում նաև տվյալ խոսքի մասին հատուկ ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները: Օրինակ՝ **ծնող** բառը նախնական իմաստով եղել է բայ՝ ենթակայական դերբայ, սակայն իմաստափոխությամբ ձեռք է բերել նաև գոյականի քերականական հատկանիշներ: Այսօր այդ

բառը ընկալվում է ն' որպես դերբայ (**ծնիլ** – **ծնող**՝ «**ծնող** պատճառներ»), ն' որպես գոյական («**ծնողի** հոգատարութեամբ»):

Խոսքի մասի փոխանցումը հիմնականում պայմանավորված է բառի բառային իմաստի փոփոխությամբ: Եթե բառիմաստի փոփոխությունը առաջ է բերում նաև քերականական իմաստի փոփոխություն, փոխվում է նաև խոսքիմասային պատկանելությունը: Այսպես՝ **համեստ, ազնիւ, անուշ, սիրուն, վիրաւոր, զինւորական, դպրոցական** և առարկայի հատկանիշ ցույց տվող բազմաթիվ այլ բառեր, իրենց բառային իմաստի փոփոխությամբ կամ զրկվելով իրենց բառային նշանակությունից, ձեռք են բերել գոյականական իմաստ և վերածվել են նաև գոյականների՝ իբրև անձնանուններ, տեղանուններ կամ այլ բառեր: Ինչպես՝ «**Կը կրէր զինւորական համազգեստ մը**» (ած.) / «**Հայտնուեցաւ զինւորական մը**» (գոյ.):

Խոսքի մասերի փոխանցման հիմք կարող է դառնալ նաև մի խոսքի մասի բառի կիրառությունը այլ խոսքի մասի բառի նշանակությամբ: Օրինակ՝ **առաջ** բառը սկզբնապես ունեցել է գործողության ժամանակի իմաստ, եղել է մակբայ՝ «**Առաջ** հոն երթալու հնարաւորութիւններ չկային»: Կիրառության մեջ հանդես գալով կապի շարահյուսական դերով՝ ձեռք է բերել այդ խոսքի մասի իմաստային–քերականական հատկանիշներ՝ «**Մէկ ժամ առաջ** հանդիպեցան»:

Խոսքի մասերի փոխանցման կարևոր աղբյուրներից մեկը գրաբարյան քարացած քերականական ձևերն են, որոնք, ժամանակի ընթացքում կորցնելով բառական իմաստը, կրելով քերականական իմաստի փոփոխություններ, ծնունդ են տալիս խոսքի մասերի զանազան փոխանցումների: Օրինակ՝ **հասցէ** բառը գրաբարի ապառնի ժամանակածն է (հասցեմ, հասցես, հասցէ). այսօր դարձել է գոյական: **Առթիւ, շնորհիւ** բառերը գրաբարյան գործիականի հոլովածներ են. արդի հայերենում ընկալվում են որպես կապեր, **մասին**–ը գրաբար **մասն** գոյականի տրական հոլովածն է. դարձել է կապ, **անցեալ, հանգուցեալ** բառերը գրաբարի անցյալ դերբայներ են, այսօր դարձել են գոյական, իսկ **սառուցեալ, մեռեալ** դերբայները դարձել են ածականներ՝ **Սառուցեալ ովկիանոս, Մեռեալ ծով** նն: Վերաբերականի խոսքիմասային իմաստով գործածու-

թյան մեջ են դրվում գրաբարյան քերականական ձևեր և բառածներ՝ գուցե, հաւաստեաւ, ի հարկէ, իոօք, իրաւ, իցի՛ւ թէ, ի միջի այլոց են:

Նշված իրողությունները երկու գրականներում սկզբունքորեն համընկնում են: Տարբերությունները հիմնականում խոսակցականից գրականին անցած լեզվական կոնկրետ փաստեր են: Այսպես՝ արևմտահայերենում կայուն և հստակ են ալ բառի և՛ շաղկապական («Նաւակներ մեկնեցան ամէնն ալ, բաղձանքով ակաղծուն.....»), և՛ մակբայական («Ա՛լ ծածկելու մեր մերկութիւնը յղի») գործածությունները: Կամ՝ կրնայ քերականական ձևը արևմտահայ խոսակցական լեզվում ստացել է նաև հնարավոր է, կարելի է (հմտ.՝ արևել.՝ = կարող է, կարող է պատահի, հնարավոր է) լրացական իմաստ, ձեռք է բերել վերաբերականի խոսքիմասային նշանակություն: Սիամանթոյի հետևյալ տողում բայածնն օգտագործված է եղանակավորող բառի նշանակությամբ՝ «Բայց հաւատքի դեռ չեկաւ, ու կը մերժէ իմ կիսս ըլլալ... Եւ աչքերէն ես կը սոսկամ, կրնայ օր մը, գիշեր ատեն, անկողնիս մէջ զիս խեղդել...», կամ՝ «Կրնայ ըլլալ որ, իմ մեռելի աչուրներս՝ նորէն արցունքոտին...» (Սիամանթո):

Նշված օրինակները հիմնականում արևելահայ-արևմտահայ, այսպես կոչված, ներհամակարգային իրողություններ են:

Սի շարք բառեր, սակայն, պայմանավորված իմաստային և կիրառական յուրահատկություններով, երկու գրականներում գործածվում են որպես տարբեր խոսքի մասեր: Գործածության մեջ արևմտահայերենում հետաքրքիր առանձնահատկություն է դրսևորում, օրինակ, **Ժամանակ** բառը. այս գոյականը արևմտահայերենում (ինչպես արևելահայերենում) գործածվում է նաև կապի նշանակությամբ՝ որպես կապական բառ, ինչպես՝ «խօսելու **Ժամանակ**», «ուրախութեան **Ժամանակ**», «դասի **Ժամանակ**», մինչդեռ դրա իմաստային համարժեքը՝ **ատեն**–ը, գործածվում է միայն որպես կապ՝ «կարդալու **ատեն**», «աշխատելու **ատեն**»: Գիշտ կիրառություններ չեն՝ «**ատեն** չունիմ», «**ատենը** սուղ է» են, թեև դրանք երբեմն հանդիպում են մատենագրության մեջ. «Պարսիկները աչք բանալու **ատեն** չունեցան» (Մուշեղ Իշխան): Իսկ ամենից հաճախ այդ բառը հոգնակի ձևով գործածված ենք տեսնում **երբեմն** իմաստով, ինչպես՝ «**Ատեններ (երբեմն)** պատասխան կ'ունենամ,

ատեններ՝ ոչ»։ Կամ՝ «Գիտեմ ալ որ ատեններ բողոքներս տեղին են, իսկ ուրիշ անգամներ՝ ոչ»։ Երբեմն էլ ատեն—ը գործածում են պահ—ի փոխարեն, ինչպես՝ «Ատեններ (պահեր) ալ կ'ըլլան երբ այլեւս չես հանդուրժեր ու կը պոռթկաս» (տե՛ս 33, 114—115)։

Արևմտահայերենում խոսքիմասային փոխանցման ուշագրավ օրինակ է **հաճիլ** (=բարեհաճել) բայի խոնարհված ձևից **հաճիս** վերաբերականի առաջացումը։ Այն գործածվում է որպես քաղաքավարական յուրահատուկ դիմելածն՝ **բարեհաճիր, կխնդրեի, խնդրեմ, խնդրում եմ** նշանակություններով։ Այդ մասին Ռ. Սաքապետոյանը նշում է, որ գործածական է **հաճել** բայի միայն եզակի երրորդ դեմքը՝ առանց դիմային կամ թվային համաձայնության. «Այդ հանգամանքը միանշանակ հուշում է,— գրում է նա,— որ **հաճիս** իբրև քարացած բառածն ձեռք է բերել վերաբերական բառերին բնորոշ իմաստ և գործածություն՝ մասնավոր բանավոր խոսքում, ինչպես, օրինակ. **Հաճիս գաւաթ մը ջուր տուր, Հաճիս դուռը գոցէ, Պարոնա՛յք, հաճիս մէկ վայրկեան ոտքի ելէք և այլն**» (38, 177)։

Արևմտահայերենում կապ խոսքի մասի նշանակություն են ստացել որոշ բառեր ու բառածներ՝ **ետիմ, պարագային, պայմանաւ, պատճառաւ, սկսեալ, ձեռամբ, վերջաւորութեան, միջոցաւ** ևն, ինչպես «Մեր մտածումները կուզան բնութենէն, միսին, այսինքն զգայարանքներուն միջոցաւ», «Ամէն կին երբոր մայրանայ, կը բարձրանայ հողէն, կ'ելլէ վեր, շատ վեր, ու զաւակը կը ծնանի տեսողութիւններէ հեռու։ Այդ պատճառաւ է որ կ'ըսեն.— աշխարհ եկաւ» (Շ. Շահնուր), «Այդ պատճառաւ է, որ երբեմն, եթէ բացառաբար ժապաւենի մը վերջաւորութեան անակնկալ լուծում մը առաջարկուի, յուսախաբ կ'ըլլանք» (Ռ. Հատտեճյան)։

Խոսքի մասերի փոխանցման հիմնական դրսևորումները երկու գրականներում ունեն նույն ուղղվածությունը. **ա)** ածականներ, որոնք վերածվել են հասարակ գոյականների՝ **ածական>գոյական**—գրոհային, հոգեւորական, հարուստ, աղքատ, ցուրտ, շոգ, ազգային (= ազգային գործիչ), ամսական (= աշխատավարձ), **բ)** ածականներ, որոնք դարձել են հատուկ գոյականներ՝ Ազնիւ, Համեստ, Սպիտակ, **գ)** դերբայական

որոշ ձևեր դարձել են գոյական՝ **ենթակայական դերբայ>գոյական**¹ գրող, մտածող, լրագրող, **հարակատար դերբայ>գոյական** նշանած, խորոված, հատած, **դ) գոյական>կապ**² ժամանակ, չափ, տակ, տեղ, երեսն, պատճառով / պատճառաւ, միջոցին, նպատակով, **ե) գոյական> մակբայ**³ երեկ, վաղը, ներքեւ, նն:

Փոխանունությունը լեզվական այն երևույթն է, երբ ոչ գոյական խոսքի մասերի բառերը գործածվում են գոյականաբար, ծեռք են բերում գոյականին բնորոշ խոսքիմասային հատկանիշներ. հոլովվում են, հոդ են ստանում, հոգնակի են կազմում: Սա տարածված իրողություն է հայոց լեզվի երկու հատվածներում հավասարապես: Այդպիսի դերով երկու գրականներում էլ սովորաբար հանդես են գալիս նույն խոսքի մասերը: Հետևյալ օրինակներում փոխանուն են ածականը (ցույց է տալիս ն' հատկանիշը, ն' տվյալ հատկանիշն ունեցող առարկան)⁴ **կիսամեռները, երկչոտներեն, զօրեղներ, դերանունը՝ իմին, հոնտեղները, իրեններուն, իմիններուս, մի քանիներու, մակբայը՝ այլուրներեն, յաւիտեաններ, հեռուներեն, շտապը, թվականը՝ չորսը, երեքեն, հարակատար ն ենթակայական դերբայները՝ գացածները, ըսողներեն, նն:**

Ինչպես՝ «**Քարիին** յաղթանակը անխուսափելի է», «**Նստածներն** արագ ոտքի ելան», կամ «**Չորսերնին** մէկ լսեցին» (Սիամանթո), «խօսեցաւ ժամուն բակը կեցող **հետաքրքիրներեն** (= հետաքրքրասերներից) մէկը» (Համաստեղ), «**Շուրջիները** յուսահատութեան կը մատնուէին, հարց կու տային իրենք իրենց, թէ այս մարդը ինչպէ՞ս պիտի հանդուրժէր անշարժութեան» (Ռ. Հատտեճյան):

Ակնհայտ է, որ այս հարցում արևմտահայերենը և արևելահայերենը սկզբունքային տարբերություններ չունեն: Տարբերությունները սոսկ բառական մակարդակում են կամ առանձին խոսքիմասային միավորների յուրահատուկ կիրառությունների մեջ:

խոսքի մասերի համակարգը

Հայոց լեզվի երկու տարբերակներում էլ ընդունված է առանձնացնել տասը խոսքի մաս՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ծայնարկություն, վերաբերական: Սրանք, ըստ տարբեր հատկանիշների, բաժանվում են տարբեր ենթախմբերի:

1. Ըստ արտահայտած իմաստների՝ **նյութական** և **ոչ նյութական** խոսքի մասեր:

Առաջինները, որոնք կոչվում են նաև հիմնական խոսքի մասեր, ունեն նյութական իմաստ, այսինքն՝ առարկաների, երևույթների, հատկանիշների, գործողությունների անվանումներ են, պատասխանում են որոշակի հարցերի, նախադասության մեջ կատարում են որոշակի պաշտոններ: Այդ խոսքի մասերը վեցն են՝ **գոյական**, **ածական**, **թվական**, **դերանուն**, **բայ**, **մակբայ**:

Ոչ նյութական խոսքի մասերը զուրկ են նյութական իմաստից, նախադասության անդամ լինել չեն կարող, իրենց արտահայտած վերացական-քերականական իմաստով բաժանվում են երկու խմբի՝ ա) **հարաբերություն արտահայտող բառեր**, որոնք կապերն ու շաղկապներն են, և բ) **վերաբերմունք արտահայտող բառեր**, որոնք ծայնարկություններն ու վերաբերականներն են. դրանցից առաջինները՝ ծայնարկությունները, արտահայտում են **զգացական վերաբերմունք**, երկրորդները՝ վերաբերականները՝ **դատողական վերաբերմունք**:

2. Ըստ ծնաբանական հատկանիշների՝ **թեքվող** և **չթեքվող** խոսքի մասեր: Թեքվող, այսինքն՝ հղլովվող և խոնարհվող խոսքի մասեր են գոյականը, դերանունների մի մասը և բայը: Չթեքվող են մյուս խոսքի մասերը:

Այսպիսով՝ խոսքի մասերի համակարգում արևմտահայերենը և արևելահայերենը չունեն սկզբունքային տարբերություններ: Տարբերություններն առկա են քերականական առանձին կարգերի ինչպես ծնային-ծնակազմական, այնպես էլ իմաստային-կիրառական ոլորտներում, որոնց մասին խոսվելու է ստորև:

Ծանոթություն: Որոշ տարբերություններ կան քերականական տերմինների գործածության մեջ, ինչպես՝ **փոխանուն** – **դերանուն**, **անորոշ** – **աներևույթ**, **կապ** – **առընթերադիր**, **ուղիղ խնդիր** // **ներգործող խնդիր** – **սեռի խնդիր**, **բնության խնդիր** – **անուղղակի խնդիր**: Կամ՝ անձնական դերանունների սեռականի ձևերը արևմտահայերենում ընդունված է համարել դերանունների առանձին տեսակ՝ **ստացական դերանուններ**:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Իմաստաբանորեն գոյականը երկու տարբերակներում էլ բնորոշվում է որպես առարկա կամ առարկայացված հասկացություն ցույց տվող խոսքի մաս. առարկայացված հասկացությունները գործողության կամ հատկանիշի անվանումներ են՝ **ուրախութիւն, վազք, ընթացք, մեծարանք** են: Պատասխանում է **ո՞վ, ի՞նչ, ովքե՞ր** (արևմտ.՝ **որո՞նք**), **ինչե՞ր** հարցերին: Բառակազմական տեսակետից գոյականը բնութագրվում է նրանով, որ միօրինակ կառուցվածք չունի. գոյականները կազմությամբ կարող են լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ (ածանցավոր, բարդ՝ բարդության տարբեր տեսակներով կազմված են): Ձևաբանորեն գոյականը թեքվող խոսքի մաս է: Գոյականի թեքումը կոչվում է **հոլովում**:

Գոյականի իմաստային–քերականական խմբերը

Գոյականի իմաստային–քերականական խմբեր ասելով՝ հասկանում ենք գոյականների այն խմբերը, որոնք բնորոշվում են նաև քերականական հատկանիշներով: Արևելահայերենում առանձնացվում են իմաստային–քերականական հետևյալ խմբերը՝ **անձ և ոչ անձ (իր), հատուկ և հասարակ, վերացական և թանձրացական**: Արևմտահայերենում բացակայում է գոյականների անձ և ոչ անձ իմաստային–քերականական խումբը, իսկ հատուկ և հասարակ գոյականները դրսևորում են քերականական հատկանիշների որոշ տարբերություններ:

Անձ և ոչ անձ (իր) ցույց տվող գոյականներ: Անձ ցույց տվող գոյականներ են մարդկանց տրվող հատուկ և հասարակ անունները, որոնք պատասխանում են **ո՞վ, ովքե՞ր** (արևմտ.՝ **որո՞նք**) հարցերին, իսկ ոչ անձ ցույց տվող գոյականներ են մյուս բոլորը՝ իրերի, կենդանիների անունները, բոլոր վերացական գոյականները, որոնք պատասխանում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերին:

Արևելահայերենում դրանց քերականական հիմնական տարբերությունն այն է, որ սովորաբար ուղիղ խնդրի դեր կատարելիս անձ ցույց տվող գոյականները դրվում են սեռական–տրականով, իսկ ոչ անձ ցույց տվող գոյականները՝ ուղղական–հայցականով: Արևմտահայերենում այդ տարբերությունը բացակայում է. և՛ անձ, և՛ ոչ անձ ցույց տվող գոյականները ուղիղ խնդիր–հայցականում ունեն նույն ձևավորումը, այսինքն կազմությամբ նման են ուղղականին, հմմտ. արևել. «Վահանը սիրում է իր **Ծնողներին**», «Վահանը սիրում է իր **հայրենիքը**», արևմտ. «Վահան կը սիրէ իր **Ծնողքը**», «Վահան կը սիրէ իր **հայրենիքը**»:

Արևելահայերենում այս խմբի գոյականների քերականական երկրորդ տարբերակիչ հատկանիշն այն է, որ անձ ցույց տվող գոյականները սովորաբար ներգոյական հոլով չեն ունենում, իսկ ոչ անձ ցույց տվող գոյականների ճշշող մեծամասնությունը այդ հատկանիշն ունի: Արևմտահայերենը չունի ներգոյական հոլով, ուստի այդպիսի տարբերակման մասին ընդհանրապես խոսք լինել չի կարող:

Այսպիսով՝ անձ և ոչ անձ իմաստային խումբը արևմտահայերենում քերականական կերպավորում չունի, հետևաբար չի առանձնացվում իբրև այդպիսին:

Չատուկ և հասարակ գոյականներ: Դրանց իմաստային ըմբռնումը նույնն է, ընդհանուր առմամբ նույնն են նաև դրանց բնորոշ քերականական հատկանիշները. հատուկ անունները երկու գրականներում էլ հոգնակի թվով սովորաբար չեն գործածվում: Քերականական տարբերություններից է նաև այն, որ եթե արևելահայերենում հատուկ գոյականները ենթակայի պաշտոնում սովորաբար գործածվում են որոշյալ առումով, ապա արևմտահայերենում կարող են գործածվել և՛ որոշյալ, և՛ անորոշ առումներով. հատուկ անունը եթե պատմական անուն է կամ անձնանուն, հող չի առնում, ինչպես «**Մեծարենց** խորհրդապաշտ գրող մը չէ եղած: ...Բայց **Միսաք Մեծարենց** բանաստեղծութեան մէջ պիտի ապրի մանաւանդ իր արուեստովը» (Յ. Օշական), կամ «**Մեսրոպ Մաշտոց** տեսաւ Սահակ Պարթևը»: Բայց «**Միսաքը** իմ դասընկերս է», «**Յակոբը** չի հաւնիր Պետրոսը»:

Չատուկ անունների ուղղագրությունը: Տարբերություններ կան հատուկ անունների ուղղագրության, մանավանդ հարադրավոր հատուկ անունների գրության մեջ:

Արևմտահայերենում սովորաբար մեծատառով են գրվում հարադրավոր հատուկ անունների բոլոր բաղադրիչները, այդ թվում՝

ա) Եկեղեցական, բարեսիրական, քաղաքական կենտրոնների անունները՝ **Պոլսոյ Պատրիարքարան, Գարակեօզեան Հիմնարկ, Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարան, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժին** են:

բ) Միությունների, կազմակերպությունների, կուսակցությունների, պաշտոնական մարմինների և խորհուրդների անունները՝ **Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Ուսումնական Խորհուրդ, Հայ Օգնութեան Միութիւն** են:

գ) Կրոնական և ոչ կրոնական անձերի տիտղոսները, վերադիրները, պաշտոնն ու վայրը (պաշտոնական գրագրության մեջ)՝ **Ն(որին) Ս(ուրբ) Օ(ծութիւն) Տ(էր) Տ(էր) Գարեգին Երկրորդ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Դոկտ. (դոկտոր) Ս. Մինասեան, Օրդ. (օրհորդ) Ա. Յակոբեան, Հոգ. (հոգեշնորհ) Տ(էր) Նորայր Ծ(այրագոյն) Վրդ. (վարդապետ) Աշըգեան, Դպրեվանքի Տեսուչ Գերպ. Տ. Շահան Ծ. Վրդ. Սարգիսեան**: Սովորական՝ ոչ պաշտոնական գրավոր խոսքում կիրառության մեջ վերադիրները դուրս են մնում, իսկ տիտղոսներն ու պաշտոնները գրվում են փոքրատառով՝ **Սահակ կթղ., պրն. Յովհ. Սեթեան** են:

Բաղադրյալ կազմության վերջին բաղադրիչը գրվում է փոքրատառով, եթե հասարակ անուն է՝ **Արարատեան դաշտ, Ս. Փրկիչ հիւանդանոց, Հիւսիսային Սառուցեալ ովկիանոս, Մեծ Արջ համաստեղութիւն** են:

Մեծատառով կարող են գրվել ազգերի, շաբաթների և կամ ամիսների անունները: Առհասարակ, մեծատառերի գործածության հարցում արևմտահայերենը ավելի մեծ ազատություններ է ընձեռում:

Այս տարբերությունը առավելապես պայմանավորված է արևմտահայերենի՝ տարբեր լեզուների ազդեցության ուղորտում գտնվելու հանգամանքով (տե՛ս 30): Մեծատառերի գործածությունը արևմտահայերենում կանոնարկման խնդիր ունի:

Թանձրացական և վերացական գոյականներ: Գոյականների այս խմբերի իմաստային յուրահատկությունները (թանձրացականները ցույց են տալիս առարկայական աշխարհը, իսկ վերացականները՝ հատկանիշներ, երևույթներ) պայմանավորում են քերականական որոշ տարբե-

րություններ. վերացական գոյականները և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում սովորաբար չեն գործածվում հոգնակի թվով, որի պատճառով ունեն մաս կապակցելիության որոշ սահմանափակումներ. իբրև լրացում չեն ընդունում թվական, քանակ ցույց տվող դերանուններ և գոյական որոշիչ. չենք կարող ասել՝ **մի երկու թախիծ, երեք երջանկություն, մի մեծ բաժին հաւատ**:

Արևելահայերենում վերացական գոյականները սովորաբար չեն գործածվում ներգոյական հոլովով: Արևմտահայերենում քերականական այդ հատկանիշից զուրկ են և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականները, քանի որ, ինչպես նշվել է, բացակայում է ներգոյական հոլովը:

Երկու գրականներում էլ գոյականը բնորոշվում է նույն քերականական կարգերով՝ **թիվ, առկայացում, հոլով և հոլովում**:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Քերականական այս կարգը իմաստային առումով որևէ տարբերություն չի ներկայացնում: Երկուսում էլ առկա է երկու թիվ՝ եզակի և հոգնակի, որոնք արտահայտում են նույն իմաստը: Իբրև ընդհանուր օրինաչափություն՝ հոգնակին կազմվում է մասնիկավորմամբ՝ վերջավորություններով: Գործում է ընդհանուր սկզբունքը. միավանկ գոյականները ստանում են **եր**, բազմավանկները՝ **ներ**:

Առկա են հետևյալ մասնակի տարբերությունները.

ա) Արևելահայերենում **մարդ** բառի հոգնակին կազմվում է **իկ—ով՝ մարդիկ**, կին բառի հոգնակին՝ **այք—ով** (արմատի մեջ՝ **ի>ա** հերթագայությամբ)՝ **կանայք**: Արևմտահայերենում այդ գոյականները հոգնակին կազմում են կանոնական ձևերով՝ աշխարհաբարի օրինաչափությամբ՝ **մարդ — մարդեր (տղամարդեր, այծամարդեր, նախամարդեր)**, կին — կիներ:

Օրինակ՝ «Յո՛ւն՝ երկրի՛ն մեջ, ուր պարզ, գուցե պատահական **մարդեր** միջոցը կը գտնեն տաղանդաւոր, մեծ ու ...«անհուն պոետ» ըլլալու» (Գ. Օշական), «Ուխտաւորներէն երբեմն չարածճի այրեր կը մօտենան **կիներուն...**» (Մ. Մարկոսյան), «Մեր օրօրները օրօր չէին որ, պատրուակ մըն էին, **կիները** իրենց լացը կուլային» (Մնճուրի), «...Ո՛վ **մարդերու** արդարութիւն, թող ես թընեմ քու ճակտին» (Սիամանթո),

«Այծամարդեր հովին քընարն են կապտեր» (Մ. Մեծարենց), «Քայլերուդ շուրջ թող ծիծղուն **այծամարդերը** պարեն»:

Կամ՝

Բայց մահեն փախչող վատ մ'էիր տժգոյն,

Ձի սերն իսկ սո՛ւտ է, **մարդերը** մա՛րդ են...

(Ռ. Սևակ)

Մարդ բառը պահպանում է նաև գրաբարից ավանդված **մարդիկ** ձևը: Որպես խոսակցական տարբերակ՝ երբեմն հանդիպում է նաև այդ բառի անկանոն մի կազմություն՝ կրկնակի հոգնակերտությամբ՝ **մարդիկներ**: Ըստ որում, **մարդիկ** ձևը խոսակցականում ստանում է նաև որոշիչ հոդ՝ **մարդիկը**, ինչպես՝

Կարաւանին վարողն է ան եւ իր տէր:

Եիկիտ Տոնէլ,— **մարդիկը** զինք կը կոչեն.

Եիկիտ Տոնէլ,— կ'արծազանգեն սար ու լեռ

Քաջի տիտղոսն առաւ ան է՛ն քաջերէն:

(Դ. Վարուժան)

Կամ՝ «Յրամայեց, որ **մարդիկը** մտնեն ամեն տունէ, ամեն օջախէ ներս...» (Շ. Շահնուր), «Շատախօս **մարդիկը** չեն յարգուիր» (ԶՄ):

Արևմտահայերենում նույնպես գործածվում են **տիկին** և **պարոն** բառերի **այք** մասնիկով կազմությունները, բայց ավելի հաճախ՝ կոչականի դերով՝ «Յարգարժան **տիկնայք** եւ **պարոնայք**, ...»:

Արևմտահայերենում կանոնական կազմություն ունի նաև **ռուս** բառը՝ **ռուսեր**, որը արևելահայերենում ըստ խոսակցականի արտասանության գրականին անցած լինելու պատճառով (իբրև երկվանկ բառ՝ **ուռուս**), հոգնակին կազմում է **ներ** վերջավորությամբ՝ **ռուսներ**:

բ) Արևելահայերենում մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմվում է գրաբարյան **ն** վերջնահնչյունի վերականգնումով: Արևմտահայերենում որոշակի տարբերություն է նկատվում այդ գոյականների հոգնակիակազմության մեջ: Փակ վանկում ու ծայնավոր ունեցող գրաբարյան **ն** վերջնամասնիկով գոյականների հոգնակին արևմտահայերենը սովորաբար կազմում է անհնչյունափոխ հիմքից և առանց **ն**-ի վերականգնման, ինչպես՝ **ծունկն** – **ծունկեր**, **մուկն** – **մուկեր**, **ծուկն** – **ծուկեր**, **նուռն** –

նուռներ. «Աւագանի **ծուկերուն** հետ խաղաց նորէն» (Յ. Օշական), «Երբ Կարուկին վարտիքը պատռած է մինչև **ծունկերը**, ըսել է՝ ամառ է» (Համաստեղ): Արևմտահայերենում, որպես կանոն, փակ վանկի թույլ ծայնավորով միավանկ գոյականները հոգնակին կազմում են անհնչյունափոխ հիմքով, ինչպես՝ **ջուր – ջուրեր, սուր – սուրեր, գիրք – գիրքեր, միտք – միտքեր, հուր – հուրեր, խումբ – խումբեր, շուն – շուներ** ևն. «Դուք որոնց արդար **սուրերուն** տեղ այսօր՝ ձեր վրայ, ծանրածանր շղթաներ են որ կը փայլին...» (Սիամանթո):

Գրաբարյան ն վերջնամասնիկով մյուս միավանկ գոյականները հոգնակին կազմում են արևելահայերենի նման՝ **ն–ի** վերականգնումով, ինչպես՝ **հարս – հարսներ** (նաև՝ **հարսեր**), **լեռ – լեռներ, թռչ – թռչներ, գառ – գառներ, եզ – եզներ, դուռ – դռներ** ևն, ինչպես՝ «Աստուածային կիրքին տեղ դրեր ենք **հարսներ–մեր** բոլոր արախչիները ապացոյց» (Շ. Շահնուր): Ի դեպ, արդի արևմտահայերենում ավելի գործածական են **դուռ բառի դուռներ և դռներ** ձևերը և ավելի քիչ՝ **դուռեր, օրինակ՝ «Անկէ ետք՝ նորէն գիշեր. ու դռները կը գոցուին հաստատուն նիզերով»** (Ռ. Զարդարյան), «Վերին սրահներուն վրայ կ'աշխատէր քայլերը գուշակել, երբ ննջասենեակներուն **դուռները** կենդանութիւն կ'առնէին» (Յ. Օշական), «Ահա դուրս կ'ելլենք քաղաքի **դուռներէն**» (Մուշեղ Իշխան), բայց՝ «Նոյն հարկազերծումը կարելի է գտնել... եւ բերդապահներու եւ կամուրջի, պարիսպներու **դուռերու** եւ անցքերու եւ կիրճերու պահակներուն պարագային» («Հյուսիսյան հայագիտական հանդես»):

Հանդիպում են նաև այլ կազմություններ, ինչպես՝ «Եւ հինգերորդ աղջիկն հինայ կը դնէ Անոր **մատերը** հիմայով հայկական», «Եղեգնեայ գրչով երգեցի **հարսեր»** (Դ. Վարուժան):

գ) Արևելահայերենում **ք** մասնիկը հոգնակի է կազմում –**ցի** և –**ացի** ածանցներով խոսակցական ձևեր համարվող գոյականներից՝ **գյուղացիք, երևանցիք, խարբերդցիք** ևն: Արևմտահայերենում այս կազմությունները կան, սակայն քիչ են գործածվում:

Տղայ բառի հոգնակին կազմվում է **տղաք** տարբերակով՝ «Տէր–Զօրէն կու գամ որուն կամուրջէն երեք հարիւր հազար հայեր անցան եւ որոնցմէ այսօր միմիայն հազար հինգ հարիւր կիներ ու որք **տղաք** ողջ

մնացին» (Ե. Օտյան), «Քանի մը **տղաք** կերեր եմ ամբողջը» (ԶՄ): Սովորական է նաև **տղաներ** ձևը, որը հավանաբար տարածում է գտել արևելահայերենի ազդեցությամբ: Գրաբարյան **տղայք** ձևը ոճական գործածություն ունի:

Ծանոթություն: Կրկնակի հոգնակերտ կազմությունները՝ **տղաքներ**, **մարդիկներ** («Տղաքներ՝ որ գերեզմաններու շուրջ կը դեգերին, փոխանակ կանաց շուրջը պտտելու», Գ. Զոհրապ), հնացած են:

Գրաբարյան **ք** հոգնակերտը արևմտահայերենը պահպանել է նաև **ծնող** և **որդի** բառերի հոգնակիակազմության մեջ՝ **ծնողք**, **որդիք**, օրինակ՝ «**Ծնողքիդ** յոյսն ես» (ԶՄ), «**Ծնողքիս** ծախսերը աւելցան» (ԴԳ): Սովորական է **որդի** բառի նաև աշխարհաբարյան կազմությունը՝ **որդիներ**:

Ծանոթություն 1: Հովհաննես Գազանճյանը նշում է, որ «բազմավանկ երկար անուններու վրայ երբեմն նախապատիւ է **ք**—ի գործածութիւնը՝ համառօտութեան համար. ինչպէս՝ **պահպանողականք**, **արծանագրութիւնք** եւն» (Յովհ. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910):

Ծանոթություն 2: Արևմտահայերենում **ծնող** եզակի ձևը որպես գոյական գործածական չէ. միշտ հոգնակի է՝ **ծնողք**:

դ) **Անք**, **ենք**, **ունք**, **ոնք** մասնիկներով բառաձևերը, որոնք երկու գրականներում էլ հոգնակիության յուրահատուկ իմաստ ունեն. ցույց են տալիս ոչ թե միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ, այլ անձը իր յուրայիններով (**Արամենք**, **Վահանենք**, **Վարդանանք**, **պապոնք**, **Բադունք**, **մերոնք**), մնացուկային երևույթներ են: Արևմտահայերենում, առաջին երկու ձևերից բացի, դրանց գործածությունը սովորական չէ:

ե) **Արևմտահայերենում** կանոնարկված չէ միավանկ վերջնաբաղադրիչով բազմավանկ գոյականների հոգնակիի կազմությունը: Արևելահայերենում ընդհանուր առմամբ գործող սկզբունքը, որ բայական վերջնաբաղադրիչով կազմությունները ստանում են **ներ**, իսկ գոյական վերջնաբաղադրիչներովը՝ **եր**, գործում է նաև արևմտահայերենում, ինչպես բանասերներ, գրագիրներ, հայրենասերներ, մեծատուններ, ժամացույցներ, թիկնապահներ, բայց՝ հեռագրասիւներ, արժեթուղթեր, փաս-

տաթուղթեր, մարտադաշտեր, նստացույցեր, դասապահեր ևն: Ինչպես «Եւ կը դիզուին արգաւանդ **հողակոշտերն** իրար քով» (Դ. Վարուժան), «Եղիայի եւ Ինտրայի պէս անուանի **նամակագիրներ** կը ներկայանան համեստ հունձքով» (Շ. Շահնուր): Առանձին դեպքերում կան տարբերություններ՝ կապված հիմքակազմության հետ: Այսպես՝ փակ վանկի ի ծայնավոր ունեցող միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների համար արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, սովորական է անհնչյունափոխ հիմքով հոգնակիի կազմությունը՝ **ներ վերջավորությամբ**, ինչպես՝ **հեռագիր+ներ, ծրագիր+ներ, յայտագիր+ներ, ուղեծիր+ներ**:

Օրինակ՝ «Քերականութեան անսովոր ծեւեր... ու **գլխագիրներու** բանակ ու զրահները», «Այդ լեզուին աղկաղկ, թոյլ, թափփուք **նկարագիրներովը** մի՛ գեղծանիք» (Հ. Օշական), «Կազմուող **նկարագիրները** հեռացան զատուող ճամբաներու հովահարով» (Շ. Շահնուր), «...ունենալ նաեւ ուղղագրական ու կետադրական վարժութիւններու **բնագիրներ**» (ՊՊ): Նույն կազմության գոյականների եր-ով ձևերը կանոնական չեն, ինչպես՝ «Սեղանի վրայ դրուած **պաշտօնագրերու, վճռագրերու**, տաճկերէն գրուած կնքեալ մեծ թուղթերու շուրջը կը խորհրդակցինք, կը մտածենք, ջանալով փրկութեան միջոց մը գտնել կորսուելու մոտ այս հարստութեան համար» (Գ. Ջոհրապ):

Արևելահայերենում ընդունված օրինաչափություններից տարբերություն կարելի է համարել նաև այն, որ **արևմտահայերենում** հաճախ են հանդիպում նույն կազմությամբ գոյականների՝ հոգնակիի զուգահեռ ձևեր: Դա խոսում է քերականական այդ իրողության ոչ բավարար կանոնարկվածության մասին: **Օրինակ՝** «Եթե ամբողջութեամբ գրուէին Վարուժանի ծրագրած **վիպերգները**, հաւանաբար... պատմական ներշնչումով **վիպերգներու** շարքով մը հարստացած պիտի ըլլար հայ գրականութիւնը» (Թ. Ազատյան), «Ու էֆենտին խնդացող բարեւով մը կ'ընդմիջէր անոր **սիրերգերը**, զորս կը մոմռար քօին տակէն՝ իր սենեակին մէջ ոտքերը երկնցուցած» (Հ. Օշական), «Ունինք բացիկներ եւ **երկտողներ**, անձնական ցաւերու վրայ, ուր կարելոր տեղ կը գրաւեն յօդուածի եւ տպագրութեան հարցեր» (Շ. Շահնուր):

Հայտնի է, որ արևելահայերենում միավանկ գոյական վերջնաբաղադրիչով մի շարք կազմություններում (հատկապես **պետ, միշ** վերջնամաս-

նիկներով) միտում կա հոգնակին բաղադրելու ոչ թե եր, այլ ներ մասնիկով՝ նավապետներ, թաղապետներ, դորձմանիշներ, նամակամիշներ են: Այս միտումը նկատվում է նաև արևմտահայերենում:

Տարբերություններ չկան մեկուկես վանկանի գաղտնավանկ ունեցող բառերի հոգնակի կազմության մեջ: Գործում է նույն սկզբունքը. եթե գաղտնավանկը նախորդում է լիահունչ վանկին, ապա հոգնակին կազմվում է ներ վերջավորությամբ՝ սպաներ, վկաներ, սպիներ, հաջորդելու դեպքում՝ եր վերջավորությամբ. արևմտահայերենում երկրորդ դեպքում հոգնակին գրեթե առանց բացառության լինում է եր-ով՝ կայսեր, դուստրեր, արկղեր, անգղեր, գամփոներ, ուստրեր, ազդրեր, աստղեր: Խիստ հազվադեպ՝ աստղներ, կայսրներ, արկղներ, անգղներ են:

Բարբառ-միջին հայերեն ճանապարհով արևմտահայերենին փոխանցվել է ուի (վի) հոգնակերտը, որը, հաճախ միանալով ներ վերջավորությանը, մարմնի զույգ և ավելի անդամներ ցույց տվող գոյականների համար կազմում է կրկնակ ձև՝ աչուրներ, մատուրներ, ձեռուրներ, ոտուրներ են: Դեռ 20-րդ դարասկզբի քերականագիտությունը այդ կազմությունը համարում է բարբառայնություն, որ արդեն դուրս է եկել արդի գրական լեզվի գործածությունից:

Ծանոթություն: Որոշ գոյականներ և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում գործածվում են միայն եզակի թվով. դրանք կան եզակի թվով արտահայտում են հոգնակիության իմաստ՝ հոգեւորականութիւն, ուսանողութիւն, ոսկեղէն, կան արտահայտում են այնպիսի երևույթներ, վերացարկված հատկանիշներ, որոնք թվարկվել չեն կարող. նյութի անուններ են, գիտության բնագավառ նշանակող բառեր են ուսուցչութիւն, ուշադրութիւն, թախիծ, օդ, լեզուաբանութիւն են:

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Քերականական այս կարգը իմաստային առումով երկու գրականներում տարբերություններ չի դրսևորում: Երկուսում էլ այն ցույց է տալիս տարրորոշված առարկա: Առկայացման քերականական ցուցիչներն են ս, դ, ն, ը մասնիկները՝ հոդերը: Առաջացել են համապատասխան դերանուններից՝ (ես, այս, սա, աս) > ս, (դուն, այդ, դա, ատ) > դ, (նա, այն,

ան) > Ե, ուստի կոչվում են նաև **դերանվանական հոդեր**: Երկու գրականներում էլ հոդ ստանում են գոյականները, դերանունների մի մասը: Իսկ մյուս խոսքի մասերը հոդ են առնում միայն գոյականաբար գործածվելիս: Իրենց դերանվանական նշանակությամբ պայմանավորված՝ դրանք տարրորոշված առարկան ցույց են տալիս տարբեր կերպ և ըստ այդմ էլ բաժանվում են տարբեր տեսակների՝ **ստացական, ցուցական, դիմորոշ, որոշիչ**:

Առկայացման քերականական կարգի ձևավորման և կիրառության մեջ արձանագրվում են հետևյալ տարբերությունները.

Ստացական հոդեր

ա) Ստացականի իմաստով կարող են գործածվել **ս** և **դ** հոդերը, այսինքն՝ դրվելով գոյականների վրա՝ ցույց են տալիս պատկանելություն առաջին կամ երկրորդ դեմքին, առարկայի՝ տվյալ դեմքին պատկանելը: Դրանք կարող են փոխարինվել ստացական համարվող դերանուններով (համապատասխան անձնական դերանունների սեռականի ձևերով)՝ **իմ, մեր, ձեր** են: Սակայն եթե արևելահայ գրականում կանոնական են կա՛մ հոդով, կա՛մ դերանվամբ կառույցները (**իմ գիրքը // գիրքս, քո պատասխանը // պատասխանդ**), ապա արևմտահայերենում այդ ձևերից բացի ընդունվում է նաև կրկնակի ստացական կազմությունը՝ **իմ գիրքս, քու պատասխանդ** են, **օրինակ**՝ «Շան պէս կը չարչարուիմ ամէն օր, քարէն աւելի կարծր մահիճի մը վրայ երկարած, **իմ** կմախացած **մարմինովս**» (Շ. Շահնուր), «Պարծեցի՛ր այն բաներով, որ **քու** անհատական **ձեռնարկութեանդ** եւ ճիգերուդ արդիւնքներն են» (ԵՏ):

Կամ՝

Ափ մը մոխի՛ր, աճիւնիս հետ, Հայրենի տուն

Ափ մը մոխի՛ր **քու** մոխիրէ՛դ ո՛վ պիտի բերէ,

Քու յիշատակէ՛դ, **քու** ցաւէ՛դ, **քու** անցեալէ՛դ,

Ափ մը մոխիր... **իմ** սրտիս վրան ցանելու...

(Սիամանթո)

Կանոնական է համարվում նաև ստացական համարվող դերանվան հետ կապի՝ հոդով գործածությունը՝ **քու մասիդ, իմ մասիս, ինչպես՝ «Իմ մասիս** խօսելով, միայն իր քերթուածները բաւական էին ատոր

համար» (Շ. Շահնուր): Այդ դերանունների հոգնակի թվով կազմությունները օրինաչափ չեն՝ **մեր աշակերտներս, ձեր պատասխաններդ** են:

բ) Զգալի տարբերություն կա հոգնակի ստացական ձևերի կազմության մեջ:

Արևելահայերենում հոգնակի ստացական են կազմում ա) գերազանցապես միավանկ գոյականները (բացի գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցողներից՝ **մատն, հարսն** են), օրինակ՝ **տաշտներս, ձեռքներդ, միտքներս, խոսքներդ** են, բ) այն բազմավանկ բառերը, որոնց ցույց տված առարկայից մարդ սովորաբար մեկն է ունենում, օրինակ՝ **լեզուներդ, անուններս, գ)** անորոշ, երբեմն նաև հարակատար դերբայները՝ **գնալներդ, խոսելներս, սիրածներս**: Դրանք կազմվում են՝ գոյականի հոգնակի թվի վրա ավելացնելով համապատասխան հոդը. քիչ են գործածվում և ունեն ընդգծված խոսակցական երանգ, պատահական չէ, որ հաճախ են կիրառվում ժողովրդական առած–ասացվածքներում, ինչպես՝ «**Աչքներս լույս**», «**խոսքներդ մեկ եք արել**», «**Տաշտներդ միշտ հաց լինի, սրտներդ միշտ բաց լինի**», «**Գնալներդ լինի, գալներդ չլինի**»: **Արևելահայերենում** սովորական և ընդունված ձևեր են դերանուններով վերլուծական կազմությունները՝ **մեր խոսքերը, ձեր խոսքերը** են:

Արևմտահայերենում հոգնակի ստացականի կազմության մեջ ըստ էության որևէ սահմանափակում չկա. դրանք կարող են կազմել և՛ միավանկ, և՛ բազմավանկ գոյականները: Տարբեր է նաև կազմության սկզբունքը. հոգնակի ստացականը կազմվում է **նի** մասնիկով և համապատասխան հոդերով՝ **նի+ս, նի+դ, նի+ն**:

Միավանկ գոյականները այդ ձևը բաղադրում են՝ գոյականի հոգնակի թվին ավելացնելով նշված մասնիկները, ինչպես՝ **տուն+եր+նիս, տուն+եր+նիդ, տուն+եր+նին, ձեռքեր+նիս, ձեռքեր+նիդ, ձեռք+եր+նին**, իսկ բազմավանկ գոյականները սովորաբար եզակի թվին են ավելացնում **նի** մասնիկը և համապատասխան հոդը, ինչպես՝ **պարտեզ+նիս, պարտեզ+նիդ, պարտեզ+նին**: Այստեղ **ն–ն** հոգնակիությունն արտահայտող ցուցիչ է: Այսինքն՝ նշված մասնիկներն ունեն ստացական

համարվող դերանունների հոգնակի թվի իմաստ: Առաջինները նշանակում են համապատասխանաբար՝ **մեր տունը** և **մեր տները** (տուներնիս), **ծեր տունը** և **ծեր տները** (տուներնիդ), **իրենց տունը** և **իրենց տները** (տուներնին), երկրորդները՝ **մեր պարտեզը** և **մեր պարտեզները** (պարտեզնիս), **ծեր պարտեզը** և **ծեր պարտեզները** (պարտեզնիդ), **իրենց պարտեզը** և **իրենց պարտեզները** (պարտեզնին): Վերլուծական կազմությունները՝ **մեր տունը**, **ծեր տները**, առավել բնորոշ են գրական լեզվին, իսկ մասնիկավոր համադրական ձևերը՝ խոսակցականին:

Արևմտահայերենում նշված կազմությունները անհամեմատ ավելի կենսունակ են և հաճախ են գործածվում նաև գրավոր խոսքում, չեն ընկալվում ընդգծված խոսակցական երանգով, ինչպես արևելահայերենում: Սակայն բոլոր դեպքերում դրանք խոսակցական կազմություններ են, և գրավոր գրական լեզվում դրանց գործածությունը հանձնարարելի չէ:

Բացի այդ, արևմտահայերենում այդ մասնիկները դրվում են մեծ մասամբ գոյականների, անորոշ և հարակատար դերբայների, բայց երբեմն նաև այլ խոսքի մասերի վրա:

Օրինակ՝ «Որպես աղախին **տուներնին** մնացած էր» (Ե. Օտյան), «Քով-քովի նստիլ, **ոտքերնիս** ջուրերու տակէն իրարու երկարիլ» (Հ. Օշական), «**Աչքերնիս** տակաւ կը ծանրանայ, մինչ քիչ անդին Արմինէն կը շարունակէ կարդալ» (Թ. Թորանյան), «Ամբողջ **գերդաստաննիս** ասանկ կը հալի...» (Ա. Անդրեասյան), «Առջի հեղ այս անունը **արտասանելու** զարմանքով ու հարցումներով լեցուն աչքերը մեզի դարձան...», «Մութ է **չորսիդինիս**. հսկայ ծառերուն շուքը վերահաս գիշերին սեւութեամբ կը թանձրանայ... Հետիոտն կ'երթանք **երկուքնիս** քիչ մը առջեւէն, ու **ետեւու** կը լսեմ էրկանը ծայրը...» (Գ. Զոհրապ), «Մաքրութեան առաւօտ մը պիտի բացուի **վրանիս**» (Վ. Շուշանյան):

Կարծիք կա (Ս. Աբրահամյան, Էդ. Տասնապետյան, Ռ. Սաքապետոյան), որ բազմավանկ գոյականները ունեն նաև հոգնակի ձևերից կազմվող տարբերակներ՝ գոյականների հոգնակիության իմաստը (հոգնակի են և՛ պատկանողը, և՛ պատկանյալը) արտահայտելու համար, ինչպես **գրիչնիս** (=մեր գրիչը) – **գրիչներնիս** (=մեր գրիչները), **գրիչներնիդ** (=ծեր գրիչները), **գրիչներնին** (=իրենց գրիչները), **նաւակնիս** (=մեր նավակը) – **նաւակներնիս** (=մեր նավակները): Մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում այդպիսի կազմություններ չկան:

Որոշիչ հոդեր և մը (մի) անորոշ հոդը

Որոշիչ են ը և ն հոդերը: Ծագումնաբանորեն ն–ն ավելի հին է. ը հոդը առաջացել է վերջնահանգում՝ ը գաղտնավանկից՝ (ը)ն>ը զարգացումով: Իմաստային առումով տարբերություն չունեն. ցույց են տալիս առարկայի որոշ, հայտնի լինելը: Կարող են ցույց տալ նաև առարկան իր ամբողջ ծավալով, երբ դրվում են հատկապես նյութ ցույց տվող գոյականների վրա, ինչպես՝ «Ալիւր թափուեցաւ յատակին» – «Ալիւրը թափուեցաւ յատակին»:

Ն–ն և ը–ն նույն հոդի դիրքային տարբերակներ են: Երկու գրականներում էլ ն–ն դրվում է ծայնավորով վերջացող բառերի վրա՝ այգին, հարսնացուն, երեկոն, իսկ ը–ն՝ բաղաձայնով վերջացող բառերի՝ գիրքը, տունը, մարդը:

Եթե հաջորդող բառը սկսվում է ծայնավորով, ը հոդի փոխարեն կարող է դրվել ն՝ «Վահանը ուսանող է» և «Վահանն ուսանող է»: Սա ն՝ արևմտահայերենում, ն՝ արևելահայերենում ունի սոսկ ոճական–գործառական արժեք. առաջին դեպքում բառակապակցությունն արտասանվում է դադարով և շեշտվում է Վահանը բառը, իսկ երկրորդ դեպքում արտասանվում է միասին, և առավելապես ընդգծվում է կառույցի ընդհանուր իմաստը: Արևմտահայերենում ավելի գործածական է ը–ով ձևը:

Եթե հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, ապա նախորդ բառը պետք է ստանա ը հոդը՝ «Վահանը գիտէ». սխալ է՝ «Վահանն գիտէ»:

Սկ, սպ, ստ, շտ, զգ և նման հնչյունակապակցություններով սկսվող բառերից առաջ երկու գրականներում էլ կարելի է գործածել ն՝ ը, և՛ ն հոդերը՝ պայմանավորված վերը նշված գործառական նշանակությամբ: Արևմտահայերենում թեև նշված կապակցություններով սկսվող բառերը միշտ արտասանվում են նախահունչ ը–ով, այնուամենայնիվ նախընտրելի է ը հոդի գործածությունը՝ «Նխտը (ը)սկսաւ»:

Արևմտահայերենում ուղղական–հայցականը սովորաբար պահանջում է որոշիչ հոդ. «Ծառը տապալեցավ», «Եկավ Զրանդը», «Մենք Վահանը տեսանք», «Ջուրը արտը ողողեց»: Այս կանոնից շեղվում են պատմական և աշխարհագրական հանրածանոթ անունները, որոնց դեպքում հոդի գործածությունը պարտադիր չէ. նախընտրելի է անհոդ գործածությունը՝ «Ո՛չ որ կ'անգիտանայ թե Գէորգ Զաւուշ առասպելը՝ կեանքի եւ կեանքը առասպելի վերածող հերոսի տիպար մը եղաւ»,

«ԱՏԻ Բագրատունեաց մայրաքաղաքն է», «Մեսրոպ հայ գիրեռու հիմնադիրն է»: Բայց՝ «Մեսրոպը տուն չէր եկած», «Մեսրոպն է հայ գիրեռու հիմնադիրը» են:

Երբ նույն նախադասության մեջ առկա է խնդրի պաշտոնով մեկ ուրիշ անձնանուն, ուղղական–ենթական կարող է հոդ չստանալ. «Ալիշան կը մասնի **Սիամանթոյին** որմէ նրկու քերթուած կը բաւեն կաղապարը կազմելու ամբողջական գործին» (Յ. Օշական), կամ «**Գեւորգ(ը)** կը սիրէ իր **ծնողները**», «**Վահան(ը)** չէր հաւնած բանախօսը»:

Արևմտահայերենում կանոնավոր է նաև —**ութիւն** ածանցով գոյական հանգման խնդրի անհոդ գործածությունը, ինչպես՝ «ԱՄՆ նորանշանակ համաճախագահը հանդիպեցաւ Յայաստանի **ղեկավարութեան**», «Ձրուցակիցները Արցախի հարցի լուծման մասին մտքեր փոխանակեցին, ինչպէս նաեւ անդրադարձան ԵԱՀԿ Մինսքի խումբի **գործունեութեան**» («Ասպարեզ»):

Արևմտահայերենում սովորաբար մյուս հոլովների ծայնավորահանգ ձևերը որոշիչ հոդով, իսկ բաղաձայնահանգ ձևերը առանց հոդի են գործածվում, ինչպես՝ «տարիին հոլովոյթը» — «տարուան հոլովոյթը», «ընկերին հաւատարիմը» — «ընկերոջ հաւատարիմը», «կառավարութեան հրահանգը», «հայրիկին պատուերը» — «հօր պատուերը», «գիւղէն իջանը», «կամուրջէն անցանք» են: Արևմտահայերենում որոշիչ հոդ սկզբունքորեն կարող են ստանալ բոլոր հոլովական ձևերը:

Որոշյալ առման դեպքում միշտ հոդով է գործածվում բացառական հոլովը: Սեռական–տրականը միշտ չէ, որ հոդ է ստանում: Պարտադիր որոշիչ հոդ է ստանում հատկացուցիչ սեռականը՝ ծայնավորահանգ բառերում: Այլ կերպ ասած՝ արևմտահայերենում որոշիչ և հատկացուցիչ սեռականների համար հոդառությունը քերականական տարբերակիչ հատկանիշ է, ինչպես՝ «Ձուկի՞մ հոտը» և «Ձուկի հոտ», «Մարմարա ճովու՞մ ծուկը» և «Շովու ծուկ»:

Եթե առկա են բազմակի հատկացուցիչներ, հոդ է ստանում վերջինը. «**Յայաստանի նախագահին** հրամանը», «Յայրը որոշեց որդիին հասկցնել աշխատանքի կարելորութիւնը եւ **քրտինքի վաստակին քաղցրութիւնը**» (ԴՀ), «Յամագումարին պիտի մասնակցի նաեւ **Ռուանտայի նախագահին** ներկայացուցիչը» («Մարմարա»):

Պոլսի հայ բարբառում որոշիչ հոդը կարող է դրվել բառի բոլոր հոլովածների վրա, այդ թվում՝ նաև գործիականի: Վերջինիս՝ հոդով կազմություններում, ըստ Հր. Աճառյանի, ընդգծվում է ստացականության իմաստը՝ **հացովը = նրա հացով**: Հիմք բարբառին բնորոշ քերականական այդ հատկանիշը գրական լեզվին փոխանցվեց մասամբ: Եթե որոշակի շարահյուսական կառույցներում հաստատապես ընդգծվում է այդ իմաստը (օրինակ՝ կրկնակի ստացական ձևերում՝ «**Իրենց ձեռքերովը**», կամ բարդ համադասական նախադասություններում, երբ համազոր նախադասություններից մեկում բացակայում է ստացական դերանունը՝ «Ան **իր սըրտին** մեջ սուրբ էր, **բազուկներովը**՝ հերոս» (Դ. Վարուժան), ապա ընդհանուր կիրառություններում դժվար է անպայման ստացականության իմաստ արձանագրելը, և առավել սովորական է թվում քերականական այդ ձևի բուն նշանակությունը, ինչպես՝ «Ձալկին **արեամբը** թաթաւուն այդ **շապիկովն** քստմնելի» (Սիամանթո), «Աշխարհը շատ քիչ կը սիրէ տրտմիլ ուրիշներու **տրտմութեամբը**» (Լ. Սյուրմեյան), «Մարդս ի՛նք միայն կրնայ շինել իր Աստըծուն նըւիրուած տաճարը, իր **մէջքովը**, իր **ձեռքերովը**, իր **խելքովը**» (Լ. Շանթ):

Արևմտահայերենում, ինչպես արևելահայերենում, գործածական են նաև այդ հոլովածնի՝ ստացականով կազմությունները, ինչպես՝ «Կ'աշխատեմ, կը հրճուիմ զայն. յուշքերուս, խորհրդածութեանցս, երազներուս լեռնաբուրմամբը, ծովահոտութեամբը լեցուն, իմ **տարաբախտութեամբս** ու երանութիւններով, իմ ներեական **քաջութեամբս** առլի առանձնութիւնս» (Ինտրա):

Գործիականի՝ որոշիչ հոդով կազմությունը օրինաչափ է արդի արևմտահայ գրական լեզվում՝ որպես բարբառից փոխանցված ընդհանուր-գործածական ձև, և ունի որոշ խոսակցական երանգավորվածություն: Գեղարվեստական խոսքում այն կիրառվում է նաև իմաստային-արտահայտչական ինչ-ինչ նրբերանգներ արտահայտելու համար:

Այլ օրինակներ՝ «Մանկիկը քեզի կը ժպտէր **մօրը** գիրկէն ու քեզ կը կանչէր **թաթիկներով**» (ԶՄ), «Հոն էր նաեւ բժիշկ ու բանաստեղծ Իգնա Սարդասլանը իր բժիշկ **տիկնոջը** հետ» («Մարմար»), «Կրնային ըլլալ արեւելեան իշխանաւորի ձեռքեր՝ հանդիսական ու յեղինակաւոր, իրենց տափօրէն **բարկութեամբը** բռնակալ եւ անգութ» (Վ. Շուշանյան):

Պետք է ասել, որ արևմտահայ գրողները համեմատաբար ազատ են զգում իրենց **հ** (**հո** գիր) և **յ** (**հի** գիր) հնչյուններով սկսվող բառերից, իսկ երբեմն էլ նույնիսկ բաղաձայնից առաջ որոշիչ հոդերի ընտրության հարցում: Գրական լեզվի նորմավորման շրջանում արևմտահայ բանաստեղծները ուսանավորի չափը պահպանելու համար, իսկ երբեմն էլ առանց դրա անհրաժեշտության գործածում են **ն** որոշիչ հոդը՝ «Բոլոր **պղինձն**, բոլոր **կապարն**, բոլոր **թիթեղն** և արոյրն այս քաղաքին» (Սիամանթո), «Լի է ամբողջ ցորեններով աստղահատ Խորունկ **գոգնոցն**: **Յերկերն** հերուան՝ ծարաւի Կը սպասեն իր լայնշի բուռին...» (Դ. Վարուժան): Ն հոդի այդպիսի կիրառություններ հանդիպում են նաև սփյուռքահայ մամուլի և գրականության էջերում: Դրանք մնացուկային ձևեր են գրաբարից:

Մի մասնիկը՝ որպես հոդ, երկու գրականներում ունի իմաստային, ձևային և կիրառական տարբերություններ:

Անորոշ առումը արևելահայերենում չունի քերականական մասնիկ. արտահայտվում է բացասական կամ զրո ծնով և դրանով էլ հակադրվում է որոշյալ ձևերին՝ **մարդ** և **մարդը**:

Ծանոթություն: **Մի** մասնիկը արևելահայերենում հիմնականում ունի նյութական նշանակություն և գործածվում է կամ **մեկ** թվականի նշանակությամբ՝ «**Մի** օր անգամ չսպասեց», կամ էլ **մի** անորոշ դերանվան՝ «**Մի** մրահոն աղջիկ տեսայ Ռիալտոյի կամրջին...» (Ա. Իսահակյան): Երբեմն կարող է գործածվել նաև իբրև եղանակավորող բառ՝ խոսքին հաղորդելով նկատելի խոսակցական երանգ, ինչպես՝ «**Մի** հարցնող լինի՝ ինչ կարող ես անել», «**Մի** գնա տես՝ ինչ է ուզում»: Վերջին դեպքում **մի** մասնիկը արտահայտում է նաև մեղմ հրամանի իմաստ:

Մի–ն արևմտահայերենում հոդ է և գործածվում է հնչյունափոխված տարբերակով՝ **մը** < **մի**:

Եմ օժանդակ բայից և **ալ** շաղկապից առաջ բարեհնչության համար կարող է ստանալ **ն** մասնիկը՝ **մըն**. «Օ՛ն, հառաչ մ'ալ, արցունք **մըն ալ**. – Վերջի՛նն է» (Դ. Վարուժան), «Ուսանաւորի մը պարզութիւնը գրելու արուեստին մէջ բարձրագոյն, բայց դժուար ստացուող արժանիք **մըն է**» (Հ. Օշական), «Բառարանն իսկ առանց օրինակի կմախ **մըն է**», «Չափը այնպիսի բան **մըն է**, որ չափ չունի» (Շ. Շահնուր):

Ձայնավորից առաջ կարող է հնչյունափոխվել. **ը**–ն սղվում է, որի փոխարեն դրվում է ապաթարց՝ **մ'**, ինչպես՝ «Կ'երթայ մութին մէջ, իր ցաւովը գինով... Մինչեւ որ օր մ'ելլէ լոյսին մէջ յանկարծ (Վ. Թեքեյան)», «Ջաղ-

ջիպան Նաւօն հագիւ փողոցի անկիւնը անցած էր, հեղ մ'ալ տեսնես ներս մտաւ Մանան պաճին» (Համաստեղ):

Ունի դիրքային տարբերություն. դրվում է լրացյալից հետո՝ **մարդ մը, գրել մը**:

Աչքի է ընկնում գործառական ավելի մեծ հնարավորություններով.

ա) Կարող է գործածվել գոյականների նաև հոգնակի թվի հետ՝ **տուներ մը, մարդեր մը, խաղեր մը**՝ խոսքին հաղորդելով որոշ խոսակցական երանգ. «Դիտողութիւններու մատեանին մէջ բաներ մը արծանագրելէ ետք, տնօրէնը յիշեցուց թոշակներու վճարման հարցը» (ՀՔ):

բ) Դրվում է ինչպես գոյականների և փոխանուն բառերի, այնպես էլ այլ խոսքի մասերի վրա՝ **աղէկ մը, շուտ մը, կամաց մը** ևն: **Օրինակ՝** «Վարչականները, այդ գիշեր, ժողովին՝ բաւական մը վիճաբաներ են այդ հարցին շուրջ» (ԶՄ), «Վերջապէս տեսանք առաջին յարկի չորրորդ պատուհանէն ներս կամաց մը շարժող Ստեփանին ուրուագիծը» (ՀՔ), «Արամը քովը նստողին կամացուկ մը ըսաւ...» (ՊՊ), «Տնօրէնուհին Սիլվա Գույումճեանն է. վերին աստիճանի նուիրուած մը իր գործին, համեստ, աշխատունակ, գիտակից» («Մարմարա»):

Հավանաբար ունենալով բարբառային-խոսակցական երանգավորվածություն՝ այս կազմությունները (նկատի ունենք նաև մը հոդի գործածությունը գոյականի հոգնակի թվի հետ) գրական լեզվում կամ գրական լեզվի գործառական տարբերակներում հաճախ չեն հանդիպում:

Ծանոթություն: Մի անորոշ հոդը արևելահայերենում սովորաբար հոգնակի թվով գործածված գոյականների, ինչպես նաև այլ խոսքի մասերի հետ կիրառվել չի կարող, բայց խոսակցական լեզվում այդ կիրառությունները անհնար չեն, ինչպես՝ «Մի այնպիսի **հայնոյանքներ** տեղաց, որ բոլորը պապանծվեցին», «Մի լավ դաս տվեց նրան»:

գ) Կարող է հանդես գալ որպես եղանակավորիչ՝ «Հոս է **հայրենիքի մը** օգտակարութիւնը», «Ընդհանուրին մէջ միութենէ ու մեծութենէ զուրկ մեր անցեալն ու ներկան կուտան մասնակի մեծութիւններ իրենց մանրամասնութեանց մէջ **Արտաշէս մը, Տիգրան Բ-մը** եւ ուրիշներ մինչեւ մեր առիւծ հայդուկները» (Ն. Սարաֆյան):

Ինչպես արևելահայերենում, **մը (մի)** հոդը արևմտահայերենում ունի նաև որոշչային կիրառություն՝ **ինչ-որ** դերանվան նշանակությամբ.

«Ջանա՛ երբեմն լռել. այսպեսով անտեղի բաներ ըսել է կ'ազատիս գոնե չափով մը»:

Արևմտահայերի խոսքում մը—ն անհամեմատ լայն կիրառություն ունի, քան մի—ն՝ արևելահայերենում: Մանուկ Աբեղյանը մի առիթով համեմատության համար խոսքի նույն հատվածը բերում է արևելահայերենով և արևմտահայերենով, որոնցից առաջինում մի անորոշ հոդը չի գործածվում և ոչ մի անգամ, իսկ երկրորդում՝ արևմտահայերեն տարբերակում ութ անգամ: Բերենք արևմտահայերեն օրինակը՝ «Աւելորդ չի լինիր գուցէ նկատել, որ արևմտեան գրական լեզուին մէջ անորոշ յօդի չափազանց գործածութիւն մը կայ. շատ մը դէպքերու մէջ կարելի էր բառ մը ընդհանուր ձևով մը գործածել, առանց որևէ յօդի մը, կամ որոշեալ յօդով մը, բայց մը յօդով մը կը գրեն» (1):

Կամ՝ մեկ այլ օրինակ Դակոբ Օշականից, որ նախանծախնդիր է իր խոսքի բազմազանության, լեզվական կառույցի անմիօրինակության հարցում. «Բանաստեղծութիւն մը լեզու է անշուշտ: Բայց ասկէ առաջ զգացումի մը, զգայնութեան մը, խորունկ ապրումներու, յոյզերու կերպադրում մըն է, զգեստաւորում մը, ու այդ իսկ հանգամանքով՝ արտոնութիւն է մերժելու լեզուական ամէն կարգ ու սարք, զրահանք» (Դ. Օշական):

Ցուցական հոդ

Ցուցականության իմաստով գործածվում է միայն **ս** հոդը: Շատ սահմանափակ գործածություն ունի հայոց լեզվի երկու տարբերակներում, արտահայտում է այս դերանվան իմաստ. **աշխարհս** – այս աշխարհը, **մարդս** – այս մարդը, **օրերս** – այս օրերին, **վերջերս** – այս վերջերը են: Մի շարք ձևեր արդի գրականին են անցել գրաբարից **բազմիցս**, **երիցս** (գրաբ. երեք անգամ, իսկ այժմ՝ բազմաթիվ անգամներ), **ամսոյս** են: Այդ կազմությունները խոսքին հաղորդում են նկատելի հանդիսավորություն, պաշտոնական երանգ:

Ցուցականության իմաստը **ս** հոդի մեջ թույլ է արտահայտված: Այդ է պատճառը, որ հաճախ և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում կիրառությունից դուրս դժվար է որոշել՝ **ս** հոդն արտահայտում է ստացականությա՞ն, թե՞ ցուցականության իմաստ. պետք է առաջնորդվել խոսքի բովանդակությամբ, ինչպես՝ «Աշխարհըս միզ մընալու չէ իմաստ-

նասիրաց խաբարով» (այս աշխարհը), «Այդ ծանր լուրը ցնցեց հոգեկան աշխարհս» (իմ աշխարհը):

Դիմորոշ հոդեր

Դիմորոշության իմաստով կարող են գործածվել **ս** և **դ** հոդերը: Սովորաբար դրվում են անձ ցույց տվող գոյականների վրա՝ տալով դրանց համապատասխան դեմքի իմաստ՝ **ս**–ն առաջին դեմքի, **դ**–ն՝ երկրորդ. **ուսանողս՝ ես, ուսանողներս՝ մենք, ուսանողդ՝ դու, ուսանողներդ՝ դուք:** **Օրինակ՝** «Ընդունե՛ սիրով, մեծագոր Աստուած, Աղաչանքները դառնացած սրտիս, **Ամօթահարիս** մօտեցի՛ր **մեծօրդ** բարեգթութեամբ, Փարատե՛ իսպառ, ամենապարզել, Տխրութիւնն իմ այս նշաւակելի» (Գ. Նարեկացի, թարգմ.):

Դիմորոշ հոդի իմաստը այս մասնիկների մեջ որոշ չափով թուլացել է, ուստի հաճախ այդ իմաստը ընդգծելու համար երկու գրականներում էլ դրանք գործածվում են համապատասխան դերանունների հետ՝ **ես ուսանողս, դու ուսանողդ:**

Ս և **դ** հոդերը՝ իբրև դիմորոշ և ստացական հոդեր, ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում, կարող են գործածվել բոլոր հոլովածների հետ, ինչպես՝ «**Գլխովդ** շատ ամպեր կանցնեն, սարը միշտ կա անսասան» (Յ. Թումանյան), «Տես քու **մեկնելէդ** ետքը մենք ինչպես խնդիրը մարեցինք» (Ե. Օտյան):

Այսպիսով՝ ցուցական և դիմորոշ հոդերի կազմության և կիրառության մեջ արևմտահայերենը և արևելահայերենը սկզբունքային որևէ տարբերություն չունեն:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հոլովումը գոյականին և գոյականի իմաստ ունեցող բառերին բնորոշ քերականական փոփոխություն է, որով արտահայտվում է գոյականի հարաբերությունը այլ առարկայի, գործողության կամ այլ հատկանիշի նկատմամբ: Հոլովում ասելով՝ հասկանում ենք բառերի նման ձևափոխությունները: Ձևափոխված յուրաքանչյուր ձև կոչվում է **հոլով**, ձևափոխությունը՝ **հոլովում**:

Հոլովը քերականական կարգ է: Իբրև այդպիսին՝ հոլովը ունի քերականական ձև և քերականական իմաստ: Հոլովական ձև ասելով՝ հասկանում ենք այն ձևը, որով տվյալ հոլովը տարբերվում է մյուսներից: Հայոց լեզվի երկու տարբերակներում էլ թեքված հոլովական ձևերը կազմվում են կա՛մ բառի վրա վերջավորություն ավելացնելով, կա՛մ հերթագայությամբ: Հոլովներից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ ձևը կամ ձևերը: Պատկերը հետևյալն է՝

արևելահայերեն

ուղղ. — 0

սեռ.—տր.—ի, ու, ան, ոջ,
վա, ց և ա, ո

բաց.— ից, ուց

գործ. — ով, ք

ներգ. — ում

արևմտահայերեն

— 0

—ի, ու, ան, ոջ, ուան (վան),
ոյ, ց և ա, օ

— է, մէ

— ով, ք, մով

— — — —

Հոլովվող բառերի բառաձևերի արտահայտած քերականական իմաստները շատ ավելի բազմազան են, քան քերականություններում արձանագրված շարահյուսական հարաբերությունները (նախադասության անդամները):

Հոլովական իմաստ ասելով՝ հասկանում ենք այն իմաստը, որ արտահայտվում է տվյալ հոլովական ձևով: Յուրաքանչյուր հոլով արտահայտում է մեկից ավելի շարահյուսական հարաբերություններ, և երբեմն դժվար է որոշել, թե դրանցից որն է հիմնականը, առաջնայինը: **Օրինակ՝** բացառական հոլովի համար երբեմն գլխավոր իմաստ է առանձնացվում **ելակետի, սկզբնակետի** իմաստը, որը պայմանավորված է **ից, ուց / է, մէ** ձևույթների իմաստով, բայց շարահյուսական հարաբերությունների մեջ բացառական հոլովաձևը ունենում է իմաստային խիստ բազմազան դրսևորումներ՝ պատճառ, ժամանակ, առարկայի հատկանիշ ևն, թեև այնուամենայնիվ դրանց մեջ զգալի է իմաստային ընդհանրությունը: Կամ **ով, ք, մով** ձևույթները գործիականի համար պայմանավորում են **միջոցի** ընդհանուր իմաստը. կիրառության մեջ գործիականի բառաձևերը արտահայտում են այդ ընդհանուր իմաստին առնչվող տարբեր շարահյուսական հարաբերություններ՝ **ձև** («**Յոյզով** մեռաւ ան,

յուշքով կ'ապրի դեռ»), միջոց («Եղեգնեայ գրչով երգեցի փառքեր»), տեղ («Այս իրիկուն ձեզի կու գանք երգ երգելով Լուսնակ ծամբով», միասնություն («Ընկերներով մեկնած էին»), առարկայի հատկանիշ («Կաթով սուրճ հիւրասիրեցին») ևն:

Երկու տարբերակների հոլովական համակարգերի համեմատական քննության տեսակետից առավել էական է առանձին-առանձին ներկայացնել հոլովների ամենատարածված նշանակություններն ու շարահյուսական կիրառությունները, որոնցում արձանագրվում են որոշակի տարբերություններ:

Հոլովվող գոյականների գերակշիռ մասի հոլովի քերականական իմաստները արտահայտվում են հինգ բառածնով, հետևաբար գոյականն ունի հինգ հոլով:

Երկու գրականների համար համակարգային տարբերություն պետք է համարել այն, որ արևելահայերենի հինգ հոլովների դիմաց արևմտահայերենն ունի չորսը: **Բացակայում է ներգոյական հոլովը:**

Սա բացատրվում է երկու գրականների բարբառային հիմքերով: Ներգոյականը՝ որպես առանձին հոլովածն, առաջացավ լեզվի զարգացման հետգրաբարյան փուլում՝ արևելահայ բարբառներում. այն արևմտահայերենում առանձին ձևավորում չունի:

Այդ հոլովի իմաստը արևմտահայերենում արտահայտվում է երեք կերպ.

ա) Սեռական-տրականի ձևով և մեջ կապով. արտահայտում է հիմնականում գործողության տեղի իմաստ՝ «Պարտեզին մեջ աղուոր վարդեր տեսած էի», «Գիրքին մեջը գրառումներ ըրած էր», կամ «Մենք Արժանթինի Պուենոս Այրես քաղաքին մեջ երկխոսութեան անցած ենք Ապատեան Սիբազանին հետ» (Թ. Թորանյան), «Իրականին մեջ վանք գոյութիւն չունէր բառին ընթացիկ առումով» (Շ. Շահնուր):

բ) Ուղղական-հայցականի ձևով. դարձյալ ցույց է տալիս գործողության կատարման տեղը՝ «Երևան հանդիպեցանք», «Ֆրանսա կ'ուսանիմ», «Դպրոցը հանդիսութիւն մը կա», կամ «Փողոցը, տունը, դպրոցին մեջ միշտ և ամեն տեղ քաղաքավար եղէք» (ԶՄ):

գ) Առանձին ժամանականիշ կառույցներում արտահայտվում է ուղղակի սեռական-տրականի ձևով. ցույց է տալիս գործողության կատար-

ման ժամանակը՝ «Այս պարագային չեմ կրնար քեզի հետ խօսիլ», կամ՝ «Մեր անլուծելի կարծած խնդիրները յաճախ ժամանակի ընթացքին կը գտնեն իրենց լուծումը» (ՀՔ), «Յետագային գրքոյկիս ընդգրկած նիւթին շրջանակները կրնան ընդարձակուիլ...» (ՊՊ): Նմանապէս՝ **յառաջիկային, անցեալին, գրոյցի վերջաւորութեան** (=գրոյցի վերջում) են:

Այս ընդհանուր տարբերութիւնից բացի, տարբերութիւններ կան նաև հոլովների կազմության և կիրառության մեջ:

Ուղղական հոլով

Ձևային առումով երկու գրականներում էլ ուղղականը բառի ուղիղ ծնն է՝ հոլովական **գրո** վերջավորությամբ: Իմաստային առումով ցույց է տալիս մի բան անող կամ եղող առարկա: Ցույց է տալիս նաև այն անձը կամ առարկան, որն իր վրա է կրում գործողությունը (սա արևելահայ ավանդական քերականության հայցական հոլովն է): Այդ հոլովով դրված բառերը արևմտահայերենում պատասխանում են **ո՞վ, ի՞նչ(ը), զո՞ւ** (հայցական) հարցերին (արևելահայերենում՝ **ո՞վ, ի՞նչ(ը), ո՞ւմ** (հայցական)): Երկու գրականներում էլ ուղղականը համարվում է ենթակայի հոլովը, քանի որ ենթական միշտ դրվում է ուղղական հոլովով: Ուղղական հոլովով դրվում են նաև նախադասության այլ անդամներ, որոնք երկու գրականներում այդ հոլովի համընկնող շարահյուսական կիրառություններ են: Ուղղական (ուղղական—հայցական) հոլովով արտահայտվում են՝

ա) **ենթական**՝ «**Օրը** ահա կ'իրիկնանայ. — կ'երկարի» (Դ. Վարուժան), «Մարդկային **սիրտը** շատ չի փոխուի, մանաւանդ շուտ չի փոխուի» (Հ. Օշական),

բ) **անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը**՝ «Մի ըսէք թէ Դանիէլ Վարուժան Դուրեանի պէս մեծ բանաստեղծ մըն է: Իրաւ բանաստեղծ: Ապահովաբար» (Հ. Օշական), «**Խաղաղութիւն**, քարանձաւներու թագաւորութեան նման խորունկ ու ահաւոր» (Շ. Նարդունի),

գ) **ստորոգելիական վերադիրը**՝ «Բանաստեղծ մը բանաստեղծ է նոյնիսկ իր փշրանքներուն մէջ», «Բանաստեղծութիւնը կամ հոգիի փաստ է կամ բառերու խաղ: Ու հոգին թերեւս մէկ երկրորդ երեսն է ժամանակին, որ հոս կը նշանակէ պարզապէս ապրումներու անընդմէջ հիւսիսայգ մը» (Հ. Օշական),

դ) գոյական որոշիչը՝ «Եւ համբուրող շըրթունքը բոց կակաչին Քարին ծըռած սիրայոյզ», «Արիւն գրով մ'ան կը գըրէ» (Դ. Վարուժան), «Ո՛վ քաղցրութիւնը նայուածքին իր ծաղիկ. Ո՛վ պերճութիւնը զընացքին իր հպարտ. Ճամբուն վըրայ իր քայլերուն հետքը վարդ՝ Ուր հեշտօրէն կը հածի դեռ իմ մէնիկ» (Մ. Մեծարենց),

ե) կոչականը՝ «Ա՛հ, գըլուխըս փոթորկեց, Այս սեւ հեղեղն տըւի դուրս, Ո՛հ, ներէ՛ ինձ, Աստուած իմ, Մօրըս արտօսըր տեսի...» (Պ. Դուրյան), «Մշա՛կ, ցանէ՛. — յանուն տանդ սեղանին Թելիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ» (Դ. Վարուժան),

զ) ուղիղ խնդիրը՝ «Յորդ անձրեւներու տարափներ թօնուտ խօլ ջրվեժներով մայթը կը ծեծեն» (Մ. Մեծարենց), «**Լուսակարկաչ**—ը Պէշիկ-թաշլեանի կերտած գեղեցիկ բառերէն մէկն է, որ կըցած է համադրել ջուրին ձայնը եւ պայծառութիւնը, լոյսը»,

է) տեղի պարագան՝ «Ֆէտայիներու այդ խումբը կ'երթայ Սասուն», «Խաչատուր Աբովեան 1829ին կը բարձրանայ Արարատի գագաթը Փրոֆ. Պարրոտի հետ, որ Դորպատի համալսարանէն կու գար»,

ը) ժամանակի պարագան՝ «Յաջորդ օրը աւելի եռանդով կ'աշխատէր, լաթերը աւելի սաստկութեամբ կը ճգմէր...» (Երուխան) են:

Ինչպէս տեսնում ենք, շարահյուսական հիմնական կիրառություններում ուղղական հոլովը երկու գրականներում տարբերություններ չի դրսևորում:

Իմաստային և կիրառական մասնակի տարբերություններից են.

ա) Եթե արևելահայերենում ուղղական հոլովով արտահայտվում է միայն իրերի կամ իրի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը, ապա արևմտահայերենում ուղղականով է արտահայտվում ն' անձի, ն' իրի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը, քանի որ, ինչպես ասվել է, արևմտահայերենում բացակայում է անձի և իրի առման քերականական կարգը:

բ) Այս հոլովի կիրառական տարբերություններից է նաև այն, որ արևմտահայերենում դրանով կարող է արտահայտվել ոչ միայն այն տեղը, դեպի ուր ուղղվում է գործողությունը (ուղևորման տեղի պարագա), այլև այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը (պարունակության տեղի պարագա), ինչպես՝ «Մեծ հայրս Մուշ ծնած է, իսկ մեծ մայրս՝ Ալաշկերտ», «Վարուժան ծնած է Բրզնիկ գյուղա-

քաղաքը», «Անոնք լեռները կեցած են», կամ՝ «Հալեպէն եկած Ուրֆայէն ելած էին: Ճամբան հանդիպեցանք» (Գ. Մխիթարյան), «Ամառը գիւղը կը բնակին», «Մաքրեցէք բաժականերն ու պնակները եւ զանոնք պահարանը շարեցէք», «Այս նոյն սեւազգեստ կինը տեսայ ձեր եկեղեցին» (ԶՍ):

Սեռական–տրական հոլով

Իմաստային առումով սկզբունքային տարբերություններ չկան. երկու գրականներում էլ սեռական–տրականը արտահայտում է պատկանելություն, վերաբերություն, ստացականություն (հատկացուցիչը), ունի նաև խնդրային ու պարագայական կիրառություններ, մասնավոր այլ իմաստավորումներ: Արևմտահայերենում պատասխանում է որո՞ւ(ն), ինչի՞(ն) հարցերին:

Այս հոլովի կազմության սկզբունքը երկու գրականներում նույնն է: Այսինքն՝ արևմտահայերենում նույնպես սեռական–տրականը կազմվում է մասնիկավորմամբ և հերթագայությամբ: Մասնիկավոր ձևերը ամբողջությամբ չեն հանդնկնում: Արևելահայերենում ունենք՝ **ի, ու, ան, ոջ, վա, ց** մասնիկները, արևմտահայերենում՝ **ի, ու, ան, ոջ, ուան (վան), ոյ, ց**:

Ներքին թեքման կամ փոփոխության ձևերում երկու գրականներում էլ առկա են նույն հերթագայությունները՝ **այ – օ (ո), ու – ա**:

Երկուսում էլ սեռական–տրականը կազմվում է ուղղականից, ինչպես՝

արևել.՝ **անտառ – անտառի, գինի – գինու, հայ – հայի, ամառ – ամռան, ընկեր – ընկերոջ, օր – օրվա, Վարդանանք – Վարդանանց, հայր – հոր, տուն – տան,**

արևմտ.՝ **անտառ – անտառի, գինի – գինիի, հայ – հայու, ամառ – ամրան, ընկեր – ընկերոջ, օր – օրուան, Վարդանանք – Վարդանանց, հայր – հօր, տուն – տան:**

Մի շարք բառեր սեռական–տրականը կազմում են ներքին կամ արտաքին թեքման այլ ձևերով, ինչպես՝ **կայսր – կայսեր, դուստր – դստեր, հանգիստ – հանգստեան, սուգ – սգոյ** են: Ինչպես այս, այնպես էլ սեռական–տրականի բուն կազմություններում, առանձին բառերի ու բառախմբերի հետ կապված, կան կազմության տարբերություններ, որոնց մասին կիսովի հոլովումները քննարկելիս:

Ավելացնենք միայն, որ եթե արևելահայերենում հոգնակի սեռական–տրականը համակարգային հոլովակազմության մեջ ունի հոգնակի ուղղականի ձև + ի կադապարը՝ քաղաք – քաղաքներ+ի, ընկեր – ընկերներ+ի, տուն – տներ+ի, ապա արևմտահայերենը ունի հոգնակի ուղղականի ձև + ու կադապարը՝ քաղաք–քաղաքներ+ու, ընկեր – ընկերներ+ու, տուն – տուներ+ու:

Նշենք նաև, որ համառոտության պահանջով աշխարհաբար ձևերին զուգահեռ արևմտահայերենում գործածական են մի շարք գոյականների, հիմնականում –**ութիւն** ածանցով կազմված՝ տոհմ, խմբակցություն, ցեղ ցույց տվող անունների, «կարգ մը ազգանուններու» և առանձին բաների՝ **մարդիկ, տղաք, ծնողք** ևն, գրաբարյան հոգնակի սեռականները, որոնք որպես նորմատիվ ձևեր են արձանագրվում արևմտահայ քերականության դասագրքերում, և որոնք, ինչպես այլ առիթով նշել ենք, նաև պոլսահայ բարբառի լեզվատարրեր են, օրինակ՝ **երջանկութեանց, ծաղկանց, մարդոց, տղոց, պատմութեանց, ծառոց, գիտութեանց, գաւակաց, տղոցմէ** ևն: Դրանք քերականական կարծ ձևեր են և մեծ չափով նպաստում են խոսքի կառուցվածքի հակիրճությանը:

Օրինակ՝ «Գինով եմ ես ծաղկանց բոյրէն» (Ս. Մեծարեց), «Տուն հրաւիրեց եօթը կուսակցութեանց պարագլուխները» (Ե. Օտյան), «Կ'աշխատիմ հասկնալ անոր գործը, որ ձգտումին ու յանդգնութեանց նորութեամբը, բայց մա՛նաւանդ իրացուցած **գեղեցկութեանց** կարգ մը կողմերովը արժանի է անկեղծ հետաքրքրութեան» (Յ. Օշական), «Իսկապէս սահման չեն ճանչնար **մարդոց** ողջոյնները, **մարդոց** սիրակեզ բարեւները» (Ռ. Հատտեճյան), «Այն ատեն նկատեց, որ հետզհետէ կը սեղմուէր ուսանող **տղոց** օղակը» (Ա. Անդրեասյան), «Լակոտը յանդիմանուեցաւ **տղոցմէ**», «Այդ **մարդոցմէ** վերջինը վերցուցած է այդ գիրքերը» (ՀՔ):

Սեռական–տրական հոլովի կիրառությունները երկու գրականներում հիմնականում համընկնում են: Արևմտահայերենում սեռական–տրականով արտահայտվում են՝

ա) **հատկացուցիչը**՝ «Թող մարդերը հասկնան **մարդուն** ոճիրը մարդուն դէմ» (Դ. Վարուժան),

բ) գոյականով և անորոշ դերբայով որոշիչը՝ «Բակուր խումբը կեցաւ հառաչակով, ոգեսպառ, **Կատաղութեան** խարոյկով ամբողջովին բոցավառ» (Դ. Վարուժան), «**Բամբռի** ծափեր, վարդի թերթ ու շեր, Բուրեան շոգիներ համապար ու մուշկի...» (Մ. Մեծարեան), «**Խմելու** ջուր կ'ուզէր ինձմէ»,

գ) **հանգման խնդիրը**՝ «Ո՛վ է ինքը. ո՛ր կը բնակի. այս հարցումները այնքան աւելի կը յուզեն միտքս դրքան ահա քիչ քիչ կը մոտենան իրենց տունին» (Գ. Զոհրապ),

դ) **վերաբերության խնդիրը**՝ «Աղջկանց դաստիարակութեանը բնաւ հոգ չի տանիր» (Յ. Պարոնյան), «Ինչո՞ւ կը վախճաս խաւարէն: Խաւարը խաւար է կարճատես **աչքերուն**» (Լ. Շանթ),

ե) **ներգործող խնդիրը**՝ «Աս աղջիկն ալ ծեր **աչքերուն** հափշտակուած էր» (Յ. Պարոնյան), «Երկրորդ սիկառին հետ Գօլօն կը տարուի **մտմտութի**» (Յ. Օշական),

զ) **սահմանափակման խնդիրը**՝ «Սարգս պետք չէ որ թերանայ իր ազգային **պարտականութիւններուն**», «Համոզուած է այդ գործերուն **օգտակարութեանը**» (Ե. Օտյան),

է) **ժամանակի պարագան**՝ «Եթե քու գալուստդ **գարնան մնաց**, շատ կը սոսկամ որ ոչ մտերմական ժպիտդ, ոչ ալ հետեւաբար գարնան փթումը պիտի տեսնեմ» (Պ. Դուրյան),

ը) **տեղի պարագան**՝ «Ու մարմարէ աղբերակի **մ'եզերքին** Վարդի մէկ ծիւ ...Իմ մատներով տնկեցի» (Ռ. Որբերյան), ևն:

Կան իմաստային և կիրառական մասնակի տարբերություններ.

ա) Հատկացուցչի պաշտոնում կիրառվելիս արևմտահայերենում սեռական–տրականը (բուն սեռականը) հոդ է ստանում, ինչպես՝ «**Վարժապետին** աղջիկը», «**Յակոբին** նամակը»:

բ) Արևմտահայերենի սեռական–տրականը կարող է արտահայտել արևելահայերենի ներգոյական հոլովի իմաստ՝ ժամանակի պարագայի շարահյուսական դերով, ինչպես՝ «Սորվելու **ընթացքին** անյաջողություններ ունեցաւ», կամ՝ «Մէկը ութսուն տարի կ'ապրի, միւսը քսան տարեկանին կը մեռնի» (Ռ. Հատտեճյան):

գ) Ինչպես արդեն ասվել է, արևմտահայերենում անձերի կամ անձի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը դրվում է ոչ թե սեռական–տրականով, այլ ուղղական–հայցականով (տե՛ս էջ 37):

Բացառական հոլով

Ցույց է տալիս անջատում, հեռացում: Այլ խոսքով՝ բացառականը ելակետի, սկզբնականի հոլով է: Արևմտահայերենում այդ հոլովով դրված բառերը պատասխանում են **որմէ՞, ուրկէ՞, ինչէ՞ (ն)** հարցերին:

Արևմտահայերեն—արևելահայերեն համադրության մեջ այդ հոլովի հիմնական տարբերությունը կազմության մեջ է: Արևելահայերենի **—ից** և **—ուց** վերջավորությունների փոխարեն արևմտահայերենը բացառականում ունենում է **—է** և **—մէ** վերջավորությունները: Մէ վերջավորությունը քիչ կենսունակ է. այն ավելանում է **—ոջ** արտաքին և **օ (ո)** ներքին հոլովման պատկանող գոյականների վրա, ինչպես՝ **ընկերոջմէ, քրոջմէ, տալոջմէ, հորմէ, եղբորմէ, մօրմէ**: Արևմտահայերենում **—մէ**—ով բացառական է կազմում նաև **Աստուած** բառը՝ **Աստուծմէ(ն)**:

Երկու գրականներում էլ բացառականը սեռական—տրականից են կազմում **—ոջ** արտաքին և **օ (ո)** ներքին հոլովման պատկանող գոյականները:

Արևմտահայերենում ծայնավորահանգ բացառականը որոշյալ առման դեպքում ստանում է հոդ, ինչպես՝ **հայր—հորմէ(ն), տուն—տունէ(ն), համալսարան—համալսարանէ(ն)** ևն: Արևելահայերենում այդպես չէ. բացառականը կարող է որոշիչ հոդ ստանալ միայն բարբառներում՝ **գյուղիցք, քաղաքիցք, ընկերոջիցք** ևն:

Բացառական հոլովի շարահյուսական կիրառությունները երկու գրականներում հիմնականում համընկնում են. այս հոլովով արտահայտվում են.

ա) **տեղի պարագան**՝ «Որովհետև մարդիկ կուգան **վերէն** վար, մարդիկ կ'իյնան **բարձունքէ** մը դէպի հողը, անյեղի օրէնքի մը հպատակելով» (Շ. Շահինուր), «Մեր ոտքերը **երկիմքներէն** կը քալեն, ու մեր գլուխները կը ծաթին՝ աշխարհին զարնուելով» (Ա. Ծառուկյան), կամ՝ «Մուկը **ծակէն** չէր մտներ՝ ցախաւելը **պոչէն** կախեցին», «Քաղցր լեզուն օծը **ծակէն** կը հանէ»,

բ) **Ժամանակի պարագան**՝ «Մենք երկու օրէն տեղ պիտի հասնինք»,

գ) **պատճառի պարագան**՝ «Անոնք քու **խօսքերէդ** վշտացան», «Կիները այդ ծայնին **ազդեցութենէն** մեքենաբար մէկ կողմ քաշուեցան, ծամբայ բանալով» (ՍԱ),

դ) **ձևի պարագան**՝ «Հոգիին ամենէն խորունկէն կը պոռար որ պահը անցաւոր չէ, այլ նախադուռը վաղուան կեանքին» (Շ. Շահնուր),

ե) **հիմունքի պարագան**՝ «Դրան զանգակին գարնուածքէն, սանդուղին վրայ քալուածքէդ կը ճանչնամ քեզ» (ՍԱ) ևն:

Բացառական հոլովի բոլոր այս կիրառությունների մեջ երկու գրականներում էլ առկա է ելակետի ընդհանուր ձևաբանական իմաստը:

զ) **համեմատության խնդիրը**՝ «Ամերիկայի մէջ շէնքեր տեսանք, որոնք էյֆելէն անելի բարձր էին» (ԵՏ), «Անկանոն կը կոչուին այն բայերը, որոնք սովորաբար կատարեալի, հրամայականի եւ անցեալ ընդունելութեան մէջ կը տարբերին կանոնաւոր ձեւերէն» (Շ. Շահնուր), «Բայց... գիտէք նաեւ թէ մեր դարաւոր Դիակներու բուրգն ամպերէն անցաւ» (Ռ. Սևակ):

է) **վերաբերության խնդիրը**՝ «Հայրենիքին տառապանքէն կը խօսէինք» (Սիամանթո), «...Մարդ գրեթէ ո՛չ մէկ գաղափար կ'ունենայ իսկական եկեղեցիի մասին, գրեթէ ո՛չինչ կը հասկնայ իսկական եկեղեցիէն, ո՛չինչով կը հաղորդուի մեր իսկական եկեղեցիին կամարներուն տակ» (Ռ. Հատտենճյան),

ը) **ներգործող խնդիրը**՝ «Հանցագործները ձերբակալուեցան ոստիկաններէն», «Դիմը առնուեցաւ արաբներէն»,

թ) **գոյական որոշիչը**՝ «...Իմ հայրենիքէ որբի եւ ցաւերէ սգաւորի աչուըներու մէջը...», «արշալոյսէ ծաղիկներ...» (Սիամանթո):

Գործիական հոլով

Ցույց է տալիս առարկա, որը միջոց է գործողության կատարման համար կամ ուղեկցում է գործողությանը: Պատասխանում է որո՞վ, ինչո՞վ հարցերին:

Արևմտահայերենում և արևելահայերենում գործիականը կազմվում է ով և բ վերջավորություններով: Բացի դրանցից, արևմտահայերենում գործածական է նաև մով վերջավորությունը, որը գալիս է արևմտյան բարբառներից և չի արձանագրվում միջին հայերենում:

Երկու գրականներում էլ առավել տարածված է ով վերջավորությունը. այդ վերջավորությունն են ստանում ոչ միայն գոյականների մեծ մասը եզակի թվում, այլև բոլոր գոյականները՝ հոգնակի թվում:

Բ վերջավորությունը դրվում է սեռական–տրականի ձևի վրա, երբ գոյականը ենթարկվում է ներքին ա կամ արտաքին ան հոլովման, ինչպես՝ **արիւն – արեան – արեամբ, հանդիպում – հանդիպման – հանդիպմամբ, զարգացում – զարգացման – զարգացմամբ, ուրախութիւն – ուրախութեան – ուրախութեամբ**: Այդ բառերի ն վերջնահնչյունը (երբ սեռական–տրականը վերջանում է **ն–ով**) հնչյունափոխական առնմանության օրենքով վերածվում է **մ–ի** (արևմտահայերենում առկա է նաև **իւ>եա>ե** հնչյունափոխությունը)՝ **բազմութիւն – բազմութեամբ**:

Ով վերջավորությունը սովորաբար դրվում է ուղղականի ձևի վրա՝ **ուղերծ – ուղերծով, նամակ – նամակով, այգի – այգիով** (արևելահայերենում **ով–ը** սեռական–տրականի ձևի վրա դրվում է գոյականների ներքին **ո** և արտաքին **ոջ** հոլովման դեպքում):

Արևմտահայերենում ներքին **օ** և արտաքին **ոջ** հոլովման գոյականները (նաև **Աստուած** բառը) գործիականը կազմում են մով վերջավորությամբ՝ դարձյալ սեռական–տրականի ձևերից, ինչպես՝

արևել.՝ **հայր – հոր – հորով, աներ – աներոջ – աներոջով, Աստված – Աստծով,**

արևմտ.՝ **հայր – հոր – հորմով, աներ – աներոջ – աներոջմով, Աստուած – Աստուծմով:**

Իբրև ձևակազմական կամ կիրառական տարբերություն՝ պետք է նշել հետևյալը. արևելահայերենում **բ** վերջավորություն են ստանում **–ություն և –ում** ածանցներով վերջավորվող գոյականները՝ **պետություն – պետությամբ, ուրախություն – ուրախությամբ, շարժում – շարժմամբ**: Դրանց **ով–ով** ձևերը՝ **պետությունով, ուրախությունով, շարժումով**, ունեն խոսակցական երանգ: Վերջին հոլովածները (**ով** մասնիկով) արևմտահայերենում նույնպես բարբառներից են փոխանցվել գրականին, ունեն խոսակցական երանգ, սակայն, ի տարբերություն արևելահայերենի, ավելի գործածական են. «Ու մարմարին ծանրութիւնով իջնող ծիւնին տակ Աւերակներուն ու մեռելներուն մեծութիւնը կը մսի» (Սիամանթո):

Արևմտահայերենում ավելի կենդանի և սովորական են **–ում** ածանցով բառերի **ով** վերջավորությամբ կազմությունները՝ **ուսումով, շարժումով, խոստումով** ևն:

Երկու գրականներում էլ **արիւն բառն ունի զուգածներ արյամբ // արյունով / արեամբ // արիւնով**. առաջինը որպէս գրաբարյան կազմութիւն, ընկալվում է գրական–գրքային երանգով, իսկ երկրորդը համեմատաբար խոսակցական բնույթ ունի: Դրանք հաճախ զուգահեռ գործածվում են խոսքին բազմազանութիւն հաղորդելու կամ տաղաչափական նպատակներով, ինչպէս Դ. Վարուժանի «Յայրենիքի ոգին» բանաստեղծության հետևյալ հատվածում.

Իսկ որդիներդ թըշուառ
Կամ հեռացած հօրենական երկըրէն
Կը խառնակին ազգերու խորդ **արիւնով**,
Կամ նոյն երկրին ծոցին մէջ
Կը մեռնին լուծն ուսերնուն...
Ո՛չ մեր դաշտերն՝ եղած **արեամբ** ճախճախուտ,
Ո՛չ պարիսպներն ու տաճարներ քարուքանդ
Ձիրենք կըրնան զայրագնել...

Իբրև հնաբան ծն՝ արևմտահայերենում սակավաթիվ բառերի համար գործածական է նաև գրաբարից ավանդված **աւ** մասնիկով գործիականի կազմությունը՝ **կարգաւ, հրապարակաւ, միջոցաւ, պատճառաւ**: «Փողոց չի կրնար ելլել տեսողութեան եւ լսողութեան բացակայութեան **պատճառաւ**» (Ռ. Հատտեճյան), «Անօթութենէ պիտի խանգարուէիք եւ տուն դրկուէիք տկարութեան **պատճառաւ**» (ՀՔ):

Գործիական հոլովը, ինչպէս նշվել է, արևմտահայերենում կարող է որոշիչ հոդ ստանալ՝ **ծեռքովը, աշխատանքովը, հրամանովը**. «Նստեցայ տրտում ու լո՛ւռ դիտեցի – Հոգւոյս **ծարաւովը** արեւելքցի» (Ռ. Սևակ):

Գործիական հոլովի շարահյուսական կիրառությունները արևմտահայերենում և արևելահայերենում ամբողջությամբ համընկնում են. այս հոլովով արևմտահայերենում արտահայտվում են.

ա) **միջոցի խնդիրը**՝ «Մամուռներով լցաւ աղբիւրն մարմարի» (Ռ. Որբերյան),

բ) **տեղի պարագան**՝ «Ծա՞ռ լինի որ **գլխովը** քամի անց չկենայ»,

զ) ձևի պարագան՝ «Քանի՜ խուրճեր շաղերով, Վարդենին թաց է – ես կապեցի խաղերով:— Շոցիկը բաց է» (Դ. Վարուժան), «Ուր դուն թեւերուս մէջ կը դողայիր քու մարմնիդ բոլոր մասնիկներովը» (Լ. Շանթ),

դ) նպատակի պարագան՝ «Գործով քաղաք մեկնած էր»,

զ) ժամանակի պարագան՝ «Գիշերով ճամբայ ելած էին», «Չատկի օրով մեղքը մտնել», «Տիգրան Մեծի օրով Հայաստանը հզօրացաւ»,

ե) հիմունքի պարագան՝ «Սպարապետին հրամանով հոս հաւաքուած են», «Շունը կաղալով չի սատկիր»,

զ) գոյական որոշիչը՝ «Անկա ուժով երիտասարդ մըն է», «Քրինձով ապուր կը սիրէ», կամ՝ «Անոր կինը՝ Թամար, քսանի մօտ, կարմրուկ թուշերով, աղուոր հասակով կին մըն էր, իր էրիկէն կ'ակնածէր այնպէս, ինչպէս նոր հարս մը իր կեսրայրէն» (Համաստեղ), նն:

ՀՈԼՈՎՈՒՄ

Երկու գրականներում էլ հոլովական ձևերը դրսևորվում են եզակի սեռական–տրականի կազմության մեջ: Կազմության սկզբունքները նույնն են՝

ա) վերջավորություններով՝ ի, ան, ոջ, վա (արևմտ. ուան (վան)), ո (արևմտ. ոյ), այսպէս՝

արևել. անտառ – անտառի, ընկեր – ընկերոջ, ամառ – ամռան, օր – օրվա, սեր – սիրո, Պոլիս – Պոլսի // Պոլսո,

արևմտ. անտառ – անտառի, ընկեր – ընկերոջ, ամառ – ամրան, օր – օրուան, սեր – սիրոյ, Պոլիս – Պոլսոյ,

բ) արտաքին թեքմամբ՝ բառավերջի ծայնավորի կամ երկինջյունի փոփոխությամբ՝ ի / ու, ք / ց (ի / ու հերթագայությունը արևմտահայերենում չի գործում), այսպէս՝

արևել. Վարդանանք – Վարդանանց, Ռշտունիք – Ռշտունյաց, գինի – գինու, այգի – այգու,

արևմտ. Վարդանանք – Վարդանանց, Ռշտունիք – Ռշտունեաց, բայց՝ գինի – գինիի, այգի – այգիի,

գ) ներքին թեքմամբ՝ բառամիջի ծայնավորի կամ երկինջյունի փոփոխությամբ՝ այ / օ, ու / ա, ինչպէս՝ հայր – հոր // հօր, տուն // տան:

Արևմտահայ քերականները գոյականների այս կամ այն խմբի հոլովումը նշելու համար սովորաբար ընտրում են որևէ գոյական և դրանով

անվանում ամբողջ հոլովումը: Դա կոչվում է **տիպար հոլովում** (տե՛ս 19, 134–141):

Ի–**Մ** որպես ընդհանրական հոլովում, այդպիսի տիպար չունի: Ու հոլովման համար ընդունվում է **հայ** տիպարը, **ան** հոլովման համար՝ **աղջիկ**, **ոչ** հոլովման համար՝ **տէր**, **ուան** (**վան**) հոլովման համար՝ **օր**, **ա** ներքին հոլովման համար՝ **գիտութիւն**, **օ** հոլովման համար՝ **հայր** **նն**:

ԵԶԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Արտաքին հոլովում

Ի հոլովում

Երկու գրականներում էլ **ի** հոլովումը եզակի թվում ընդհանրական հոլովում է: Անհնար է բնութագրել այդ հոլովման ընդգրկման սահմանները ո՛չ ձևային, ո՛չ իմաստային և ո՛չ էլ որևէ այլ հատկանիշով: Սեռական–տրականում **ի** են ստանում գոյականների մեծագույն մասը, նաև գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի բառերը՝ ածականը (**լաւ – լաւի**, **չար – չարի**, **ճերմակ – ճերմակի**), թվականը (**մէկ – մէկի**, **երկու – երկուքի**, **չորս – չորսի**, **եօթը – եօթնի**, **տասը – տասնի**), հարակատար և ենթակայական դերբայները (**նստած – նստածի**, **երգող – երգողի**): Ընդունված է ասել, որ բոլոր այն գոյականները, որոնք այլ հոլովման չեն ենթարկվում, պատկանում են **ի** հոլովման: Սակայն դա ճշգրիտ բնորոշում չէ, քանի որ **ի** հոլովման են պատկանում նաև որոշ գոյականներ, որոնք ենթարկվում են նաև այլ հոլովումների: Եվ դա առավել բնորոշ է արևմտահայերենին, քանի որ այստեղ, ինչպես նշվել է, համեմատաբար շատ են հոլովական զուգաձևությունները **օրուան // օրի**, **տունի // տան**, **ծկան (ծկան իւղ) // ծուկի**, **աշունի // աշնան**, **ընկերոջ // ընկերի**, **տիկնոջ // տիկինի**, **նաւի // նաւու** **նն**:

Ի հոլովման պատկանող գոյականների՝ բացառականի և գործիականի վերջավորությունները ավելանում են ուղղականի վրա:

Ի հոլովման հարացույցը

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ուղղ.	նկար	նկար
սեռ.—տր.	նկարի	նկարի
բաց.	նկարից	նկարե
գործ.	նկարով	նկարով
ներգ.	նկարում	—

Եզակի թվում ի հոլովման ոլորտը արևմտահայերենում փոքր-ինչ ընդլայնվում է, քանի որ ի-ով են հոլովվում նաև ի-ով վերջավորվող գոյականները՝ **գինի – գինիի, որդի – որդիի, այգի – այգիի, հոգի – հոգիի, ուսուցչուհի – ուսուցչուհիի, երկաթուղի – երկաթուղիի** ևն, ինչպես՝ «Ով որ յիշէ կարմիր վարդերուն հեքեաթը, թող չմոռնայ **աստուածուհիին** ցաւն ալ» (Շ. Նարդունի), «Սրտացաւ խօսակցութիւն մը ունեցանք **տնօրէնուհիին** հետ եւ տխրութեամբ հաստատեցինք, որ Իսթանպուլահայ դպրոցները եւս կը տառապին Յայերէն լեզուի ուսուցիչներու պակասէն» (Թ. Թորանյան), «Դասախօսութիւններու պահուն ծածօթացանք այս **Յայորդիին**» («Մարմարա»):

Բացի այդ, –ում ածանցով գոյականների համար արևմտահայերենում առավել սովորական է ի հոլովումը՝ **ուսում – ուսումի, հարցում – հարցումի, շարժում – շարժումի, կատարում – կատարումի** ևն: Օրինակ՝ «**Սպասումիս** ու Յոյսիս քաղցրութեանը հետ մինակ էի այդ իրիկուն» (Սիսիմանթո), «**Յին ձեւ է խոստումի, երդումի, հին, մաշած արարողութիւն**» (Վ. Շուշանյան), «**Չպիտի՞ ըլլայ, որ կռուիք, մաքառիք ծուլումին ու այլասերումին դէմ**» (Շ. Շահնուր), «**Մշակոյթի ծաղկումին** պայմանները քանդուել էին, եւ անստուգութեան, թշուառութեան եւ վախի մթնոլորտը մղձաւանջի մը պէս կը կախուէր հայկական Սփիւռքին վրայ» (Ա. Անդրեասյան):

Ծանոթություն: Հոդառության և հոգնակիականության ժամանակ բառավերջի **օ-ն** (հատուկ անուններ, օտար բառեր և նորագույն փոխառություններ) պահպանվում է՝ **Սարօ-ն, օթօ-ն, օթօ-ներ, իմ օթօ-ս** ևն, բայց հոլովման ժամանակ դառնում է **ո** և հաջորդ ձայնավորին միանում է յ-ով, ինչպես՝ **Սարոյին, Սարոյով, օթոյով, օթոյէն, Կարոյէն:**

Ու հոլովում (հայ տիպար)

Այն հանգամանքը, որ արևելահայերենում ու հոլովման մի խումբ գոյականներ (գինի ~ գինու, այգի ~ այգու են) արևմտահայերենում ենթարկվում են ի հոլովման, տպավորություն է ստեղծում, թե ու հոլովման ոլորտը արևմտահայերենում փոքր-ինչ նեղանում է: Բայց դա այդպես չէ:

Նախ՝ արևմտահայերենում ու հոլովման են ենթարկվում արևելահայերենում այդ հոլովման չպատկանող մի շարք միավանկ գոյականներ՝ գահ — գահու, դար — դարու, էշ — իշու, ժամ — ժամու, ծով — ծովու, կով — կովու, հայ ~ հայու, հաւ — հաւու, հով — հովու, մահ — մահո՞ւ, նաւ — նաւու, շահ — շահու, պապ — պապու, պահ — պահու են: (Այս շարքում ոմանք նշում են նաև էջ, արջ, մանչ բառերը, մինչդեռ դրանց ու—ով սեռական—տրականի ձևերը արդեն հնացած են և անգործակա՜ն): Նշված գոյականների մի մասը ենթարկվում է նաև ի հոլովման ծով — ծովի, շահ — շահի, հով — հովի, նաւ — նաւի: Արևմտահայերենում այդ գոյականների հոլովումը տակավին կանոնարկված չէ: Կանոնարկված չէ նաև դրանցով բաղադրված գոյականների հոլովումը՝ միջնադար — միջնադարու, ռուսահայ — ռուսահայու, բայց նախագահ — նախագահի, շոգենաւ — շոգենաւի, մրրկահաւ — մրրկահաւի են:

Ապա՝ ու—ով կարող են հոլովվել նաև՝ գլուխ, ամիս, տղայ, ծամբայ և մի քանի այլ բառեր:

Ծանոթություն: Շաբաթ բառի համար ու—ով ձևը շաբթու, հնացած է. սովորական է շաբաթուան: Շաբաթ օրը նշելու համար սովորական է շաբաթի ձևը, ինչպես՝ «Քրիստոնեայ մանուկներ էինք, բայց Կիրակիին չէր որ կը սպասէինք, այլ Շաբաթին» (Ա. Ծառուկյան):

Այնուհետև՝ ու հոլովման են ենթարկվում նաև եր, ներ հոգնակերտներով հոգնակին ձևավորող բոլոր գոյականները, այդ թվում փոխանունները՝ այգիներու, գետերու, միրգերու, ջուրերու, պատասխաններու, մեծերու, նստածներու ևն:

Հայտնի է, որ արևելահայերենում ու հոլովման են ենթարկվում նաև ամուսին, անկողին, Աստված և մարդ բառերը: Այս շարքից արևմտա-

հայերենում ու հոլովման է պատկանում մարդ բառը՝ մարդու։ Աստուած–ը ենթարկվում է ոյ հոլովման՝ Աստուծոյ։ Ամուսին և անկողին բառերի համար ընդունված է ի հոլովումը՝ ամուսինի, անկողինի։

Անորոշ դերբայը երկու գրականներում էլ պատկանում է ու հոլովման՝ գրել – գրելու, ասել – ասելու / ըսել – ըսելու, անել – անելու / ընել – ընելու։ Արևմտահայերենում դերբայական լծորդի ի, ու ծայնավորները փոխվում են ե–ի՝ թողուլ – թողելու, խօսիլ – խօսելու, թռչիլ – թռչելու, յոգնիլ – յոգնելու են։

Ու հոլովման հարացույցը.

	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
ուղղ.	մարդ	հայ	մարդ	հայ
սեռ.–տր.	մարդու	հայի	մարդու	հայու
բաց.	մարդուց	հայից	մարդէ	հայէ
գործ.	մարդով	հայով	մարդով	հայով

Օրինակ՝ «Կամուրջը հասած կեցաւ. չկրցաւ անցնիլ. տասը փարա չունէր. այդ պահուն զգաց որ բան մը կը պակսէր», «Մակոյկը ետին ձգած նաւու մը կը նմանէր, հեռուն, խիստ հեռուն» (Գ. Ջոհրապ), «Բայց կայ նոյն ատեն պատումը. նաւուն ուղեւորութիւնը ծովուն վրայ, փոթորիկը, նաւաբեկումը» (Գ. Պըլտյան), «Մայրս գիս բերաւ ծմբան ամսու մը, մեր հինաւուրց տան մէջ՝ Ծառերը, ծաղիկներն ու մարդիկը սիրելիւ համար» (Վ. Շուշանյան), «Հայ լեզուն տունն է հայուն...» (Մուշեղ Իշխան), «Բայց հիմա, իր մահէն աւելի քան տասնը-հինգ տարի վերջ, երբ կարօտով կը մտածեն իմ մասին...» (Ռ. Հատտեճյան)։

Ոյ (ո) հոլովում (Կիլիկիա տիպար)

Սա արևելահայերենում դասվում է այլաձև կամ զարտուղի հոլովման մեջ։ Բայց արևմտահայ քերականության մեջ դիտարկվում է որպես առանձին արտաքին հոլովում, քանի որ այս դեպքում դրա ընդգրկման ոլորտը մեծանում է։ Արևելահայերենում ո հոլովման է ենթարկվում սեր

բառը սիրո: Երբեմն սեռական–տրականում ո վերջավորություն են ստանում հույս, լույս, սուգ, պատիվ, մամուլ, խնդիր բառերը (հուսո, սգո են), բայց այս ձևերը սոսկ հնաբանությունների արժեք ունեն, գործածվում են սահմանափակ թվով բառակապակցություններում, դարձվածներում: Դրանց կանոնական ձևերն են՝ հույսի, լույսի, սգի // սուգի, պատվի, հրի:

Արևմտահայերենում ոյ հոլովման ոլորտը մեծ է: Այս հոլովման են ենթարկվում՝

ա) Սէր, Աստուած, Պոլիս բառերը:

բ) Իա–ով վերջավորվող օտարազգի հատուկ տեղանունները՝ Ասիա, Իտալիա, Եդեսիա, Փերմանիա, Եւդոկիա, Ռուսիա են:

ուղղ. Կիլիկիա

սեռ.–տր. Կիլիկիոյ

բաց. Կիլիկիայէ

գործ. Կիլիկիայով

Այս կանոնին չեն ենթարկվում իա–ով վերջացող անձնանունները՝ Երեմիա, Եղիա, Մարիա, Ազարիա: Դրանք ենթարկվում են ի հոլովման՝ Երեմիայի, Եղիայի, Մարիայի, Ազարիայի:

Ծանոթություն: Նշված աշխարհագրական անունները կարող են սեռական–տրականը կազմել նաև ի–ով՝ Իտալիա – Իտալիայի, Ասիա – Ասիայի, Զունգարիա – Զունգարիայի են:

Նշենք նաև, որ գրաբարում ի–ով վերջավորվող գոյականների սեռական–տրական հոլովը կազմվում էր ոյ վերջավորությամբ և ուղղականի ի վերջնահնչյունը ւ–ի փոխելով, ինչպես՝ հոգի – հոգւոյ, գինի – գինւոյ, որդի – որդւոյ, ոսկի – ոսկւոյ են: Արևելահայ բարբառներում ոյ–ը դարձել է ու: Արևմտահայերենում մի քանի բառերի այսպիսի ձևերը համեմատաբար ակտիվ գործածություն ունեն հատկապես բարձր ոճերում՝ որդի – որդւոյ, եկեղեցի – եկեղեցւոյ, հոգի – հոգւոյ: Օրինակ՝ «Բայց կիները աստուածային գիտութիւն մը ու անասնական բնագոյ մը ունին: Ի՞նչ որ չեն գիտեր՝ կը զգան և ի՞նչ որ կը զգան՝ իրենց ամբողջ հոգւոյն ու

մարմնոյն մէջ կը զգան...» (Ռ. Սևակ): Արևմտահայերենում այս ծները չունեն ընդգծված հնության երանգ, ինչպես արևելահայերենում է, թեև դարձյալ դիտվում են որպես հնացած կազմություններ: Օրինաչափ են՝ **հոգի – հոգիի, գինի – գինիի, եկեղեցի – եկեղեցիի** սև:

Աստուած բառը, արևմտահայերենում ենթարկվելով ոչ հոլովման, բացառականը և գործիականը կազմում է համապատասխանաբար մէ և մով վերջավորություններով.

ուղղ.	Աստուած
սեռ.–տր.	Աստուծոյ
բաց.	Աստուծմէ
գործ.	Աստուծով

Օրինակ՝ «Կ'երթա՞յ հանըմն՝ անմատոյց, քողածածուկ, հոյածել, Կի՛ն կամ ոգի, պահ մ'ելած պալատներէն Պոլիսի, Պոլսոյ Ոգի՛ն, խուսափուկ, անքննելի՛, սխրալի՛...» (Վ. Թեքեյան), «Տառապանքը կը կաթի հոգիներուն վրայ մեր Սէկ անծանօթ **Աստուծոյ** շանթահարող գթութեամբ» (Բ. Թովալյան):

Սէր բառը թեքված ծներում հանդիպում է նաև անհնչյունափոխ հիմքով, ինչպես՝ «Սիշտ անգիտակցաբար մենէ բան մը տալով նախ, այդ փոխ տրուածը բազմապատկուած ետ առնելով, յետոյ՝ երբ հասկցող էակ է մեր **սէրին** առարկան» (Վ. Թեքեյան), «Աղետին առաջին ամիսները անսահման **սէրով** ու գորովով իրարու սեղմուած, իրարու կապուած էին Փարիզի մայթերը նետուած երիտասարդները» (Շ. Շահնուր): Կանոնական է **սիրոյ** կազմությունը: **Սէրի** ձևը խոսակցական է, իսկ գործիականի **սիրով** և **սէրով** ձևերը, որոնք նույնպես կանոնական են, առանձին կիրառություններում ունեն իմաստային որոշակի տարբերություն. առաջինը **սէրով**–ը, վերաբերում է սիրո զգացումին. «**Սէրով**, **սէրով** խոցեցիր զիս՝, Սիրտըս **սէրով** խոցեցիր. Սիրտըս քահիլ, վարդի՛ պես բաց Դագաղի՛ պես գոցեցիր...» (Ռ. Սևակ): Երկրորդը՝ **սիրով**–ը, նշանակում է **հաճույքով, հաճությամբ**, ինչպես՝ «**Սիրով** (=հաճույքով) կը կատարեն քու խնդրանքդ»:

Ուան (վա) հոլովում (օր տիպար)

Ժամանակ ցույց տվող գոյականների մի մասի սեռական–տրականը արևելահայերենում կազմվում է վա, արևմտահայերենում ուան (վան) վերջավորությամբ, ինչպես՝ օր – օրվա // օրուան, իրիկուն – իրիկվա // իրիկուան, գիշեր – գիշերվա // գիշերուան են: Ուան ձևը առաջացել է գրաբարյան սեռականից (եան>ուան)՝ ամիս – ամսեան – ամսուան: Հետագայում արևելահայ բարբառներում ն վերջնամասնիկը, գիտակցվելով որպես որոշիչ հոդ, ընկել է: Արդյունքում արևելահայերենում ունենք վա հոլովումը՝ ուան>վա, որը, ի դեպ, իր սկզբնական ձևով վերականգնվում է բացառական և գործիական հոլովների կազմության լիաձայնական ձևերում՝ գիշերվանից, օրվանից, երեկվանից, ամառվանից են: Արևմտահայերենում այդ հոլովման են ենթարկվում ամառ, ձմեռ, անգամ, ատեն, հերու (հզվ.), վաղը, ժամանակ, հիմա (հիմիկուան, հիմակուան), առաջ, շաբաթ, այսօր, կեսօր, ցերեկ, ամիս, տարի բառերը: Հոլովման այս-տիպին պատկանող բառերի մեծ մասի սեռական–տրականը կարող է կազմվել նաև սովորական ի ձևով՝ գիշեր – գիշերի, առաւօտ – առաւօտի, անգամ – անգամի, ցերեկ – ցերեկի, տարի – տարիի, ժամանակ – ժամանակի, երեկ – երեկի են:

Արևմտահայերենում ամիս, ատեն, ժամանակ, անգամ բառերի բացառականը, որպես կանոն, կազմվում է է վերջավորությամբ՝ ուղղականի հիմքից՝ ամիսէ, կեսօրէ, ատենէ, ժամանակէ, անգամէ: Մյուսների բացառականը կազմվում է նույն է վերջավորությամբ՝ սեռական–տրականի հնչյունափոխված հիմքից՝ շաբաթ – շաբաթուան – շաբաթուընէ, ցերեկ – ցերեկուան – ցերեկուընէ, տարի – տարուան – տարուընէ, կեսօր – կեսօրուան – կեսօրուընէ, ամառ – ամառուան – ամառուընէ են: Կան նաև զուգաձևեր՝ ամառէ // ամառուընէ, ձմեռէ // ձմեռուընէ, շաբաթէ // շաբաթուընէ, կեսօրէ // կեսօրուընէ, օրէ // օրուընէ, տարիէ // տարուընէ են, ըստ որում, առաջին ձևերը հետզհետե ավելի գործածական են դառնում:

Ուան (վա) հոլովման հարացույցը.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ուղղ.	օր	օր
սեռ.—տր.	օրի // օրվա	օրի // օրուան
բաց.	օրից // օրվանից	օրե // օրուընե
գործ.	օրով	օրով
ներգ.	օրում	—

Օրինակ՝ «Յեռուներեն գիշերապահի մը մահակին հեծկտուքները գիշերուան ժամը կը պատմեն, ու հովին մէջ կը մարմնին: Կեսգիշեր է: Կեսգիշերը. **գիշերին**՝ խաւարին հոյակապ համայնութիւնը» (Ինտրա), «— Եթէ տրուեր, օ՛. եթէ տրուեր **մահուան** առջեւ օր մը եւս ապրելու կեանք, պիտի ուզէի որ ետ գար ինձի մանկութիւնս...» (Ա. Ծառուկյան), «Սրտիս **երեկի** քոյրե՛ր անմեկին, Ինչպե՛ս լքել ձեզ տրտում այս ժամուս», «Լքե՛ վշտերդ **երեկի** ծոցն ա՛լ մթին» (Մ. Մանուկյան), «Գիրքը տարւոյն իւրաքանչիւր **օրուան** համար գրուած քառեակներ կը պարունակէ», «**Շաբթուան** միւս օրերուն ի՞նչեր կը զգան անոնք, ի՞նչպիսի կեանք մը կ'ապրին...» (Ռ. Յատտեճյան):

Կամ՝

Ամառուան քաղցըր գիշեր,— գլուխը կամին վրայ դրած՝

Աշխատանքի սուրբ Ոգին կալերուն մէջ կը ննջէ:

(Դ. Վարուժան)

Այսօր երեկն է դարձեալ.— կը կապեմ յոյսս **վաղուան**.

Կը ծնի վաղը խոժոռ՝ կաղապարէն **երեկուան**:

(Վահե Վահյան)

Նշված գոյականներից մի քանիսը կարող են ենթարկվել նաև ու հոլովման կազմելով սեռական—տրականի քիչ գործածական զուգածներ, ինչպես՝ **ամիս — ամսու // ամսուան, տարի — տարու // տարուան, շաբաթ — շաբթու // շաբթուան**: Ինչպես՝ «...Ծանրութիւնն ալ հաւանաբար 15 տարու տղեկի մը ծանրութեան հաւասար էր» (Ռ. Յատտեճյան): Ու հոլովման ենթարկվող **մահ** և **ժամ** բառերը նույնպես ունեն **ուան—ով** ձևեր **մահ — մահու // մահուան, ժամ — ժամու // ժամուան**: Այն բառերը,

որոնք արձատական ու–ով են վերջավորվում, եզակի սեռական–տրականը կազմում են միայն ան հոլովակերտով, ինչպես՝ **հերու – հերուան, առտու – առտուան** (բայց՝ **առաւօտ – առաւօտի // առաւօտուան**), **իրկուն – իրկուան**:

Ան հոլովում (աղջիկ տիպար)

Արևմտահայերենում ան հոլովման պատկանում են.

ա) –ում ածանցով կազմված բայանունները՝ **ուսում – ուսման, շարժում – շարժման, ծագում – ծագման, հարցում – հարցման, հեռացում – հեռացման** ևն, որոնք, ինչպես արևելահայերենում, կարող են կազմվել նաև ի հոլովմամբ՝ **շարժումի, հարցումի, ուսումի, կատարումի** ևն: Վերջինները, ինչպես նշվեց, արևմտահայերենում կանոնական և ավելի գործածական կազմություններ են՝ «Ամեն խորհրդանիշ, ամեն աստուած եւ ամեն սրբազան կիրք օգտագործեց Վարուժան իր կոթողային արուեստի կերտումին համար» (Թ. Ազատյան):

բ) **Աղջիկ, էրիկ** (բարբռ.), **կնիկ, մանուկ, լեռ, դուռ, բեռ, եզ, նուռ, թռռ** բառերը, որոնք, բացի առաջին երեքից, կարող են հոլովվել նաև ի–ով՝ **մանուկի, դուռի, բեռի, թռռի** ևն: **Ձուկ** և **մուկ** բառերը արևմտահայերենում ենթարկվում են ի հոլովման՝ **ծուկի, մուկի** (բացառությամբ քարացած ձկների՝ **ծկան իւղ**):

Օրինակ՝ «Փողոցի վրայ նայող Փոքրիկ սենեակին պատեն երիտասարդ կնոջ պատկերը անորն է. **էրկանը** աղէկ օրերուն մեռած էր կուրծքի հիւանդութենէ մը...» (Գ. Ջոհրապ), «Երիվարս թամբած եմ արդէն՝ եւ կեանքի ու կռիւի տենդէն **դուռիդ** առջեւը կը վրնջէ...» (Սիւսմանթո), «**Մանուկի** պէս կը պլլըռուի երբեմն ալ Մայր թուփերու քըղանցքին» (Մ. Մեծարենց), «**Դուռին** ցնցումը դուրս հանեց պատուհանէն աղջկան մը դէմքը», «Հին օրերուն, երբ հոգին նեղանար, երբ ափերուն մէջ քերուրտութենքներ զգար, **ծուկի** պէս Պոլիս կ'երթար» (Հ. Օշական), «Ծաշէն առաջ մասունքի պէս կուտայ ծերին, **մանուկին**, Որոնք դողդոջ կամ վարանոտ խաչ կը հանեն երկիւղած» (Զ. Խրախունի), «Ամեն փակուող **դուռի** փոխան՝ Տեսնել բացուող դռները բիւր» (Գ. Ադդարյան):

Ծանոթություն: Առաջին երեք գոյականների (աղջիկ, էրիկ, կնիկ) այլ հոլովածները բարբառային են, ինչպես՝ «Միւսները ...չեն իսկ տպաւորած ձեզի վերի փողոցի աղջիկին չափ» (Յ. Օշական):

զ) **Գարուն, աշուն, ամառ, ծմեռ** բառերը՝ **գարնան, աշնան, ծմրան, ամրան**, բայց առաջին երկուսի ի–ով կազմությունները ավելի տարածված են և նախընտրելի՝ **գարունի, աշունի**: Ինչպես՝ «Պատուհանըս մատնահարեց ու անցաւ Դովն հերարծակ աշունին», «Հազար բարիք ես տայի. Գոլը կրակին ճարճատուն, Կութքը բերրի դաշտերուն, Բոլոր միրգերն աշունի, Ու մեղր, ու կաթ, ու գինի...» (Ս. Մեծարեց), «Չէքիրկէի մէջ աշունի ամիս մը՝ թերեւս անվերադարձ կերպով ջնջեր յիւանդութեան ամէն յետք» (Յ. Օշական), «Ամէն գարունի... պարտիզպանը կը շալկէր իր խրտուիլակն ու պարտէզ կ'իջնէր» (Համաստեղ):

Եթե արևելահայերենում ում ածանցով կազմված բայանունների գործիականը, ինչպես նշվել է, կազմվում է ով և բ ձևերով, ապա արևմտահայերենում առավել գործածական են ով–ով կազմությունները՝ **շարժումով, ծագումով, հանդիպումով, գրառումով** ևն: Կան գոյականներ, որոնց գործիականի համար երկու գրականներում էլ գործուն են ով մասնիկով ձևերը՝ **միտում – միտումով, լսում – լսումով, նկատառում – նկատառումով, պատում – պատումով** ևն:

Ան հոլովման գոյականները արևելահայերենում նույնպես ներգոյական հոլով չունեն: Բացառականը և գործիականը արևելահայերենում կազմվում են ուղղականի կամ սեռական–տրականի, իսկ արևմտահայերենում՝ ուղղականի հիմքից: Ընդհանուր պատկերը հետևյալն է.

	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
ուղղ.	աղջիկ	գարուն	աղջիկ	գարուն
սեռ.–տր.	աղջկա	գարնան	աղջկան	գարնան
բաց.	աղջկանից	գարնանից	աղջիկէ	գարունէ
գործ.	աղջկանով	գարնանով	աղջիկով	գարունով

Օրինակ՝ «Ինչպէս որ աշխարհ կու գան եզը կամ ծառը, ճիշտ այնպէս էլ աշխարհ եկած էր Փիլիկ աղբարը. եզան պէս չարքաշ եւ ծառին պէս բարի» (Համաստեղ), «Հիմա ես ու դու մնացինք, ըսաւ եզներուն, արտ պիտի վարենք, գարնան չմնան, աշունէ ցանենք» (Մեծուրի):

Կամ՝

Սա իրիկունն ըլլայի ես,

Իմ անդորրիս մէջ ոգեւար աղջըկան

Մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքես.

Սա իրիկունն ըլլայի ես:

(Մ. Մեծարենց)

Ոջ հոլովում (տէր տիպար)

Արևմտահայերենում նույնպես, ինչպես արևելահայերենում, ոջ հոլովման ենթարկվող գոյականների թիվը սահմանափակ է: Դրանք են՝ ընկեր, քոյր, տագր, տալ, սկեսուր, տէր, աներ, կին և սրանցով բարդված այն բառերը, որոնցում նշվածները վերջին բաղադրիչ են՝ գործընկեր, հորաքոյր, տանտէր, տիկին ևն: Արևմտահայերենում սրանց բացառականը կազմվում է մէ, իսկ գործիականը՝ մով վերջավորություններով: Դրանք դրվում են սեռական–տրականի ձևի վրա, ինչպես արևելահայերենում: Այս հոլովման գոյականները արևելահայերենում նույնպես ներգոյական հոլով չունեն:

Ոջ հոլովման հարացույցը.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ուղղ.	տեր	տէր
սեռ.–տր.	տիրոջ	տիրոջ
բաց.	տիրոջից	տիրոջմէ
գործ.	տիրոջով	տիրոջմով
ներգ.	–	–

Բացի տէր, կին, քոյր գոյականներից՝ մյուսները գործածվում են նաև ի հոլովմամբ՝ ընկեր – ընկերի – ընկերէ – ընկերով, աներ – աների – աներէ – աներով, տագր – տագրի – տագրէ – տագրով, նույնիսկ տիկինի ևն: Օրինակ՝ «Անիկա անկարող եղաւ մերծել տիկինին ստիպումը» (Յ. Օշական):

Ներքին հոլովում

Օ (ո) հոլովում (հայր տիպար)

Այս հոլովման տրականը արևմտահայերենում և արևելահայերենում կազմվում է այ>օ (ո) ներքին թեքմամբ: Արևմտահայերենում նույնպես այս հոլովման պատկանում են խիստ սահմանափակ թվով գոյականներ: Դրանք են՝ **հայր, մայր, եղբայր** բառերը և դրանցով՝ որպես վերջին բաղադրիչով կազմված գոյականները՝ **կնքահայր, հորեղբայր, տիրամայր, նախահայր, մօրեղբայր, վանահայր** ևն: Այս հոլովման բացառականը և գործիականը արևմտահայերենում կազմվում են մէ և մով վերջավորություններով՝ սեռական–տրականի հիմքից:

Օ (ո) հոլովման հարացույցը.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ուղղ.	հայր	հայր
սեռ.–տր.	հոր	հօր
բաց.	հորից	հօրմէ
գործ.	հորով	հօրմով
ներգ.	—	—

Ա հոլովում (գիտութիւն տիպար)

Արևմտահայերենում **ա** ներքին հոլովման պատկանում են՝

ա) **–ութիւն** ածանցով կազմված գոյականները, որոնց սեռական–տրական հոլովը լինում է **ութեան**, ինչպես՝ **գուարճութիւն–գուարճութեան**, **լիութիւն–լիութեան**, **հանդիսութիւն–հանդիսութեան** ևն,

բ) **տուն** և **շուն** բառերը՝ **տան**, **շան**. արևմտահայերենում դրանք հոլովվում են նաև ի ձևով՝ **տունի** (=առավելապես բանաստեղծության քառատող, **տան՝** ապրելու տեղ), **շունի**, իսկ **–իւն** (յուն) հնչյունակապակցություն ունեցող **անկիւն**, **արիւն**, **սիւն**, **ծիւն** բառերի համար սովորական է ի–ն՝ **արիւնի**, **անկիւնի**, **սիւնի**, բայց դրանց մի մասի համար գործածական են նաև **ա** հոլովմամբ սեռական–տրականի կազմությունները՝ **արեան** // **արիւնի**, **անկեան** // **անկիւնի**, **սեան** // **սիւնի**. **ծիւն**

բառը գրեթե միշտ՝ **ծիւնի**։ Ինչպես՝ «Եւ եղեւնի քու հասակեդ Քըսան տունի սիւնը կանգնի», «Երբ իր քայլերն ուղղուին դաշտերն աւերուած, Արշալոյսէն **արիւնի** հոտը առնէ Եւ **արիւնի**՝ ծարաւի» (Դ. Վարուժան)։

գ) **անուն** բառը, որ արևմտահայ սեռականում ունի հոլովական զուգածնություններ՝ **անունի** // **անուան**։ Առաջինը ավելի տարածված է, ինչպես՝ «Եւ **անունիդ** հոմանիշ ըլլար անունն իր անգին» (Մուշեղ Իշխան)։

– **ութին** ածանցով գոյականների բացառականը կազմվում է սեռական–տրականի հիմքից. տրականի եա–ն հնչյունափոխվում է ե–ի, ինչպես՝ **ուրախութին** – **ուրախութենէ**, **պետութին** – **պետութենէ**։ «Այսքան **սրիկայութենէ**, **գռեհկութենէ**, հասարակ ու սովորական հաճոյքի օրերէ յետոյ մաքրութեան առաւօտ մը պիտի բացուի վրանիս» (Վ. Շուշանյան)։

Գործիականը, որպես կանոն, երկու գրականներում էլ կազմվում է բ վերջավորությամբ. ն վերջնահնչյունը վերածվում է մ–ի։ Արևմտահայ գրական լեզվում ընդունված ձևեր են, բայց խոսակցական երանգ ունեն նշված գոյականների **ով** վերջավորությամբ գործիականները՝ **լաւութիւնով**, **կատարելութիւնով**, **կազմութիւնով**։

Ա հոլովման ընդհանուր պատկերը արևելահայերենում և արևմտահայերենում.

	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
ուղղ.	գիտություն	անուն	գիտութիւն	անուն
սեռ.-տր.	գիտության	անվան	գիտութեան	անունի // անուան
բաց.	գիտությունից	անունից	գիտութենէ	անունէ
գործ.	գիտությամբ // գիտությունով	անունով // անվամբ	գիտութեամբ // գիտութիւնով	անունով

Այլաձև հոլովումներ

Արևմտահայերենում այլաձև հոլովման պատկանող գոյականների թիվը համեմատաբար քիչ է, քանի որ այս շարքում չեն ընդգրկվում ոչ արտաքին թեքման գոյականները, որոնք արևելահայերենում դասվում են զարտուղի ձևերի շարքը։ Դրանք են՝ **ծնունդ** (**ծննդեան**), **գալուստ** (**գալստեան**), **հանգիստ** (**հանգստեան**), **կայսր** (**կայսեր**),

դուստր (դստեր) բառերը: Բոլորն էլ ունեն ի հոլովմամբ զուգահեռ կազմություններ՝ **ծնունդի, հանգիստի, ժողովուրդի, կայսրի, դուստրի** են:

Օրինակ՝ «Վարուժան դիցազնական եւ հովուերգական կեանք մը ունեցաւ. հակառակ «Բրգնիկցի վարժապետ» մը ըլլալուն՝ յաջողեցաւ ամուսնանալ Սեբաստիոյ յայտնի Թաշճեան ընտանիքի գեղանի մէկ **դուստրին**՝ Արաքսիի հետ, կազմեց օրինակելի ընտանիք մը» (Թ. Ազատ-յան), «...Նախնիներու պատումը ...կը վերաբերի աշխարհի, աստուած-ներու եւ մարդոց **ծնունդին**, պատում՝ որ անընդհատ կը կրկնուի եւ կը զրուցուի բերնէ-բերան» (Գ. Պըլտյան):

Արևմտահայերենում գործածվում է **ժողովուրդ** բառի՝ գրաբարից եկած **ժողովրդեան** ձևը, որը, սակայն, չունի ընդգծված գրաբարյան երանգ, ինչպես ընկալվում է արևելահայերենում:

Գոյականի հոլովման ընդհանուր պատկերը արևմտահայերենում (եզակի թիվ)

Արտաքին հոլովում		Ու հոլովում	
	Ի հոլովում		
ուղղ.	ճկար	գիրք	հայ
սեռ.—տր.	ճկարի	գիրքի	հայու
բաց.	ճկարէ	գիրքէ	հայէ
գործ.	ճկարով	գիրքով	հայով
Ոյ հոլովում		Ուան հոլովում	
ուղղ.	Կիլիկիա	Աստուած	օր
սեռ.—տր.	Կիլիկիոյ	Աստուծոյ	օրի // օրուան
բաց.	Կիլիկիայէ	Աստուծմէ	օրէ // օրուընէ
գործ.	Կիլիկիայով	Աստուծմով	օրով
Ոջ հոլովում			
ուղղ.	տէր	տիկին	
սեռ.—տր.	տիրոջ	տիկնոջ	
բաց.	տիրոջմէ	տիկնոջմէ	
գործ.	տիրոջմով	տիկնոջմով	

	Ներքին հոլովում		Ա հոլովում	
	Օ հոլովում			
ուղղ. սեռ.—տր.	հայր հոր	հորեղբայր հորեղբոր	գիտութիւն գիտութեան	անուն անունի // անուան
բաց. գործ.	հորմէ հորմով	հորեղբօրմէ հորեղբօրմով	գիտութեմէ գիտութեամբ //	անումէ անումով
			գիտութիւնով	

ՀՈԳՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Արևմտահայերենում և արևելահայերենում **եր** և **ներ** հոգնակերտ ունեցող բառերն ունեն հոլովական ձևերի կազմության միօրինակություն: Տարբերությունն այն է, որ եթե արևելահայերենում դրանք սեռական—տրականում ստանում են **ի**, բացառականում՝ **ից** վերջավորություններ, ապա արևմտահայերենում նույն գոյականները սեռական—տրականում ստանում են **ու**, բացառականում՝ **է** վերջավորություններ: Համընկնում են գործիականի կազմությամբ. ստանում են **ով** վերջավորություն:

Հոգնակի թվի հոլովման ընդհանուր հարացույցը հետևյալն է.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ուղղ.	տարիներ	տարիներ
սեռ.—տր.	տարիների	տարիներու
բաց.	տարիներից	տարիներէ(ն)
գործ.	տարիներով	տարիներով
ներգ.	տարիներում	—

Հայտնի է, որ արևելահայերենում հատուկ խումբ են կազմում **անք**, **ենք**, **ունք**, **ոնք** վերջնամասնիկ ունեցող հավաքական գոյականները՝ **Հակոբենք**, **Վարդանանք**, **մերոնք** ևն, որոնց սեռական—տրականը կազմվում է **ք / ց** հերթագայությամբ՝ **Հակոբենց**, **Վարդանանց**, **մերոնց**, որտեղ **ց** մասնիկն արտահայտում է ն՝ սեռական—տրական հոլովի, և հոգնակիության իմաստ: Արևմտահայերենում այդ կազմությամբ գոյականների գործածությունը սովորական չէ, հետևաբար գործածական չեն մաս դրանց հոլովական ձևերը:

Հոգնակի հոլովման այս ընդհանուր հարացույցից շեղվում են **տղայ** բառի հոգնակին՝ **տղաք**, և **մարդ** բառի հոգնակին՝ **մարդիկ**:

Այս բառերի հոլովման պատկերը արևմտահայերենում հետևյալն է.

ուղղ.	տղաք	մարդիկ
սեռ.—տր.	տղոց	մարդոց
բաց.	տղոցմէ	մարդոցմէ
գործ.	տղոցմով	մարդոցմով

Մարդ և **տղայ** բառերի՝ **եր** և **ներ** հոգնակերտներով կազմությունները ունեն կանոնավոր հոլովում՝ **մարդեր** – **մարդերու** – **մարդերէ** – **մարդերով**, **տղաներ** – **տղաներու** – **տղաներէ** – **տղաներով**:

Արևելահայերենում անկանոն հոլովում ունեն **մարդիկ** և **կանայք** բառերը՝ **մարդկանց**, **կանանց**:

Արևմտահայերենում գործածվում են գրաբարյան հոլովածների որոշ մնացորդներ: Դրանցից մի քանիսը, կորցրած լինելով իրենց երբեմնի հոլովական իմաստը, այժմ գործածվում են իբրև անկախ բառեր, ինչպես՝ **հայք** – **հայոց**, **վիրք** – **վրաց**, **կեանք** – **կենաց**, **չարիք** – **չարեաց**, **հարսանիք** – **հարսանեաց**, **հարգանք** – **հարգանաց**, **Արշակունիք** – **Արշակունեաց**, **Բզնունիք** – **Բզնունեաց**, **Ռշտունիք** – **Ռշտունեաց**, **Օսմանեանք** – **Օսմանեանց** ևն: Այս բառերի համար սովորական են հոլովածների աշխարհաբարյան կազմությունները՝ **հայեր** – **հայերու**, **վրացիներ** – **վրացիներու**, **հարսնիքներ** – **հարսնիքներու**, **Արշակունիներ** – **Արշակունիներու** ևն:

– **ուրիւն** ածանցով գոյականների գրաբարյան հոգնակի սեռական–տրականի ձևերը՝ **բանաստեղծուրիւն** – **բանաստեղծութեանց**, **գրուրիւն** – **գրութեանց**, **տէրուրիւն** – **տէրութեանց** ևն, գործածվում են հիմնականում խոսքի համառոտության պահանջով. արևմտահայերենում դրանք չունեն ընդգծված հնաբանությունների երանգ, ինչպես կարող են ընկալվել արևելահայերենում: Բոլոր դեպքերում, այս հոլովածները փոխառյալ են գրաբարից և ունեն հնաբանությունների արժեք:

Կա մի կարևոր առանձնահատկություն ևս, որ թեև հնչյունափոխական իրողություն է, բայց սերտորեն կապվում է երկու գրականների ձևակազմական հիմքերի հետ: Արևմտահայերենում և՛ բաց, և՛ փակ վանկի ի և ու

ծայնավորներ ունեցող մի շարք գոյականներ (հիմնականում միավանկ) ձևակազմական հիմքերում (հոգնակիի կազմություն, հոլով և հոլովում) սովորաբար մնում են անփոփոխ՝ ի տարբերություն արևելահայերենի հնչյունափոխական տարբերակների, ինչպես՝ **գիր – գիրի – գիրեն – գիրով, ծրագիր – ծրագիրի – ծրագիրեն – ծրագիրով, առու – առուի – առուեն – առուով, կատու – կատուի – կատուեն – կատուով, աշուն – աշունի – աշունեն – աշունով, նաև՝ գիրեր, քուրեր, շուներ, դուռներ, միտքեր, գիրքեր, հեռագիրներ, ծրագիրներ, պատմագիրքեր, զարդագիրքեր** են: **Օրինակ՝** «Ամեն ինչ մոխիր է, յիշատակ. լծակները ի գուր չյուզուին. Ոչ շառաչ, ոչ հառաչ **քուրին** տակ. ալիքը՝ գերեզման ալիքին» (Ջ. Գազանճյան), կամ՝ «Վենետիկի Մխիթարեանները 18րդ դարու սկիզբեն հաստատուելով Վենետիկի Սուրբ Ղազար **կղզիին** մեջ (1717), լծուեցան ժրաջան աշխատանքի եւ շատ ծառայութիւններ մատուցին հայոց մշակոյթին ու գրականութեան: ...Գրաբար հատորներ գրեցին, **գիրքեր** թարգմանեցին, բառարաններ շինեցին...»:

Ծանոթություն: Արևմտահայերենի հոլովական ձևերում ու–ն ծայնավորից առաջ՝ **ուի, ուէ (ն), ուով** տառակապակցություններում, կարդացվում է որպես պարզ ու ծայնավոր, ինչպես՝ **կատուի – կատուեն – կատուով, առուի – առուեն – առուով, արուի – արուեն – արուով, մեղուի – մեղուեն – մեղուով, եղջերուի – եղջերուեն – եղջերուով, հարսնացուի – հարսնացուեն – հարսնացուով** են: **Լեզու** բառի սեռականի ձևը գրականում կարդացվում է վ–ով՝ **լեզվի**, թեև պոլսահայ բարբառում հնչում է **լեզույի**:

Արևմտահայերենը չի բացառում նաև առանձին բառերի հնչյունափոխված հիմքով կազմությունների գործածությունը, ինչպես՝ **մատուռ – մատուռի // մատրան, աշուն – աշունի // աշնան, դուռ – դուռի // դրան, դռնէ, դռնով, դուռեր // դռներ, գիր – գրեր // գիրեր** են: Ավելին՝ և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքեր գործածվում են ոչ միայն կազմության ընդհանրություններ ունեցող բառերի ձևակազմության մեջ, այլև բառային նույն միավորի նույն կամ տարբեր քերականական ձևերում, ինչպես՝ **երկնքէն // երկինքէն, սրտերը // սիրտերը, սրտերու // սիրտերու, սրտերէ // սիրտերէ, շիրիմիս – շիրմիդ – շիրմին, քաղքին – քաղաքներուդ, ճակտին – ճակատիս // ճակտիս** են: **Օրինակ՝** «Պետութեան մը անունը կը սկսի **գլխագրով**» (ԴՔ), «**Գլխագիրները** եւ վերջակէտերը չմոռնաս» (ԴԴ), «**Գրերու** զանազան հնչիւնները» (Շ. Շահնուր):

Հնչյունափոխության են ենթարկվում թվով քիչ, բայց առավելապես շատ գործածական բառերը:

Հնչյունափոխությունը առկա է հիմնականում հոլովական ձևերում և ավելի քիչ՝ հոգնակիի կազմության մեջ: Սա խոսում է ձևաբանական այս իրականություններում առկա որոշ անմիօրինակության մասին: Պետք է նկատել, սակայն, որ արդի գրական արևմտահայերենում արծանագրվում են անհնչյունափոխ հիմքի կայունացման հստակ միտումներ. նախապատվություն է տրվում ժողովրդական-խոսակցական ձևերին, ինչպես՝ **կուրծքիս, հանգիստիս, վիզեր, շիրիմիդ, փունջեր, սիրտեր, շունչով, ժողովուրդին, քիթին, խումբեր, թուփերուն, մոխիրին, սրինգիս, թիւերու, կռիւին** են: **Օրինակ՝** «...Իր հոգին եփ հանող զգացումները կ'ելլէին իրենց միգամած անորոշութենէն, խորունկ **ճիչերու** ազդեցութեան տակ **գիծեր** ու խորք կը յագնէին» (Հ. Օշական), «Գիշերը, երբ լուսնկան **սուրբի** մը **գլուխին** պէս կը հանգչէր լերան կատարին, աստղերը կ'իջնէին լճին յատակը», «Երբ **ջուրերուն** վրայ մշուշ կայ...» (Շ. Նարդունի), «Դուն, Հայու լակոտ, դուն ամենէն շուտը կը փոխուիս անասունի, եթէ օր մը իսկ մնաս առանց **վիշտի**», «...**երկինքէն** ոսկի, արծաթ ու մարգարիտ տեղաց ամբողջ օր մը և գիշերն ողջոյն», «Երբոր արշալոյսը ծիրանի կու տար լեռներու **շրջագիծին**» (Շ. Շահնուր):

Կարծիք կա, որ արևմտահայերենում հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով մի շարք բառաձևեր դրսևորում են իմաստային տարբերություններ, ինչպես՝ **առաջին**→**առջնի**, **առջի**→**առաջին**, **գլուխէն**–փխբ. իմաստ, **գլխէն**–ուղիղ իմաստ, **ճակատի**, **ճակատէն**–փխբ. իմաստ, **ճակտի**, **ճակտէն**–ուղիղ իմաստ (տե՛ս 34, 72): Իր հոդվածներից մեկում Հովի. Գազանճյանը առանձնացնում է նաև մի քանի այլ բառեր, որոնք, նրա կարծիքով, գրական հայերենը տարբեր իմաստային առումներով է գործածում, ինչպես՝ **աշկերտ՝ արհեստավորի աշակերտ** (= չըրախ), **աշակերտ՝ դպրոցի սան**: Դրանք «եապէս միևնույն բառերն ըլլալով հանդերձ,— գրում է նա,— իրարմէ տարբեր նշանակութիւններ առած են» (20, 198): Այս բառաձևերը տարբեր նշանակություններով են ներկայացվում նաև արևմտահայերենի առանձին բառարաններում, ինչպես **աշկերտ** – համբակ, նորուս, դեռավարժ, իսկ **աշակերտ** – դպրոցական, ուսանող (տե՛ս 21): Նույն բառի հնչյունափոխական տարբերակ-

ների մասին խոսելիս պոլսահայ բարբառում իմաստային այդպիսի տարբերություն է նշում նաև Զր. Աճառյանը. «Երկու տիպարի տարբերության լավ օրինակ են՝ **նեղանալ** և **չարանալ**,— գրում է նա,— որոնցից **նեղանալ** «սրդողիլ, բարկանալ» և **նեղնալ** «ավելի նեղ լինել», չարանալ «նախանձիլ» և **չարնալ** «չար դառնալ». առաջինը առանց սղմուն, երկրորդը՝ սղմամբ» (10, 15): Զր. Աճառյանի դիտարկումը համոզիչ է բայական հիմքերի կազմության մեջ, ինչի մասին վկայում են նաև այլ օրինակներ՝ **հաւնիլ**—սիրել, ախորժիլ, **հաւանիլ**—հաճել, հոժարել, համոզվել, ընդունել, հավանություն տալ, **չատանալ**—բավականանալ, գոհանալ, **չատնալ**—բազմանալ, առատանալ, աճել, կուտակվել, զեռալ, **վայելել**—ճաշակել, ըմբռնել, **վայլել**—սազել, հարմարվել են (տե՛ս 21): Մինչդեռ գոյական խոսքի մասի հիմքակազմության մեջ գրական արևմտահայերենի համապատասխան նյութի քննությունը այդպիսի եզրակացության առիթ չի տալիս: Իմաստային այդպիսի տարբերակում չի նկատվում նաև գրական արևմտահայերենի կանոնարկման շրջանում, ինչպես ցույց են տալիս 20—րդ դարասկզբի հեղինակներից քաղված օրինակները՝ «Սուրբ աճինիդ սափորն է այդ ծովն հիմա, Մինչ լայն **ճակատիդ** լայն օրորոցն եղաւ ան» (Դ. Վարուժան, Ալիշանի մասին է), «**ճակատիս...** պսակն անոնց **ճակտին**» (Սիամանթո), «**լուսաւորին առաջին**», «**առջի լուսաւորին**» (Մ. Մեծարեց) ևն:

Այս առումով համոզիչ է նաև արևմտահայ մյուս քերականի բացատրությունը՝ **գլուխ** և **տուն** բառերի հոլովման առիթով. արևմտահայերենում «Հոլովումի գույգ ձեւերը՝ կարգ մը բառերու պարագային՝ տարբեր են իրենց գործածութեամբ: **Այսպէս**. երբ «տուն» բառը կը նշանակէ «բնակարան», կրնանք հաւասարապէս ըսել «**Տունի**» կամ «տան», բայց երբ կը նշանակէ «ոտանաւորի տուն», չենք կրնար «տան» ըսել. պէտք է ըսենք «տունի»: Նոյնպէս կրնանք ըսել «**գլուխի**» կամ «**գլխու**» երբ «**գլուխ**» բառը կը նշանակէ «մարդկային գլուխ». բայց երբ «գիրքի մը գլուխ»ն է՝ չենք կրնար «**գլխու**» ըսել: (Փոխաբերական իմաստով գործածուած բառերուն հոլովումն է որ կանոնաւոր է այս պարագային)» (27, 85): Այս տրամաբանությամբ՝ անհնչյունափոխ հիմքով կազմությունները կարող են ընկալվել որպես կանոնական կազմություններ, ինչպես՝ **գլուխ—ի, —էն, —ով, տուն—ի, —էն, —ով, ճակատ—ի, —էն, —ով** ևն:

ԱՄՍԿԱՆ ԱՆՈՒՆ

Ածականի իմաստային, ձևաբանական և շարահյուսական ընդհանուր հատկանիշները հայերենի երկու տարբերակներում համընկնում են: Ե՛վ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում ածականը ցույց է տալիս առարկան բնութագրող, տարբերակված, հարաբերականորեն կայուն հատկանիշ:

Երկու գրականներում էլ ածականները արտահայտում են առարկայի հատկանիշի հասկացություն: Հայտնի է, որ հատկանիշի գաղափար են արտահայտում նաև թվականները, դերանունների մի մասը, որոշ դերբայներ: Սակայն ածականը, իմաստային ընդհանրություններ ունենալով այդ խոսքի մասերի հետ, ունի նաև դրանցից զգալի տարբերություններ (նշելու ենք միայն արևմտահայերենի օրինակները)։

Ածական — թվական. ածականը առարկան բնութագրող բառ է, իսկ թվականը արտահայտում է առարկաների թվային հատկանիշ, ցույց է տալիս առարկայի քանակը, կարգը, հմմտ.՝ **բարձր յարկ — չորրորդ յարկ, լաւ մարդ — երէք մարդ:**

Ածական — դերանուն. ածականը որոշակիորեն է բնութագրում առարկան, իսկ դերանունների իմաստը ընդհանուր է, չտարբերակված, հմմտ.՝ **բարձր տրամադրութիւն — այդպիսի տրամադրութիւն:**

Ածական — դերբայ. ածականը իմաստային և կիրառական ընդհանրություններ ունի հարակատար և ենթակայական դերբայների հետ: Տարբերությունն այն է, որ դերբայները ցույց են տալիս փոփոխվող հատկանիշներ, իսկ ածականը՝ կայուն, անփոփոխ հատկանիշ, քանի որ այն անկախ է ժամանակի գաղափարից, հմմտ.՝ **լաւ տնտեսութիւն — զարգացող // զարգացած տնտեսութիւն:**

Ածական — մակբայ. որակական ածականները կիրառական ընդհանրություններ ունեն մակբայների հետ: Դրանք կարող են լինել բայի

լրացում՝ բարձր կարգալ, հանդարտ խորհիլ, լաւ մտածել, որ մակբայներին բնորոշ հատկանիշ է, և հակառակը՝ մակբայների մի մասը կարող է լինել բայանուն գոյականի լրացում, ինչպես՝ արագ ընթացք, դանդաղ վազք, հապճեպ պատասխան:

Ածականները մակբայներից տարբերվում են նաև նրանով, որ գործածվում են նաև փոխանվանաբար՝ բարձրը, բարձուն, մեծերու ևն:

Ածականները ձևաբանորեն բնորոշվում են նրանով, որ չթեքվող խոսքի մասեր են: Դրանք հոլովվում և հոգնակի են կազմում գոյականաբար գործածվելիս:

Շարահյուսորեն բնորոշվում են նրանով, որ նախադասության մեջ լինում են որոշիչ, ստորոգելիական վերադիր, իսկ ածականների մի մասը դառնում է նաև ձևի պարագա:

Բառակազմական առումով ածականները միօրինակ չեն, քանի որ կազմությանը լինում են և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ: Հայերենի երկու տարբերակներում էլ շատ են հարադրավոր և հոդակապով ածական բարդությունները՝ ազգային-քաղաքական, ռուս-հայկական, վարչատնտեսական, հասարակական-տնտեսական, սոցիալ-տնտեսական: Առաջին բաղադրիչի հնչյունափոխված տարբերակով ածական կրկնավորները՝ սեփ-սեւ, կաս-կարմիր, միս-մինակ, շիփ-շիտակ, արևմտահայերենում ավելի հաճախ են գործածվում, քան արևելահայերենում: Ածականակերտ ածանցները բաժանվում են երկու խմբի. ա) ածանցներ, որոնք դրվում են ածականի վրա, լրացական իմաստ են հաղորդում՝ -ին՝ նրբին, -իկ՝ փոքրիկ, -ուկ՝ խղճուկ, -աւուն՝ խոշորաւուն, գեր-՝ գերիզոր, -գոյն՝ մեծագոյն, ամենա-՝ ամենագեղեցիկ, և բ) ածանցներ, որոնք, ավելանալով բառի վրա, նոր իմաստ են հաղորդում դրան՝ ան-՝ աներես, ապ-՝ ապերախտ, դժ-՝ դժպատեհ, տ-՝ տկար, չ-՝ չկամ, արտ-՝ արտահերթ, ենթ-՝ ենթամաշկային, հակ-՝ հակադիր, տար-՝ տարօրինակ, -ային՝ լեռնային, -ական՝ քրեական, -անի՝ երկփողանի ևն:

Ածականի տեսակները: Ըստ արտահայտած հատկանիշների բնույթի՝ ածականները լինում են երկու տեսակ՝ ա) որակական և բ) հարաբերական: Դրանց միջև եղած տարբերությունները արևմտահայերենում և արևելահայերենում սահմանվում են նույն հատկանիշներով:

Իմաստային տարբերություն. որակական ածականները արտահայտում են առարկայի անմիջական հատկանիշներ՝ **մեծ գործ, գեղեցիկ բնանկար, աշխոյժ գործունեություն:** Հարաբերական ածականները ցույց են տալիս ոչ անմիջական հատկանիշ. բնութագրում են առարկան մեկ այլ առարկայի հետ ունեցած հարաբերությամբ՝ **փայտե դուռ, հայրական տուն:** Հարաբերական ածականները սովորաբար կազմված են լինում գոյականներից՝ **երկաթեայ, լուսեղեն, հայրական, արեւադարձային, գրական, պատմաբանասիրական, դիւսնագիտական:** Որակական ածականները սովորաբար ունենում են իրենց հոմանիշը և հականիշը:

Ձևաբանական տարբերություն. որակական ածականները, որպես կանոն, ունենում են համեմատության աստիճաններ՝ դրական, բաղդատական, գերադրական, իսկ հարաբերականները չունեն: Իրենց այդ հատկանիշով պայմանավորված՝ որակական ածականները կարող են կապակցվել չափի և աստիճանի մակբայների հետ՝ **մեծ – շատ մեծ, լաւ – բաւականաչափ լաւ:** Համեմատության աստիճաններ չունեն թվով շատ քիչ որակական ածականներ՝ **որբ, սուրբ, կոյր, էգ, խուլ, արու, խռով, յղի, ծաղատ, կաղ, մերկ, ստերջ, խորթ ևն:**

Բառակազմական տարբերություն. որակական ածականները կազմությամբ լինում են և՛ պարզ, և՛ բաղադրյալ, իսկ հարաբերական ածականները պարզ լինել չեն կարող: Որակական ածականների բառակազմական յուրահատկություններից է նաև այն, որ դրանցից կարող ենք նոր բառեր կազմել՝ ավելացնելով **–ութիւն** ածանցը (**լաւութիւն, հիմարութիւն, կարծրութիւն**), փաղաքշական մասնիկներ (**փոքր+իկ, անուշ+իկ, կարծ+իկ, նրբ+իւն, սեւ+ուկ**): Առանձին որակականներից կազմվում են կրկնավոր բարդություններ՝ **մեծ–մեծ, խոշոր–խոշոր, ծանր–ծանր, լաւ–լաւ, աղէկ–աղէկ, հաճախ նաև բաղադրիչներից մեկի հնչյունափոխությամբ՝ մանր–մունր, սեփ–սեւ, դեփ–դեղին:**

Շարահյուսական տարբերություն. հարաբերական ածականները լինում են միայն գոյականի լրացում կամ ստորոգելիական վերադիր՝ **«լեռնային ճանապարհ», «մետաղեայ դրամ», «գինին հայկական է»,** իսկ որակական ածականների մեծ մասը կարող է լինել նաև բայի լրացում՝ **«զուարթ ծիծաղել», «ցածր երգել», «անկեղծ զրուցել»:**

Պետք է նկատել սակայն, որ ածականի այս երկու տեսակների միջև սահմանը հարաբերական է: Լեզվի զարգացման ընթացքում հարաբերական ածականը կարող է զրկվել իր առարկայական իմաստից և դառնալ որակական: Ինչպես՝ **փողոցային երթուկություն** կապակցության մեջ **փողոցային** բառը հարաբերական ածական է, իսկ **փողոցային պահուածք, փողոցային խօսքեր** կապակցություններում՝ որակական, կամ՝ լուսաւոր սենեակ և լուսաւոր միտք, ժողովրդական գրող և ժողովրդական խռովութիւն:

Խոսքի մեջ իրենց արտահայտչական դերով հայոց լեզվի երկու ճյուղերում էլ ավելի գործուն են որակական ածականները, քանի որ դրանք առարկան անմիջականորեն բնութագրելու իրենց հատկությամբ ավելի ընդգծված գնահատողական բնույթ ունեն և իմաստային տեսակետից ավելի բազմազան են:

Որակական ածականների համեմատության աստիճանները: Քերականական այս կարգի իմաստային դաշտում արևմտահայերենը և արևելահայերենը տարբերություններ չունեն: Մասնակի տարբերություններ կան ձևակազմության և առանձին կազմությունների գործածականության մեջ:

Ընդունված է որակական ածականների համար արևելահայերենում և արևմտահայերենում առանձնացնել համեմատության երեք աստիճան՝ **դրական, բաղդատական և գերադրական:**

Դրական աստիճանը ածականի ուղիղ ձևն է, հատկանիշն արտահայտում է առանց համեմատության՝ **մեծ, անկեղծ, ազատ, խոշոր, աղէկ:**

Բաղդատական աստիճանը կազմվում է **աւելի** բառի միջոցով, ցույց է տալիս առարկայի այս կամ այն հատկանիշի առավել կամ նվազ լինելը այլ առարկաների նույն հատկանիշի կամ նույն առարկայի՝ տարբեր ժամանակներում ունեցած հատկանիշների համեմատությամբ, ինչպես՝ «Քիչ մը մօտեցայ, **աւելի աղէկ** տեսնելու համար մարդը»:

Երբեմն բաղդատական աստիճանի իմաստը արտահայտելու համար համեմատվող առարկաների անվանումներից մեկը դրվում է բացառական հոլովով, իսկ ածականը՝ դրական աստիճանով, ինչպես՝ «Նորերը գործունեայ են **նախորդներից**» // «Նորերը գործունեայ են **նախորդներէն**»: Այսպիսի կառույցներում **ավելի (աւելի)** մասնիկը երկու գրականներում էլ

ընկալվում է որպես ոճական ավելադրություն, որը հատուկ է առավելապես ժողովրդական խոսքին՝ «Մենք **աւելի** համարձակ գտնուեցանք **անոնցմէ**»: ժողովրդախոսակցական երանգ ունեն մասնակով կառույցները՝ «Ոչ մէկ բանաստեղծ չի կրնար ըլլալ **աւելի մեծ քան կեանքը**» (3. Օշական):

Բաղդատական աստիճանը երբեմն կազմվում է **առաւել** բառ–մասնիկով, որը բնորոշ է գրական բարձր ոճերին և որոշ հանդիսավորություն է հաղորդում խոսքին: Արևմտահայերենում այն ունի հազվադեպ գործածություն՝ «**Առաւել** կարելոր նկատելու է մէկ այլ հանգամանք»: Քիչ գործածական են մասն բաղդատականի՝ **նուազ, սակաւ** և նման մասնիկներով կազմությունները՝ «Անիկա **նուազ** խելամիտ գտնուեցաւ»:

Բաղդատական աստիճանի կազմության մեջ, այսպիսով, գործում են նույն քերականական մասնիկները՝ **առաւել, նուազ, սակաւ, քիչ, աւելի** ևն:

Գրական արևմտահայերենի ձևավորման շրջանում գործածվում էր **մաս ալ** մասնիկը, որ սովորաբար կրում էր շեշտ՝ **ա՛լ**՝ համանուն **ալ** (= մաս, էլ) շաղկապից տարբերվելու և արտասանական հատուկ հնչերանգը արտահայտելու համար, ինչպես՝ **ա՛լ աղէկ, ա՛լ պատուական, ա՛լ խոշոր** ևն: Արդի արևմտահայերենում քերականական այդ մասնիկը սովորաբար գործածվում է **աւելի** բառի զուգորդությամբ, ինչպես՝ **ա՛լ աւելի մեծ, ա՛լ աւելի պատուական** ևն: Ունի խոսակցական երանգ, ինչպես արևելահայերենի համապատասխան կազմությունները՝ **է՛լ ավելի մեծ, է՛լ ավելի ազնիվ** ևն (տե՛ս 11, 77–78):

Ինչ վերաբերում է արևմտահայերենում **–կակ, –կեկ** մասնիկներով ածականի աստիճանի ավելացմանը, ապա հավանաբար հետևելով Ա. Այտընյանի կարծիքին՝ Դր. Աճառյանը, ինչպես արդեն նշել ենք, պոլսահայ բարբառի համար դա համարում է ածականի բաղդատական աստիճանի կազմության տարբերակ՝ **խոշորկեկ** (= ավելի խոշոր), **ամուրկեկ** (= ավելի ամուր) ևն: Ժամանակի և հետագա քերականագիտական աշխատանքներում նույնպես ընդգծվում է այդ ածանցի «**առաւելական – բաղդատական նշանակութիւնը**» կամ «**համեմատութեան գաղափար**» արտահայտելը (Դովի. Գազանճյան): Նույնպիսի նշանակություն է արտահայտում մասն–**շի** մասնիկը: Սակայն սա չունի նախորդի կենսունակությունը և գործածվում է խիստ սահմանափակ հիմքերի, հիմնականում **լայն** բառի վրա՝ **լայնշի**: Ե՛վ

մեկը, և մյուսը հազվադեպ գործածություն ունեն գրական լեզվում հավանաբար բարբառային երանգավորվածության պատճառով՝ «Բարձունքներու լայնշի ծամբան ըլլայի» (Մ. Մեծարենց), «Կովին ըստուերը փառայեղ լոյսին վրայ՝ Սեւ կարկըտան մը լայնշի», «Այդ կատաղի վերելքէն՝ անոնց ոտքին տակ լայնշի յանկարծակի կը փըրթին լայնափեռէկ ճեղքուածքով ժայռէն մեծղի կտորներ» (Դ. Վարուժան):

Գերադրական աստիճանը արտահայտում է առարկայի այս կամ այն հատկանիշի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Կարող է ցույց տալ նաև բացարձակ հատկանիշ՝ առանց համեմատության:

Կազմվում է **գեր-** և **ամեն(ա)-** նախածանցներով կամ **-ագոյն** վերջածանցով: Գերադրականի քերականական ցուցիչներից է նաև **ամենէն** (արևել.՝ **ամենից**) բառ-մասնիկը: **Ամեն(ա)** և **ամենէն** ձևերը արևմտահայերենում ունեն կիրառական որոշ յուրահատկություններ. **ամեն(ա)-** ածանցը դրվում է բաղաձայնով սկսվող, իսկ **ամենէն** բառ-մասնիկը հիմնականում ծայնավորով սկսվող ածականների վրա, ինչպես՝ **ամենամեծ, ամենալայն, բայց՝ ամենէն ազատ, ամենէն ազնիւ: Ամենաընտիր, ամենաառողջ, ամենաազատ, ամենաազնիւ** և նման ձևերը խորթ են արևմտահայերենին և վերցված են արևելահայերենից:

Գերադրական աստիճան կազմող **ամեն(ա)-**, **-ագոյն** և **գեր-** ածանցների մեջ մատնանշվող իմաստային տարբերությունները բնորոշ են երկու գրականներին էլ. **ամեն(ա)-** նախածանցների մեջ համեմատության իմաստը ավելի զգալի է՝ հմմտ.՝ **մեծագոյն // ամենամեծ: -ագոյն** և **գեր-** ածանցները արտահայտում են բացարձակ հատկանիշ **գերիզօր, հզօրագոյն, լաւագոյն, գերկարճ, գերխիտ, գերմարդկային** ևն, և գրական-գրքային երանգավորում ունեն:

Արևելահայերենում առավել կենսունակ է **ամեն(ա)-** ածանցը, որը գրականին է անցել ժողովրդախոսակցական լեզվից՝ **ամենախոշոր, ամենասիրուն:** Արևմտահայերենում նախապատվությունը տրվում է **ամենէն** վերլուծական կազմությանը՝ **ամենէն խոշորը, ամենէն խորոտը** ևն. «Իբրեւ **ամենէն հին ու փորձառու** պաշտօնեայ՝ տետրակներու եւ այլն քննութիւնը եւ յարդարումը ինձի յանձնուեցաւ» (Ե. Օտյան), «**Ամենէն ծուռ** նայուածքները մեզի եկան անոնցմէ, որոնք գրականութիւնը կը նկատեն գերին քաղաքականութեան» (Ա. Ծառուկյան):

Ածականի գերադրական իմաստը երկու գրականներում էլ արտահայտվում է նաև շարահյուսական միջոցներով՝ բոլոր և ամեն բառերի բացառական հոլով + ածական կառույցով (ամենից մեծ // ամենէն մեծ, ամենքից ազնիվ // ամենէն ազնիւ), ածականի կրկնությամբ, որտեղ առաջին բաղադրիչը դրված է բացառական հոլովով (մեծից մեծը // մեծէն մեծը, զորեղից զորեղը // զօրեղէն զօրեղը, արևմտ. վարնոցէն վարնոց), որոշ բառերի միջոցով՝ արտակարգ, չափազանց, բացառիկ, անկրկնելի, անսահման, աներեւակայելի են (այս վերջինները առավելապես գրական լեզվին բնորոշ կիրառություններ են)³:

Հարաբերական ածականները հայոց լեզվի երկու տարբերակներում էլ հատկանիշն արտահայտում են իմաստային նույն հարաբերությամբ.

ա) տարածական. առարկան բնութագրվում է տարածության մեջ կամ ըստ տարածական հատկանիշի. երեւանեան գիշերներ, տեղական ընտրութիւններ,

բ) գործողության հետ ունեցած հարաբերությամբ. աւերիչ երկրաշարժ, շարժուն համակարգ, ձեւական մոտեցում, ազատական մտածողութիւն,

գ) ժամանակային. ծմեռային ողիմպական խաղեր, հնադարեան մատենաներ, ամենօրեայ հանդիպումներ,

դ) վերաբերական. մարդկային վերաբերմունք, պետական համակարգ, ուժային մեթոդներ,

ե) ինչից, ինչ նյութից լինելը. հոգեւոր սնունդ, նիւթական ոլորտ, փայտեայ իրեր, հրէ գունդ,

զ) որևէ բան ունենալ-չունենալու հարաբերություն. մտաւոր կարողութիւններ, խոտելի ձեռնարկ են:

³ Արևմտահայերենում գերադրականի կազմության մեջ նկատվող յուրահատկություն է այն, որ այստեղ գործածվում է գերադրական աստիճանի կազմության մի ձև, որը գալիս է թուրքերենից և առավելապես բնորոշ է արևմտահայ ժողովրդախոսակցական լեզվին: Դա թուրքերենի գերադրական **en** (է՛ն) մասնիկով կազմությունն է է՛ն (**en**)+ ածական (**En iy!**—ամենալավ, **En kisa**—ամենակարճ) (տես 36, 72): Գրական բարձր ոճերում մերժելի է համարվել արևմտահայերենում դեռևս 20-րդ դարասկզբից: Գրավոր խոսքում հանդիպում է հազվադեպ և ոչ բոլոր հեղինակների լեզվում «Երգերուն է՛ն յաղթականը կ'երգես», «Գեղուհիներու է՛ն գեղանին» (Սիամանթո), «—Ու անշուշտ՝ մենէ է՛ն խելոքն անգամ երբ տեսներ Սահն, որ պաշտոնին հըլտ՝ Կու գար սիրելին մենէ խելու... Շան մը պէս պիտի խեղդէր անխընայ...», «է՛ն աղուոր կոյս աղջկան» (Ռ. Սևակ), «Ու է՛ն մեծ մասն...» (Ղ. Վարուժան):

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Արևմտահայ քերականների մի մասը, ինչպես արդեն ասվել է, հակված է **թվականը** առանձին խոսքի մաս չդիտելուն և այն համարում է ածականի մի տեսակ՝ **քանակական ածական** կամ **թվական մականուն**:

Թվականները, ինչպես ածականները, իրենց իմաստային և քերականական ընդհանուր հատկանիշներով տարբերություններ չունեն արևելահայերենում և արևմտահայերենում: Արևմտահայերենում նույնպես դրանք բնորոշվում են որպես թիվ, թվային կարգ և բաշխում ցույց տվող բառեր: Եվ ըստ այդմ էլ բաժանվում են երեք խմբի՝ **քանակական**, **դասական** և **բաշխական**:

Քանակական թվականները առարկայի քանակ, որոշակի թիվ ցույց տվող բառեր են: Ըստ կազմության՝ լինում են պարզ, բարդ և ածանցավոր:

Արևելահայերենում և արևմտահայերենում որոշ տարբերություններ կան այդ թվականների կազմության և ուղղագրության մեջ:

Հայտնի է, որ գրաբարում **7, 9, 10** թվականները եղել են արմատական և վերջնահնչյունով՝ **եօթն, ինն, տասն**: **Ն**-ի անկումից հետո զաղտնավանկի **ը**-ն չի ընկել, և աշխարհաբարում հաճախ գործածվում է **ն**-ին զուգահեռ: Արևմտահայերենում **7** և **10** թվականները գործածվում են **և՛ ը, և՛ արմատական հնչյուններով, և՛ առանց դրանց՝ եօթ(ը, ն), տաս(ը, ն)** (ինչպես՝ «Այս թղթակցութիւնը կ'երկարի աւելի քան տաս տարիներու վրայ...» («Հասկ»), մինչդեռ արևելահայերենում **7** թվականը արտասանվում և գրվում է առանց այդ մասնիկների՝ **յոթ**, իսկ **10** թվականը՝ միայն **ը**-ով կամ **ն**-ով՝ **տասը** կամ **տասն**՝ նայած դիրքի և գործածության: **7** և **10** թվականների համաբանությամբ արևմտահայերենում մասնիկավոր ձև կարող է ունենալ նաև **ութ** թվականը՝ **ութ(ը, ն)**, որը արևելահայերենում **7** թվականի նման դարձյալ գործածվում է միայն առանց **ը**-, **ն**-ի՝

ութ: Ըստ որում, արևմտահայերենը այդ ը–ն և ն–ն պահպանում է նաև բարդություններում՝ **տասնուութ, քսանեօթ, երեսունութ** են:

Օրինակ՝ «Գիւղը քառասուն տուն ուներ և **եօթը** ճամբայ» (Շ. Նար-դունի), «Պարտաւորուեցաւ **եօթը** տարի աշխատիլ գործընկերոջ մը հետ» (Ռ. Հատտեճյան): Ն–ն կարող է պահպանվել նաև **տաս(ը) և եօթ(ը)** թվականների թեքված ձևերում՝ «**Տասնէն** աւելի են այն քերթուածները, որոնք անոր գրիչովը կտակուեցան մեր հաւաքական հարստութեանց գանձարանին» (Հ. Օշական):

Իբրև այդ թվականների կիրառության տարբերություն կարելի է նշել նաև հետևյալը: Արևելահայերենում ընդունված է ամսվա կամ շաբաթվա օրը նշելիս դրանք գործածել որոշիչ հոդով կամ հոլովական վերջավորությամբ, ինչպես «Երկուշաբթի **օրը**», «Ապրիլի **16–ին**» են: Արևմտահայերենում սովորական է դրանց՝ ուղիղ ձևով գործածությունը. ըստ որում, հնարավոր է նաև ամսվա անվան՝ ուղիղ ձևով կիրառությունը, այսպես՝ «Շաբաթ, **17 Ապրիլ** 2004ի առաւօտուն, Քիկալիի (Ռուսանտա) մէջ տեղի ունեցած միջազգային համագումարին ընթացքին, արծարծուեցաւ Հայկական Ցեղասպանութեան պարագան», «Անթիլիասի մայրավանքին մէջ, **22–23 Ապրիլին** տեղի պիտի ունենայ ցեղասպանութեան յատկացուած միջազգային համագումար», «Սակայն, ամերիկացի գի-նուորական ղեկավարներ **Երկուշաբթի օր** յայտնեցին, թէ որոշած են յաւելեալ ժամանակ տրամադրել...» («Ասպարեզ»):

Եթե ամսվա անունը նախադաս դիրքում է, ապա հոդ է ստանում օրը մատնանշող թվականը, իսկ ամսվա անունը գործածվում է ուղիղ ձևով, ինչպես՝ «Խօսակցութեան հետեւեալ օրը **1915 Մայիս 21ին** (հին տոմար), Ջօիրապ կը ձերբակալուի Վարդգեսին հետ, որ նոյնպէս Օսմանեան Խորհրդարանին անդամ էր», «Երեւանէն **Մայիս 20ին** պիտի մեկնի Թիֆլիս» («Զարթոնք»):

Տարբերություն է նաև այն, որ **11–19** թվականների առաջին բաղադրիչը արևմտահայերենում արտասանվում է հոդով՝ **տասնը–**. գրության մեջ հոդը չի պահպանվում, թեև երբեմն այդպես էլ են գրում՝ **տասնըվեց, տասնըերկու** են. հանձնարարվում է գրել առանց **ը–ի՝ տասնմէկ, տասնվեց, տասնեօթ, տասնութ** են: Այս հարցի վերաբերյալ կա նաև այլ կարծիք: **Օրինակ՝** «Քերականություն» գրքի հեղինակ Էդուարդ

Տասնապետյանը սովորական է համարում բացարձակ թվականների ը-ով գրությունը՝ ը հնչյունը իբրև առոգանական հենարան գործածելով, ինչպես՝ **քսանըմեկ, քառասունըչորս, տասնըհինգ, վաթսունըվեցերորդ, տասնըվեցերորդ** ևն (տե՛ս 39, 73):

Արևմտահայերենում երբեմն տասնավորների միավոր և տասնավոր եզրերը իրար հետ կապվում են եւ շաղկապ-հոդակապով՝ բաղադրիչների առանձին կամ միասին գրությամբ՝ **տասնեւվեց // տասն եւ վեց, քսանեւհինգ // քսան եւ հինգ, քառասունեւչորս // քառասուն եւ չորս**, օրինակ՝ «Տարակոյս չկայ որ եթէ հինգ կանչէր, **քսան եւ հինգ** պիտի ունենար իւր առջեւ, մայրաքաղաքիս սովորութեանը համեմատ» (Հ. Պարոնյան), «Ժամացոյց **տասնեւմէկ հնչեց**» (Համաստեղ): Հնացած ձևեր են:

Երկու թվականը փոխանվանաբար գործածվելիս բաղադրվում է արևելահայերենում ս մասնիկով՝ **երկուսը, երկուսից, երկուսները**, արևմտահայերենում՝ ք մասնիկի հավելումով՝ **երկուքն ալ, երկուքական, երկուքով, երկուքին** ևն. «Համբարծում աղան. շիտակ, չոր, երկայնահասակ մարդ մը, յիսունէն յիսունհինգ տարեկան, ...ծեռքը երկար **թէզպիի** մը, որուն հատիկները **երկուք առ երկուք** կը քաշէ անդադար» (Ե. Օտյան):

Միլիարդ և **զրո** բառերը արևմտահայերենում ունեն արևելահայերենից տարբերվող ձևեր՝ **միլիառ, զերօ**. «Ամէն գոյութիւն, երկու **զերօներու** միջեւ պտոյտ մըն է» (Ռ. Հատտեճյան):

Կտորակային թվականները (որոնք կարելի է համարել քանակական թվականների մի տեսակ) գրական հայերենի երկու տարբերակներում կազմության և իմաստային տարբերություններ չունեն. թվի հասկացություն են արտահայտում ամբողջի այս կամ այն մասերի միջոցով, կազմվում են քանակական թվականից (համարիչ) և դասական թվականից (հայտարար), ինչպես՝ **երկու երրորդ, երեք հինգերորդ** ևն:

Դասական թվականները առարկաների թվային կարգ ցույց տվող բառեր են: Արևելահայերենում և արևմտահայերենում կազմվում են քանակական թվականներին կցելով՝ **-րորդ, -երորդ** ածանցները: **Երկու, երեք, չորս** թվականների դասականը կազմվում է **-րորդ** ածանցով՝ **երկրորդ, երրորդ, չորրորդ**, մյուսներինը՝ **-երորդ՝ հինգերորդ, տասներորդ**:

Արևելահայերենում **մեկ (մի)**, իսկ արևմտահայերենում **մեկ** թվականից դասական չի կազմվում. երկուսում էլ համապատասխան դասականն է **առաջին**–ը:

Դասական թվականների կազմության և արտասանության մեջ տարբերություններ չկան:

Արևմտահայերենի քերականության առանձին գրքերում նշվում է արևելահայերենից տարբեր մի յուրահատկություն, ըստ որի՝ **2, 3 և 4** թվականներով կազմված բաղադրյալ ձևերում, եթե վերջինները դառնում են բարդության վերջին բաղադրիչ, գործածվում են ն՝ **–երորդ, ն՝ –րորդ** կամ միայն **–րորդ** ածանցները՝ **տասներկուերորդ // տասներկրորդ, տասներեքերորդ // տասներրորդ, տասնչորսերորդ // տասնչորրորդ** ևն (տե՛ս **39**): Արդի արևմտահայերենի գրավոր և բանավոր խոսքի՝ մեր դիտարկումները այդպիսի եզրակացության առիթ չեն տալիս:

Արևմտահայերենում **եօթերորդ** դասականը գործածվում է նաև **եօթներորդ** ձևով:

Ուղղագրական տարբերություն է նաև այն, որ դասական թվականների կրճատ ձևերում **–րդ** մասնիկը կարող է գրվել նաև թվականին միացած՝ առանց գծիկի, ինչպես՝ **3–րդ** կամ **3րդ, 10–րդ** կամ **10րդ** ևն: Առանց գծիկով գրությունը աստիճանաբար դուրս է մղվում գրական լեզվից:

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը ըստ հավասար քանակի: Այդ թվականների կազմության սկզբունքները երկու գրականներում նույնն են՝ բացարձակ թվականներին ավելացնելով՝ **–ական** ածանցը՝ **հինգական, ութական, տասնհինգական**, կամ՝ բացարձակ թվականների կրկնությամբ՝ **չորս–չորս, վեց–վեց**: Երկրորդներն ավելի բնորոշ են միավոր թվերին:

Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **7 և 10** թվականները, ինչպես նշվեց, բաշխականը կազմում են՝ վերականգնելով գրաբարյան և վերջնահնչյունը, այսպես՝ **եօթնական, տասնական**. «**եօթնական** սնտուկ մարինջ բաժնուեցաւ», կամ՝ «Սկաուտական խումբերը **տասնական** հոգիէ կը բաղկանային» (ԵՏ):

Մասնակի տարբերություններ կան կրկնավոր թվականների կազմության և գրության մեջ: **Արևմտահայերենում՝**

ա) մէկ և երկու թվականները կրկնավոր են կազմում առաջին բաղադրիչների հնչյունափոխված տարբերակներով՝ մէյ մէկ, երկ երկու,

բ) կրկնավոր թվականները գրվում են ն՝ միացած, ն՝ առանձին բաղադրիչներով՝ մէյմէկ // մէյ մէկ, երկերկու // երկ երկու, չորսչորս // չորս չորս. «Յաջող աշակերտներուն մէյմէկ գրիչ եւ չորսական տետրակ բաժնեցին», «Նստարաններու վրայ երկերկու հոգի տեղաւորուեցան» (ԵՏ): Կանոնավոր են դրանց գծիկով գրութիւնները:

Երկու թվականը բաշխական կազմելիս, ինչպես նշվեց, ստանում է քմասնիկը՝ երկուքական. «Փողոցի տուները երկուքական ծող ունին պատշգամներուն վրայ» (ԴՔ):

Փոխանուն ածականների և թվականների հոլովումը

Փոխանուն ածականը և թվականը արևմտահայերենում և արևելահայերենում եզակի թվում ենթարկվում են ի հոլովման՝ մեծ – մեծի, գեղեցիկ – գեղեցիկի, երեք – երեքի:

Մէկ–ը իբրև թվական գործածվելիս արևմտահայերենում սեռական–տրական հոլովում ունենում է մէկի ձևը, իսկ որպես դերանուն գործածվելիս՝ մէկուն. օրինակ՝ «**Մէկին** կրկինը երկուք է», «Թուղթերը յանձնեց մէկուն, որ կու գար օղակայանէն»:

Բացառական և գործիական հոլովները կազմվում են անվանական հոլովման սովորական վերջավորություններով, արևելահայերենում՝ **ից և ով**, արևմտահայերենում՝ **է և ով**:

Արևմտահայերեն

ուղղ.	մեծը	մէկը	երկուքը	եօթնականը	տասնչորսերորդը
սեռ.–տր.	մեծի	մէկի	երկուքի	եօթնականի	տասնչորսերորդի
բաց.	մեծէ	մէկէ	երկուքէ	եօթնականէ	տասնչորսերորդէ
գործ.	մեծով	մէկով	երկուքով	եօթնականով	տասնչորսերորդով

Տարբերություն կա հոգնակի թվի կազմության մեջ. արևելահայերենում պահպանվում է ի հոլովումը՝ **մեծեր – մեծերի, հինգ – հինգերի**, արևմտահայերենում այն փոխվում է ու–ի՝ **մեծեր – մեծերու, գեղեցիկներ – գեղեցիկներու, հինգեր – հինգերու, երեքներ – երեքներու:**

Բացառական և գործիական հոլովները պահպանում են կազմության սկզբունքները.

Արևել․՝	մեծերը	մեծերի	մեծերից	մեծերով
	երեքները	երեքների	երեքներից	երեքներով
Արևմտ․՝	մեծերը	մեծերու	մեծերէ	մեծերով
	երեքները	երեքներու	երեքներէ	երեքներով

Ածականների և թվականների գործածությունը

Գործածության մեջ այս երկու խոսքի մասերը արևմտահայերենում և արևելահայերենում ամբողջությամբ համընկնում են:

Սովորաբար գործածվում են որպես գոյականի լրացում. ցույց տալով առարկայի հատկանիշ՝ դառնում են **որոշիչ**. «Գործարանը կը նմաներ **առասպելական հսկայ** անասունի մը, **երկաթե** կմախքով և **աղիւսէ մկաններով**» (Բ. Նուրիկյան), կամ՝ «Մայր մը զաւակներուն լաւ խրատներ կու տայ», «Գտէք **այ, ոյ, եա, իւ** երկբարբառներով **տասնական բառ**»:

Կարող են դառնալ նաև **ստորոգելիական վերադիր**՝ «Այսօր կը պատկառփնք Պարոնեան մարդէն, որ **ուղղադատ էր, անկաշառ ու խիզախ**» (ԵՏ), կամ՝ «Հայերէնի խօսքի մասերը **տասն են**»:

Որական ածականները դրվում են նաև բայերի վրա և ցույց են տալիս նաև գործողության հատկանիշ, դառնում **ձևի պարագա**. «Շատ բարձր կը խօսի», «**Հանգիստ կը քալէինք**»:

Փոխանուն ածականը և թվականը կատարում են բոլոր պաշտոնները, որ հատուկ են գոյականին՝ ենթակա, խնդիրներ, պարագաներ են. «**Կապոյտն** յանկարծ կու լայ բուռն ծիծաղէն, եւ կը տեղայ **աղամանդ**», «Տարագրեցիր հոգւոյս **մըռայլն** համօրէն» (Մ. Մեծարեց), «Իմ ընկերներէս **երեքը** բժիշկ դարձած են, **երկուքը**՝ իրաւաբան»:

Ինչ վերաբերում է թվականների հետ գոյականների՝ թվով համաձայնությանը, ապա կանոնը (մեկից բարձր բացարձակ թվականների հետ գործածվելիս գոյականը կարող է դրվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով՝ պայմանավորված գործածության օրինաչափություններով) ընդհանուր է արևմտահայերենի և արևելահայերենի համար:

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանուն խոսքի մասին պատկանող բառերը աչքի են ընկնում իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների անմիօրինակությամբ, ուստի դերանվան որոշ տեսակների դասակարգման խնդիրը առ այսօր վիճաբանությունների առարկա է⁴։ Իմաստային տեսակետից դերանունները բազմազան են. դերանունների մի մասը ընդհանուր կերպով մատնանշում է առարկա (ես, դու, ոչինչ, ինչ), մյուս մասը՝ առարկայի հատկանիշ (այսպիսի, ո՞ր, ինչպիսի՞, սոյն, նոյն), երրորդները՝ գործողության հատկանիշ (ե՞րբ, ո՞ւր, այսպես, ինչպես) ևն։ Այս իմաստային բազմազանությամբ էլ պայմանավորված է դերանվան ձևաբանական և շարահյուսական անմիօրինակությունը. դերանունների մի մասը թեքվող խոսքի մաս է, այսինքն՝ հոլովվում է, մյուս մասը՝ ոչ։ Նախադասության մեջ դերանունները կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ՝ բնորոշ գոյականին, ածականին, թվականին, մակբային։ Որոշ դերանուններ կատարում են նաև ստորադասական շաղկապների դեր։

Այսօր արևմտահայ և արևելահայ քերականագիտության մեջ ընդունված է դերանունը համարել առանձին խոսքի մաս։ Այդ տեսակետի պաշտպանները դերանվան համար նշում են մի քանի հիմնական տարբերակիչ հատկանիշներ։ Դրանք կարելի է սահմանել հետևյալ կետերով.

1. Դերանուն համարվող բառերն ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, որը որոշակիություն է ստանում խոսքային իրադրության

⁴ Որոշ լեզվաբաններ դերանունը տարրալուծում են այլ խոսքի մասերի մեջ։ Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականութիւն» աշխատության մեջ (Վաղարշապատ, 1906) դերանունը լուծարում է իբրև առանձին խոսքի մաս՝ տեղաբաշխելով գոյականի, ածականի և մակբայի մեջ, և համարում դրանք ենթատեսակներ։

Այս հատվածի շարադրանքը հմմտ. Գ. Հարությունյան, Ածական անուն, դերանուն, Երևան, 1976։

մեջ: **Օրինակ՝ այսպես** դերանունը մատնանշում է գործողության հատկանիշ, բայց չունի որոշակի իմաստ, ցույց է տալիս ընդհանրապես գործողության ձև. «**Այսպես** կատարեց իր գործը» (լա՞վ, թե՞ վատ. անորոշ է):

Ծանոթություն: Ընդհանուր կամ իրադրական իմաստ կարող ենք վերագրել նաև այլ բառերի, որոնք դերանուն չեն, ինչպես՝ **բազմաթիւ, առհասարակ, աշխատանք, տարբեր, գործ, ամենուր, այլեւայլ, տարաբնոյթ, որոշակի, ամբողջովին, քանիցս, քանակ (թիվ)** են:

2. Հրաշյա Ածառյանն առանձնացնում է դերանունների մի կարևոր հատկանիշ՝ **ցուցականությունը**: Դերանունները, ի տարբերություն գոյական, ածական և մակբայ խոսքի մասերի, առարկան կամ հատկանիշը չեն անվանում, այլ ցույց են տալիս: Այդ իսկ պատճառով դերանուններին հաճախ անվանում են ցուցական բառեր:

3. Դերանունները առարկան կամ հատկանիշը ցույց են տալիս այս կամ այն **հարաբերությամբ**: Դրանց մի մասն արտահայտում է տարածական հարաբերություն: Այսպես՝ եռանդամ հակադրություն են կազմում սա (արևմտ. // աս), դա (ատ), նա (ան), այս, այդ, այն դերանունները և դրանցով բաղադրված բառերը՝ **այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսպես, այդպես, այնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ, այսքան, այդքան, այնքան** (արևմտահայերենում նաև՝ **ասանկ–ատանկ–անանկ, ասիկա–ատիկա–անիկա**) են, որոնք իրարից տարբերվում են ոչ թե բառային, այլ հարաբերության նշանակությամբ և ցույց են տալիս առարկա կամ հատկանիշ, որը մոտ է համապատասխանաբար խոսողին, խոսակցին կամ մի երրորդ անձի: Որոշ դերանուններ ունեն դիմային նշանակություն. ցույց են տալիս խոսող (**ես, մենք**), խոսակից (**դու / դուն, դուք**) կամ մի երրորդ անձ, որի մասին խոսվում է (**նա / ան, անիկա, նրանք / անոնք**):

4. Դերանուն բառն ինքնին նշանակում է անվան դեր կատարող: Այլ կերպ ասած՝ դերանունները այլ բառերին (անուն խոսքի մասերին) **փոխարինող բառեր** են: Փոխարինում են գոյականին, ածականին, թվականին, մակբային:

Այսպիսով՝ դերանուններն ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, ցույց են տալիս առարկա, հատկանիշ, ձևաբանորեն անմիօրինակ են, խոսքի մեջ գործածվում են գոյականի, ածականի, թվականի կամ մակբայի շարահյուսական պաշտոններով:

Դերանունները բառակազմորեն մեծ մասամբ պարզ բառեր են: Դերանունների թիվը երկու գրականներում էլ քիչ է, հասնում է մոտ հարյուրի:

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր խոսքիմասային հատկանիշներով դերանունները երկու գրականներում համակարգային տարբերություններ չունեն:

Տարբերություններ առկա են դերանունների ինչպես ուղիղ, այնպես էլ թեքված ձևերում:

Կան դերանուններ, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում: Դրանք կա՛մ նույն դերանվան հնչյունափոխված, կա՛մ տարբերակային ձևեր են, ինչպես՝ **ինք(ը), դուն, աս, ան, ոեւէ, ոչ մէկ, ամէն մէկ (ը), քանի մը**, կա՛մ էլ լեզվի զարգացման նախորդ փուլերից կամ բարբառներից անցած կազմություններ՝ **հոս, հոդ, հոն, ասիկա, ատիկա, անիկա, ասանկ, ատանկ, անանկ, ինքզինք** (հոգն.՝ **իրենք—զիրենք**), **մէկզմէկ, ուրկէ՞, մէկ քանի(ն) են**:

Արևմտահայերենում քիչ գործածական են **իրար, միմեանց, մէկզմէկ** դերանունները, անգործածական են **մէկմէկու, մէկմէկի** տարբերակները:

Ովքեր դերանունը արևմտահայերենի քերականության դասագրքերում չի նշվում որպես գործածվող դերանուն, բայց վերջին շրջանում արևելահայերենի ազդեցությամբ սկսել է գործածվել բանավոր, երբեմն նաև գրավոր խոսքում:

Նա և դա դերանունների փոխարեն արևմտահայերենում ավելի գործածական են **ան, անիկա, ատիկա** (իզվ.՝ **ատ**) դերանունները: **Սա—ն** գործածական է:

Ծանոթություն: Գրաբարյան ծագում ունի և արևմտահայ գրականում որպես համագործածական բառ չի ընկալվում **է՞ր** (ինչո՞ւ)՝ հարցական դերանունը: Հանդիպում է առավելապես գեղարվեստական գրականության մեջ.

Է՞ր կը փըշրես ալիքն՝ եկող ալիքով.

Է՞ր կը յանձնես տերեւը՝ գուժ մըրըրկին,

Լերան աւազն՝ յեղեղներուն մոլեգին.

Է՞ր կը մատնես մարդը՝ մարդուն կեղեքման...

(Դ. Վարուժան)

Արևմտահայերենում թեքված ձևերում պահպանվել են գրաբարյան առանձին կազմություններ՝ **զայն, զիս, զինք, զոր, զորս, զով**:

Հնացած են **հինէ, զայս, զայդ, զծեզ, զմեզ, զքեզ** ձևերը:

Բարբառային են **ինէ, ինծնէ, քենէ, քեզնէ, մենէ, մեզնէ, ձենէ, ձեզնէ** և նման տարբերակները:

Գրաբարի համաբանությամբ աշխարհաբար կազմություններ են **զանոնք, զիրենք**:

Արևմտահայերենում շատ են դերանունների տարբերակային ձևերը՝ **աս // ասիկա // այս, այդ // ատիկա // ատ, այսպէս // ասանկ // սապէս, քանի մը // մէկ քանի, ամէնը // ամէնքը**: Բայց, ինչպես արդեն նկատեցինք, դրանց մի մասը խոսակցական է կամ ունի բարբառային երանգավորում, ինչպես՝ **աս, ատ, սապէս, ուրտեղ, ասի, ատի, անի, սանկ, նանկ**, և գրական լեզվում չի գործածվում կամ գործածվում է խիստ հազվադեպ: Գործածական չէ նաև **դա** դերանունը: Գրական լեզվում քիչ են գործածվում **ասսանկ, ատանկ, անանկ** դերանունները:

Անձնական դերանունների սեռական–տրականի ձևերը արևմտահայերենում ընդունված է համարել ստացական **դերանուններ**, որոնք ունեն իրենց հատուկ հոլովական հարացույցը՝ **իմս (իմինս) – իմինիս – իմինես – իմինովս, քուկդ (քուկինդ) – քուկինիդ – քուկինէդ – քուկինովդ**, կամ հոգնակի թվում՝ **քուկիններդ – քուկիններուդ – քուկիններէդ – քուկիններովդ** ևն:

Ծանոթություն: Մի քանի հարցական դերանուններ արևմտահայերենում դրսևորում են նաև արտասանական տարբերություններ. պայմանավորված բառային շեշտի (այս դեպքում՝ հարցական հնչերանգի) դիրքային փոփոխությամբ՝ այդ դերանունները հանդես են գալիս արտասանական զուգահեռ տարբերակներով՝ **ի՞նչպէս, ի՞նչու // ինչո՞ւ, ո՞րքան // որքա՞ն, ո՞րչափ // որչա՞փ**. առաջինները առավել տարածված են:

Դերանունների տեսակները և ձևաբանական առանձնահատկությունները

Ընդունված է առանձնացնել դերանունների հետևյալ տեսակները՝ **անձնական, ցուցական, հարցական, հարաբերական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, ժխտական**:

Տարակարծությունների առիթ է տալիս նաև դերանունների ներխոսքիմասային դասակարգման այս մոտեցումը, քանի որ չի պահպանվում

սկզբունքի միասնականությունը. յուրաքանչյուր տեսակ առանձնացվում է մյուսներից տարբեր հիմունքով՝ դրոշյալություն, փոխադարձ կապվածություն, անձ ցույց տալու հատկանիշ, ժխտում, հարցական հնչերանգ են: Անձ ցույց տվող դերանունների մեջ նշվում են այդ իմաստն ունեցող ոչ բոլոր դերանունները. դուրս են մնում **ո՞վ, ոչ ոք, ամեն ոք, իւրաքանչիւր ոք**, կամ՝ այդ տրամաբանությամբ մյուս բոլոր դերանունները պետք է դասակարգվեին մի տեսակի մեջ և համարվեին ոչ անձ ցույց տվող դերանուններ: Ցուցականությունը վերագրվում է միայն մի խումբ դերանունների, մինչդեռ այդ հատկանիշը հատուկ է բոլոր դերանուններին: Հարցական հնչերանգով ազատ կարող են արտաբերվել ոչ միայն մի խումբ դերանուններ, այլև բոլոր դերանունները կամ առհասարակ բոլոր բառերը:

Բացի այդ, քերականական իրողություններում ցանկացած իմաստային դասակարգում պետք է ունենա քերականական արժեք, այսինքն՝ դասակարգվող խմբերը պետք է ունենան քերականական տարբերություններ: Դերանունների նշված տեսակները չունեն ոչ ձևաբանական և ոչ էլ շարահյուսական տարբերակիչ հատկանիշներ: Օրինակ՝ ցուցական դերանուններում ներառվում են և՛ առարկա (սա, ասիկա, ատիկա), և՛ առարկայի հատկանիշ (այս, այսպիսի, նոյնպիսի, ասանկ, այդ, միեւնոյն), և՛ գործողության հատկանիշ ցույց տվող (այսպէս, այսքան, այնտեղ, ո՞ւր) բառեր:

Դերանունների տեսակները որոշելիս պետք է առաջնորդվել դրանց ունեցած իմաստային-քերականական ընդհանուր հատկանիշներով, այն է՝ ի՞նչ են ցույց տալիս և ի՞նչ ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ ունեն:

Այս մոտեցմամբ դերանուն խոսքի մասի մեջ առանձնացվում են հետևյալ երկու խմբերը կամ տեսակները (համառոտության համար այստեղ նշում ենք միայն արևմտահայերեն տարբերակները).

ա) **առարկայանիշ դերանուններ**՝ ես, սա, ասիկա, ատիկա, անիկա, ինքզինք, մէկզմէկ, ինք(ը), ոչ ոք, դուն, ով / ո՞վ, իրար, ինչ / ի՞նչ, ոչինչ, ամեն ինչ, մէկը, ոչ մէկը ևն,

բ) **հատկանիշ ցույց տվող** կամ **հատկանշանիշ դերանուններ**, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթատեսակների՝

1) **ածական կամ ածականանիշ դերանուններ**՝ այս, այդ, այն, քանի / քանի՞, մեկ քանի / քանի մը, ոեւե / որեւե, այսպիսի, այսչափ, ո՞րքան / որքան, ո՞ր / որ, ինչպիսի՞ / ինչպիսի, ուրիշ մը ևն (իրենց քերականական հատկանիշներով այս շարքում ներառվում են նաև թվական կամ թվականանիշ դերանունները),

2) **մակբայ կամ մակբայանիշ դերանուններ**՝ այսպէս, հոս, հող, հոն, ի՞նչպէս / ինչպէս, ինչո՞ւ / ինչու, որտեղ, երբ, ուր, ինչքա՞ն / ինչքան, այստեղ, այդտեղ, այնտեղ ևն:

Արևմտահայերենի **ասիկա, ատիկա, անիկա** դերանունները միայն առարկայանիշ են՝ «**Անիկա** լուռ կեցած էր»: Սա դերանունը և՛ առարկայանիշ է, և՛ ածականանիշ՝ «**Սա** չէ իմ գիրքը», «**Սա** մարդը ի՞նչ կ'ուզէ»: Այս, այդ, այն դերանունները, ինչպես արևելահայերենում, մատնացույց են անում և՛ առարկա, և՛ հատկանիշ: Ըստ որում, արևմտահայերենում դրանցից առաջին երկուսի՝ առարկայական նշանակությամբ կիրառությունը գրական լեզվում առավել զգալի է: Դրանք հաճախ հանդես են գալիս բարբառային **աս, ատ** ձևերի փոխարեն: Ուստի պատահական չէ, որ արևմտահայերենի քերականության դասագրքերում այս, այդ դերանունները երբեմն ներկայացվում են որպես **ասիկա, ատիկա** առարկայանիշ դերանունների զուգահեռ տարբերակներ: (Այդ մասին կխոսվի իր տեղում):

Առարկայանիշ դերանուններ. դրանց ձևաբանական առանձնահատկությունները

Ցույց են տալիս առարկա ընդհանուր կերպով: Գոյականների նման ունեն հոլովի և թվի քերականական կարգեր, այսինքն՝ հոլովվում են և ունեն եզակի ու հոգնակի թվի հակադրությունը: Երկու գրականներում էլ նույն այդ քերականական կարգերում դրսևորում են նաև գոյականներից տարբեր որոշ յուրահատկություններ:

Դերանունների դեմքը: Դիմային հարաբերություն արտահայտելու տեսակետից այդ հատկանիշն ունեցող դերանունները արևելահայերեն-արևմտահայերեն համադրության մեջ տարբերություններ երևան չեն հանում:

Ի տարբերություն անձնանիշ գոյականների՝ դերանունները քերականական այդ իմաստն արտահայտում են ոչ թե նույն բառի քերականական տարբեր ձևերով (օր.՝ **ուսանող – ուսանողս**. «(ես) **ուսանողս** համալսարան կը սորվիմ...»), այլ տարբեր բառերով՝

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
1–ին դեմք	ես, մենք	ես, մենք
2–րդ դեմք	դու, դուք	դուն, դուք
3–րդ դեմք	նա, նրանք	ան, անոնք

Ինքը / ինք(ը) դերանվան դեմքը երկու գրականներում էլ գոյականների նման արտահայտվում է հոդերի միջոցով՝ **ինքս, ինքդ, ինքը**, հոգնակին՝ **ինքներս, ինքներդ (ինքները)** ձևը գործածական չէ և փոխարինվում է **իրենք** ձևով):

Դերանունների անձի և իրի առումները: Անձ և ոչ անձ ցույց տալու հատկությամբ (դասային նշանակությամբ) առարկայանիշ դերանունները արևմտահայերենում և արևելահայերենում գրեթե տարբերություններ չունեն: Գոյականների նման դրանք բաժանվում են երկու խմբի (նշում ենք միայն արևմտ.)՝

ա) **անձնանիշ դերանուններ.** պատասխանում են ո՞վ հարցին՝ **ես, դուն, ան, ով, ինք(ը), ոչ ոք, ամեն ոք, ոմանք, իւրաքանչիւր ոք**,

բ) ոչ անձ ցույց տվող կամ իրանիշ **դերանուններ.** պատասխանում են ի՞նչ հարցին՝ **սա, ասիկա, ատիկա, ամեն ինչ, ի՞նչ, ոչինչ:**

Արևմտահայ քերականության մեջ խոսվում է նաև **որեւէ** և **ոեւէ** դերանունների՝ անձ և ոչ անձ իմաստային հակադրության մասին, իբր առաջինը ցույց է տալիս իր, իսկ երկրորդը՝ անձ, այսինքն՝ **որեւէ գիրք**, բայց՝ **ոեւէ մարդ**: Մեր դիտարկումները այդպիսի եզրակացության հիմք չեն տալիս, ինչպես՝ «Ցամաքին հետ **ոեւէ** կապ չունինք...» (Գ. Չոիրապ), «Մենք հոն պաշտօն չունինք **որեւէ զոյգեր** պսակելու, մանուկներ մկրտելու...» (Ա. Անդրեասյան), «Բերդին մեջ պաշարուածները **ոեւէ տեղեկութիւն** չունէին Մուշեղի յաղթանակներէն», «Այնպէս ուզեց ձեւացնել թէ ինք **ոեւէ ատելութիւն** չունի Հայոց հանդէպ» (Մուշեղ Իշխան), «Լատին Ամերիկայի քաղաքականութեան վերաբերեալ **որեւէ**

հայտարարութիւն չհրապարակուեցաւ» («Ազդակ»): Ծիշտ կլինի դրանք համարել բառային տարբերակներ, որոնք չունեն կիրառական որևէ տարբերություն:

Երկու գրականներում էլ ունենք նաև, այսպես կոչված, չեզոք դերանուններ՝ **ոչ մէկը, մէկմէկու // մէկզմէկ, իրար, մէկը**: Սրանք կարող են ըստ խոսքաշարի լինել և՛ անձնանիշ, և՛ իրանիշ. «Ներկաներեն **ոչ մէկը** խօսեցաւ» (անձնանիշ), «Մեքենաներեն եւ **ոչ մէկը** գործի դրուեցաւ» (իրանիշ): Ե՛վ առարկա, և՛ անձ են ցույց տալիս նաև **սա // աս, ատ, ան, ասիկա, ատիկա, անիկա** դերանունները: Ըստ որում, **նա // ան (անիկա)** դերանունը հայերենի երկու ճյուղերում էլ առավելապես անձնանիշ է:

Քննարկվող հարցի տեսակետից արևմտահայերենում իմաստային-քերականական հետաքրքիր տարբերություն են դրսևորում **զայն** և **զինք** դերանունները: «Արեւմտահայ դասական գրականութեան մէջ, գրաբարի հետեւելով,— գրում է Պետրոս Բեդիրյանը,— **զայն** ձեռք տակաւին կը գործածուէր նաեւ մարդու համար: **Օրինակ՝** Երուանդ Օտեան «Վրաններու Տակ» գրուածքին մէջ կ'ըսէր. «Քանի՛—քանի՛ անգամներ խելայեղ մայրը զաւակը վաճառելէ ետք վազած ու կառքին մէջէն ետ յափշտակած էր **զայն**, դրամը գնորդներուն երեսին նետելով»: ...Մերօրեայ արեւմտահայերէնի մէջ սակայն, ընդունուած է մարդու (եւ իբր անձ առնուած առարկաներու) համար ըսել **զինք**, եւ միայն իրերու համար՝ **զայն**: **Օրինակ՝** երբ մէկը ձեզի ըսէ, «Դու՛րս տար **զինք**», պիտի նայիք թէ ով կայ դուրս տանելու, բայց եթէ նոյնը ըսուի **զայն** բառով, արդէն պիտի շուրջերնիդ փնտռէք առարկայ մը, զոր կ'առաջարկուի տեղէ մը տանիլ: Հակառակ գործածութիւնները հաւասարապէս սխալ կը սեպուին այժմ» (33, 27):

Այս դերանունները արևմտահայերենում և արևելահայերենում համընկնում են նաև քերականական մյուս հատկանիշներով:

Անձնանիշ են (մենք), **դու / դուն** (դուք), **նա / ան** (նրանք / անոնք) դերանունները նախադասության մեջ ենթակա կարող են դառնալ **ինքը** (իրենք) դերանվան հետ կապակցվելով, ինչպես՝ արևել.՝ **ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք իրենք** կամ **ինքները**, արևմտ.՝ **ես ինքս, դուն ինքդ, ան (անիկա) ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, անոնք իրենք** կամ **ինքները**:

Դերանունների թիվը: Դերանունների թվակազմության սկզբունքները երկու գրականներում նույնն են: Ըստ թվակազմության առարկայանիշ դերանունների մեջ արևելահայերենում և արևմտահայերենում առանձնացվում է երկու խումբ. ա) դերանուններ, որոնք ունեն եզակի և հոգնակի թիվ, և բ) դերանուններ, որոնք ունեն եզակի կամ միայն հոգնակի թիվ:

Առաջին խմբի դերանունների մի մասը հոգնակի թիվը կազմում է տարարմատությամբ, մյուս մասը՝ գոյականների նման: Հայոց լեզվի երկու ճյուղերում տարբերությունները ի հայտ են գալիս առանձին դերանունների հոգնակիակազմության, մասնավորապես հիմքերի մեջ:

Արևելահայերենում տարարմատությամբ են հոգնակին կազմում **ես, սա, նա, ինքը** դերանունները. **ես – մենք՝** տարբեր բառեր են, **սա, դա, նա, ինք(ը)** դերանունների հոգնակին ձևավորվում է եզակի տրականի ձևից՝ **ք** մասնիկով՝ **սրան+ք, դրան+ք, նրան+ք, իրեն+ք, ինքը** դերանունը **իրենք** ձևին զուգահեռ ունի նաև գոյականական կաղապար՝ **ինքն+եր (ս, դ):** Երրորդ դեմքի իմաստ արտահայտող **ինքները** ձևը, ինչպես վերը նշվեց, գործածական չէ. փոխարինվում է **իրենք** զուգահեռով՝ **նրանք ինքները=>նրանք իրենք:**

Արևմտահայերենում տարարմատությամբ են հոգնակին կազմում նշվածներից միայն **ես** և **ինք(ը)** դերանունները **ես – մենք, ինքը – իրենք: Ինք(ը)** դերանվան հոգնակին, ինչպես արևելահայերենում, ձևավորվում է եզակի տրականի ձևից՝ **ք** մասնիկով՝ **իրեն+ք**, և դրան զուգահեռ ունի նաև գոյականական կաղապար՝ **ինքն+եր (ս, դ):** Երրորդ դեմքի իմաստ արտահայտող **ինքները** ձևը այստեղ նույնպես գործածական չէ. փոխարինվում է **իրենք** զուգահեռով՝ **անոնք ինքները=>անոնք իրենք:**

Ինչ վերաբերում է **սա (սա / աս, ասիկա), դա (ատ, ատիկա), նա (ան, անիկա)** դերանուններին, ապա դրանց հոգնակին արևմտահայերենում կազմվում է ոչ թե սեռական–տրականի հիմքից և **ք** հոգնակերտով, ինչպես արևելահայերենում է՝ **սրան+ք, դրան+ք, նրան+ք**, այլ ուղղականի հիմքից և **–ոնք** մասնիկով, այսպես՝ **աս+ոնք, ատ+ոնք, ան+ոնք:**

Ինչ դերանվան հոգնակին երկու գրականներում էլ կազմվում է գոյականական կաղապարով՝ **ինչ+եր:**

Ինչպես նշվեց, արևելահայերենի ազդեցությամբ արևմտահայերենում գործածական է դարձել ով դերանվան հոգնակին՝ կազմված կրկնակի հոգնակերտ մասնիկներով՝ **ով + ք + եր**:

Ղու դերանունը արևելահայերենում հոգնակի է կազմում՝ հավելելով **ք** մասնիկը՝ **ղու+ք**, իսկ արևմտահայերենում **ղուն**—ը հոգնակին կազմում է՝ **ն**—ի փոխարեն **ք** ավելացնելով՝ **ղուն – դուք**:

Դերանունների հոգնակիի կազմության ժամանակ **ք** մասնիկը նկատելի գործունություն է դրսևորում և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

Այն դերանունները, որոնք չունեն եզակի և հոգնակի թվի հակադրություն, ցույց են տալիս որոշակի մեկ առարկա և հոգնակի թվով չեն գործածվում: Դրանք երկու գրականներում մույն դերանուններն են՝ **խրաքանչիւր ոք, ոչ ոք, ամէն ոք, ամէն ինչ, ոչինչ, մէկը, ամէն մէկը, ոչ մէկը**:

Միմեանց, իրար, մէկմէկ (արևել.՝ մեկմեկի / մեկմեկու) դերանունները իմաստով հոգնակի են, չունեն հոգնակիի ձևեր և ցույց են տալիս իրար հետ փոխադարձաբար կապված մեկից ավելի առարկաներ:

Ամէնքը դերանունը արևմտահայերենում **ամէն** դերանվան հոգնակին է՝ **ամէն + ք**:

Որ դերանունը ունի առարկայանիշ որոնք հոգնակիի ձևը՝ **—ոնք** վերջավորությամբ:

Ծանոթություն: Երկու գրականներում էլ տարբերում ենք, այսպես կոչված, **հարգական հոգնակին**, երբ խոսակցին դիմում են **ղու / դուն** երկրորդ դեմքի դերանվան հոգնակի թվով՝ **Ղուք (Ձեր, Ձեզ / Ձեզի, Ձեզանից / Ձեզմէ, Ձեզանով / Ձեզմով)**. այս դեպքում դերանունը գրվում է մեծատառով:

Դերանունների հոլովումը

Զգալի տարբերություններ կան առարկայանիշ դերանունների հոլովական ձևերում. երկու գրականներից յուրաքանչյուրը դրսևորում է առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են հիմնականում բարբառային հիմքերով, մասամբ նաև գրաբարի ազդեցությամբ:

Հոլովվող դերանունները երկու գրականներում առարկայանիշ դերանուններն են, որոնք գոյականների համեմատությամբ ունեն հոլովման յուրահատկություններ: Կան դերանուններ, որոնք հոլովվում են գոյա-

կանների նման, ենթարկվում են անվանական հոլովման, և կան դերանուններ, որոնք հոլովվում են գոյականներից տարբեր հոլովմամբ, որը բնորոշ է միայն այդ դերանուններին և կոչվում է դերանվանական հոլովում:

Դերանվանական հոլովում

Արևմտահայերենում և արևելահայերենում այս հոլովման ենթարկվող դերանունները համընկնում են: Դրանք են՝

Արևել.՝ ես, դու, մենք, դուք, ինքը, սա, դա, նա:

Արևմտ.՝ ես, դու, մենք, դուք, ինք(ը), այս (սա, աս, ասիկա), այդ (ատ, ատիկա), այն (ան, անիկա):

Այդ հոլովման առանձնահատկությունները արևելահայերենում և արևմտահայերենում հիմնականում համընկնում են, սակայն կան նաև տարբերություններ:

Հայոց լեզվի երկու ճյուղերում էլ դերանվանական հոլովման հիմնական առանձնահատկություններն են ուղիղ և թեք հոլովածների տարարմատությունն ու տարահիմքությունը, անվանական հոլովիչների բացակայությունը:

Երկու գրականներում նշվող տարբերություններից են հետևյալները՝

ա) Դու / դու դերանունը արդի հայերենի երկու հատվածներում էլ սեռականը կազմում է տարարմատությամբ, բայց արևելահայերենում այն լինում է գրաբարածն քո, իսկ արևմտահայերենում՝ քու: Վերջինս հիմք բարբառի ազդեցության արդյունք է:

Արևելահայերենում **սա, դա, նա** դերանունների դեպքում սեռականը կազմվում է տարահիմքությամբ, որում սերտաճում են հիմքը և վերջավորությունը՝ **սա – սրա, դա – դրա, նա – նրա**: Մինչդեռ արևմտահայերենում այդ և դրանց համապատասխան դերանունները՝ **այս (աս, ասիկա), այդ (ատ, ատիկա), այն (ան, անիկա)**, սեռականը կազմում են ուղղականի արմատական մասին որ մասնիկը հավելելով՝ **աս+որ, ատ+որ, ան+որ**: Դրանք առաջացել են գրաբար–միջին հայերեն–աշխարհաբար հետևյալ զարգացումով՝ **այս > այսոր > ասոր, այդ > այդոր – ադոր > ատոր, այն – այնոր > անոր**:

Ինքը / ինք(ը) դերանունը երկու գրականներում էլ սեռականը կազմում է տարարմատությամբ՝ **ինք(ը)** – **իր**: Այսպիսով՝ ունենում ենք ձևերի հետևյալ հարացույցները՝

Արևել. ես – իմ, դու – քո, սա – սրա, դա – դրա, նա – նրա, մենք – մեր, դուք – ձեր, ինքը – իր,

Արևմտ. ես – իմ, դու – քու, այս (սա, աս, ասիկա) – ասոր, այդ (ատ, ատիկա) – ատոր, այն (ան, անիկա) – անոր, մենք – մեր, դուք – ձեր, ինք(ը) – իր:

բ) Արևելահայերենում նշված բոլոր դերանունների **սեռականը և տրականը** կազմությամբ տարբեր են՝ **իմ – ինձ, քո – քեզ, մեր – մեզ, ձեր – ձեզ, իր – իրեն**: **Սա, դա, նա** դերանունների դեպքում սեռական և տրական հոլովների կազմության մեջ նկատվում է որոշ ձևային կապ՝ **սա – սրա – սրան, դա – դրա – դրան, նա – նրա – նրան**. տարբերվում են նաև մասնիկի առկայություն – բացակայությամբ՝ **սրա – սրան, դրա – դրան, նրա – նրան**:

Արևմտահայերենում սեռական և տրական հոլովներում տարբեր կազմություն ունի նշված դերանունների միայն մի մասը՝ **ես, դու, ինք (ը), մենք, դուք** դերանունները: Ըստ որում՝ արևելահայերենի **ինձ, մեզ, քեզ, ձեզ** հոլովածներին համադիր արևմտահայ գրական ունի հիմք բարբառի ազդեցությամբ կազմված **ի–ով վերջավորվող** ձևերը. եզակի առաջին դեմքում այդ **ի–ն** ավելանում է հնչյունափոխված տարարմատ հիմքին: Ունենում ենք՝ **ինձի, մեզի, քեզի, ձեզի** հոլովական ձևերը:

Տարարմատության սկզբունքը մյուս՝ **սա, դա, նա** (արևմտ.՝ **սա, ան, ասիկա, ատիկա** ևն) դերանունների դեպքում չի գործում: Եթե արևելահայ գրականում սեռական և տրական հոլովների կազմության մեջ ձևային տարբերություն այսուհանդերձ նկատվում է (**սրա – սրան, դրա – դրան, նրա – նրան**), ապա արևմտահայ գրականում այդ հոլովածները ուղղակի նույնանում են, ձևաբանորեն տարբերակված չեն, ինչպես՝ սեռ.՝ **ասոր, ատոր, անոր, տր.՝ ասոր, ատոր, անոր**:

Ինքը / ինք(ը) դերանվան տրականը երկու գրականներում էլ նույն տարարմատ ձևով է կազմվում՝ **իրեն**:

գ) Տարբերություններն զգալի են **հայցական հոլովի** կազմության մեջ: Եթե հայցականը արևելահայերենում ձևաբանորեն տարբերակված չէ և, ըստ էության, իբրև առանձին հոլովածն հանդես չի գալիս, ապա արևմտահայերենում, ինչպես արդեն նշվել է, այն միանգամայն հստակ ձևավորում ունի: Այս կետում արևմտահայերենն ավելի ավանդապահ է. **մենք, դու, դուք** դերանունները հայցականի համար պահպանում են գրաբարի տրականածն կազմությունները՝ **մեզ, քեզ, ձեզ**, իսկ **ես** և **ինք(ը)** դերանունները՝ գրաբարածն հայցականները՝ **զիս, զինք**:

Ան (**այն, անիկա**) դերանվանը նույնպես հատուկ է գրաբարածն հայցականի գործածությունը՝ **զայն**, բայց առավելապես գրական լեզվում, և միտում ունի դուրս գալու գործածությունից, ինչը և փաստորեն կատարվեց **զայս, զայդ** ձևերի հետ:

20-րդ դարի սկզբներին և նույնիսկ ավելի ուշ լայն կիրառություն ունեին **մենք, դու, դուք** դերանունների գրաբարածն հայցականները՝ **զմեզ, զքեզ, զձեզ**: Սակայն արդի սփյուռքահայ գրականության ու մամուլի լեզվի, ինչպես նաև մտավորականների բանավոր խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ձևերը, քիչ բացառություններով, դուրս են մղված գրական լեզվից: Հավանաբար այս միտումը նկատի ուներ Հր. Աճառյանի կողմից դեռ տասնամյակներ առաջ (1945 թ.) արված այն պնդումը, թե նշված դերանունների գրաբարյան զուգածները հնացած են և «կես դար առաջ» միայն «գրաբարյան հեղինակներ»-ի կողմից օգտագործվող (տես **12, 80**):

Արևմտահայ գրական լեզվում ըստ էության դերանվանական հոլովման ենթարկվող դերանունների (և ոչ միայն այդ դերանունների) տրականն ու հայցականը ձևաբանորեն տարբերակված են՝ **ինձի – զիս, քեզի – քեզ, ձեզի – ձեզ, մեզի – մեզ, իրեն – զինք(ը)**: Հետևաբար, այդ դերանունների հայցականը պետք է առանձնացվի իբրև անկախ հոլով:

Արևմտահայերենում տարածված սխալ է **ներգործական բայերի հետ** անձնական դերանունների՝ տրական հոլովածների գործածությունը, փոխանակ հայցականի. սխալ են **քննել ինձի, համբուրել մեզի, յուզեց անոր / իրեն, կանչեց քեզի, ինձի** տեսան, չի մոռնար **իրենց**, ճիշտ են **քննել զիս, համբուրել մեզ, յուզեց զինք, կանչեց քեզ, զիս** տեսան, չի մոռնար **զիրենք**, և հակառակը, չեզոք սեռի բայերի հետ նույն դերանունների ոչ թե տրական, այլ հայցական հոլովածների գործածությունը. սխալ են **դպիլ զիս, օգնեցի զինք, պատասխանեց մեզ, վստահու-**

թիւն կը ներշնչէ զհնք, ճիշտ են դպիլ ինծի, օգնեցի իրեն / անոր, պատասխանեց մեզի, վստահութիւն կը ներշնչէ իրեն նմ:

Ինչ վերաբերում է այս (սա, ասիկա), այդ (ատ, ատիկա) դերանուններին, ապա պետք է ասել, որ դրանք չունեն հայցականի առանձին ձևեր և կազմությամբ համընկնում են սեռական–տրականին: Այս դերանունները գրական արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, ունեն ոչ թե վեց հոլոված, այլ ընդամենը չորս՝ ուղղական, սեռական–տրական, բացառական, գործիական (ուղղական և հայցական, սեռական և տրական հոլովները ձևաբանորեն տարբերակված չեն), իսկ հայցականի զայս, զայդ ձևերը համապատասխան դերանունների՝ գրաբարի հետևողությամբ կազմված հոլովածներ են, որոնք գրեթե անգործածական են:

դ) Բացառական, գործիական (իսկ արևելահայերենում նաև ներգոյական) հոլովները կազմվում են անվանական հոլովման սովորական վերջավորություններով, որոնք երկու գրականներում տարբեր են.

Արևել.՝ բաց. ից, գործ. ով:

Արևմտ.՝ բաց. է, մէ (իզվ. կէ), գործ. ով, մով:

Երկու տարբերակներում էլ անգործածական է գործիականի բ վերջավորությունը, իսկ արևելահայերենում՝ նաև բացառականի ուց–ը: Արևմտահայ գրականում դերանվանական հոլովման բացառականը ձևավորելիս առավել կենսունակություն է դրսևորում մէ–ն, իսկ գործիականի դեպքում՝ մով–ը, որոնք համեմատաբար քիչ կենսունակ են անվանական հոլովման մեջ:

Արևմտահայերենում մի քանի դերանուններ բացառականում ունեն արևելահայերենից տարբեր և միայն դերանուններին հատուկ կազմություն կէ վերջավորությամբ: Դրանք են՝ ասիկա (սա, աս, այս) – ասկէ, ատիկա (ատ, այդ) – ատկէ, անիկա (նա, ան, այն) – անկէ: Այդպիսի կազմություն ունեն նաև հոս, հող, հոն և ուր դերանունները՝ հոսկէ, հողկէ, հոնկէ, ուրկէ, որոնք կարելի է համարել քարացած ձևեր:

Բացի բուն հոլովական վերջավորություններից՝ տարբերություն կա նաև բացառական և գործիական հոլովների հիմքակազմության մեջ: Արևելահայերենում նշված դերանունների բացառական և գործիական

հոլովները կազմվում են բացառապես տրականի հիմքից **ինձնից – ինձնով, քեզնից – քեզնով, իրենից – իրենով, սրանից – սրանով** ևն: Մինչեւ արևմտահայերենում ակտիվություն են հանդես բերում նաև ուղղականի և սեռականի հիմքերը:

Արևմտահայերենում բացառական և գործիական հոլովները տրականի հիմքից են կազմում **ես, դու, մենք, դուք** դերանունները **ինձնէ – ինձնով, քեզնէ – քեզնով, մեզնէ – մեզնով, ձեզնէ – ձեզնով**:

Տարբերությունը ի հայտ է գալիս նաև **ինք(ը) և այս, այդ, այն** (ասիկա, **ատիկա, անիկա** ևն) դերանունների բացառական և գործիական հոլովածների կազմության մեջ: **Ինք(ը)** դերանունը, ի տարբերություն արևելահայերենի, կազմվում է սեռականի հիմքից՝ **իրմէ, իրմով**, իսկ **ասիկա** (այս, սա, աս), **ատիկա** (այդ, ատ), **անիկա** (այն, ան) դերանունները բացառականը և գործիականը կազմում են ուղղականի հիմքից՝ **ասկէ – ասով, ատկէ – ատով, անկէ – անով**:

Սեռական–տրականի հիմքից կազմված ձևերը՝ **ասորմէ – ասորմով, ատորմէ – ատորմով, անորմէ – անորմով**, այժմ գործածական չեն և արևմտահայերենի քերականության մոր գրքերում չեն նշվում որպես զուգաձևեր: Նեղ բարբառային են նաև խոսակցական լեզվում և սփյուռքահայ առանձին հեղինակների գրվածքներում հանդիպող **ինէ, մենէ, քենէ** ձևերը:

Տարբերություն է նաև այն, որ արևմտահայերենում **ես, դու, մենք, դուք** դերանունները բացառականում և գործիականում չունեն զուգաձևություններ, որոնք արևելահայերենում կան, ինչպես **ինձնից // ինձանից, մեզնից // մեզանից, քեզնից // քեզանից, ձեզնից // ձեզանից**:

Ե) Հետաքրքրական տարբերություն ունի **ով** դերանունը. արևմտահայ գրականում այն չունի **ու՛մ** հոլովածը և փոխարինվում է **որ** դերանվան համապատասխան ձևով: Եվ առհասարակ, **ով** և **որ** դերանունների հոլովումը գրական արևմտահայերենում մույնական է: **Ով**–ը ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում, տրականի համար առանձին հոլովածն չունի: Հնացած է և գրեթե անգործածական նաև **ով** դերանվան գրաբարածն հայցականը՝ **զով**: Դրան փոխարինում է, ինչպես արդեն ասվեց, **որ** դերանվան հայցական հոլովածը՝ **զոր**:

Ով դերանվան հոլովական հարացույցն այսպիսին է՝ **ով – որու(ն) – զոր** (հզվ.՝ **զով**) – **որմէ(ն) – որով** (հզվ.՝ **որմով**):

Այսպիսով՝ արևմտահայերենի և արևելահայերենի դերանվանական հոլովման ընդհանուր համադրական պատկերը հետևյալն է.

Արևելահայերեն

ուղղ.	ես	դու	մենք	դուք	
սեռ.	իմ	քո	մեր	ձեր	
տր.	իմծ	քեզ	մեզ	ձեզ	
հայց.	իմծ	քեզ	մեզ	ձեզ	
բաց.	իմծնից	քեզնից	մեզնից	ձեզնից	
	իմծանից	քեզանից	մեզանից	ձեզանից	
գործ.	իմծնով	քեզնով	մեզնով	ձեզնով	
	իմծանով	քեզանով	մեզանով	ձեզանով	
ներգ.	իմծնում	քեզնում	մեզնում	ձեզնում	
	իմծանում	քեզանում	մեզանում	ձեզանում	
ուղղ.	սա	դա	նա	ով	ինքը
սեռ.	սրա	դրա	նրա	ում	իր
տր.	սրան	դրան	նրա	ում	իրեն
հայց.	սրան	դրան	նրան	ում	իրեն
բաց.	սրանից	դրանից	նրանից	ումից	իրենից
գործ.	սրանով	դրանով	նրանով	ումով	իրենով
ներգ.	սրանում	դրանում	նրանում	—	իրենում

Արևմտահայերեն

ուղղ.	ես	դուն	մենք	դուք
սեռ.	իմ	քու	մեր	ձեր
տր.	իմօի	քեզի	մեզի	ձեզի
հայց.	զիս	քեզ	մեզ	ձեզ
բաց.	իմծմէ	քեզմէ	մեզմէ	ձեզմէ
գործ.	իմծմով	քեզմով	մեզմով	ձեզմով
ներգ.	—	—	—	—

ուղղ.	այս (սա, ասիկա)	այդ (ատիկա)	այն (ան, անիկա)	ով	ինք(ը)
սեռ.	ասոր	ատոր	անոր	որու(ն)	իր
տր.	ասոր	ատոր	անոր	որու(ն)	իրեն
հայց.	ասոր	ատոր	զայն	զոր (զով)	զինք(ը)
բաց.	ասկէ	ատկէ	անկէ	որմէ	իրմէ
գործ.	ասով	ատով	անով	որով (որմով)	իրմով
ներգ.	—	—	—	—	—

Որպես տարբերություն պետք է նշել նաև այն, որ արևմտահայ գրականում դերանվանական հոլովման է ենթարկվում նաև **ինքզինք** անդրադարձ դերանունը: Այն չունի ուղղական հոլով, այսինքն՝ հանդես է գալիս հինգ հոլովածներով՝ սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական **ինքնիր** – **ինքնիրեն** – **ինքզինք** – **ինքնիրմէ** – **ինքնիրմով**:

Անվանական հոլովում

Հոլովվող դերանունների երկրորդ խումբը, ինչպես արդեն ասվեց, և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում ենթարկվում է անվանական հոլովման. հոլովվում է գոյականի հոլովման սովորական հարացույցով: Այս դերանունների հոլովման համակարգը աչքի է ընկնում այնպիսի առանձնահատկություններով, որոնք ընդհանրական են հայերենի, մասնավորապես արևմտահայերենի համար, և որոնք այս կամ այն կերպ արդեն քննարկվեցին: Դրանք են՝ սեռականը և տրականը ձևաբանորեն տարբերակած չեն. դերանունների մի մասը պահպանել է գրաբարածև հայցականների կազմությունը, բացակայում է ներգոյական հոլովը. անվանական հոլովման ենթարկվող դերանունների մի մասը գրական արևմտահայերենում ունի չորս, մյուս մասը (թվապես անհամեմատ քիչ)՝ հինգ հոլոված:

Անվանական հոլովման ենթարկվող դերանունները երկու գրականներում հիմնականում նույնն են: Այս խմբին են պատկանում առարկայանիշ դերանունների մի մասը (նշում ենք միայն արևմտ.)՝ **ինչ**, **ամէն** **ինչ**, **ոչինչ**, **ոչ ոք**, **ոմանք**, **ասոնք**, **ատոնք**, **անոնք**, **որոնք** ևն, հատկանիշ ցույց տվող այն դերանունները, որոնք հոլովվում են փոխանվանա-

բար գործածվելիս՝ **ամեն, ողջ, ամբողջ, իւրաքանչիւր, մէկ քանի / մի քանի, ինչքան, ուրիշ** են:

Առարկայանիշ **ամեն ոք, իւրաքանչիւր ոք** դերանունները երկու գրականներում էլ չեն հոլովվում, քանի որ դրանց վերջին բաղադրիչը՝ **ոք**-ը, չունի անկախ գործածություն: Սակայն **ոչ ոք**-ը հոլովվում է:

Որ-ը կարող է առարկայանիշ դառնալ և հոլովվել գոյականի նման:

Անվանական հոլովման ենթարկվող դերանուններից մի քանիսը արևմտահայերենում հայցական հոլովում պահպանել են գրաբարածն կազմությունները՝ հաճախ հենց աշխարհաբարյան ձևերին զուգահեռ, ինչպես՝ **զոր (որ), զիրար (իրար), զորս (որոնք), զանոնք, զիրենք** են:

Անվանական հոլովման ցուցիչները երկու գրականներում նույնն են՝ **ի, ու, ուան / վա, ց**:

Ի հոլովում

Արևմտահայերենում նույնպես առարկայանիշ դերանունների մեծ մասը ենթարկվում է **ի** հոլովման՝ **ինչ – ինչի, ոչ ոք – ոչ ոքի, ոչինչ – ոչինչի, ամեն ինչ – ամեն ինչի** են: Տարբերությունները հետևյալներն են.

Մէկ և ամեն դերանունները, ինչպես նաև **մէկ**-ով բաղադրված դերանունները, **ի** տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում ենթարկվում են **ու** հոլովման:

Արևմտահայերենում անվանական **ու** հոլովում ունի նաև **որ** դերանունը՝ **որ – որու(ն)**: (Այդ մասին ավելի հանգամանորեն քիչ հետո):

Ոչինչ դերանվան թեքված ձևերը կազմվում են անհնչյունափոխ հիմքով **ոչինչի, ոչինչէ, ոչինչով** («...Որոնք սակայն **ոչինչով** կը տարբերին», «Լեզուն անշուշտ **ոչինչով** է մեղաւոր: Բայց կայ աւելի գաղտ մեղքը՝ շեշտը անոր վրայ դնելու» (Յ. Օշական)):

Անվանական **ի** հոլովման են ենթարկվում նաև **տեղ** բաղադրիչով կազմված մակբայանիշ **այստեղ, այդտեղ, այնտեղ** դերանունները՝ **այստեղ – այստեղի, այդտեղ – այդտեղի, այնտեղ – այնտեղի**:

Ինչ վերաբերում է **ի** հոլովման դերանունների բացառական և գործիական հոլովների կազմությանը, ապա սկզբունքը նույնն է. արևմտահայ գրական լեզվում նույնպես դրանք ձևավորվում են անվանական հոլով-

ման սովորական, բայց արևելահայերենից մասնակիորեն տարբերվող վերջավորություններով՝ **է, ով:**

Արևմտահայ գրականում թեքված ձևերը որոշ յուրահատկություններ են դրսևորում նաև հոդառության և հիմքակազմության մեջ՝ հարազատ մնալով ընդհանրապես անվանական հոլովման առանձնահատկություններին:

Արևմտահայերեն

ուղղ.	ինչ	ոչինչ	ոչ ոք	այստեղ	ամենքը
սեռ.—տր.	ինչի	ոչինչի	ոչ ոքի	այստեղի	ամենքին
բաց.	ինչէն	ոչինչէն	ոչ ոքէն	այստեղէն	ամենքէն
գործ.	ինչով	ոչինչով	ոչ ոքով	այստեղով	ամենքով

Արևմտահայերենում ի հոլովման հարացույցով են հոլովվում փոխանվանաբար գործածվող մյուս դերանունները՝ **ուրիշ, բոլոր, իւրաքանչիւր, միւս, նոյնքան, այսքան, այսչափ, այդչափ, այսպիսի, նոյնպիսի, այսինչ, այնինչ, քանի՞, ո՞րքան, քանի՞երորդ, ի՞նչքան** ևն:

Քանի և մէկ քանի դերանունները, ի տարբերություն արևելահայերենի, թեքվելիս ս մասնիկ չեն ստանում՝ **մէկ քանիին, քանիով**. «Հազար ութը հարիւր եօթանասուն... չեմ յիշեր՝ **քանիին**, Սեպտեմբեր երեսունը-մէկին, ներեցէք, երեսունին պիտի ըսէի, վասն զի Սեպտեմբերն երեսուն օր միայն ունի...» (Յ. Պարոնյան):

Արևմտահայերեն

ուղղ.	որքանը	մէկ քանին	ուրիշը	բոլորը	միւսը
սեռ.—տր.	որքանին	մէկ քանիին	ուրիշին	բոլորին	միւսին
բաց.	որքանէն	մէկ քանիէն	ուրիշէն	բոլորէն	միւսէն
գործ.	որքանով	մէկ քանիով	ուրիշով	բոլորով	միւսով

Անվանական ի հոլովման են ենթարկվում նաև անձնական դերանունների **իմ, քու, մեր, ձեր** և սեռականի այլ ձևերը, երբ գործածվում են փոխանվանաբար (փոխանուն սեռական): Դրանք կոչվում են նաև ստացական դերանուններ: Դրանք արևելահայերենից, սակայն, տար-

բերվում են որոշ յուրահատկություններով. ստանում են **ս, դ** դիմորոշ հոդեր (որպես հավելադրություն), երկրորդ դեմքի ձևերը կազմում են **քուկդ** բարբառային հիմքով, հոգնակին ձևավորում են **ու** վերջավորությունը **ն**։

Այսպիսով ունենում ենք՝

ուղղ.	իմս (իմինս)	իմիններս	մերը (մերինը)	մերինները
սեռ.—տր.	իմինիս	իմիններուս	մերինին	մերիններուն
բաց.	իմինես	իմիններես	մերինեն	մերիններեն
գործ.	իմինովս	իմիններովս	մերինով	մերիններով

ուղղ.	անորը (անորինը)	անորինները	անոնցը (անոնցինը)	անոնցները
սեռ.—տր.	անորինին	անորիններուն	անոնցինին	անոնցներուն
բաց.	անորինեն	անորիններեն	անոնցինեն	անոնցներեն
գործ.	անորինով	անորիններով	անոնցինով	անոնցներով

ուղղ.	քուկդ (քուկինդ)	քուկիններդ	ձերը (ձերինը)	ձերինները
սեռ.—տր.	քուկինիդ	քուկիններուդ	ձերինին	ձերիններուն
բաց.	քուկինենդ	քուկիններենդ	ձերինեն	ձերիններեն
գործ.	քուկինովդ	քուկիններովդ	ձերինով	ձերիններով

ուղղ.	իրը (իրենը)	իրենցը (իրենցինը)	իրենները	իրենցները
սեռ.—տր.	իրենինին	իրենցինին	իրեններուն	իրենցներուն
բաց.	իրենինեն	իրենցինեն	իրեններեն	իրենցներեն
գործ.	իրենինով	իրենցինով	իրեններով	իրենցներով

Հոգնակի ձևերի համար առաջարկվող զուգահեռ կազմությունները՝ **անոնցինները, մերինինները, իրենցինները** **ն**, գործածական չեն։

Նույն ձևով են հոլովվում նաև ստացական համարվող դերանունների մյուս հոգնակիները։

Ինչպես տեսնում ենք, երրորդ դեմքը ունի երկու եզակի և երկու հոգնակի ձևեր։ **Մերը, ձերը, իրենցը, անոնցը** համարվում են եզակի ձևեր,

քանի որ երբ ասում ենք, օրինակ, **մերը**, հասկանում ենք մերը եղող ինչ—որ բան, որը մեկ հատ է, թեև գիտենք, որ **մերը մենք**—ի հոգնակի սեռականն է: Գործիական հոլովի հոդը՝ **ը** կամ **ն**, գրական լեզվում չի գործածվում և բնորոշ է խոսակցականին:

Օրինակ՝ «Իրենցիններով շատ զբաղեցանք այս տարի եւ **մերինները** երեսի վրայ ձգեցինք» (ԴԶ), «Որբ չէինք միայն... հաւաքական դիմագիծ մըն էր **մերինը**, բիրտ, դաժան, չար: Կ'ատէինք մարդիկ, կ'ատէինք իրար» (Ա. Ծառուկյան):

Ու հոլովում

Ինչպես նշեցինք, **մէկ** և **ամէն** դերանունները, ինչպես նաև **մէկ**—ով բաղադրված դերանունները, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում ենթարկվում են ու հոլովման և սովորաբար սեռական—տրականում և բացառականում ևս ստանում են հոդ՝ **ամէնը** — **ամէնուն**, **մէկը** — **մէկուն**, **ոչ մէկը** — **ոչ մէկուն**, **ամէն մէկը** — **ամէն մէկուն**: Այս դերանունները բացառականը և գործիականը կազմում են ուղղականի հիմքից՝ անվանական հոլովման է և ով վերջավորություններով՝ **ամէնէն** — **ամէնով**, **մէկէն** — **մէկով** ևն: Արևմտահայերենում անվանական ու հոլովում ունի նաև **ո՞ր** // **որ** հարցական—հարաբերական դերանունը. հարցական դերանունը սեռական—տրականում սովորաբար գործածվում է որոշիչ հոդով՝ **որո՞ւն**, իսկ հարաբերականը՝ անհոդ՝ **որու**: Բացառականը և գործիականը կազմվում են **մէ** և **մով** վերջավորություններով՝ **որմէ(ն)**, **որմով**:

Արևմտահայերենում **մէկզմէկ** (արևել.՝ **մեկմեկի** // **մեկմեկու**), **զիրար** (արևել.՝ **իրար**) փոխադարձ դերանունները ենթարկվում են ու հոլովման, եզակի թիվ և ուղղական հոլով չունեն, իբրև ելակետային ձև համդես է գալիս հայցականը, գործածվում են գոյականների, բայերի և ածականների հետ: Առաջինը՝ **մէկզմէկ** դերանունը, արևմտահայերենում բացառականը և գործիականը կազմում է անվանական հոլովման սովորական վերջավորություններով՝ է և ով, իսկ երկրորդը՝ **զիրար**—ը՝ մէ և մով վերջավորություններով: Իբրև տարբերություն պետք է նշել արևմտահայերենում **իրար** դերանվան համար հայցականի **զիրար** ձևի գործածությունը և, իհարկե, **մէկզմէկ** դերանվան նախդրավոր կազմությունը: Այսպես՝

Արևել.՝ իրար, իրարու, իրարուց, իրարով, մեկմեկի, մեկմեկուց, մեկմեկով:

Արևմտ.՝ զիրար, իրարու, իրարմե, իրարմով, մեկզմեկու(ն), մեկզմեկե(ն), մեկզմեկով:

Միմեանց փոխադարձ դերանունը արևմտահայերենում չի հոլովվում, քիչ գործածական է. հանդիպում է միայն գոյականների և բայերի հետ:

Անվանական ու հոլովման դերանունների հոլովական ընդհանուր պատկերն այսպիսին է՝

ուղղ.	մեկը	ամենը	որը	—	—
սեռ.—տր.	մեկուն	ամենուն	որու, որուն	իրարու	մեկզմեկու
հայց.	մեկը	ամենը	գոր (գով)	իրար (զիրար)	մեկզմեկ
բաց.	մեկեն	ամենեն	որմե	իրարմե	մեկզմեկե
գործ.	մեկով	ամենով	որով	իրարմով	մեկզմեկով

Անվանական հոլովման առարկայանիշ դերանունները և փոխանուն դերանունները հոգնակի թվում, ինչպես նշվել է, ունենում են ոչ թե ի հոլովում, ինչպես արևելահայերենում է՝ **ինչեր — ինչերի, ուրիշները — ուրիշների, քանիսները — քանիսների, այլ ու հոլովում՝ ինչեր — ինչերու, ուրիշները — ուրիշներու, քանիները — քանիներու** ևն:

ուղղ.	ինչեր	ուրիշները	քանիները	այսինչները
սեռ.—տր.	ինչերու	ուրիշներուն	քանիներուն	այսինչներուն
բաց.	ինչերե	ուրիշներեն	քանիներեն	այսինչներեն
գործ.	ինչերով	ուրիշներով	քանիներով	այսինչներով

8 հոլովում

Երկու գրականներում էլ անվանական **ց** հոլովում ունեն **սա, դա, նա, ինքը** (արևմտ.՝ **աս, ասիկա, ատ, ատիկա, ան, անիկա** ևն) դերանունների հոգնակիները՝ արևել.՝ **սրանք, դրանք, նրանք, իրենք**, արևմտ.՝ **ասոնք, ատոնք, անոնք, իրենք**, ինչպես նաև **ոմանք, որոնք** դերանունները, որոնք նույնպես հոգնակի են:

Ց հոլովման բացառականը և գործիականը արևմտահայերենում կազմվում են **մե և մով** վերջավորություններով: Այսպես՝

ուղղ.	ասոնք	ատոնք	անոնք	իրենք	որոնք
սեռ.—տր.	ասոնց	ատոնց	անոնց	իրենց	որոնց
հայց.	ասոնք	ատոնք	զանոնք	զիրենք	որոնք (զորս)
բաց.	ասոնցմէ	ատոնցմէ	անոնցմէ	իրենցմէ	որոնցմէ
գործ.	ասոնցմով	ատոնցմով	անոնցմով	իրենցմով	որոնցմով

Արևմտահայերենում այս հոլովման է պատկանում նաև **ինքզինք** անդրադարձ դերանվան հոգնակին՝ **իրենք – զիրենք**, որը ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում չունի ուղղականի ձև և իբրև սկզբնաձև է գործածում հայցականը՝ **իրենք – զիրենք, իրենք – իրենց, իրենք – իրենցմէ, իրենք – իրենցմով**:

Երբ դերանունը երկու գրականներում էլ արտահայտում է հարցում գործողության կատարման ժամանակի մասին և արևմտահայերենում ենթարկվում է **ուան (վան, արևել.՝ վա)** հոլովման, ինչպես ժամանակ ցույց տվող գոյականների մի մասը: Այդ դերանվան բացառականը արևմտահայերենում կազմվում է ուղղականից՝ **երբէն**, կամ տրականից՝ **երբուրնէ**, իսկ գործիական հոլովածնը գործածական չէ, այսպես՝

Արևել.՝	երբ	երբվա	երբվանից	երբվանով
Արևմտ.՝	երբ	երբուան	երբէն // երբուրնէ	—

Դերանունների շարահյուսական կիրառությունը

Այս ոլորտում տարբերություններն անհամեմատ քիչ են: Դերանունները արևմտահայերենում ըստ իրենց արտահայտած ընդհանուր նշանակության կատարում են շարահյուսական նույն դերը, ինչ արևելահայերենում: Նախադասության մեջ կարող են գործածվել որպես՝

Ենթակա՝ «Լըճակ, դո՛ւն ես թագուհիս, Ձի թ'հովէ մ'ալ խորշոմիս Դարձեալ խորքիդ մէջ խռով Ձիս կը պահես դողողալով» (Պ. Դուրյան), «**Որո՞նք** պիտի կարդան այս նամակդ» (ՀՔ), «Վեհափառ Հայրապետ **ինք** անծամբ սրբագրեց եւ հրատարակեց զանոնք» («Հասկ»), կամ «Իր գիրին պէս աղուոր չէ **իմինս**»:

Հատկացուցիչ՝ «Բայց որո՞ւ մտքէն կ'անցընէր որ այդ ստորին արաբածը օր մը պիտի ելլար Պոլիս գար ու այսպէս համարձակէր գայթակղու-

թիւն հանելու» (Ե. Օտյան), «Եւ ամենուս նայուածքները քստմնելի եւ դիւային, Մէկզմէկու վրայ յառած՝ մէկզմէկու մահ կ'ուզէին...» (Սիւսանթո), «Բայց անոնց դուռին առջեւ իր մարմինը ինքնիրեն կեցաւ» (Յ. Օշական):

Կապի խնդիր՝ «Դուն չես կրնար ինձի չափ հեղինակութեամբ խօսիլ» (Ե. Օտյան), «Բանաստեղծութիւն մը լեզու է անշուշտ: Բայց ատկէ առաջ՝ զգացումի մը, զգայնութեան մը, խորունկ ապրումներու, յոյզերու կերպադրում մըն է, զգեստաւորում մը...» (Յ. Օշական):

Ստորոգելիական վերադիր՝ «Ո՞վ են անոնք, որոնց փառաւոր անունը ինչւան հիմա ամենուն բերանն է» (Մ. Պեշիկթաշլյան), «Քու սերդ ինձի եղաւ պայծառ պատշգամբ», «Երջանիկ կամ դժբախտ, քո՛ւկդ եմ ես լիովին Իբրն միշտ քեզմով լի սիրայար պարմանի» (Մուշեղ Իշխան), «Աս ի՞նչ է, ես անոր պարտք ունենամ... ամենեւին...» (Յ. Պարոնյան), «Յոն հիմայ ժամը քանի՞ն է» (Ռ. Յատտեճյան):

Որոշիչ՝ «Այն կարոտը, զոր ասկէ ետք պիտի պտըտցնեմ ինձի հետ ու բախեմ բոլոր դռները, բոլոր, բոլո՛ր կարոտավառ սիրտերը ու բաշխեմ զայն որպէս օրհնութիւն եւ աղոթք, որպէս խունկ ու բալասան» (Գ. Աճեմյան):

Պարագաներ՝ «Կ'աղաչեմ, եթէ ժամանակ ունենաս, նամակներդ ստեպ եւ երկար ըրէ. ո՞րչափ սիրելի են ինձ անոնք» (Պ. Դուրյան), «Տես, քու մեկնելէդ ետքը մենք ինչպէս խնդիրը մարեցինք» (Ե. Օտյան), «—Ո՞ւր տեղացի ես, ո՞ւրկէ կու գաս,— հարցուցին Գրիգորին», «Դուն հանգիստ ըրէ, Գաբրիէլ աղա, ...ես ասանկ կը նստիմ» (Մնձուրի), «Ի՞նչպէս տուն հասաւ. չգիտցաւ ալ» (Յ. Օշական):

Անուղղակի խնդիրներ՝ «Այս երկուքն իրարու հետ այնպիսի սերտ կապակցութիւն մ'ունին որ իրարմէ բաժնելուդ պէս երկուքն ալ կը կորսուին» (Յ. Պարոնյան), «Ու յուզիչ ու ողբազին տագնապով մը անոնք իրարու խօսեցան պատերուն ետեւէն» (Յ. Օշական), «...Սակայն անոնցմէ ոչ մէկուն առջեւ չէ ըսած. «ահա ես, ահա այսպէս» (Շ. Շահնուր), կամ «Կը հարցնեմ ինքզինքնիս ու քեզի՝ իմ հեռաւոր բարեկամ...», «Քուկիններուդ ըսէ՛ իմ մասին»:

Ուղիղ խնդիր՝ «Գեղեցիկ ես, կեանք, Ու կը սիրեմ քեզ...» (Վահե Վահյան), «Ո՛չ հանգիստ կա, ո՛չ ալ քուն ցուրտ յարկին տակ օտարին, Ա՛խ, եօթն օրէն աւելի հիւր չպահես ո՛չ ոքին» (Մուշեղ Իշխան), «Ինք կը ծանչնայ բոլոր իմաստասէրները և բոլոր վարդապետութիւնները. մէկ

քանին կարդացած է (Շ. Շահնուր), կամ՝ «Երեկ քու ոտանաւորդ կարդացի **անորինը** կարդալէ ետքը», ևն:

Դերանունների մի մասը արևմտահայերենում և արևելահայերենում կատարում է **շաղկապական դեր**՝ իրար միացնելով գլխավոր և երկրորդական նախադասություններ, ինչպես՝ «Քաղաքավարութիւնը այն է բարութեան համար, **ինչ որ** է շնորհքը դէմքին համար» (Ն. Ռուսինյան), «Ու կ'իյնայ այն **որ** կը ծնկէ ահով, Ձի թուրն անելի արդար է հաչէն» (Ռ. Սևակ), «Այն մակբայները, **որոնք** բային գործին **ի՞նչպէս** կատարուիլը ցոյց կու տան, կը կոչուին **որակական**» (ՇՇ), կամ՝ «Դեռու կեցիր անկէ, **որ** նենգամիտ է»:

Երկու գրականներում որպես դերանունների կիրառական մասնակի տարբերություններ կարելի է նշել հետևյալները.

Առաջին. արևմտահայերենում սա (հազվադեպ նաև՝ դա, նա) դերանունը հանդես է գալիս ոչ միայն առարկայական նշանակությամբ՝ նախադասության մեջ կատարելով համապատասխան պաշտոններ, այլև արտահայտում է հատկանշային իմաստ, հանդես է գալիս որոշչային կիրառությամբ:

Երկրորդ. արևմտահայերենում ստացական հոդը և ստացական դերանունը կարող են հանդես գալ նաև միասնաբար (իմ խօսքս, քու հարսերդ), մի բան, որ, ինչպես նշվել է, գրական արևելահայերենում անընդունելի է:

Երրորդ. գրական արևմտահայերենում, ինչպես գրաբարում, ժխտական դերանուններով՝ **ոչինչ, ոչ ոք, ոչ մէկ(ը), ոչ մի**, կազմված նախադասություններում նրանց հետ կապված բայածնը չի ստանում ժխտական չ մասնիկը, և հետևաբար չի ստացվում կրկնակի ժխտում՝ ի տարբերություն արևելահայերենի:

Որպես մասնակի տարբերություն պետք է նշել նաև այն, որ արևմտահայերենում մի քանի դերանուններ, որոնք, ինչպես արդեն ասվել է, ունեն արևելահայերենից տարբեր և միայն դերանուններին հատուկ կազմություններ՝ կէ վերջավորությամբ, և քարացած ձևեր են՝ **հոս** – **հոսկէ**, **հող** – **հողկէ**, **հոն** – **հոնկէ**, **ուր** – **ուրկէ**, ունեն մակբայական կիրառություն, ինչպես՝ «Կ'ուզէի, պիտի ուզէի, ի՞նչ ապուշ փափագ, պիտի ուզէի, որ **հոնկէ**, հարաւին բարձրերէն ամպը պատռեր քիչ մը, եւ

արելը երեւար...» (Ինտորա), «Եւ երգչուհին իր այդ վճիտ ծայնով կարծես մեզի կ'ըսէր՝ դուք այս էք ահաւասիկ: Դուք հոսկէ կուգաք: Մի՛ փրթիք ձեր անցեալէն» (Ռ. Հատտենճյան):

Արեւմտահայ գրավոր և բանավոր խոսքում երբեմն հանդիպում են դերանունների՝ արեւելահայերենից տարբեր այլ կիրառություններ ևս (տես՝ **Շարահյուսություն** բաժնում):

ԲԱՅ

Բայը հայոց լեզվի երկու տարբերակներում բնութագրվում է նույն խոսքի մասային ընդհանուր հատկանիշներով և քերականական կարգերով:

Խմաստային տեսակետից բայը բնորոշվում է նրանով, որ այդ խոսքի մասին պատկանող բառերը ցույց են տալիս գործողություն, շարժում, ընթացք: Այդ հատկանիշներով էլ տարբերվում են բայանուն գոյականներից, որոնք գործողության առարկայացված անվանումներ են և ցույց չեն տալիս ընթացք, ինչպես՝ **վազք – վազել, շարժում – շարժիլ, սլացք – սլանալ** ևն:

Ձևաբանորեն բայը թեքվող խոսքի մաս է: այս դեպքում թեքում ասելով՝ հասկանում ենք բայի խոնարհումը: Խոնարհված բայն ունենում է դեմքի, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգեր:

Խոսքի մեջ՝ **շարահյուսական մակարդակում**, բայն արտահայտվում է երկու ձևով՝ **դիմավոր** և **անդեմ**: Դիմավոր բայերը նախադասության մեջ լինում են միայն ստորոգյալ կամ ստորոգյալի մաս, իսկ անդեմ բայերի մի մասը (անկախ դերբայներ)՝ նախադասության տարբեր անդամներ: Իբրև անդեմ բայի հատկանիշներ՝ լեզվաբանության մեջ նշվում են **սեռը, բայիմաստը, խնդրառությունը**: Սրանցից **սեռը** բնորոշ է միայն բային: Միայն բային է հատուկ նաև ուղիղ (կրող) խնդիր ունենալու հատկանիշը:

Բառակազմական տեսակետից բայը, ի տարբերություն մյուս խոսքի մասերի, բնորոշվում է ելակետային ձևում կազմության յուրօրինակությամբ. բայերն իբրև բառեր ունեն կազմության այն առանձնահատկությունը, որ ելակետային ձևում (անորոշ դերբայ) պարզ լինել չեն կարող, բաղադրյալ են. սկզբնաձևերում ունեն բայական ածանց–վերջավորություններ՝ արևելահայերենում՝ **ել, ալ, արևմտահայերենում՝ ել, ալ, իլ**:

Ավանդաբար բայի սկզբնաձև համարում ենք անորոշ դերբայը:

Ինչպես տեսնում ենք, բայ խոսքի մասի ընդհանուր խոսքիմասային բնութագրության մեջ արևմտահայերենը և արևելահայերենը տարբերություններ չունեն:

Էական տարբերություններ են արծանագրվում բայակազմության մեջ և բայի խոնարհման համակարգում:

ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ (ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

Արևելահայերենում բայն ունի երկու խոնարհում կամ լծորդություն՝ ե, ա, արևմտահայերենում՝ երեք՝ ա, ե, ի: Թվով շատ քիչ բայեր արևմտահայերենում ունեն նաև ու խոնարհում՝ **թողուլ, երդնուլ, զարթնուլ** են, սակայն դրանցից և ոչ մեկը, այդ թվում նաև **թողուլ** բայը, չունի խոնարհման ամբողջ հարացույցը. դրանք ձևացուկային երևույթ են գրաբարից:

Ծանոթություն: Արևմտահայերենում ե և ի լծորդության պատկանող մի քանի բայեր բանավոր և գրավոր խոսքում երբեմն սխալմամբ գործածվում են որպես ա լծորդության բայեր: Ստորև տրվում են այդ բայերի կազմության ճիշտ ձևերը՝ **ելլել** (ոչ թե **ելլալ**) – **կ'ելլեմ, կ'ելլենք, կ'ելլեի..., հեծնել** (ոչ թե **հեծնալ**) – **կը հեծնեմ, կը հեծնեինք, պիտի հեծնեմ..., յտնել** (ոչ թե **մտնալ**) – **կը մտնեմ, կը մտնեինք, պիտի մտնեի..., տեսնել** (ոչ թե **տեսնալ**) – **կը տեսնեմ, կը տեսնեինք, պիտի տեսնեի..., իջնել** (ոչ թե **իջնալ**) – **կ'իջնեմ, կ'իջնեինք, պիտի իջնեի..., երեւիլ** (ոչ թե **երեւալ, բայց՝ երեւնալ**) – **կ'երեւիմ, կ'երեւեինք, պիտի երեւի, պիտի երեւեինք..., թուիլ** (ոչ թե **թուալ**) – **կը թուիմ, կը թուեինք, պիտի թուի, պիտի թուեինք..., ժպտիլ** (ոչ թե **ժպտալ**) – **կը ժպտիմ, կը ժպտեինք, պիտի ժպտեի, պիտի ժպտի...** (տես 33, 96):

Արևմտահայերենում նույնպես բայերը բայ խոսքի մասի համակարգում բաժանվում են երկու խմբի՝ **աններածանց (պարզ)** և **ներածանցավոր (ածանցավոր)**. Ներածանցավոր են բայական ներածանց ունեցող բոլոր բայերը:

Բայական ներածանցները երկուսում էլ նույնն են՝ **ան, են, ն, չ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, կոտ, տ, կոտ, ու (վ), և** բնորոշվում են նույն հատկանիշներով, այն է՝ մյուս ածանցներից տարբերվում են **դիրքով** (դրվում են հիմքի մեջ. ներածանցներ են), կարող են փոխել բառի իմաստը, նոր բա-

ռեր կազմել, ինչպես՝ **ցատկել – ցատկոտել, քաշել – քաշկոտել**, կարող են փոխել նաև գործողության կատարման ձևը՝ **մօտենալ – մօտեցնել, թռչիլ – թռցնել**:

Հետևելով ավանդական քերականությանը՝ ըստ բայի մեջ խաղացած բառակազմական և իմաստային դերի՝ բայածանցները կարելի է բաժանել երկու խմբի՝ **բաղադրող–քերականական ածանցներ** (ան, են, ն, չ) և **քերականական ածանցներ** (ացն, եցն, ցն, ատ, ոտ, կոտ, ու (վ) նն): Հայտնի է, որ առաջինները կոչվում են բաղադրող, քանի որ սրանք բայի անհրաժեշտ, պարտադիր բաղադրիչներ են. առանց այդ ածանցների բայը գոյություն չունի: Միաժամանակ կոչվում են քերականական, որովհետև այդ չորս ածանցները՝ **ան, են, ն, չ**, քերականական հիմքերի տարբերակիչներ են. անցյալի հիմքում կա՛մ ընկնում են (ն–ն և չ–ն), կա՛մ հերթագայվում են այլ հիմքակազմիչներով (ան // աց, են // եց):

Երկրորդները կոչվում են քերականական ածանցներ, որովհետև նաև քերականական արժեք ունեն. քերականական սեռի (ու / վ, ացն, եցն, ցն) կամ գործողության կերպի (ատ, ոտ, կոտ, կռտ նն) ցուցիչներ են:

Բայածանցները, ըստ բայի մեջ խաղացած բայակազմական և իմաստային դերի, բաժանվում են չորս խմբի՝ **սոսկածանցներ, պատճառական, բազմապատկական և կրավորական ածանցներ**:

Ածանցավոր բայեր և բայածանցներ. սոսկածանցավոր բայեր

Ան, են ածանցներ: Սոսկածանցներից արևելահայերենում ամենից կենսունակը **ան** ածանցն է՝ **բարձրանալ, հանգստանալ, խոստանալ, հիանալ** նն: Ունի վերածման, մի բան դառնալու նշանակություն՝ **քարանալ – քար դառնալ, ամրանալ – ամուր դառնալ, մեծանալ – մեծ դառնալ**: Այդ նշանակությունը խամրել է հնից եկած բառերում, ինչպես՝ **հիանալ, զայրանալ, մոռանալ, խոստանալ**: Կենսունակ չէ **են** ածանցը. այդ ածանցն ունեցող բայերի թիվը երկու տասնյակից չի անցնում՝ **մերժենալ, մոտենալ, հագենալ, կամենալ, վախենալ, կարենալ** նն:

Պատկերը նույնն է արևմտահայերենում, եթե նկատի չունենանք, որ **ան** և **են** ածանցով առանձին բայեր արևմտահայերենում անցել են ն

ածանց ունեցող բայերի շարքը, ինչպես՝ մոռանալ – մոռնալ, գիտենալ – գիտնալ, հիմանալ – հիմնալ են:

Առավել նկատելի են տարբերությունները ն և չ սոսկածանց ունեցող բայերի համակարգում:

Ն ածանց: Արևելահայերենում թվով սահմանափակ են նաև ն ածանցով բայերը. դրանց թիվը չի հասնում մեկ տասնյակի՝ մտնել, գտնել, հագնել, իջնել, ելնել, հասնել, տեսնել են:

Արևմտահայերենում այդ ածանցն ունի որոշ կենսունակություն, քանի որ արևելահայերենի ն սոսկածանց ունեցող և խոնարհման բայերից բացի, որոնց մի մասը վերը նշվեց, արևմտահայերենն ունի նաև ն ածանց ունեցող ա խոնարհման բայեր, որոնք ձևավորվում են հիմնականում գրաբարի և արևելահայերենի ան ածանց ունեցող բայերի մեջ ա ծայնավորի հնչյունափոխությամբ՝ մոռանալ – մոռնալ, հնանալ – հիննալ, սեւանալ – սեւնալ, գողանալ – գողնալ, հասկանալ – հասկնալ են: Դրանք արդյունք են նաև արևմտահայ բարբառներից փոխանցված հնչյունափոխական այլ տարբերակների՝ գիտենալ – գիտնալ, վախենալ – վախնալ, ամաչել – ամչնալ, կարմրել – կարմրնալ (// կարմրիլ), ծանաչել – ծանչնալ:

Գրաբարից անցած մի խումբ բայեր արևմտահայերենում պահպանել են նաև գրաբարյան զուգահեռները, ինչպես՝ թեթևանալ // թեթեւնալ, թուլանալ // թուլնալ, խոշորանալ // խոշորնալ, կանաչանալ // կանաչնալ, կորանալ // կորնալ, համեղանալ // համեղնալ, հասկանալ // հասկնալ, հիմանալ // հիմնալ, շատանալ // շատնալ, սեւանալ // սեւնալ, վերանալ // վերնալ են: Սրանցից մի քանիսը երևան են հանում նաև իմաստային տարբերություններ, ինչպես՝ նեղանալ – նեղվել, սրդողել, բարկանալ, զայրանալ, իսկ նեղնալ – նեղ դառնալ, հաւնիլ – սիրել, ախորժիլ, հաւանիլ – հաճել, հոժարել, հանդովել, ընդունել, հավանություն տալ, շատանալ – բավականանալ, գոհանալ, շատնալ – բազմանալ, աճել, կուտակվել են:

Այստեղ պետք է արձանագրել նաև մի էական տարբերություն՝ կապված հիմքակազմության հետ. ա խոնարհման բայերի նշված ն ածանցը ունի այն առանձնահատկությունը, որ անցյալի հիմքում ոչ թե ընկնում է, ինչպես և խոնարհման բայերի ն ածանցը (մտնել – մտ–, գտնել – գտ–),

այլ հերթագայվում է **ց**-ով (**գիտնալ** – **գիտց**–, **մոռն** – **մոռց**–, **ամչնալ** – **ամչց**–), այսինքն՝ այդ ածանցն ունեցող բայերը անցյալի հիմքում ունենում են ցոյական հիմք, որի մասին կխոսվի իր տեղում:

2 ածանց: Ընդունված է ասել, որ **չ** ածանց ունեցող բայերը գրական արևելահայերենում ինն են՝ **թռչել**, **փախչել**, **ուռչել**, **սառչել**, **կորչել**, **հանգչել**, **հալչել**, **դիպչել**, **կպչել**, **փլչել**: Սակայն այս բայերի համակարգում նկատելի տեղաշարժեր կան, որոնք փոխանցվում են խոսակցական լեզվից. խոսակցականում հաճախ **չ** ածանցը սկզբնաձևում կամ ընկնում է, կամ փոխարինվում է **ն**-ով կամ **վ**-ով (**ու**), ինչպես՝ **թռչել** – **թռնել**, **կորչել** – **կորել**, **փախչել** – **փախնել**, **ուռչել** – **ուռել**, **հալչել** – **հալվել** են:

Արևմտահայերենում պատկերը փոքր-ինչ այլ է: Արևմտահայ գրականում **չ** սոսկածանցը գործածվում է միայն երեք բայերի մեջ՝ **փախչիլ**, **թռչիլ**, **դպչիլ** (գրք.՝ **դիպիլ**): Վերջինը ունի նաև **դպնալ** զուգաձևը (երբեմն՝ **դպիլ**), որը պակասավոր է. չունի կատարյալի հիմքից կազմվող ձևեր, չունի նաև ենթակայական դերբայ. դրանք լրացվում են **դպչիլ** բայի համապատասխան ձևերով:

Զուգաձևեր ունեն նաև **թռչիլ**–ը և **փախչիլ**–ը՝ **թռիլ**, **փախիլ**:

2–ն սոսկածանց չի գիտակցվում **հանգչիլ** բայի մեջ, իսկ **սառչիլ**, **ուռչիլ** և **կորչիլ** հին ձևերը գործածվում են **սառիլ**, **ուռիլ** և **կորսուիլ** (արևելահայերենում՝ **կորչել** – **կորել**) տարբերակներով, ինչպես «Շրթունքներս այդ աղուամազով խոզանակելու փափաք մը սկսաւ **ուռիլ** ու ձեռքիս դողը շատնալ» (Զ. Որբունի), «Մնալ այսպէս մինչեւ **սառիլս**» (Վ. Թեքեյան): Հետևաբար **հանգչիլ**, **սառիլ**, **ուռիլ**, **կորսուիլ** բայերը արևմտահայերենում խոնարհվում են աններածանց բայերի պես:

Օրինակ՝ «Իւրաքանչիւրը իր յիշատակները արթնցուց եւ արցունքը վերքերու դպաւ» (Ռ. Սևակ), «Երբ քարեզնդակդ կ'երթայ կիյնայ փոսի մը մէջ եւ **կը կորսուի**, կը յուզուիս, կը տխրիս, արցունքը կուգայ կը նստի կուպերուդ վրան» (Ս. Մարկոսյան), «Կատարելագործուած Սիրունի մը, մեջտեղը խոշոր, **ուռեցած**, ծիծաղելի **եսով** մը», «...Քիչ մը շատ ֆրանսացիի գլուխ **ուռեցուցիմք**, կարծեմ անոնցմով», «Ամեն հով, որ անոր **կը դպի**, սարսուռ մը կ'առնէ անոր թելերէն իր թւերուն վրայ», «Պաղտոն իր **ուռեցած** մատներով քրքրեց մամուռները» (Հ. Օշական),

«Յրեշտակը անճրկեր էր ու չէր կրնար **փախիլ**» (Շ. Նարդուհի), «Այն նաւը, որուն վրայ կնոջ պաշտամունքը կայ, այն նաւը **չի կորսուիր** նոյնիսկ երբոր ընկղմի» (Շ. Շահնուր), «Յանկարծ ձեռք մը **դպաւ ուսիմ**», «Ի վերջոյ, նայուածքը **հանգչեցաւ** մովին վրայ» («Բագին»):

Փլէլ (գրբ.՝ **փլանիլ**) բայը, որ գրական արևելահայերենում գործածական է **փլվել** տարբերակով (արևելահայ խոսակցականում ունենք նաև **փլել** ներգ. սեռի բայը՝ «Մի հարվածով ամբարծիջը փլեց շինությունը»), արևմտահայերենում հանդիպում է **փլիլ** (հազվադեպ՝ **փլուիլ**) ձևով՝ իբրև կազմությամբ աններածանց բայ, ինչպես՝ «Լուկ իմ վրաս **կը փլի** մութ տրտմութիւնը կեանքին» (Վ. Շուշանյան), «Անոր մէջ դաշտի բովանդակ անհանգստութիւնը կար այնպէս, ինչպէս գիշերուայ լռութեան մէջ հորդ առու մը **պիտի փլէր**, խաղաղ ցորեաններու մէջ հովը պիտի անցնէր» (Համաստեղ), բայց նաև՝ «Երկինքը ինչո՞ւ չէր **փլուեր**» (Համաստեղ):

Երկնչիլ–ը կազմությամբ աններածանց բայ է. արևմտահայերենում գործածվում են դրա միայն ներկայի հիմքից կազմված ձևերը՝ **կ’երկնչիմ, երկնչելու** է նն, իսկ կատարյալի հիմքից կազմված ձևերի իմաստներն արտահայտվում են **վախնալ, սոսկալ, դողալ, սարսափիլ** բայերի համապատասխան ժամանակածներով:

Թաքչիլ–ը, որ կազմությամբ նույնպես աններածանց է, հազվադեպ գործածություն ունի, այն էլ հիմնականում ներկայի հիմքից կազմված ձևերում՝ **թաքչիմ, թաքչելու ենք** նն, մյուս ձևերը՝ փոխարինվում են **թաքնուիլ** բայով:

Գրաբարյան **խրտչիլ** բայը ունի խիստ հազվադեպ գործածություն. այստեղ **չ**–ն կորցրել է իր ածանցական նշանակությունը և ծուլվել արմատին: Այն խոնարհվում է որպես աններածանց բայ:

Պատճառական բայեր

Ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ ենթական կատարել է տալիս մեկ ուրիշին՝ «Անիկա **շտապեցուց** ձիերուն ընթացքը»: Կազմվում են –**ացն, –եցն, –ցն** ածանցներով: Բուն ածանցը **ցն**–ն է: Դրան նախորդող **ա**–ն և **ե**–ն լծորդ ձայնավորներն են՝ **հոսել – հոսեցնել, կարդալ – կարդացնել**:

—ցն—ը գրաբարյան —ուցան ածանցական մասնիկի հնչյունափոխված ձևն է, թեև պետք է ասել, որ արևմտահայերենի պատճառականը գրաբարի համապատասխան ձևերի անմիջական շարունակությունը չէ:

Կազմության ընդհանուր սկզբունքները արևելահայերենում և արևմտահայերենում նույնն են. —ացն—ով պատճառական են կազմում ախոնարհման աններածանց, ինչպես նաև ան սոսկածանց ունեցող բայերը՝ կարդալ — կարդացնել, բարձրանալ — բարձրացնել, —եցն տարբերակով պատճառական կազմում են է, ի խոնարհման աններածանց (արևելահայերենում է խոնարհման) և են սոսկածանց ունեցող բայերը (ի խոնարհումը փոխվում է ե—ի)՝ նստիլ — նստեցնել, յագենալ — յագեցնել, երգել — երգեցնել:

Սակայն բայերի առանձին խմբերի կառուցվածքային յուրահատկություններով պայմանավորված՝ ունենք մասնակի տարբերություններ:

Արևմտահայերենում՝

—ցն—ով պատճառական են կազմում ն, չ սոսկածանց ունեցող բայերը՝ արթննալ — արթնցնել, հագնիլ — հագցնել, հասնիլ — հասցնել, փախչիլ — փախցնել, մեծնալ — մեծցնել, մեռնիլ — մեռցնել, թռչիլ — թռցնել, դպչիլ — դպցնել, վախնալ — վախցնել, ինչպես նաև է խոնարհման աններածանց բայերից մի քանիսը՝ խմել — խմցնել, աշխատել — աշխատցնել ևն:

Ինչպես տեսնում ենք, —ցն ածանցը արևմտահայերենում ավելի կենսունակ է. —ացնել, —եցնել ձևերից մի քանիսը հնչյունափոխության արդյունքում (ան>ն, ապա ն—ով ձևերի համաբանությամբ) վերածվում են —ցն—ով կազմությունների. բաղադրվում են արևմտահայերենին բնորոշ համապատասխան սկզբնաձևերից՝ արթնանալ — արթննալ — արթնցնել, վախենալ — վախնալ — վախցնել, խոշորանալ — խոշորնալ — խոշորցնել, ճերմականալ — ճերմկնալ — ճերմկցնել ևն:

Արևելահայերենում սառչել և իջնել բայերը պատճառականում ունեն ոչ կանոնական կազմություն՝ իջեցնել, սառեցնել:

Արևմտահայերենում սառիլ, ուռիլ և կորսուիլ բայերը, ինչպես ասվեց, չ ածանցով չեն գործածվում, ի խոնարհման աններածանց բայեր են: Առաջին երկուսը պատճառական են դառնում —եցն ածանցով,

ինչպես ի խոնարհման աններածանց բայերը՝ սառիլ – սառեցնել, ուռիլ – ուռեցնել (արևել. ուռցնել, նաև խոսակցական՝ սառեցնել), իսկ երրորդը պատճառական է կազմում – ցն ածանցով՝ կորսուիլ – կորսնցնել (արևել. կորչել – կորցնել):

Իջնել սոսկածանցավոր բայը արևմտահայերենում նույնպես պատճառական է կազմում անկանոն ձևով՝ **իջեցնել**:

Մօտենալ բայը արևելահայերենում և արևմտահայերենում ունի պատճառականի կանոնական ձև՝ **մօտեցնել**: Դրան զուգահեռ՝ արևմտահայերենում գործածվում է նաև խոսակցական երանգ ունեցող **մօտիկցնել** ձևը, որը բաղադրվում է **մօտիկնալ** անորոշի ձևից, այսպես՝ **մօտենալ–մօտեցնել, մօտիկնալ–մօտիկցնել**:

Ի խոնարհման կազմությամբ աններածանց **փրթիլ** բայը պատճառականը կազմում է –**ցն** մասնիկով՝ **փրցնել**. բառակազմական **թ** մասնիկը ընկնում է՝ բաղաձայնների կուտակումը և դրա հետևանքով առաջացած արտասահմանական դժվարությունը մեղմելու պատճառով:

Ծանոթություն: Արևմտահայերենում **լեցնել** և **հարցնել** բայերը (ինչպես արևել.՝ **լի–լիր–լ/ց–նել>լցր+ի, լցր+իր, լցր+եց**), խոնարհվում են պատճառական բայերի նման՝ **լեցուցի, Լեցուցինք, Լեցո՛ւր, Լեցուցե՛ք, հարցուցի, հարցուցինք, հարցո՛ւր, հարցուցե՛ք** նն: Պատճառական բայերի ձևային նմանությամբ է խոնարհվում նաև **վերցնել** բայը՝ **վերցուցի, վերցուցինք, վերցո՛ւր, վերցուցե՛ք** նն:

–**ուցան** ածանցով գրաբարյան մի խումբ բայեր՝ **մատուցանել, հատուցանել, յարուցանել, ծանուցանել, սնուցանել, ուսուցանել** նն, որոնք համեմատաբար ակտիվ գործածություն ունեին աշխարհաբարի ձևավորման վաղ շրջանում, մասամբ նաև 20–րդ դարասկզբին և ավելի ուշ (ինչպես՝ «Անով կ'ապրեր ալ, այս մտատանջութիւնը զինքը կը սնուցանէր», Գ. Զոհրապ), արդի արևմտահայերենում ընկալվում են որպես հնացած ձևեր և փոխարինվում են աշխարհաբարյան համապատասխան կազմություններով՝ **մատուցել, հատուցել, յարուցել, ծանուցել, սնուցել** նն:

Առանձին բայեր արևմտահայերենում ունեն պատճառական կազմության զուգահեռ տարբերակներ՝ **վազել – վազցնել // վազեցնել, խօսիլ – խօսցնել // խօսեցնել, խուլնալ – խլացնել // խուլցնել, կուրնալ – կուրացնել // կուրցնել**:

Պատճառական բայերի համակարգում արևմտահայերենը ի հայտ է բերում արևելահայերենից տարբեր մեկ այլ ուշագրավ յուրահատկություն, որը հավանաբար ձևավորվել է արևմտահայ բարբառների ազդեցությամբ, քանի որ պատճառական բայերի այդպիսի յուրահատկություն գրաբարում չի նշվում: Արևմտահայերենում որոշ բայեր պատճառականի իմաստն արտահայտում են սկզբնաձևով՝ առանց պատճառական ածանցի, ինչպես՝ «Չորերուն մեջ, սարերուն վրայ **կ'արածէր**» (=արածեցնում էր) ԱՆ ամէն օր ուն իր կապոյտ աչքերով» (Դ. Վարուժան), «Եւ հովը **կը դղրդէր**» (=դղրդացնում էր) յանկարծ ապակիները» (Ինտրա), «Եւրոպականացման ձգտումը որ **սկսած էր դղրդել** նոյնիսկ պետական կազմը, չէր կրնար անհետեւանք մնալ...» (Զ. Եսայան), «**Չորթեր արածեց**» (=արածեցրեց), հունձքի գնաց, զոմէշ լոզցուց, սերմնացան եղաւ, տափան տափնեց եւ անտու-իրիկուն եկեղեցի երթալ չմոռցաւ» (Համաստեղ):

Պատճառականի իմաստը ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում կարող է արտահայտվել նաև վերլուծական եղանակով, ինչպես գրաբարում: Դա կատարվում է բայի անորոշ դերբայի և **տալ** բայի հարադրությամբ՝ **խօսիլ տալ, ներկել տալ, ըսել տալ**: Պատճառականի իմաստը այս կազմությամբ են արտահայտում հիմնականում ներգործական սեռի այն բայերը, որոնք չեն կարող ունենալ պատճառականի ածանցավոր կազմություններ, ինչպես՝ **բերել, ջրել, կառուցել, քանդել, կատարել, գործել, գրել**: Դրանցում **տալ** բայը կատարում է սպասարկու դեր: Խոնարհվելիս բուն բայը մնում է անփոփոխ՝ անորոշ դերբայի ձևով, խոնարհվում է **տալ** բայը:

Երբեմն **տալ** բայը դրվում է ածանցումով կազմված պատճառական բայի վրա՝ **խմեցնել տալ, վազեցնել տալ, վախեցնել տալ, հիշեցնել տալ**: Այստեղ միջնորդավորման գաղափարը կրկնակի է դառնում: Երկու գրականներում էլ այդ ձևերը քիչ գործածական են:

Ծանոթություն: Բնածայնական մի շարք բառերում (**մոթմոթացնել, խռխռացնել, դողդացնել, կլկլացնել, թխկթխկացնել**) –ցն–ը պատճառական իմաստ չունի նաև արևմտահայերենում և սոսկ սաստկություն է հաղորդում բառիմաստին, և բայերը մնում են չեզոք սեռի:

Պատճառական բայերի գործածության այլ օրինակներ. «Թեև երբևէ տակ պահեցի, **մեծցուցի**, բերնիս բրդոնը իրեն **կերցուցի**, քունս, համ-գիստս ծախսեցի՝ զիրենք վարժատուն ճամբեցի...», «Պատի ժամացոյցն անգամ ծածանակը ահով ու դողով **կ'երերցնէ**. հիմա պիտի սառի ու կանգ առնէ կ'ըսես» (Բ. Նուրիկյան), «Մեծագոյն փափաքս այն է, որ այս գիրքը հիմնայ եւ **կորսնցնէ** գոյութեան ամէն իրավունք» (Շ. Շահնուր), «Վերերէն իջնող ջուրերը երկար ճպոտներու պէս իրենց լոյծ հասակը կը քսէին լեռներու կուրծքին երգերու եւ վանկերու անհատնում խոխոջներ **վազցնելով** դարվար», «Նայ՛ ամէնուն... հոտոտէ՛ ամէնն ալ: Ու երբ գտնես՝ **փրցուր** ու սիրտիդ կապէ՛ միայն մէկ հատ... միայն մէկ» (Վահե Հայկ):

Կրավորական բայեր

Կրավորական ածանցն է վ–ն, որը արևմտահայերենում գրվում է ու տառով. ունի հիմնականում քերականական արժեք, քանի որ նրանով անցողական բայերը դառնում են անանցողական:

Ու (վ) կերպածանցը միջին հայերենում արդեն գործածական էր, որից էլ անցավ նոր գրական լեզվին: Արևմտահայերենում կրավորական բոլոր բայերը ի խոնարհման են՝ **ըսել – ըսուիլ, կարդալ – կարդացուիլ**:

Արևմտահայերենում եւ ն ի լծորդության բայերը արևելահայերենի եւ լծորդության բայերի նման կրավորականը կազմում են ներկայի հիմքից՝ **գրել – գրուիլ, խօսիլ – խօսուիլ, կոտրատել – կոտրատուիլ, յարդարել – յարդարուիլ, հագնել – հագնուիլ, տեսնել – տեսնուիլ**, իսկ ա լծորդության բայերը՝ անցյալի հիմքից, ինչպես դարձյալ արևելահայերենում է՝ **մոռնալ – մոռցուիլ, իմանալ – իմացուիլ, խաղալ – խաղացուիլ, մօտենալ – մօտեցուիլ** ևն: Ա լծորդության աններածանց բայերի կրավորականը նույնանում է նրանց պատճառական ձևերի կրավորականների հետ՝ **մոռնալ – մոռցուիլ** և **մոռցնել – մոռցուիլ, աւելնալ – աւելցուիլ** և **աւելցնել – աւելցուիլ**:

Բազմապատկական բայեր

Ցույց են տալիս գործողության բազմապատկություն (բազմակատարություն) կամ այլ կերպ ասած՝ գործողության կատարում մեկից ավելի անգամներ:

Արևմտահայերենում բազմապատկական բայերն ավելի գործածական են և բազմապատկական ածանցները՝ ավելի բազմազան՝ **ատ, ոտ, կոտ, կտ, ատակ, կռտ, ռոտ, ուլոտ (վլոտ), ուլտ (վլտ)** ևն, ինչպես՝ **աւրշտկել (ավերել), թռչտիլ (թռչկոտել), ժողվտել (հավաքել), խածատել (կրծոտել), ծեծկռտիլ (ծեծկռտվել), ծռմռտիլ (ծռմռել), կանչուռտել (շարունակ կանչել), մորթատել (մորթել, մորթոտել), շտկռտել (շտկել, մի քանի անգամ ուղղել), պահուռտիլ (ինքն իրեն պահել), սոտուռտալ (սայթաքել), վազուռտել (վազվզել), տապլտիլ (1. գետնին թավալվել, գլորվել, 2. տանջվել):**

Օրինակ՝ «Ի՛նչպէս ողջունեցի անոր բռնիքիկին՝ Վապոյտ Շուկը, որ կ'ելլէր, կը սարսռար ու ապշայար կը փախչլտէր» (Ինտրա), «Մեր շուները միշտ կը կռուռտին» (ՋՄ), «Խորանին առջեւ, վարդապետները գոմէշի նման կ'որոճային ու կը շարժտէին» (Շ. Նարդունի), «Կը պահուռտեցաւ սեղանին տակ» (ՅԲ), «Պաղտօն, պզտիկ աթոռի մը վրայ կծկտած, իր խոշոր ու պղտոր վրձինները փոխնիփոխ կը զարնէ սնտուկի մը, որուն կողերուն վրայ դեռ անաղարտ կը կարդացուին ֆրանսերէն տառեր՝ Պաթում» (Յ. Օշական), «Մարդերէն արհամարհուած՝ Յիսուսի չափ կը սիրէր մարդերը ու անոնց օգտակար ըլլալու համար էր, որ կը շարչրկէր ինքզինքը» (Համաստեղ):

Արևելահայ գրականում ավելի կենսունակ է **ոտ** ածանցը, արևմտահայերենում կենսունակ են **ոտ, ուլտ (վլտ)** ածանցները: Արևելահայերենում բոլոր բազմապատկական բայերը **ե** խոնարհման են (բացառությամբ **կլտ** ածանցն ունեցող բայերի, որոնք **ա** խոնարհման են՝ **կայծկլտալ, հեծկլտալ, բոցկլտալ** ևն), մինչդեռ արևմտահայերենում դրանք **ե**, ի խոնարհման բայեր են. ի խոնարհման են հիմնականում չեզոք սեռի բայերը՝ **թռչտիլ, փայլկտիլ, պահուռտիլ, ցատկոտիլ, նստոտիլ** ևն:

Բազմակատարության իմաստը արևմտահայերենում նույնպես կարող է արտահայտվել արմատի կրկնությամբ՝ **փայլփլիլ, հուրհրալ, սարսռալ, մարմրիլ**:

Բայակազմության մեջ իբրև արևմտահայերենի և արևելահայերենի տարբերակիչ հատկանիշ պետք է նշել նաև այն, որ արևմտահայերենում անհամեմատ մեծ թիվ են կազմում զուգաձևությունները, ինչպես՝ **թքնել // թքել, կալլել // կալնել, ծնիլ // ծնանիլ, կորանալ // կորնալ, համեղանալ // համեղնալ, սեւանալ // սեւնալ, վախեցնել // վախցնել, վազեցնել // վազցնել** ևն: Դրանք ունեն սոսկ ձևության կազմական տարբերություններ և չպետք է շփոթվեն բայական այնպիսի կազմությունների հետ, որոնք իրարից տարբերվում են նաև բառական իմաստով, ինչպես՝ **խոնարհիլ (հակվել, թեքվել, ծռվել մի կողմի վրա) և խոնարհնալ (խոնարհ դառնալ, հեզանալ), կլանել (իր մեջ ընդունել, ընկղմել, հափշտակել) և կլլել (կուլ տալ), կարօտիլ (որևէ բանի կարիք ունենալ) – կարօտնալ (կարոտ զգալ), կամ շատանալ – շատնալ, նեղանալ – նեղնալ, բեկանել – բեկել, տիրել – տիրանալ** ևն: Դրանք ձևաբանական զուգաբանություններ չեն. ձևությամբ կազմով և բառական իմաստով տարբեր միավորներ են և պետք է ընկալվեն որպես տարբեր բառեր ու հետևաբար՝ տարբեր բայեր:

Առանձին դեպքերում հնչյունափոխության արդյունքում առաջանում են ոչ միայն կազմության (ինչպես՝ **խենթանալ – խենթենալ**), այլև խոնարհման տարբերությունների՝ **անհետանալ – անհետիլ, ամաչել – ամըչնալ, ընկնել – իյնալ, լինել – ըլլալ, քնել – քնանալ**:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում բայերի ձևակազմությունը ըստ խոնարհումների (լծորդությունների) ունի հետևյալ պատկերը.

Արևելահայերեն

1. Ե խոնարհման աններածանց (պարզ) (**գրել, երգել, խոսել, համբերել, հայցել, հարդարել, հաղթել, հիշել, հոսել, հոգնել**), կրավորական և բազմապատկական (**գրվել, ջարդոտել**) բայեր:

2. Ե խոնարհման **ն, չ** սոսկածանց ունեցող բայեր՝ **գտնել, իջնել, հագնել, հանգչել, հասնել, մտնել, սառչել, փախչել**:

3. Ե խոնարհման պատճառական բայեր՝ թոցնել, խոսեցնել, հագցնել, մոռացնել:

4. Ա խոնարհման աններածանց բայեր՝ անսալ, գնալ, խաղալ, կարդալ, հոգալ:

5. Ա խոնարհման ան, են սոսկածանց ունեցող բայեր՝ խոստանալ, մերծենալ, մոռանալ:

Արևմտահայերեն

1. Ե խոնարհման աններածանց բայեր՝ գրել, երգել, համբերել, հայցել, յարդարել, յաղթել, յիշել:

2. Ե խոնարհման ն սոսկածանց ունեցող բայեր՝ գտնել, իջնել, հագնել, մտնել:

3. Ե խոնարհման պատճառական բայեր՝ թոցնել, խօսցնել, հագցնել, մոռցնել:

4. Ա խոնարհման աններածանց բայեր՝ անսալ, երթալ, խաղալ, կարդալ, հոգալ:

5. Ա խոնարհման ան, են, ն սոսկածանց ունեցող բայեր՝ գիտնալ, խոստանալ, հիմնալ, մերծենալ, մոռնալ:

6. Ի խոնարհման աններածանց բայեր՝ ապրիլ, բնակիլ, գբաղիլ, ժպտիլ, խպնիլ, խօսիլ, ծնիլ, կառչիլ, հանգչիլ, հոսիլ, յարծակիլ, յոգնիլ, ուռիլ, պայթիլ, սառիլ, սորվիլ, քրտնիլ: Այս խմբում պետք է դասել նաև կրավորական բայերը՝ գրուիլ, երգուիլ, կարդացուիլ, մօտեցուիլ, որոնք խոնարհվում են բայածներ են կազմում ի խոնարհման աններածանց բայերի նման:

7. Ի խոնարհման ն, չ սոսկածանց ունեցող բայեր՝ դաչիլ, թռչիլ, հասնիլ, հատնիլ, փախչիլ:

8. Ե, ի, ա խոնարհման բազմապատկական բայեր՝ թռչտիլ, ծածուկիլ, կոտրատել, կռուռտիլ, շտկռտել, պատառռտել, պոկոտել, սոտուռտալ, տապլտկիլ:

Ինչ վերաբերում է ու լծորդությանը, ապա դիտարկենք պետք է իմանալ հետևյալը:

Գրաբարի ու լծորդության մի քանի տասնյակ բայերից գրական արևմտահայերենը ժառանգել է մոտ մեկուկես տասնյակը:

Գրաբարյան բայերի մի մասը աշխարհաբարում ընդհանրապես դուրս է ընկել, ինչպես՝ պակնուլ, սգենուլ, յարառնուլ, ընկնուլ, աչառնուլ ևն:

Մի քանիսի իմաստն արտահայտվում է այլ բառերով՝ ընկենուլ – ձգել (նետել), զգենուլ – հագնուիլ, ընդոստնուլ – ոստնել, ընթեռնուլ – կարդալ (ընթերցել), թաքնուլ – պահուլտիլ, ջեռնուլ – տաքնալ, մածնուլ – կպչել, քաղցնուլ – անօթնալ // անօթենալ (քաղցել), այտնուլ – ուռիլ, հեղձնուլ – խեղդուիլ, պշնուլ – ապշել // պշալ ևն:

Գրաբարի ու լծորդության մի խումբ բառեր արևմտահայերենում պահպանվել են իրենց նախնական՝ գրաբարյան կերպարանքով: Դրանցից մի քանիսը ձեռք են բերել լծորդական հարաբերակիցներ՝ ոստնուլ – ոստնիլ (ցատկել), զբօսնուլ – զբօսնել, քաղցնուլ – քաղցել, խրտնուլ – խրտչիլ, զարթնուլ – զարթնել (արթննալ), յենուլ – յենիլ // յենուիլ (կռթնիլ), հեծնուլ (հեծանիմ) – հեծնել // հեծնալ, լնուլ – լեցնել, առնուլ – առնել, թքանեմ // թքնուլ – թքնել // թքել ևն:

Թողուլ և երդնուլ (զրբ. երդուլըննալ) բայերը արևմտահայերենում պահպանել են ու լծորդությունը, սակայն չունեն խոնարհման ամբողջական հարացույց և համարվում են պակասավոր բայեր:

Գրաբարի ի խոնարհման ան ածանց ունեցող բայերը արդի գրական արևմտահայերենում ընկալվում են որպես հնաբանություններ և սովորական կիրառություններում փոխարինվում են աշխարհաբար աններածանց ձևերով՝ ծնանիլ – ծնուիլ, սնանիլ – սնուիլ, զիջանիլ – զիջիլ, ուսանիլ – սորվիլ, անցանիմ – անցնիլ, հասանիմ – հասնիլ, հատանիմ – հատնիլ ևն:

Գրաբարի ի լծորդության բայերը արևելահայերենում հիմնականում վերածվել են է լծորդության՝ ծնանիլ – ծնել, խօսիլ – խոսել, ապրիլ – ապրել, թռչիլ – թռչել, նստիլ – նստել, հազվադեպ՝ նաև ա լծորդության՝ ժպտիլ – ժպտալ, թուիլ – թվալ ևն: Արևմտահայերենը հարազատ է մնացել գրաբարին՝ ծնիլ, խօսիլ, ապրիլ, նստիլ, ժպտիլ, թուիլ:

Այսպիսով՝ արևմտահայերենն ունի բայերի ձևակազմական ութ խումբ արևելահայերենի ձևակազմական հինգ խմբերի դիմաց: Արևմտահայերենում բայակազմական առանձին խմբեր են կազմում ի լծորդության աններածանց և ն, չ սոսկածանց ունեցող բայերը: Առան-

ծին խումբ են ձևավորում նաև բազմապատկական բայերը, քանի որ, ի տարբերություն արևելահայերենի, հանդես են գալիս երեք լծորդությամբ և ունեն համապատասխան աններածանց բայերին բնորոշ առանձնահատկություններ: Կրավորական բայերը իրենց քերականական հատկանիշներով արևմտահայերենում համընկնում են ի լծորդության աններածանց բայերի հետ:

ԲԱՅԻ ՍԵՌԸ

Սեռը քերականական այն կարգերից է, որ բնորոշ է բայ խոսքի մասին առհասարակ: Սեռը արտահայտում է գործողություն կատարողի, գործողության և մի այլ առարկայի հարաբերություն: Սեռի քերականական կարգի իմաստը այսօրերի հարաբերությունն է: Այստեղ երկու գրականները տարբերություն չունեն: Տարբերությունները արտահայտության պլանում են: Սեռի քերականական ցուցիչներն են ու (վ) և –ցն ածանցները. –ցն ածանց ունեցող գրեթե բոլոր բայերը ներգործական սեռի են՝ **ճանչցնել, խենթեցնել, վազցնել // վազեցնել, լայնցնել, լեցնել** ևն:

Ներգործական սեռ

Ներգործական սեռի բայերը երկու գրականներում էլ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է կրող առարկա՝ ուղիղ խնդիր: Այս սեռի բայերը ձևային ընդհանրություններ չունեն. ձևաբանական տարբերությունն այն է, որ կարող են ստանալ ու (վ) ածանց: Արևելահայերենում ուղիղ խնդիրը, պայմանավորված անձ և ոչ անձ հարաբերությամբ, դրվում է ուղղական և տրական հոլովներով, իսկ արևմտահայերենում՝ միայն ուղղական (բուն հայցական) հոլովով:

Արևմտահայերենում որոշ բայեր (**ազդել, զարնել, խնայել, յաղթել, ներել, վնասել**) սկսել են ստանալ անձի առումով ուղիղ խնդիր, ինչպես՝ «Արշակը յաղթեց Արամին», «Աշտուղ մարդուն զարկալ», «Արամը վնասեց իր բարեկամներուն»: Անդրադառնալով այս խնդրին՝ արևմտահայ քերականներից Կ. Առաքելյանը հիշյալ բայերը փորձում է դասել բացառությունների շարքին. նա գրում է, որ դրանք «թեև ունին կրաւորական

ծելեր, սակայն, այնուամենայնիւ, ներգործական սեռի բայեր չեն» (15, 177): Բացատրությունն այն է, որ այդ բայերը ըստ գործածության կամ բառիմաստի կարող են ստանալ նաև տրականաձև հայցականով ուղիղ խնդիր, ըստ Առաքելյանի՝ տրականով անուղղակի խնդիր:

Արևելահայ քերականներից Ռ. Սաքապետոյանը նշված բայերի գործածության այդ յուրահատկությունը հակված է դիտելու որպես քերականական նոր իրողություն, որ արևմտահայերենում սկսել է ձևավորվել արևելահայերենի ազդեցությամբ: Այդ մասին նա գրում է. «Այսօր արևմտահայերենում մի քանի բայեր արևելահայերենի նման (կամ նրա ազդեցությամբ) սկսել են ընդունել ուղիղ խնդիր անձի առումով. **խնայել հացը** և **խնայել մեղաւորին, զարնել թռչուն և զարնել Աշոտին, ներել պարտքը** և **ներել աշակերտին**: Ակնհայտ է, որ խոսքը միևնույն քերականական իմաստի մասին է, որ ունի երկակի ձևավորում. յոթ հոլովի համակարգով՝ ուղղականաձև և տրականաձև հայցական, հինգ հոլովի համակարգով՝ ուղղական և տրական հոլովներ» (38, 145):

Ներգործական սեռի բայերը երկու գրականներում էլ ընդունում են նույն բնույթի հարցեր՝ որոշ ձևային տարբերությամբ. արևելահայերենում՝ **ո՞ւմ, ի՞նչ(ը)**, արևմտահայերենում՝ **որո՞ւ, ի՞նչ(ը), զո՞վ**:

Երկու գրականներում էլ ներգործական են հիմնականում ե խոնարհման բայերը՝ **երգել, ներկել, ջրել, բերել, անել / ընել, ասել / ըսել**, բայց նաև՝ **բանալ, մոռնալ, գիտնալ, կարդալ, սորվիլ** են:

Կրավորական սեռ

Այս սեռի բայերը և՛ իրենց կազմությամբ, և՛ իմաստով տարբերվում, հակադրվում են ներգործական սեռի բայերին: Իմաստային հակադրություն. կրավորական սեռի բայերը ցույց են տալիս, որ այլ առարկայից գործողությունն անցնում է ենթակային: **Ձևային հակադրություն**. կրավորական սեռի բայերը պարտադիր ունենում են ու (վ) ածանց:

Երկու գրականներում էլ կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործականներից: Բայի սեռի փոփոխությունից փոխվում է նախադասության կառուցվածքը, որ համապատասխանաբար կոչվում է ներգործական և կրավորական կառուցվածք: Փոխվում է գործողության ուղղվածությունը. «Ներգործական կառուցվածքի նախադասության մեջ

քերականական օբյեկտը և սուբյեկտը համապատասխանում են տրամաբանական օբյեկտին և սուբյեկտին, այնինչ կրավորական կառուցվածքի մեջ տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս անուղղակի խնդրի, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կարգով» (17, 229):

Կրավորական սեռի բայերի ցուցիչը նույնն է՝ վ, որը, ինչպես գիտենք, արևմտահայերենում գրվում է ու տառով: Արևմտահայերենում այն ավելանում է ե և ի խոնարհման աններածանց բայերի ներկայի հիմքին՝ բերել – բերուիլ, խօսիլ – խօսուիլ, զարնել – զարնուիլ, գրել – գրուիլ, իսկ ա խոնարհման աններածանց և սոսկածանցավոր բայերի անցյալի հիմքին՝ կարդալ – կարդացուիլ, հասկնալ – հասկցուիլ, հեռանալ – հեռացուիլ, մոռնալ – մոռցուիլ: Արևմտահայերենում պատճառական բայերի դեպքում ու–ն ավելանում է –ցն ածանցի մ–ի փոխարեն՝ հարստացմել – հարստացուիլ: Այդ դեպքում պատճառական բայերը և սկզբնածները, ինչպես նշվել է, նույնանում են՝ հասկանալ – հասկացուիլ, հասկացնել – հասկացուիլ:

Ուի տառակապակցությունը արևմտահայերենում կրավորական բայերում, ի տարբերություն սեռական–տրականի ձևերի, կարդացվում է վի՝ տարուիլ – տարվիլ, երգուիլ – երգվիլ ևն: Արևելահայերենի անկատար դերբայում և դրանից կազմվող ժամանակաձևերում ու կրավորական մասնիկը ու ծայնավորից առաջ գրվում է լ՝ խօսւում (է), բերւում (էր):

Ինչպես տեսնում ենք, արևմտահայերենում և արևելահայերենում կրավորական սեռը իմաստային և կառուցվածքային էական տարբերություններ չի դրսևորում. ձևային մասնակի տարբերությունները պայմանավորված են խոնարհմամբ (լծորդությամբ): Բոլոր լծորդությունների համար արևմտահայերենում կրավորականը ելակետային ձևում ունի նույն ուիլ մասնիկը բառավերջում: Կրավորական սեռի բայերը խոնարհվում են ի խոնարհման աններածանց բայերի նման:

Չեզոք սեռ

Այս սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում անմիջական առարկա՝ իբրև ուղիղ խնդիր: Չեզոք սեռի բայերը ու (վ) ստանալ չեն կարող և երկու

գրականներում էլ ձևային ընդհանրություն չունեն։ Չեզոք սեռի են **ան**, **ն** ածանց ունեցող բայերի մեծ մասը և **չ** սոսկածանցով բոլոր բայերը՝ **մեռնիլ**, **բուսնիլ**, **իջնել**, **իյնալ**, **հիանալ**, **խորհիլ**, **թռչիլ**, **փախչիլ**։

Մասնակի տարբերություններից է այն, որ արևմտահայերենում ներգործական սեռի որոշ բայեր չեզոքի իմաստ են արտահայտում լծորդության փոփոխությամբ՝ **ել** մասնիկը փոխելով **իլ**–ի. «Պոլսի բարբառը,— գրում է Զր. Աճառյանը,— ընդունակություն ունի **իլ** վերջացող չեզոք բայերից ստանալ ներգործական՝ **իլ** հանգը վերածելով **ել**։ Այսպես են՝ **ազադիլ** – **ազադել**, **էրիլ** – **էրել**, **վառիլ** – **վառել**... Այս հիմամբ է որ գրական լեզվի մեջ էլ ունինք դեռ՝ **ծաւալել** – **ծաւալիլ**, **շարծել** – **շարծիլ** **ևն**» (10, 142)։

Արևմտահայ գրականությունը և բանավոր խոսքը գրական լեզվում գործող այդպիսի իրողության շատ բնորոշ օրինակներ են տալիս։ **Արածել**, **անցընել**, **հոսել**, **կանգնել**, **շարծել**, **ազատել** և ներգործական սեռի այլ բայեր խոնարհման փոփոխությամբ վերածվում են չեզոքի, ըստ որում, առաջին երկուսը չեզոք սեռի իմաստով են հանդես գալիս հնչյունափոխված տարբերակներով։ Այսպես՝ «եզնեռըս լայն հովիտին մէջ, սըրտի երգով ես **կ'արածեմ**» (նբ), «**Յեռո՛ւն** կը լսեն բոժոժներն իմ նախիրներուս, Որոնք **կ'արծին**...» (չբ), «**Կը** բաշխէ. հեզ, անոնց արին արիւնէն. Այդ իր կեանքն է՝ որ **կ'անցընէ** ուրիշին» (նբ), «**Կեանքն** անտառին **կը շարժի**...» (չբ) (Դ. Վարուժան), «**Ահա՛ կ'անցնի**, մըշուշուած բիլ կազով տեսիլ մ'ալ գերթ ալիք» (չբ) (Մ. Մեծարենց), «Ո՛չ. այս անգամ այդպէսով **չե՛ս ազատիր**» (չբ) (Լ. Շանթ), կամ՝ «**Կ'այրի** կարօտէն և կը մաշի» (չբ), «Արեւը **կ'այրէ** բուսականութիւնը» (նբ), «Աշակերտուիին **մարեցաւ**» (չբ), «Վահան լոյսը **մարեց**» (նբ) **ևն**։

Այդպիսի բայերից են նաև հետևյալները՝ **արիւնիլ** – **արիւնել**, **եփիլ** – **եփել**, **թափիլ** – **թափել**, **վառիլ** – **վառել**, **տոչորիլ** – **տոչորել**, **ծակիլ** – **ծակել**, **խաշիլ** – **խաշել**, **ծռիլ** – **ծռել**, **կոտրիլ** – **կոտրել**, **կտրիլ** – **կտրել**, **կործանիլ** – **կործանել**, **շրջիլ** – **շրջել** **ևն**։

Ըստ բառարանային տվյալների և որոշ վիճակագրական աղբյուրների՝ արևմտահայերենում **ուիլ** մասնիկով չեզոք սեռի հարյուրից՝ ավելի բայերից **իլ**–ով զուգահեռ ունի մոտ երկու տասնյակը, ինչպես՝ **ընդհատիլ** // **ընդհատուիլ**, **բարեշրջիլ** // **բարեշրջուիլ**, **եփիլ** //

Եփուիլ, Կծկիլ // Կծկուիլ, հիասթափիլ // հիասթափուիլ, շրջիլ // շրջուիլ, սիրահարիլ // սիրահարուիլ են:

Օրինակ՝ «Աւելի անդին.. ես կը գբադիմ կեանքի հանդէպ Օշականի կատաղի հաւատքովը» // «Մինչ Կարապետ այսպէս **գբադուած էր**, Սերոբ անոր քիչ մը սպասելէ ետք... կ'իջեցնէ իր խուճը սարէն վար» («Բագին»):

Փոխադարձ, անդրադարձ և կրավորակերպ չեզոքները արևմտահայերենում ի խոնարհման են՝ **բարուքուիլ, գունատուիլ, սուզուիլ, գրկախառնուիլ, լուացուիլ** են: Վերջինների՝ կրավորակերպ չեզոքների մեծ մասը ունի ոչ թե ուիլ, այլ իլ ձևը՝ **բռնկիլ, վիատիլ, հպատակիլ, համակերպիլ, յարձակիլ, նմանիլ** են: Դրանք նույնպես խոնարհման ժամանակ ստանում են կրավորակերպ խոնարհման վերջավորություններ:

Անդրադարձ բայերը արևմտահայերենում և արևելահայերենի առանձին քերականություններում առանձնացվում են չեզոք սեռի բայերից և նշվում որպես առանձին սեռ՝ **անդրադարձ. գործողություն կատարողը և գործողության կրողը** նույն ինքը ենթական է: Այս և փոխադարձ բայերի համար իբրև տարբերակիչ հատկանիշ է նշվում դրանք ենթակայի շնչավոր լինելը: «Երկու գրականներում էլ այս խմբին պատկանում են բացարձակապես նույն բայերը...— գրում է Ա. Սարգսյանը և ապա, ընդհանրացնելով իր խոսքը բայասեռի քերականական կարգի համեմատական քննության վերաբերյալ, ավելացնում է:— Այսպիսով կարելի է ասել, որ չնայած սեռային արտահայտության ձևային տարբերություններին (կրավորականի վ ածանցի փոխարեն **ուիլ, իլ**—ի առկայություն և այլն), սեռային խմբերը երկու գրականներում էլ բնութագրվում են ընդհանուր բայաբաշխմամբ, բայի արտահայտած ընդհանուր իմաստներով պայմանավորված» (34, 222–223):

Չեզոք սեռի բայերի գործածության օրինակներ՝ «...Բայց **կը սթափին** մտածելով որ միշտ այդպէս եղած ես համակրութիւններուդ մէջ, գրական ըլլան անոնք թէ ոչ» (Վ. Թեքեյան), «Երգն իր երազ մ'է դժբախտ, որ քարերուն **կը բախի**» (Վահէն Վահյան), «Անգամ մը սաստիկ գլխացաւէ կը տառապէի: Բարեկամի մը **գանգատեցայ**», «Ոմանք նախածեռնող չեն, **կը համակերպին** իրենց դէմ բացուած առաջին դուռը ծեծելու բախտին» (Ռ. Հատտեճյան), «Եւ այն ատեն հայր մը կը զգայ թէ կօշկակար Թումասի տղան **սիրահարած է** իր փոքրիկ աղջկան՝ Մարոյին» (Մ.Մարկոսյան):

Կրկնասեռություն

Բայի սեռը բայիմաստով պայմանավորված երևույթ է: Կան բազմիմաստ բայեր, որոնք տարբեր իմաստներով պատկանում են տարբեր սեռերի: Ինչպես՝ **սորվիլ**–ուսանել / **սորվիլ**–վարժվել, **լսել**–ունկնդրել / **լսել**–հնազանդվել, **նայիլ**–աչք ածել / **նայիլ**–խնամել / **նայիլ**–համը նայել, համտեսել են: **Օրինակ՝ «Կը լսէ երաժշտութիւն»** – «Ան չի լսեր իր ծնողներուն», «Դասը կը սորվի» – «Սորվեցաւ իր տիրոջը», «Կը նայի հեռուն» – «Նայէ՛ օշարակին համը»:

Կրկնասեռությունն այն երևույթն է, երբ նույն բայը խոսքի մեջ գործածվում է տարբեր սեռերի իմաստներով: Քանի որ բայի սեռը պայմանավորված է բայիմաստով և կազմությամբ, ուրեմն կրկնասեռության դեպքում գործ ունենք բայերի իմաստի և ձևի հետ:

Հայերենում ու (վ) ածանց ունեցող բոլոր բայերը չէ, որ կրավորական են: Դրանք հավասարաչափ գործածվում են և՛ որպես կրավորական, և՛ որպես չեզոք: Դա է պատճառը, որ այդ ածանցը ոմանք կրավորականի ցուցիչ չեն համարում: Այս դեպքում բայի սեռը որոշելիս և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում ելնում ենք նախադասության կառուցվածքից: Այսպես՝ «Գրաւորը գրուեցաւ իմ կողմէս» (կբ) և «Վահան կամաւոր գրուեցաւ» (չբ), «Ափսէները կը լուացուին» (կբ) և «Մանչը կը լուացուի» (չբ): Ե՛վ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում այդպիսի կիրառություն ունի ու (վ) ածանց ունեցող բայերի մեծ մասը:

Առանձին բառեր, արևմտահայերենում և արևելահայերենում ունենալով բառային իմաստի տարբերություն, երևան են հանում նաև սեռային տարբերություններ, ինչպես՝ **մըտիկ ընել**. արևմտահայերենում նշանակում է **լսել**. Ներգործական սեռի բայ է՝ «**Մտի՛կ ըրէ սա երաժշտութիւնը**»: Իսկ արևելահայերենում **մտիկ անել** նշանակում է **նայել**. չեզոք սեռի բայ է՝ «**Մտի՛կ արա երեխաների հագուստներին**»: Կամ՝ **հաւնիլ // հաւանիլ** – սիրել, ախորժել, նաև՝ հաճել, հոժարել, համաձայնել (արևմտ.) և հավանել – դուր գալ (արևել.). «**Կը հաւնի իր քովն առնելու Վարդանը**» (չբ), «**Մենք շատ հավանեցինք Փարաջանովի նկարները**» (նբ):

Առանձին բազմիմաստ բայեր, ինչպես վերը նշվեց, արևմտահայերենում հանդես են գալիս որպես տարբեր լծորդության բայեր. նույն բառը չեզոք սեռի նշանակությամբ սովորաբար ձևավորվում է ի լծորդությամբ, իսկ որպես ներգործական սեռի բայ՝ ե լծորդությամբ, ինչպես՝ **մեկնել** – բացատրել և **մեկնիլ** – ուղևորվել, **կանգնիլ** – ոտքի ելնել և **կանգնել** – կառուցել, **կտրել** – բաժանել, փշրել և **կտրիլ** – բաժանվել, դադարել (անձրևը), **շարժել** – տեղաշարժել և **շարժիլ** – շարժուել, **պտղտել** – պտտեցնել և **պտտիլ** – շրջել, ման գալ, **շրջել** – շուռ տալ, պտտեցնել, թեքել և **շրջիլ** – գրոսնել, ման գալ:

Օրինակ՝ «Կը շարժի կեանք–մեքենան անմակընթաց ու հյու» (չբ) (Վահե Վահյան), «Ես **կը շարժիմ** տեղէս» (չբ) / «**Կը շարժեմ** ալեհաւաքը» (նբ) / «Ծով կամ անտառ, գոր **կը շարժէ** ոչ թէ հով, Այլ երկրաշարժ մ'ահարկու...» (Վ. Թեքեյան), «Վարդապետ ներկաներուն համար **մեկնեց** պատարագի խորհուրդը» (նբ) / «Վահան առաւօտ կանուխ **մեկնեցաւ քաղաքէն**» (չբ), կամ՝ «Գետերն արծաթ կը **հոսեն** եւ հեղեղները՝ ոսկի» (նբ) (Դ. Վարուժան), «Ու կարմիր գինին սրտիս կը **հոսի**» դեռ, Յանուն մարդկութեան բարձրագոյն աստղին» (չբ) (Բ. Թովալյան), «Նահատակուած քաջերուն համար յուշարձան **կանգնեցին**» (ԵՏ):

Պտտել և **անցնել** ներգործական բայերը դրանց չեզոք զուգահեռներին հակադրելու համար հաճախ գրում են ը–ով՝ **անցընել** – **անցնիլ**, **պտղտել** – **պտտիլ** («Առաջ կ'ուզես **անցնիլ**», կամ՝ «Եւ մինչ մարդիկ կը խնդան Ու կ'անցնին ծանր հեղուքեամբ» (Բ. Թովալյան) // «Անիկա ուրախ ժամանակ կ'անցընէ», կամ՝ «Այս չորս տարիները կ'անցընէ ուսուցչութեամբ եւ գրական աշխատանքներով» (Մուշեղ Իշխան)): Կարծիք կա, թե իմաստային այդ հակադրությունը խոնարհման մեջ արդեն դրսևորվում է, ուստի հանձնարարելի չէ դրանց անգաղտնավանկ գրությունը: Բայց դա այդպես չէ, քանի որ, օրինակ, անցյալ ժամանակի մի շարք կազմություններում դրանք ձևով ամբողջությամբ համընկնում են, ինչպես՝ **անցնիլ** > **կ'անցնէի** = անցնում էի, **անցընել** > **կ'անցը/նէի** = անցկացնում էի, **պտտիլ** > **կը պտտէի** = պտտվում էի, **պտղտել** > **կը պտղ/տէի** = պտտեցնում էի:

Ծանոթություն: Վայելել և վայլել զուգահեռները (գրբ.՝ **վայելեմ**) նույն ե լծորդության բայեր են, բայց պատկանում են տարբեր սեռերի՝ պայմանավոր-

ված բառային իմաստների տարբերությամբ, ինչպես՝ **վայելել** (նք) – ունենալ, ճաշակել, ըմբոշխնել. օրինակ՝ «**վայելել** հանգիստը, երաժշտութիւնը, բնութեան գեղեցկութիւնը, երջանկութիւնը, կեանքը», բայց՝ **վայլել** (չք) – հարմարվել, պատշաճել, օրինակ՝ «Սա հագուստը քեզի **կը վայլէ**», կամ «Այդ խօսքերը քեզի պէս կրթուած մարդու մը **չեն վայլեր...**» (ՊՊ):

ԲԱՅԱՅԻՍՔԵՐ

Հայոց լեզվի երկու ճյուղերում բայական բոլոր բայածները կազմվում են երեք հիմքերից՝ **ներկայի** (կամ **անկատարի**) հիմք, **անցյալի** (կամ **անցյալ կատարյալի**) հիմք, **դերբայական** հիմք: Հիմքակազմության մեջ արևմտահայերենում և արևելահայերենում կան առանձին տարբերություններ:

Արևելահայերենում բոլոր բայերի **դերբայական հիմքը** անորոշ դերբայն է՝ **ել**, **ալ** մասնիկներով: Դերբայական հիմքը արևմտահայերենում նույնպես ունի այդ մասնիկները, չնայած այստեղ, ի տարբերություն արևելահայերենի, բայն ունի երեք խոնարհում՝ **ել**, **ալ**, **իլ**: Դերբայական հիմքում **իլ** մասնիկի (նաև ուլ–ի) լծորդ ծայնավորը փոխվում է՝ **/ի>ել/ խօսիլ – խօսել, հատնիլ – հատնել, յարծակիլ – յարծակուել, գրուիլ – գրուել, թռչիլ – թռչել, զբօսնուլ – զբօսնել, թողուլ – թողել** ևն:

Դերբայական հիմքից **արևելահայերենում** կազմվում են համընթացական և ապառնի (ապակատար) դերբայները՝ համապատասխանաբար **իս** և **ու** մասնիկներով՝ երգել – **երգելիս – երգելու**, կարդալ – **կարդալիս–կարդալու**: **Արևմտահայերենում** այս հիմքից կազմվում են ընթացակցական և ապառնի դերբայները՝ համապատասխանաբար **էն** և **ու** մասնիկներով՝ երգել – **երգելէն – երգելու**, կարդալ – **կարդալէն – կարդալու**, խօսիլ – **խօսել – խօսելէն – խօսելու**: Այս կանոնը համապարփակ է. բացառություն չի ծանաչում և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

Ներկայի հիմքը արևմտահայերենում նույնպես ստանում ենք անորոշ դերբայից **ել**, **ալ**, **իլ** մասնիկները հանելու միջոցով, ինչպես՝ **երգել – երգ–, հարցնել – հարցն–, փախչիլ – փախչ–, թողուլ – թող–, վախցնել – վախցն–** ևն: Աններածանց բայերն ունենում են պարզ, իսկ ներածանցավոր բայերը՝ ածանցավոր հիմք:

Արևելահայերենում ներկայի հիմքից կազմվում են ե խոնարհման աններածանց, կրավորական և բազմապատկական բայերի հարակատար (գրել – գր+ած, գրվել – գրվ+ած, գրոտել – գրոտ+ած), վաղակատար (գրել – գր+ել, գրվել – գրվ+ել, գրոտել – գրոտ+ել), բոլոր բայերի անկատար (կարդալ – կարդ+ում, խոսեցնել – խոսեցն+ում, գրել – գր+ում են), ե խոնարհման բայերի ենթակայական (գրել – գր+ող, գրվել – գրվ+ող, գրոտել – գրոտ+ող, մտնել – մտն+ող, թռչել – թռչ+ող, խոսեցնել – խոսեցն+ող են) և բոլոր բայերի ժխտական դերբայները (գրել – գր+ի, գրվել – գրվ+ի, գրոտել – գրոտ+ի, մտնել – մտն+ի, խոսեցնել – խոսեցն+ի, մոտենալ – մոտեն+ա, խոստանալ – խոստան+ա են): Ներկայի հիմքից կազմվող դիմավոր ձևեր են ըղծական, ենթադրական, հարկադրական եղանակների ապառնի (ապակատար) ժամանակները (գրեմ, կգրեմ, պիտի գրեմ), նաև նույն եղանակների անցյալ ժամանակները (գրեի, կգրեի, պիտի գրեի):

Արևմտահայերենում ներկայի հիմքից կազմվում են ե խոնարհման աններածանց, կրավորական և բազմապատկական բայերի հարակատար (գրել – գր+ած, գրուիլ – գրու+ած, գրոտել – գրոտ+ած), վաղակատար (գրել – գր+եր, գրուիլ – գրու+եր, գրոտել – գրոտ+եր), ե խոնարհման պարզ, ն, չ, ցն ածանցավոր բայերի ենթակայական (գրել – գր+ող, գրուիլ – գրու+ող, գրոտել – գրոտ+ող, մտնել – մտն+ող, թռչիլ – թռչ+ող, մօտեցնել – մօտեցն+ող են) և բոլոր բայերի ժխտական դերբայները (գրել – գր+եր, գրուիլ – գրու+եր, գրոտել – գրոտ+եր, մտնել – մտն+եր, մօտեցնել – մօտեցն+եր, մօտենալ – մօտեն+ալ, բարձրանալ – բարձրան+ալ են):

Անցյալի հիմքը երկու գրականներում էլ կազմությամբ բազմաձև է և պայմանավորված է բայի կազմությամբ ու ձևավորման մեջ դրսևորում է որոշակի տարբերություններ:

Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ անցյալի հիմքը ունի երեք տեսակի կազմություն՝ արմատական, ցոյական, ռեական, արևմտահայերենում այս հիմքը երկու տեսակի է՝ արմատական և ցոյական:

Ցոյական հիմք են կազմում՝

ա) արևելահայերենում ե, ա խոնարհման աններածանց (նաև կրավորական և բազմապատկական) բայերը՝ գրել – գրեց–, խոսել – խոսեց–,

խաղալ – խաղաց–, գրել – գրվեց–, կոտրատել – կոտրատեց–, արևմտահայերենում՝ ե, ա, ի խոնարհման անցերածանց (նաև կրավորական և բազմապատկական) բայերը՝ երգել – երգեց–, խաղալ – խաղաց–, խօսիլ – խօսեց–, գրել – գրուեց–, կոտրատել – կոտրատեց–, նաև ու խոնարհման բայերը՝ թողուլ – թողեց–, զբօսնուլ – զբօսնեց–,

բ) արևելահայերենում ա խոնարհման են, ան սոսկածանց ունեցող բայերը՝ մոտենալ – մոտեց–, մոռանալ – մոռաց–, խոստանալ – խոստաց–, իսկ արևմտահայերենում ա խոնարհման են, ան սոսկածանց և ն ածանց ունեցող բայերը՝ մօտենալ – մօտեց–, մոռնալ – մոռց–, խոստանալ – խոստաց–,

գ) արևմտահայերենում պատճառական բայերը. ցն ածանցի ն–ն փոխվում է ուց–ի (ցն // ցուց) հարցնել – հարցուց–, փախցնել – փախցուց–, վախցնել – վախցուց– ևն, մինչդեռ արևելահայերենում պատճառական բայերն ունեն թեական հիմք՝ հարցնել – հարցր–, փախցնել – փախցր–, վախցնել – վախցեր–:

Այսպիսով՝ հիմնական տարբերությունն այն է, որ արևմտահայերենում անցյալի հիմքում ցոյական են նաև ա խոնարհման ն սոսկածանց ունեցող բայերը, որոնք արևելահայերենում բացակայում են, և պատճառական բայերը:

Եվ այսպես՝ ցոյական հիմքի ցուցիչներ են արևելահայերենում՝ աց, եց, իսկ արևմտահայերենում՝ աց, եց, ուց, ց:

Անցյալի հիմքում արևմտահայերենում նույնպես նկատվում է տարարմատություն: Արևելահայերենի համեմատությամբ առկա է այն տարբերությունը, որ գալ, ուտել, ըլլալ բայերից բացի (գալ – եկ–, ուտել – կեր–, ըլլալ – եղ), այստեղ տարարմատ հիմք ունի նաև երթալ (գնալ) բայը, որ անցյալի հիմքում դառնում է՝ գաց– (գացի, գացիր, գացաւ ևն):

Արևելահայերենում մի շարք անկանոն բայեր անցյալի հիմքում ունեն զուգահեռ ձևեր՝ կազմված արմատական կամ ցոյական հիմքերից՝ անել – ար– // արեց–, բերել – բեր– // բերեց–, տալ – տվ– // տվեց–, թողնել – թող– // թողեց–, դնել – դր– // դրեց–:

Արևմտահայերենում նշված բայերը չունեն զուգահեռ ձևեր և կազմվում են միայն արմատական հիմքից՝ տալ–>տու– (տուի, տուիր, տուաւ),

ընել→**ըր**– (**ըրի**, **ըրիր**, **ըրալ**), իսկ **թողուլ** բայը, ինչպես վերը նշվեց, ունի ցոյական հիմք՝ **թողուլ** – **թողուց**– (**թողուցի**, **թողուցիր**, **թողուց**): Ե և ի լծորդության պատկանող մի քանի բայերի՝ **ըսել**, **նստիլ**, **սկսիլ**, **ծնիլ**, **փրթիլ** նմ, ներկայի և անցյալի հիմքերը նույնանում են՝ **ըսել** – **ըս**–, **նստել** – **նստ**–, **սկսիլ** – **սկս**–, **ծնիլ** – **ծն**–, **փրթիլ** – **փրթ**–, օրինակ՝ **ըղծ**. **ըս**–եմ, **ըս**–ես, **ըս**–է, անց. կատ.՝ **ըս**–ի, **ըս**–իր, **ըս**–աւ: Այս և մյուս անկանոն բայերի (**դառնալ**, **իյնալ**, **լալ**, **համբառնալ**, **բառնալ**, **առնել** նմ) խոնարհման առանձնահատկությունների մասին կխոսենք ավելի ուշ:

Այսպիսով՝ ըստ բայածների կազմության՝ **արևմտահայերենում** անցյալի հիմքի պատկերն այսպիսին է՝

Ե խոնարհման աններածանց, կրավորական և բազմապատկական բայեր (ցոյական հիմք)՝ **գրել** – **գրեց**–, **երգել** – **երգեց**–, **երգուիլ** – **երգուեց**–, **կոտրտել** – **կոտրտեց**–:

Ե խոնարհման ն սոսկածանց ունեցող բայեր (արմատական հիմք)՝ **հազնել** – **հազ**–, **իջնել** – **իջ**–, **մտնել** – **մտ**–, **գտնել**–**գտ**–:

Ե խոնարհման պատճառական բայեր (ցոյական հիմք)՝ **մոռցնել** – **մոռցուց**–, **խօսցնել** – **խօսցուց**–, **թոցնել** – **թոցուց**–:

Ա խոնարհման աններածանց բայեր (ցոյական հիմք)՝ **կարդալ** – **կարդաց**–, **խաղալ** – **խաղաց**–:

Ա խոնարհման աճ, եճ, ն սոսկածանց ունեցող բայեր (ցոյական հիմք)՝ **գիտնալ** – **գիտց**–, **մոռնալ** – **մոռց**–, **մերծենալ** – **մերծեց**–, **խոստանալ** – **խոստաց**–:

Ի խոնարհման աններածանց բայեր (ցոյական հիմք)՝ **խպնիլ**–**խպնեց**–, **բնակիլ** – **բնակեց**–, **յարծակիլ** – **յարծակեց**–, **ապրիլ** – **ապրեց**–, **խօսիլ** – **խօսեց**–, **սորվիլ** – **սորվեց**–, **ժպտիլ** – **ժպտեց**–, **սառիլ** – **սառեց**–:

Ի խոնարհման ն, չ սոսկածանց ունեցող բայեր (արմատական հիմք)՝ **հասնիլ** – **հաս**–, **հատնիլ** – **հատ**–, **թռչիլ** – **թռ**–, **դպչիլ** – **դպ**–, **փախչիլ** – **փախ**–:

Այսպիսով՝ **արևմտահայերենում** արմատական հիմք ունեն **Ե խոնարհման ն սոսկածանց և ի խոնարհման ն և չ սոսկածանց ունեցող բայերը**: Մյուսները ունեն ցոյական հիմք: Բացի այդ, արևելահայերենի **աց**–,

եց–ի փոխարեն արևմտահայերենը ցոյական հիմքում, ինչպես նշվեց, ունի **աց, եց, ուց, ց** մասնիկները:

Արևելահայերենում անցյալի հիմքից են կազմվում **ա** խոնարհման բոլոր բայերի, **ն, չ, ց**ն ածանցավոր բայերի հարակատարը (կարդալ – **կարդաց+ած**, մոտենալ – **մոտեց+ած**, խոստանալ – **խոստաց+ած**, մտնել – **մտ+ած**, թռչել – **թռ+ած**, մոտեցնել – **մոտեցր+ած**), **ա** խոնարհման բայերի ենթակայական (կարդալ – **կարդաց+ող**, մոտենալ – **մոտեց+ող**, խոստանալ – **խոստաց+ող**), **ա** խոնարհման բայերի **և ե** խոնարհման **ն, չ, ց**ն ածանցավոր բայերի վաղակատարը (կարդալ – **կարդաց+ել**, մոտենալ – **մոտեց+ել**, խոստանալ – **խոստաց+ել**, մտնել – **մտ+ել**, թռչել – **թռ+ել**, մոտեցնել – **մոտեցր+ել**):

Արևմտահայերենում անցյալի հիմքից են կազմվում **ա** խոնարհման բոլոր բայերի, **ն, չ, ց**ն ածանցավոր բայերի հարակատարը (կարդալ – **կարդաց+ած**, գիտնալ – **գիտց+ած**, մոտենալ – **մոտեց+ած**, խոստանալ – **խոստաց+ած**, մտնել – **մտ+ած**, թռչիլ – **թռ+ած**, մոտեցնել – **մոտեցուց+ած**), **ա** խոնարհման բայերի ենթակայական (կարդալ – **կարդաց+ող**, մոտենալ – **մոտեց+ող**, խոստանալ – **խոստաց+ող**), **ա** խոնարհման բայերի **և ե** խոնարհման **ն, չ, ց**ն ածանցավոր բայերի վաղակատարը (կարդալ – **կարդաց+եր**, մոտենալ – **մոտեց+եր**, խոստանալ – **խոստաց+եր**, մտնել – **մտ+եր**, թռչիլ – **թռ+եր**, մոտեցնել – **մոտեցուց+եր**):

Ներկայի և անցյալի հիմքերից կազմվող դիմավոր ձևերին անդրադառնալու ենք առանձին խոնարհումներին և դրանց ենթակադապարներին նվիրված հատվածներում:

ԲԱՅԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ. ԱՆԴԵՄ ԵՎ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐ

Արևմտահայերենում նույնպես բայը խոսքի մեջ հանդես է գալիս երկու ձևով՝ **դիմավոր** կամ **եղանակային** և **անդեմ** կամ **դերբայական ձևերով**: Առաջիններին հատուկ են եղանակի, ժամանակի, դեմքի և թվի քերականական կարգերը, երկրորդները զուրկ են նշված քերականական կարգերից: Դրանց հատուկ են բայական հիմնական հատկանիշնե-

որը բայիմաստը (ցույց են տալիս որոշակի գործողություն), սեռը և խնդրառությունը:

ԲԱՅԻ ԱՆԴԵՍ ՁԵՎԵՐ ԿԱՍ ԴԵՐԲԱՅՆԵՐ

Արևմտահայերենում և արևելահայերենում գործող կամ համընկնող դերբայները վեցն են՝ **անորոշ, ապառնի, հարակատար, վաղակատար, ենթակայական և ժխտական**: Արևմտահայերենը չունի **անկատար** և **համընթացական** դերբայները:

Իմաստային առումով և քերականական ընդհանուր հատկանիշներով նշված դերբայները երկու զրականներում տարբերություններ չեն դրսևորում. ցույց են տալիս գործողության ընդհանուր գաղափար, ունեն սեռի, իսկ անկախ դերբայները նաև ժխտման քերականական կարգեր, դրանց հատուկ է խնդրառությունը:

Կազմության մասնակի տարբերություններ ունեն **անորոշը, վաղակատարը և ժխտականը**:

Արևմտահայերենում որոշ լեզվաբաններ առանձնացնում են նաև **ընթացակցական** դերբայը:

Այսպիսով՝ դերբայները արևմտահայերենում յոթն են՝ **ընթացակցական, ժխտական, անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական**: Դրանք, ինչպես արևելահայերենում, ըստ շարահյուսական կիրառության և լեզվի կառուցվածքում դրսևորած տարբեր գործառույթների, բաժանվում են երկու խմբի՝ **կախյալ** (կերպային) և **անկախ** (վիճակային): Անկախ դերբայներն ունեն շարահյուսական ինքնուրույն գործառույթ և բառային անկախություն, ունեն ինքնուրույն շարահյուսական արժեք. հանդես են գալիս որպես մախադասության անդամներ, իսկ կախյալները զուրկ են շարահյուսական ինքնուրույն գործառույթից և չունեն բառային անկախություն:

Արևմտահայերենի անկախ դերբայներն են **անորոշը, հարակատարը, ենթակայականը, ընթացակցականը**, կախյալներն են **ժխտականը, վաղակատարը, ապառնին (ապակատարը)**:

Անորոշ դերբայ

Ցույց է տալիս գործողության ընդհանուր գաղափար, գործողությունը՝ հարատևող վիճակում՝ որպես առարկայի հատկանիշ։ Պատասխանում է **ի՞նչ ընել, ի՞նչ ըլլալ** հարցումներին։ Բայի սկզբնաձևն է։ Արևելահայերենում վերջավորվում է **ել, ալ, իսկ** արևմտահայերենում՝ **ալ, ել, իլ**, սահմանափակ թվով բայերի համար նաև **ուլ** մասնիկներով, այսինքն՝ արևմտահայերենում անորոշ դերբայը ունի երեք ածանց-վերջավորություն՝ **ել – երգել, իլ – խօսիլ, ալ – մոռնալ**։ Հիշվվում է անվանական **ու** հոլովմամբ. ըստ որում, այդ դեպքում **ի** և **ու** խոնարհումները փոխվում են **ե–ի**։ Արևելահայերենում անորոշի ներգոյական հոլովը սովորական չէ, քիչ է գործածվում, իսկ արևմտահայերենում այդ կազմությունը, ինչպես գիտենք, ընդհանրապես չկա։

ուղղ.	ընելը	խօսիլը	կարդալը
սեռ.–տր.	ընելուն	խօսելուն	կարդալուն
բաց.	ընելէն	խօսելէն	կարդալէն
գործ.	ընելով	խօսելով	կարդալով

Երկու զրականներում էլ անորոշ դերբայի հոգնակի թիվը գործածական չէ, և երկուսում էլ հոգնակիի ձևը ցույց է տալիս ոչ թե գործողության, այլ գործողություն կատարողների հոգնակիություն։ Արևմտահայերենում համեմատաբար գործուն են անորոշի հոգնակիաձև ստացական կազմությունները՝ «**Ըսելնիս** այն է, որ այդ մասին շատոնց մտածելու էր», «**Երթալնիդ** բարի ըլլայ»։ (Այսօր դրանք հնացած կազմություններ են)։

Անորոշ դերբայը կարող է գործածվել անորոշ և որոշյալ առումներով՝ **խօսիլ – խօսիլը, ընել – ընելը, կարդալ – կարդալը**։

Շարահյուսական կիրառությունները երկու տարբերակներում նույնն են։ Կազմում է բայական անդեն նախադասություններ, որ բնորոշ է միայն անորոշ դերբային, ինչպես՝ «Իրիկուան մեջ անհետելու յոյսն ունենալ, եւ յանձնուիլ նուրբ կածանի մը քըմայքին, ...Քոյր ունենալ ջուրին կարկաջն ու կապոյտ բալ, եւ ունկնդրել ծամբուն քովերն երգող սիւքին, ...Մեծ քաղցրութեան մը խառնուիլ ու մենանալ» (Մ. Մեծարենց), «**Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ** անձայն, անհանդէս. **Երթա՛լ** առուի՛ն

պէս՝ մարգերու տակ անտես. Կապոյտին մէջ՝ հե՛զ, հողմավար ամպին պէս...» (Ռ. Սևակ):

Անորոշ դերբայի հոլովված ձևերը նախադասության մեջ հանդես են գալիս գոյականին բնորոշ շարահյուսական պաշտոններով՝ **ենթակա** («Շատ **խօսիլը** **խելացի** ըլլալու նշան չէ»), **խնդիրներ** («Աղջիկս, ուզէ՛ ինձմէ ինչ որ սիրտդ կ'ուզէ... միայն անգամ մը **ուրախանալդ** տեսնեմ» (ԶՄ), «Պէտք է զգուշանալ նոյն բաները **կրկնելէ**»), **հատկացուցիչ** («խօստացայ անպայման բերել, որպէսզի առիթ ունենային անձամբ **ճանչնալու** իրենց դասագրքի հեղինակը» (Վ. Մալյան)), **որոշիչ** («Պաղ սառակոյտ մը կը սահէր **կոնակս** ի վար, եւ արմունկներս մխրճած էի կողերուս մէջ, յուզումս **զսպելու** անօգուտ ծիգով» (Շ. Շահնուր)), **ձևի, նպատակի, պատճառի պարագաներ** («Ու մայրիներ երազն իրենց կ'աւարտեն՝ երկընքին դէմ **թոթուելով** սէզ կատարին» (Մ. Զարիֆյան)), «Ամառը նոյնիսկ գացի քաղաքէն դուրս, գիւղերէն՝ մէկուն մէջ գետնախնձոր **քաղելու**» (Վ. Մալյան), «Գիշերուան **թռչունները** բոլորը մէկէն, ...Վայրագօրեն **մահերգելու** եկան» (Սիամանթո), ևն:

Արևմտահայերենին բնորոշ կիրառություններից է այն, որ անորոշի սեռական—տրական հոլովածը կարող է հանդես գալ նաև **ժամանակի պարագայի** շարահյուսական գործառույթով՝ արևելահայերենի համընթացական դերբայի նշանակությամբ, ինչպես՝ «Ժայռին ծայրէն **անցնելուն** (=անցնելու ժամանակ, անցնելիս) մրրիկը քեզ կը տանի» (Ղ. Վարուժան):

Չարակատար դերբայ

Ցույց է տալիս գործողությունը կատարված, բայց և հետևանքը հարատևող վիճակում: Պատասխանում է **ի՞նչ ըրած, ի՞նչ եղած** հարցումներին: Կազմվում է **ած** մասնիկով՝ **ե, ի** խոնարհման աններածանց (նաև կրավորական և բազմապատկական) բայերի ներկայի, իսկ մնացած բայերի, այսինքն՝ **ա** խոնարհման աններածանց, սոսկածանցավոր և պատճառական բայերի անցյալի հիմքից:

գրել—>**գր** — **գրած**

կարդալ—>**կարդաց** — **կարդացած**

հասցնել—>**հասցուց** — **հասցուցած**

գրուիլ—>**գրու** — **գրուած**

կտրտել—>**կտրտ** — **կտրտած**

թռչիլ—>**թռ** — **թռած**

մտնել→մտ – մտած
մոռնալ→մոռց – մոռցած

մօտենալ→մօտեց – մօտեցած
խօսիլ→խօս – խօսած

Ինչպես տեսնում ենք, հարակատարի կազմության մեջ արևմտահայերենը և արևելահայերենը սկզբունքային տարբերություններ չեն դրսևորում:

Տարբերություններ կան օժանդակ բայի հետ հարակատարի գործածության հարցում:

Արևելահայ քերականագիտության մեջ վերջնականապես լուծված չէ հարակատար դերբայի՝ ժամանակաձևեր կազմելու հարցը: Կան երկու տարբեր կարծիքներ: Առաջինն այն է, որ դիմավոր ձևեր կազմվում են նաև հարակատար դերբայի և օժանդակ բայի (հարակատար + Ծժանդակ բայ) միացությամբ: Մյուս կարծիքն այն է, որ հարակատարով և օժանդակ բայով դիմավոր ձևեր չեն կազմվում և **հարակատար + են / էի** կառույցները չեն մտնում բայի խոնարհման հարացուցային ոլորտ:

Երկրորդ կարծիքը պաշտպանողների փաստարկումներից են հետևյալները.

ա) **Արևելահայ** գրական լեզվում հարակատար ժամանակաձևերի կազմությունը որոշակի սահմանափակվածություն ունի: Մյուս ժամանակաձևերը բնորոշ են բոլոր բայերին: Սա ընդհանրական երևույթ է: Իսկ հարակատար + օժանդակ բայ (**նստած են**) կաղապարը բնորոշ է կրավորական բայերին՝ **նկարված է, քարդված է**, և չեզոք սեռի բայերի այն խմբին, որոնց մեջ գգալի է վիճակի, դրության կամ գործողության հետևանքի գաղափարը՝ **հոգնած է, կանգնած է**:

բ) Սահմանական եղանակի վերլուծական ձևերի ժխտականը կազմելիս օժանդակ բայը գալիս է դերբայից առաջ, և եզակի երրորդ դեմքի ժխտական մասնիկի է ձայնավորը փոխվում է **ի-ի՝ նստել է – չի նստել, գնալու է – չի գնալու**, մինչդեռ հարակատարով կազմություններում օժանդակ բայը կարող է մնալ իր դիրքում. այս դեպքում տեղի չի ունենում նաև նշված է>ի փոփոխությունը՝ **նստած է – նստած չէ, հոգնած է – հոգնած չէ, գրված է – գրված չէ** նն (**չի նստած, չի գրված** ձևերը ավելի հաճախ հանդիպում են խոսակցական լեզվում), ինչպես բաղադրյալ ստորոգյալի հանգույցի ժխտական կազմության դեպքում է:

Արևմտահայերենում պատկերը փոքր-ինչ այլ է: Հարակատար + օժանդակ բայ կառույցի առիթով նշվող յուրահատկությունները այստեղ չեն գործում:

Արևմտահայերենում հարակատարը, ինչպես արևելահայերենում, անկախ դերբայների շարքում է և ունի ինքնուրույն գործածություն: Բայց արևմտահայերենում հարակատար + օժանդակ բայ կաղապարը բնորոշ է բոլոր բայերին՝ անկախ դրանց սեռից ու իմաստից՝ **գրած եմ – գրած ես – գրած է, ըրած եմ – ըրած ես – ըրած էս – ըրած է:**

Տարբերություն կա նաև բաղադրիչների շարադասության և ձևակազմության մեջ. արևմտահայերենում այդ նույն կաղապարի ժխտականը կազմելիս օժանդակ բայը, ինչպես բոլոր վերլուծական կազմություններում, կարող է գործածվել նախադաս դիրքով, որ արևմտահայ գրականում նույնիսկ նախընտրելի է, ըստ որում, օժանդակ բայը գործածվում է նաև անհնչյունափոխ տարբերակով, ինչպես՝ **գրած չեմ // չեմ գրած, գրած չէ // չէ գրած:**

Արևելահայերենում և արևմտահայերենում հարակատարով ձևերի կազմության և իմաստային կողմի տարբերությունները Ռ. Սաքապետոյանը բացատրում է հետևյալ կերպ. «Առաջին տարբերությունը վերաբերում է բայաձևերի կազմությանը. արևելահայերենում ոչ բոլոր բայերը կարող են ունենալ այդ ձևը: Մասնավորաբար ներգործական սեռի բայերի **հարակատար + եմ / էի** կաղապարը արևելահայերենում գործածական չէ. այսպես՝ արևելահայերենում սովորական են **սիրված է, տեսնված է, նստած է, հոգնած է, նեղացած է** ձևերը, սակայն **սիրած է, տեսած է, կոտրած է, ծեծած է** կազմությունները գործածական չեն: Այլ կերպ ասած՝ արևելահայերենում այս կաղապարը գործում է միայն վիճակ ցույց տվող կրավորական և չեզոք սեռի բայերի դեպքում: Մինչդեռ արևմտահայերենում եղանակային ձևեր բաղադրող վաղակատար և հարակատար դերբայների միջև իմաստային տարբերություն չկա, ուստի **հարակատար + եմ / էի** կաղապարը արևմտահայերենում գործում է անխտիր բոլոր բայերի համար... Բացի այդ, դեր է կատարում նաև այն համգամանքը, որ ներգործական սեռը, որպես կանոն, գործողություն է ցույց տալիս, իսկ կրավորական սեռը՝ վիճակ: Սա լիովին համահունչ է հարակատար դերբայների իմաստային առանձնահատկությանը, որի պատճառով էլ արևելահայերե-

նում կրավորական սեռի բայերով արտահայտված հարակատարների նման կիրառությունը սովորական է... Այս ժամանակածնի մյուս տարբերությունը վերաբերում է նրա իմաստային կողմին: Արևմտահայերենում այն նույնանում է վաղակատար դերբայով կազմվող ժամանակածների հետ և ցույց է տալիս խոսելու պահից առաջ կատարված–ավարտված գործողություն. **գրած է, կարդացած է** արտահայտում է քերականական նույն իմաստը, ինչ **գրեր է, կարդացեր է**, այսինքն՝ մտնում է անցյալ ժամանակի բայածների հարացույցի մեջ» (38, 154–155):

Այսպիսով՝ հարակատար դերբայը, բաղադրելով ժամանակածներ՝ **հարակատար ներկա** և **հարակատար անցյալ**, արևմտահայերենում և՛ կերպային հատկանիշով (կատարված, ավարտված կերպ), և՛ վիճակային հատկությամբ (արտահայտում է ավարտված վիճակի գործողություն կամ եղելություն) հարաբերակից է վաղակատարին: Մինչդեռ արևելահայերենում **հարակատար + եմ / էի** կաղապարը իմաստային նրբերանգով էապես տարբերվում է վաղակատարով կազմություններից, քանի որ արտահայտում է ընդգծված վիճակային հարաբերության իմաստ. երբեմն ուղղակի կոչվում է վիճակային ներկա (**նստած եմ**), վիճակային անցյալ (**նստած էի**):

Հարակատարը կազմում է նաև երկրորդական վերլուծական ժամանակներ՝ **նստած եղեր է, նստած ըլլալու է, նստած կ'ըլլանք** ևն, որոնք երկու գրականներում էլ (արևել.՝ **նստած եմ եղել, նստած է լինելու, նստած կլինենք** ևն) քիչ են գործածվում:

Հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս ենթարկվում է ի հոլովման, հոգնակի ձև է ստանում (արևմտ. հոգնակին՝ ու հոլովման), կարող է հոդ ստանալ՝

ուղղ.	բերածը	բերածները
սեռ.–տր.	բերածին	բերածներուն
բաց.	բերածեն	բերածներեն
գործ.	բերածով	բերածներով

Ինչպես արևելահայերենում, արևմտահայերենի հարակատարը կարող է հանդես գալ ածականական կիրառություններով (հիմնականում իբրև որոշիչ)՝ **աւարտուած աշխատանք, կանաչած արտ, մաշած հագուստ**, կամ՝ **«Լեցուած բաժակը կաթիլ մը ջուրով կը յորդի»**:

Կարող է ունենալ նաև մակբայական կիրառություն՝ ձևի պարագայի պաշտոնով՝ «Բազմոցին վրայ ընկողմանած՝ օրուան թերթերը աչքէ կ'անցըներ», կամ **գարմացած լսել, խոնջացած բազմիլ**։

Գոյականաբար գործածվելիս ձեռք է բերում նաև գոյականին բնորոշ շարահյուսական գործառնություններ (հիմնականում հոդավոր ձևերում)։ դառնում է ենթակա՝ «Իմ ուզածս ասիկա չէր», խնդիրներ՝ «Ըրածիդ հաւնեցա՞ր», «Այս պտուղներուն մէջէն փտածները զատէ», «Ըսուածներէն բան չհասկցայ» (ԵՏ), ևն։

Կարող է դրսևորել փոխանունություն՝ **նստած մարդ – նստածը, վիրաւորուած զինուոր – վիրաւորուածը, գերեվարուած մարդիկ – գերեվարուածները**։

Ընթացակցական դերբայ

Արտահայտում է դիմավոր բայով արտահայտված գործողությանը կամ եղելությանը զուգահեռ ընթացող ուրիշ գործողության գաղափար։ Կազմվում է դերբայական հիմքից են վերջավորությամբ՝ **աղօթելէն, լալէն, փշրելէն, ձեղքելէն**։ Պատասխանում է **ի՞նչ ընելէն, ի՞նչ ըլլալէն** հարցումներին։ Ըստ որում, **իլ, ուլ** մասնիկները փոխվում են **ել–ի՝ ապրիլ – ապրելէն, խալսիլ – խալսելէն, հազնիլ – հազնելէն, թողուլ – թողելէն**։

Այս դերբայի գործիականը նախադասության մեջ կատարում է ձևի պարագայի շարահյուսական պաշտոն և իմաստով չի համընկնում արևելահայերենի համընթացական դերբային, որը նախադասության մեջ հանդես է գալիս ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոնով։ «Թես այս դերբայը բարբառային ծագում ունի,— գրում է Վ. Քոսյանը,— սակայն արևմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում՝ ցույց տալով դիմավոր բայի արտահայտած գործողությանը համընթաց գործողության հատկանիշ և կատարելով ձևի պարագայի պաշտոն» (41, 230)։ Հակառակ դեպքում այն չի ընկալվում որպես ընթացակցական դերբայ, այլ դիտվում է անորոշ դերբայի բացառական հոլովով պատճառի պարագա՝ ինչպես՝ «Աչքերը ուռած էին **լալէն**» (ինչէ՞ն, ինչո՞ւ)։ Մինչդեռ՝ «Հեռացաւ քու մասիդ **խօսելէն**», «Կը քալէր **աղօթելէն**», «**խօսեցաւ լալէն**» (ինչպէ՞ս)։

Օրինակ՝ «Սաքիա՛, Սաքիա՛...» հեկեկաց ծայնը լալեն» (Ռ. Սևակ), «Մութ սենեակիս մեջ կը շրջիմ առջի հաճություն **անոջելեն**», «Հեռուներեն ուտի մը թաւ հեծքը կու գայ **դողդղալեն**» (Ս. Մեծարեան), «Մոնչելով և **լողալեն** իր զաւակը փրկե՛լ կ'ուզեր...» (Սիամանթո), «Դո՛ւք, մամիկներ սեւագգեստ, ...Դուք կը փարիք նոր կեանքին **դողդոջելեն** լուռ ու մունջ» (Վահե Դայկ):

Առանձին շարահյուսական կառույցներում դժվար է կողմնորոշվել՝ գործ ունենք ընթացակցական դերբայի՞, թե՞ անորոշի բացառական հոլովի հետ, ինչպես՝ «Մարեցաւ **լալեն**» (ինչպե՞ս, թե՞ ինչո՞ւ):

Ընդհանուր առմամբ ընթացակցական դերբայը, մյուս անկախ դերբայների համեմատությամբ, ունի գործածության ավելի քիչ հաճախականություն, այդ իսկ պատճառով առանձին քերականների կողմից չի առանձնացվում որպես ինքնուրույն դերբայական ձև:

Ժխտական դերբայ

Ժխտականը պատկանում է այն դերբայների խմբին, որոնք ինքնուրույն, անկախ գործածություն չունեն, բայց ի տարբերություն մյուս դերբայների՝ ժխտականը իմաստային որիշակիություն չունի: Կարելի է ասել. «Ժխտական դերբայը ցույց է տալիս մի գործողության կամ եղելության գաղափար, որի կատարումը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևով» (3, 261): Միջին հայերենում ժխտական դերբայը միաձև արտահայտություն չունի, սակայն գործառնով ձևերի շարքում, որոնց մի մասը նախդրավոր կազմություն ունի (չէ ի տալ, չեն ի հաշտիլ, չես ի ասել, չեն ի կարել), ամենից հաճախ հանդիպող կազմությունները երկուսն են՝ օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով՝ **չի տալ, չեն ուտել, չի խղճալ, չէր շարժիլ**, և մյուսը՝ օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի և ձայնորդի ռ-ի հնչյունափոխված ձևով՝ **չես լսեր, չես երթար, չես ուրանար, չի մնար** են (տե՛ս 7, 315–319): Առաջինը բնորոշ է Արարատյան բարբառին և մասնակի փոփոխություններով (դուրս է ընկնում և մասնիկը, դերբայի **ե** լծորդ ձայնավորը փոխվում է **ի-ի՝ գրիլ – գրի, կարդալ – կարդա, խաղալ – խաղա**) անցավ արևելահայ գրական լեզվին, իսկ մյուսը բնորոշ է արևմտահայ բարբառներին, մասնավորապես Պոլսահայ բարբառին, և

նույնությամբ փոխանցվեց գրական արևմտահայերենին **չեմ կարդար, չեմ գրեր, չեմ խաղար** են: Միջին հայերենի համապատասխան լեզվական նյութի ուսումնասիրությունը հետազոտողին բերում է այն համոզման, որ արևմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին, որոնք հենց գերիշխող էին միջին հայերենում (տե՛ս 7, 320–321):

Արևմտահայերենի քերականության մեջ ժխտական դերբայի («բայի բացասական ձև») ձևավորման խնդրին անդրադարձել են Ա. Այտընյանը, Ջապել Յ. Ասատուրը, Կ. Առաքելյանը և ուրիշներ: Ա. Այտընյանը թեև ժխտականի դերբայական ձևը դերբայների շարքում չի քննում, սակայն այլ առիթով բայականության մեջ հստակորեն առանձնացնում է «բացասական բայեր» և «բայի բացասական ձև» հասկացությունները: Առաջին դեպքում արևմտահայ քերականը նկատի ունի բայի ժխտական խոնարհման ձևերը («Բացասական (կամ Ուրացական կամ Ժխտական) կ'ըստի բայ մ'որ գործողութիւնն ուրանալով, չէ՛ ըսելով կը բացատրէ. ինչպէս՝ **Չտեսնել, չեկաւ, չենք լսիր, չմոռնաք** եւայլն»), երկրորդ դեպքում նկարագրվում է ժխտական դերբայի կազմությունը. «Սահմանական ներկայն ու անկատարը կը կազմուին՝ 1. եմ էական բային բացասականովը, եւ 2. իւրաքանչիւր բային բացասական ձեւովը: Բայի մը **Բացասական ձեւը** կը շինուի՝ աներեւոյթին ծայրի լ գիրը ըի փոխելով. այսպէս. **Լսեր, սորվիր, կարդար, մոռնար:— Չեմ ըներ, չեն ըսեր, փոխուիր, կարդացուիր, մոռցուիր, եւայլն**»: Անկատար անցյալի կազմության և գրության առանձին սխալներ, որոնք տարածված էին արևմտահայոց խոսքում (ինչպես՝ **չէր տեսնուէր>չէր տեսնուեր, չէր գործէր>չէր գործեր, չէր լսէր>չէր լսեր, չէինք կասկածէր>չէինք կասկածեր**) Այտընյանը բացատրում է ժխտական դերբայը չընդունելու հանգամանքով: Այդ սխալը, գրում է նա, «յառաջ եկած է բացասական ձեւը չճանչնալէն եւ անկատարի հետ շփոթելէն» (տե՛ս 14, 82, 86, տե՛ս նաև 22, 175, 15, 132–133 նմ):

Այսպիսով՝ արևելահայերենում ժխտական դերբայը կազմվել է անորոշ դերբայից, որի լ վերջնամասնիկը ընկնում է, իսկ ե խոնարհումը դառնում է ի, կամ այլ կերպ ասած՝ կազմվում է ներկայի հիմքից՝ ա և ի

վերջավորություններով. ա են ստանում ա խոնարհման՝ կարդալ – կարդա, խաղալ – խաղա, մոտենալ – մոտենա, ի՛ ե խոնարհման բայերը, ինչպես՝ երգել – երգի, գրել – գրի, թռչել – թռչի:

Արևմտահայերենում անորոշի լ–ն փոխվում էր–ի՝ վազել – վազեր, կարդալ – կարդար: Ի խոնարհման բայերը ունենում են զուգածներ՝ խօսիր // խօսեր, ապրիր // ապրեր, փախչիր // փախչեր, գրուիր // գրուեր:

Ի–ով կազմությունները գործածվում են սահմանական եղանակի ներկա ժամանակի ժխտական ձևերի կազմության մեջ՝ չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր, չեմ փախչիր, չես փախչիր, չի փախչիր, իսկ ե–ով ձևերը՝ անցյալ ժամանակի կազմության մեջ՝ չէի խօսեր, չէիր խօսեր, չէր խօսեր, չէի փախչեր, չէիր փախչեր, չէր փախչեր ևն:

Արևմտահայերենում ե և ի խոնարհման բայերի դեպքում ժխտական դերբայը ձևային ընդհանրություններ ունի վաղակատարի հետ. ձևով ամբողջությամբ համընկնում են ե խոնարհման բայերը՝ վազեր (եմ) – վաղակատար / (չեմ) վազեր – ժխտական, գրեր (էի) – վաղակատար / (չէի) գրեր – ժխտական ևն, իսկ ի խոնարհման բայերը ձևով համընկնում են ե–ով տարբերակներում՝ խօսեր (եմ) – վաղակատար / (չէի) խօսեր – ժխտական: Գործ ունենք քերականական համանունության հետ:

Ինչպես արևելահայերենում, այստեղ նույնպես ժխտական դերբայը գործածվում է օժանդակ բայի միայն ժխտական ձևերի հետ, արևելահայերենում կազմում է ենթադրական եղանակի ժխտական ձևերը, իսկ արևմտահայերենում՝ սահմանական եղանակի ժխտական ներկան և անցյալը՝

Արևել.՝	կարդում եմ / չեմ կարդում	կարդում էի / չէի կարդում
	գրում եմ / չեմ գրում	գրում էի / չէի գրում
	խոսում եմ / չեմ խոսում	խոսում էի / չէի խոսում
Արևմտ.՝	կը կարդամ / չեմ կարդար	կը կարդայի / չէի կարդար
	կը խօսիմ / չեմ խօսիր	կը խօսէի / չէի խօսեր
	կը գրեմ / չեմ գրեր	կը գրէի / չէի գրեր

Ապառնի (ապակատար) դերբայ

Արտահայտում է կատարվելիք գործողության ընդհանուր գաղափար: Պատասխանում է **ի՞նչ ընելու, ի՞նչ ըլլալու** հարցումներին: Կազմվում է **ու** մասնիկով՝ անորոշի ձևերից, այսինքն՝ դերբայական հիմքից. ըստ որում, **ի** և **ու** լծորդները փոխվում են **ե-ի**:

գրել – գրելու

սորվիլ – սորվելու

թռչիլ – թռչելու

սառիլ – սառելու

թողուլ – թողելու

կարդալ – կարդալու

խօսիլ – խօսելու

մոտեցնել – մոտեցնելու

Ձևով ապառնի դերբայը նույնանում է անորոշ դերբայի սեռական-տրականին. «**Սորվելու եկած է**» (անորոշ), «**Վահան դասը աղէկ մը սորվելու է**» (ապառնի):

Միանալով օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերին՝ կազմում է հարկադրական եղանակի **ապառնի** և **անցյալի ապառնի** ժամանակաձևեր, որոնք գրավոր գրական լեզվում շատ գործածական չեն: Դրանք ունեն արևելահայերենի հարկադրական եղանակի իմաստ՝ **գրելու է – պիտի գրի, ըսելու էր – պիտի ասեր**. «Վաղը առտու կանուխ ընթերցատուն **երթալու է**» (= պետք է գնա):

Երկու գրականներում էլ կազմում է նաև բաղադրյալ երկրորդական ժամանակաձևեր՝ **գրելու ըլլամ, գրելու եղած էի, գրելու կըլլամ** ևն:

Վաղակատար դերբայ

Ցույց է տալիս գործողությունը կատարված, ավարտված վիճակում կամ արտահայտում է կատարված գործողության ընդհանուր գաղափար: Արևմտահայերենում կազմվում է **եր** մասնիկով, որը դրվում է **ե, ի** խոնարհման աններածանց բայերի ներկայի, իսկ մյուս բայերի անցյալի հիմքի վրա. **ի** խոնարհումը փոխվում է **ե-ի**: Պատասխանում է **ի՞նչ ըրեր, ի՞նչ եղեր** հարցումներին:

գրել→գր – գրեր

հաւնիլ→հաւն – հաւներ

մոռնալ→մոռց – մոռցեր

հարցնել→հարցուց – հարցուցեր

թռչիլ—>թռ — թռեր
մտնել—>մտ — մտեր

մօտենալ—>մօտեց — մօտեցեր
մօտեցնել—>մօտեցուց — մօտեցուցեր

Միանալով օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերին՝ վաղակատարը կազմում է սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևեր՝ **վազեր եմ, վազեր էի** են:

Սպաննել, հանգչիլ, կառչիլ, խրտչիլ բայերի վաղակատարը կազմվում է ներկայի հիմքից:

Ենթակայական դերբայ

Արտահայտում է մի բան անող կամ եղող առարկայի գործողության ընդհանուր գաղափար՝ որպես առարկայի հատկանիշ. պատասխանում է **ի՞նչ ընող, ի՞նչ եղող** հարցումների, կազմվում է **ող** վերջավորությամբ, որն ավելանում է **ե, ի** խոնարհման բայերի ներկայի և **ա** խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա՝

գրել—>գր — գրող
հարցնել—>հարցն — հարցնող
հաւնիլ—>հաւն — հաւնող
մտնել—>մտն — մտնող

մոռնալ—>մոռց — մոռցող
մօտենալ—>մօտեց — մօտեցող
թռչիլ—>թռչ — թռչող
մօտեցնել—>մօտեցն — մօտեցնող

Փոխանվանաբար գործածվելիս եզակին արևմտահայերենում ենթարկվում է **ի** հոլովման, իսկ **հոգնակին՝ ու** հոլովման. կարող է հոդ ստանալ՝

ուղղ.
սեռ.—տր.
բաց.
գործ.

ըսողը
ըսողին
ըսողէն
ըսողով

ըսողները
ըսողներուն
ըսողներէն
ըսողներով

Ենթակայական դերբայը՝ որպես անկախ դերբայ, փոխանվանաբար գործածվելով, կարող է հանդես գալ գոյականին բնորոշ շարահյուսական կիրառություններով, ինչպես արևելահայերենում. դառնում է ենթակա՝ «Վերջին **խնդացողը** լաւ կը խնդայ», «Պատուով **մեռնողը** փառքով կ'ապրի», «**Յարգողները** կը յարգուին», հատկացուցիչ՝ «Եօթ տարի է

չեն տեսեր, **տեսնողին** աչքին մեռնիմ», խնդիրներ՝ «Անկկա ուշի ուշով մըտիկ կ'ըներ **երգողը**», «Գարունը խանդավառութիւն կը բերէ **ապրողներուն**», որոշիչ՝ «**Յոսող** ջուրը չի նեխիր», «**Գլորող** քարը մամուռ չի բռներ», «Իրենց ուխտը **դրժող** մարդոցմէ մի՛ ախորժեր»:

Այս դերբայը **եմ** օժանդակ բայի հետ միանալիս կազմում է բաղադրյալ ստորոգյալ:

Որոշ բայերի ենթակայական դերբայները արևմտահայերենում նույնպես վերածվել են գոյականի (խոսքի մասերի փոխանցում) **ծնողք, ուսանող, գրող, ասմունքող, յարձակող, ծառայող, մտածող** են: Դրանց մեջ բայական իմաստը մթազնաժ է, գործողություն ցույց չեն տալիս: Եվ դրանց խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է հաշվի առնել շարահյուսական կիրառությունները:

Այսպիսով՝ դերբայների համադրական ընդհանուր պատկերը արևելահայերենում և արևմտահայերենում այսպիսին է (համառոտության համար տրվում են կազմությամբ ոչ բոլոր բայերը).

Արևելահայերեն

Անոր.	գրել	սովորել	կարդալ	թողնել
Հար.	գրած	սովորած	կարդացած	թողած
Համընթ.	գրելիս	սովորելիս	կարդալիս	թողնելիս
Ժխտ.	գրի	սովորի	կարդա	թողնի
Ապ.	գրելու	սովորելու	կարդալու	թողնելու
Վաղ.	գրել	սովորել	կարդացել	թողել
Ենթ.	գրող	սովորող	կարդացող	թողնող
Անոր.	թռչել	մտնել	մոտենալ	հասցնել
Հար.	թռած	մտած	մոտեցած	հասցրած
Համընթ.	թռչելիս	մտնելիս	մոտենալիս	հասցնելիս
Ժխտ.	թռչի	մտնի	մոտենա	հասցնի
Ապ.	թռչելու	մտնելու	մոտենալու	հասցնելու
Վաղ.	թռել	մտել	մոտեցել	հասցրել
Ենթ.	թռչող	մտնող	մոտեցող	հասցնող

Արևմտահայերեն

Անոր.	գրել	ապրիլ	կարդալ	թողուլ
Հար.	գրած	սորված	կարդացած	թողած
Ընթաց.	գրելէն	սորվելէն	կարդալէն	թողելէն
Ժխտ.	գրեր	սորվիր // սորվեր	կարդար	թողեր
Ապ.	գրելու	սորվելու	կարդալու	թողելու
Վաղ.	գրեր	սորվեր	կարդացեր	թողեր
Ենթ.	գրող	սորվող	կարդացող	թողող
Անոր.	թռչիլ	մտնել	մօտենալ	հասցնել
Հար.	թռած	մտած	մօտեցած	հասցուցած
Ընթաց.	թռչելէն	մտնելէն	մօտենալէն	հասցնելէն
Ժխտ.	թռչիր // թռչեր	մտներ	մօտենար	հասցներ
Ապ.	թռչելու	մտնելու	մօտենալու	հասցնելու
Վաղ.	թռեր	մտեր	մօտեցեր	հասցուցեր
Ենթ.	թռչող	մտնող	մօտեցող	հասցնող

ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ԿԱՍ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Ի տարբերություն արևելահայերենի բայական հինգ եղանակների՝ սահմանական, ըղծական, ենթադրական, հարկադրական և հրամայական, արևմտահայերենում բայն ունի չորս եղանակ՝ **սահմանական, ըղծական, հարկադրական և հրամայական**։ Արևելահայերենի ենթադրական եղանակի ձևերը համընկնում են արևմտահայերենի սահմանական եղանակի անկատարի կազմություններին և սահմանական եղանակի ժամանակաձևեր են, իսկ հարկադրականի ժամանակաձևերը արևմտահայերենում սահմանականի ապառնիի ձևեր են։

Ապառնի դերբայով կազմությունները արևմտահայ քերականագիտության մեջ ավանդաբար համարվել են սահմանական եղանակի ժամանակաձևեր, թեև, որպես կանոն, միաժամանակ նշվել է դրանց իմաստային նույնությունը արևելահայերենի հարկադրական եղանակի ժամանակաձևերի հետ։ Արևմտահայերենին նվիրված վերջին քերականագիտական աշխատություններում, սակայն, այդ բայաձևերը արդարացի-

որեն ներկայացվում են որպես հարկադրական եղանակի կազմություններ՝ այն հիմնավորմամբ, որ դրանք, ինչպես արևելահայերենի հարկադրական եղանակի ձևերը, ցույց են տալիս հարկադրանքով կատարվելիք գործողություն, «հարկադրանք, բան մը ընելու պարտաւորութիւն»։ «Մեր հարկադրական եղանակի այս երկու ժամանակները,— գրում է արևմտահայ քերական Էդ. Տասնապետյանը,— արեւելահայերէնի մէջ սահմանականի ապառնի ձեւերն են, իսկ մեր սահմանականի ապառնի ձեւերը արեւելահայերէնի հարկադրական եղանակի ժամանակներն են» (39, 53)։ Այս համոզմունքն ունի մաս Ռ. Սաքապետոյանը. «Ապակատար (ապառնի) դերբայով և օժանդակ բայով կազմվող բաղադրյալ դիմավոր ձևերը,— գրում է նա,— արտահայտում են հարկադրանքով, ստիպողաբար կատարվելիք գործողություն, այսինքն՝ ձևավորում են արևմտահայերենի բայի հարկադրական եղանակի բայաձևերը»։ Արևմտահայերենի բայական համակարգում Ռ. Սաքապետոյանն առանձնացնում է չորս եղանակ (տե՛ս 38, 159)։

Այս գրքում նույնպես ապառնի դերբայով կազմությունները ներկայացվում են որպես հարկադրական եղանակի ժամանակաձևեր **հարկադրական ապառնի և հարկադրական անցյալի ապառնի**։

Արևմտահայերենում վերլուծական են սահմանականի դրական խոնարհման չորս ժամանակաձևեր՝ վաղակատար ներկա և վաղակատար անցյալ, հարակատար ներկա և հարակատար անցյալ, ժխտական խոնարհման սահմանական ներկայի և անցյալի ձևերը, ինչպես նաև հարկադրական եղանակի ժամանակաձևերը, **համադրական են** սահմանականի հինգ ձևեր՝ սահմանական ներկա և անցյալ, անցյալ կատարյալ, ապառնի, անցյալի ապառնի, ինչպես նաև ըղծական և հրամայական եղանակների ձևերը։

Ըղծական եղանակ

Ցույց է տալիս գործողության կատարման իղծ, ցանկություն, տենչանք։ Ունի երկու ժամանակ՝ **ապառնի և անցյալի ապառնի**։ Բոլոր բայերը արևմտահայերենում կազմվում են ներկայի հիմքից այնպիսի վերջավորություններով, որոնք տարբերակվում են ըստ խոնարհումների (լծորդությունների)։

Բացի լծորդությամբ պայմանավորված տարբերություններից՝ արևմտահայերենում ըղծականի վերջավորությունները ունեն մասնակի այլ տարբերություններ. ըղծական ապառնիի եզակի երրորդ դեմքը **ե** խոնարհման բայերի համար, ի տարբերություն արևելահայերենի, ունի ոչ թե **ի**, այլ **է** վերջավորություն, օր.՝ **գրէ, երգէ, յղկէ**: Բացի այդ, ըղծական անցյալի ապառնիի վերջավորությունները, ուղղագրության ընդունված սկզբունքներով, **ե** և **ի** խոնարհման բայերի դեպքում գրվում են **է**–ով, օր.՝ **գրէի, խօսէիք, հանդիպէին, լսէին**:

Խոնարհման ընդհանուր պատկերը այսպիսին է (որպես օրինակ բերվում են **գրել, սորվիլ, կարդալ** բայերը).

Ըղծական ապառնի

Ե խոնարհում		Ի խոնարհում		Ա խոնարհում	
–եմ	–եմք	–իմ	–իմք	–ամ	–անք
–ես	–էք	–իս	–իք	–աս	–աք
–է	–են	–ի	–ին	–այ	–ան
գրեմ	գրեմք	սորվիմ	սորվիմք	կարդամ	կարդանք
գրես	գրեք	սորվիս	սորվիք	կարդաս	կարդաք
գրէ	գրեն	սորվի	սորվին	կարդայ	կարդան

Ըղծական անցյալի ապառնի

Ե խոնարհում		Ի խոնարհում		Ա խոնարհում	
–եի	–եինք	–իի	–իինք	–այի	–այինք
–եիր	–եիք	–իիր	–իիք	–այիր	–այիք
–եր	–եին	–իր	–ին	–ար	–ային
գրեի	գրեինք	սորվեի	սորվեինք	կարդայի	կարդայինք
գրեիր	գրեիք	սորվեիր	սորվեիք	կարդայիր	կարդայիք
գրեր	գրեին	սորվեր	սորվեին	կարդար	կարդային

Ծանոթություն: Այս եղանակը արևմտահայերենում կոչվում է նաև **ստորադասական**, քանի որ այն հաճախ է գործածվում երկրորդական (ստորադաս) նախադասություններում:

Ըղծական եղանակի հետ երբեմն գործածվում է **թող** բառը, որը **թողուլ** բայի հրամայականի եզակին է, բայց ըղծականի հետ հանդես է գա-

լիս որպես եղանակավորող և մեղմ հրամանի երանգ է հաղորդում խոսքին **թող երթայ, թող ըլլայ, թող ստովին**:

Ըղծական անցյալի ապառնին իր եղանակային բովանդակությամբ ըստ էության չի տարբերվում ըղծական ապառնիից, թերևս միայն այն տարբերությունը պետք է նշել, որ ըղծական անցյալի ապառնին ցույց է տալիս մի չիրականացած ցանկություն անցյալում:

Ըղծականի ձևերը **կիրառության տարբերություններ** չունեն արևմտահայերենում և արևելահայերենում: Իրենց արտահայտած իմաստին համապատասխան՝ ավելի հաճախ գործածվում են ստորադասական նախադասություններում:

Կարող են կիրառվել.

Պայմանի երկրորդական նախադասություններում՝ «Աբխոզում աղա... թերևս հետեւեալ օրն ալ չէր բանար աչերն, եթէ փողոցի վաճառականներն առաւօտուն իրենց ահարկու ծայներովն չխռովէին անոր քունը» (Յ. Պարոնյան), «էշ մը եթէ **ձգուի** երկու տոպրակի միջեւ, մէկէն միւսին երթալէն օրը կ'անցնէ անօթի»:

Խնդիր երկրորդական նախադասություններում՝ «Վարչապետ Ռաֆիք Չարիւրի հայտարարեց, որ թուրք-ամերիկեան-իսրայէլեան նախատեսուող ռազմափորձերը ոչինչով **կրնան** արգելք հանդիսանալ Լիբանանի, որ անիկա **հետապնդէ** Իսրայէլի կողմէ գրաւուած հողերու ազատագրումը» («Ազդակ»):

Կարող են արտահայտել հորդոր, մեղմ հրաման, պատվեր՝ «Չարէն **թող վախճայ** ան, ով չէ տիրեր իր մարմնին ու բնազդներուն. սատանայի իրականութիւնը բնազդներու վրայ է միայն» (Լ. Շանթ), «Անոնք որոնք բաւարար աշխատած կը նկատեն իրենք զիրենք **թո՛ղ** հանգիստի քաշուին: Միւսները **աճապարե՛ն**. թերեւս անծրեւէ» (ՅԲ), «**Յիշենք** բարբառով գրուած քանի մը գործեր»:

Ըղծականի ձևերով արտահայտվում են նաև անեծքներ և օրհնանքներ՝ «**Թո՛ղ** ճակատիդ վրայ **գրուի** Չարիւր սաղմոս իմաստութեան ...**Թո՛ղ** քու ափիդ գարիին Չազար ոչխա՛ր **երկարին**» (Դ. Վարուժան):

Սահմանական եղանակ

Ցույց է տալիս խոսողի տեսակետից հաստատապես կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն:

Սահմանական եղանակի բայաձևերը կազմությամբ բաժանվում են երկու խմբի՝

1. **Վերլուծական** կամ **բաղադրյալ**, որոնք արևելահայերենում կազմվում են անկատար, ապառնի և վաղակատար դերբայներով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով, իսկ արևմտահայերենում՝ վաղակատար, հարակատար դերբայներով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով. կազմության սկզբունքը երկու գրականներում էլ նույնն է՝ **դերբայ + օժանդակ բայ**. տարբերությունն այն է, որ արևմտահայերենում, ինչպես նշվեց, վերլուծական ժամանակաձևեր ունի նաև հարակատար դերբայը (եթե նկատի ունենանք, որ արևելահայերենում հարակատարը ոչ բոլոր բայերից է կազմում ժամանակաձևեր), և բացակայում են անկատարով կազմվող վերլուծական ձևերը:

2. **Համադրական** կամ **պարզ** ժամանակաձևեր. **արևելահայերենում** սահմանական եղանակն ունի մեկ համադրական ձև՝ անցյալ կատարյալ. **արևմտահայերենում** համադրական են հինգ ժամանակաձև: Կազմության ընդհանուր սկզբունքով համընկնում է **անցյալ կատարյալը** (բայահիմք + վերջավորություն): Մյուսները ունեն կազմության մասնակի տարբերություններ. բաղադրվում են **կը** կամ **պիտի** եղանակիչով և բայի խոնարհված ձևերով՝ անկատար ներկա (**կը գրեմ**), անկատար անցյալ (**կը գրեի**), ապառնի (**պիտի գրեմ**), անցյալի ապառնի (**պիտի գրեի**):

Ներկա ժամանակը, ինչպես արևելահայերենում, ունի մեկ ձև՝
անկատար ներկա

կը գրեմ:

Անցյալ ժամանակն ունի յոթ ձև՝

1. անկատար անցյալ
2. հարակատար ներկա
3. հարակատար անցյալ
4. վաղակատար ներկա
5. վաղակատար անցյալ

կը գրեի
գրած եմ
գրած էի
գրեր եմ
գրեր էի

6. անցյալի ապառնի՝
7. անցյալ կատարյալ՝

**պիտի գրէի
գրեցի**

**Ապառնի ժամանակն ունի մեկ ձև՝
ապառնի կամ համադրական ապառնի՝**

պիտի գրեմ

Նախ քննենք **համադրական ժամանակածները**: Դրանք հինգն են:

1. Անկատար ներկա

Կազմվում է **կը** մասնիկով և ըղծական ապառնու ձևերով: Չայնավորով սկսվող բայերից առաջ **կը** մասնիկի **ը** ձայնավորը սղվում է, որի փոխարեն դրվում է ապաթարց՝ **կ' – կ'ըսէ, կ'ուզէ, կ'երթայ**:

Բացառություն են կազմում **գալ, լալ, տալ** միավանկ բայերը, որոնք սահմանական ներկան և անցյալը կազմում են **կու** մասնիկով, որը գրվում է բայերից առանձին՝ **կու գա, կու լա, կու տա**:

Սկ, սպ, ստ, շտ, զք, սթ, զգ, սք և նման հնչյունակապակցություններով սկսվող բայերից առաջ դրվում է **կը** և ոչ թե **կ'**, ինչպես՝ **կը զգայ, կը սպասէ, կը սկսէ**:

Կու մասնիկի գործածության առաջին օրինակները գալիս են 12–րդ դարից (հանդիպում են Ներսես Շնորհալու առակներում՝ **Քան զօիրանի ծով կու ծփայ, ի քարշ կու գայ** են): Ավելորդ չենք համարում մի երկու խոսք ասել այդ մասնիկի (**կու, կ', կը**) առաջացման մասին: Կան տարբեր կարծիքներ: Դրանցից իշխող են երկուսը՝ Արսեն Այտընյանի և Մանուկ Աբեղյանի տեսակետները: Ա. Այտընյանը **կու** մասնիկի ծագումը կապում է գրաբարյան **կայ ու** ձևի հետ. «հնոց **կու** մասնիկը,— գրում է նա,— **կայ ու** բառերուն բաղադրութիւնն է, եւ թէ ամփոփմամբ ըսուած է **կ'ու նայի՝ փխկ. կայ ու նայի. –կ'ու ուտէ՝ փխկ. կայ եւ ուտէ. –կու կապէ՝ փխկ. կայ ու կապէ. որ յետոյ ընդհանուր ձեւ մ'եղած է մնացած դէմքերուն ալ. կու լսենք՝ փխկ. կանք ու լսենք, կու տեսանէր. փխկ. կայր ու տեսանէր. եւայլն» (14, 75): Արևմտահայ քերականներից մեծ հայագետի կարծիքը պաշտպանում է Դովհաննես Գազանճյանը և տալիս իր հիմնավոր բացատրությունը. «Այս **կը, կու** մասնիկը ծագած է սղմամբ հին **կայ ու...** ոճէն որ ցանցառաբար կ'երեւի գրաբարի մէջ, ինչպէս՝ **կայ ու տեսանէ, կայ ու մնայ, կայ ու հայի** եւն: Աշխարհաբարի այժմեան ստորա-**

դասական ներկայ եւ անկատարի ծեւերը սահմանականի յատուկ էին գրաբարի մէջ որ ուրոյն ծեւեր ունէր ստորադասականի յատուկ, ինչպէս՝ սահմանական **խօսիմ**, ստորադասական՝ **խօսիցիմ** եւն: Ժամանակ անցնելով գրաբար ստորադասականի ծեւերը գործածութենէ ինկան եւ սահմանականի ծեւերը բռնեցին անոնց տեղ, որով միջին հայերէնի մէջ այս **կայ ու...** ոճով բաղադրեալ ծեւերը գործածուեցան սահմանական ներկայ եւ անկատարի իմաստով, եւ հետզհետէ ընդհանրացան. **կայ ու...** սղուելով վերածուեցաւ **կու**, եւ ապա՝ **կը** աննշանակ մասնիկներուն» (19, 162): Սկզբունքորեն այս տեսակետին է նաև Զրաշյա Աճառյանը, որը մասնիկի առաջացումը կապում է **կալ** (**կենալ**, **կանգնել**, **գոյություն ունենալ**՝ «իբրև օժանդակ բայակերտ գործածական է շատ լեզուների մեջ») բայի հետ՝ իբրև լրացուցիչ փաստարկներ բերելով Կեսարիայի բարբառի անկատարի ժխտական ձևերից: «Կասկած չկա,— գրում է նա,— որ այս բոլորի մեջ **չկամ**, **չկաս**, **չկար** զանազան խոնարհյալ ձևերն են **կալ** «**կենալ**» բայի, որից ածանցված է նաև **կայ ու>կու**» (13, 394–398): Զետագայում, ըստ նրա, **կու** մասնիկը ու ծայնավորի հնչյունափոխությամբ տվել է բաղաձայնից առաջ **կը**, իսկ ծայնավորից առաջ՝ **կ’**, ինչպէս՝ **կը կարդամ**, **կը կատարեմ**, **կ’ըսեմ**, **կ’երթամ** ևն:

Փոքր–ինչ տարբեր է Մանուկ Աբեղյանի դիրքորոշումը: Նա հավաստի է հիմնավորված չի համարում Այտընյանի կարծիքը այն պատճառաբանությամբ, որ նախ «**«կամ»** բայով կազմված Սահմանական ձևերի համար սակավաթիվ օրինակներ միայն կան»⁵, մինչդեռ, ըստ լեզվաբանի,

5 Ի դեպ, իր տեսակետը շարադրելիս այդ մասին կասկածներ է հայտնում հենց ինքը՝ Ա. Այտընյանը. «Բայց եւ այնպէս,— գրում է նա,— չենք կրնար հաստատել թէ ատեն մը բովանդակ սահմ. ներկայ եւ անկատար ժամանակներն առ հասարակ այս ծեւով եղած ըլլան, վասնզի այսպիսի ընդհանրութեան բաւական օրինակ չունինք. մանաւանդ թէ հարկ է ըսել որ այս (**կայ ու**) ձեւը միայն երբեմն կը գործածուէր» (14, 77): **Կայ ու** ձևից **կու** մասնիկի առաջացման վերաբերյալ տեսակետը որոշ վերապահությամբ է ընդունում նաև գերմանացի հայագետ ժոզեֆ Կարստը՝ հատկապէս իբրև փաստարկ ունենալով հին և միջնադարի գրականության մեջ այդ ձևի սակավադեպ գործածությունը: Զարցի վերաբերյալ շատ ուշագրաւ է Զր. Աճառյանի բացատրությունը. սկզբունքորեն չփորձելով մերժել քննվող քերականական ձևի հազվադեպ գործածության փաստը՝ նա գրում է. «Բայց այս էլ սովորական երևույթ է լեզուների մեջ: Լեզվի մեջ գտնված բացառիկ մի դեպք, մի միակ երևույթ բավական է որ նա ունենա ավելի հարմարություն, քան մյուս ձևերը, հանկարծ սկսի տարածվել և քիչ ժամանակի մեջ այնպես կշատանա, որ կվտարի մյուս ձևերը և մի միակ տիրապետողը կդառնա: Նույնիսկ **կու** ձևը, որ այնպես սովորական դարձավ հետո, «նույն գրոց մեջ դեռ ցանցառ է» գործածվում (ըստ Այտն. Բ, 77), և Մխիթար Զեքացին դեռ երկու օրինակ միայն ունի, ինչպէս որ երկու օրինակ ունի **կայ** և... ձևով» (13, 395):

դա չէր կարող իր մնայուն հետքը չթողնել հին կամ միջին հայերենում և արդի բարբառներում, և երկրորդ՝ Այտընյանը չի նշում գոնե մեկ օրինակ, որի մեջ **կայ ու** ձևը դրված լիներ ներկայի ոչ թե եզակի երրորդ դեմքի, այլ մյուս դեմքերի վրա. «Պետք է կարծել,— եզրակացնում է Աբեղյանը,— որ այդ «կամ» բայի գործածությունը Սահմ. եղանակը որոշելու համար՝ լոկ առանձնացած դարձվածներ են եղել և այդպես էլ մնացել են ու չեն վերածվել խոնարհման ձևերի»: Մ. Աբեղյանը առաջ է քաշում **կու** մասնիկի առաջացման իր տեսակետը. «**ԿՈՒ**» մասնիկի հին ձևն է «**ԿՈՅ**»,— գրում է նա,— որ երևում է ձեռագիրների մեջ, ինչպես՝ Այդ գարշելի ծայներդ, որ դու **կոյ հանես**, ոչ ի սաղմոսն կայ... Թագաւորին փեսայն բժշկութիւն **կոյ առնէ** և դես հանէ: Այս քանի՞ տարի կայ որ **կոյ վարեմ** և **կոյ վաստակեմ**—գիատն դու **կոյտես** և զարդն ինծի **կոյ կերցնես**... Արդ, այս «կոյ» մասնիկն սկզբնապես եղել է մի անկախ բառ «**ահա**» նշանակությամբ, ինչպես և մինչև այժմ մնում է զանազան բարբառների մեջ **կո, կյո, գո, գյո** ձևերով. այսպես, օրինակ՝ Աճառյանի «Հայերեն գավառական բառարանի» մեջ գտնում ենք այդ բառը «**կօ**» ձևով դրված. դիմացը գործածության տեղեր նշանակված են՝ հոյ, հիզան, հւլաթ, Մոկք, Սալմաստ, Վան» (2, 316–317):

Սկզբունքորեն երկու տեսակետներն էլ հանգում են որոշակի սկզբնաձևից (**կայ ու** կամ **կոյ**, որոնք, ի դեպ, իմաստային սերտ առնչություն ունեն) **կու** մասնիկի առաջացմանը, որը հետագա հնչյունափոխությամբ վերածվել է **կը** և **կ'** (միայն երեք բայի համար **կու**) ձևերի:

Խոնարհման ընդհանուր պատկերն այսպիսին է.

Ե խոնարհում		Ի խոնարհում		Ա խոնարհում	
կը գրեմ	կը գրենք	կը սորվիմ	կը սորվինք	կը կարդամ	կը կարդանք
կը գրես	կը գրեք	կը սորվիս	կը սորվիք	կը կարդաս	կը կարդաք
կը գրե՛	կը գրեն՛	կը սորվի՛	կը սորվին՛	կը կարդայ	կը կարդան
կ'երգեմ	կ'երգենք	կը զգամ	կը զգանք	կու գամ	կու գանք
կ'երգես	կ'երգեք	կը զգաս	կը զգաք	կու գաս	կու գաք
կ'երգե՛	կ'երգեն՛	կը զգայ	կը զգան	կու գայ	կու գան

Հիշեցնենք, որ Ե խոնարհման բայերը հոգնակի երկրորդ դեմքում ունենում են էք վերջավորություն, իսկ եզակի երրորդ դեմքում՝ Է, ինչպես ըղծականի բայածններում է:

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում անկատար ներկան արտահայտում է իմաստային այլևայլ հարաբերություններ: Կարող է արտահայտել՝

ա) ընդհանրապես կատարվող գործողություն (ընդհանրական ներկա)՝ «Համալսարան կը սորվիմ», կամ «Քեզի կ'ըսեմ՝ հիմ աստուածները կ'ապրին... կ'ապրին իրենց զուարթ ու եռուն կեանքը. լի, շարժուն ու յարավոփոխ: Մենք կ'աղօթենք, անոնք կ'ապրին» (Լ. Շանթ),

խոսելու պահին կատարվող, շարունակվող գործողություն (շարունակական ներկա)՝ «Դաս կը սորվիմ», կամ «Սիւք մը կ'անցնի, տերեւներ ծափ կը զարնեն ցնծագին. Վարեն ջուրը կը խայտայ, կը խնդայ լոյսն ալ վերէն» (Մ. Մեծարենց), «Ուրիշ խումբ մը՝ աւելի բախտաւոր՝ կը նայի կարօտով հեռուն, խորհրդային Հայաստանին» (Ա. Ծառուկյան),

բ) պատմական իրողություն, եղելություն՝ իբրև անցյալում կատարված— ավարտված գործողություն (պատմական ներկա)՝ «Ա. Զօպանեան կը տեղափոխուի Փարիզ: 1998—ին հոն կը հիմնադրէ «Անահիտ» գրական—գեղարուեստական հանդէսը»:

Կարող է գործածվել առածներում և ասացվածքներում (առածական ներկա)՝ «Երկաթը տաք տաք կը ծծեն», «Քամի ցանողը փոթորիկ կը հնծէ», «Խորհուրդ լսել չգիտցողը օգնութիւն գտնել չի կրնար», «Տաշած քարը գետինը չի մնար», «Քամիին բերածը քամին կը տանի», «Մէկ ծաղիկով գարուն չի գար»:

Ներկայի ձևում կարող է արտահայտել անցյալ կամ ապառնի ժամանակների իմաստ՝ խոսքին ավելի հավաստիություն և կենդանություն տալու համար՝ «Զէր մթնած: Տուն կ'երթամ և ի՞նչ կը տեսնիմ. բոլորն ալ մեկնած էին», «Վաղը կ'երթանք վարժարան», կամ «Բարեկամներէդ մէկուն անուան տօնախմբութեան ներկայ գտնուիլ կը փափաքիս: Ընթրելէն յետոյ կ'ելնես, բարեկամիդ տունը կ'երթաս, ուր սիրալիք ընդունելութիւն մը կը գտնես...»: Երկրորդ դեպքում՝ ապառնիի իմաստով գործածվելիս անկատար ներկան կարող է արտահայտել արևելահայերենի ենթադրական եղանակի իմաստ, ինչպես՝ «Վաղը վայրի այծի փոսթ միլթան մը կը շինեմ ինձ,— կը շինեմ տրեխներ... անտառէն

ճամբորդի գաւազանս **կը կտրեմ...** ու մենք ճամբայ **կ'իյնանք** դէպի իմ
Հայրենի գիւղն աւերակ...» (Համաստեղ):

Անկատար ներկան արնելահայերենի ենթադրական եղանակի
իմաստ է արտահայտում նաև այն դեպքում, եթե գործածվում է պայմա-
նի պարագա երկրորդական նախադասություն ունեցող բարդ ստորա-
դասական նախադասության կազմում՝ որպես գլխավոր նախադասու-
թյան ստորոգյալ՝ «Ձեզի կու գամ, եթէ ինձի հետ խօսելու ցանկութիւն
ունիք»:

Արևմտահայ խոսակցական լեզվում շարունակական ներկայի իմաս-
տը արտահայտվում է նաև կոր մասնիկով **կը խօսին կոր, կ'երթամ կոր**
ևն: Այդ մասնիկը բարբառի միջոցով հայերենին է անցել թուրքերենից և
հանդիպում է մի քանի փոքրասիական բարբառներում՝ Սեբաստիա,
Ջմյուռնիա, Ռոդոսքո ևն: **Կոր** մասնիկի վերաբերյալ Հովհ. Գազանճյանը
գրում է. «**Կոր** մասնիկը որ սահմանական ներկայ և անկատարի ձևերուն
յետադասուելով **բուն ներկայ** ժամանակ շինելու կը ծառայէ, օրինակ՝
կ'երթամ կոր, կը խօսէի կոր ևն. և երբեմն առանց **կը**ի, երբոր բառը
բաղաձայնով կ'սկսի. ինչպէս՝ **գրեմ կոր, կարդայի կոր** ևն: Այս **կորը**
փոխառութիւն է թուրքերէնէ որուն ներկայակերտ **յորին** հայացած ձևն է.
օրինակ՝ **կիտիյոր** = կ'երթայ կոր ևն: **Կորի** գործածումը աւելի յատուկ է
խօսուած լեզուին և քիչ անգամ կը կիրարկուի գրական լեզուի մէջ: Բայց
պէտք չէ խուսափիլ գործածելէ երբ իմաստի պայծառութեան յարկը կը
պահանջէ որ գործածուի» (19, 163): Արդի գրական արևմտահայերենի
գրավոր տարբերակում այդ մասնիկը չի գործածվում: Հանդիպող օրի-
նակները ոճական կիրառություններ են և գերազանցապես հերոսների
խոսքում են, օրինակ՝ «Ինտոր կըլլայ, որ չես ճանչնար կոր պզտիկս»,
«Չե՛մ յիշեր կոր, Կոստան, մեղքքիր ինձի, ես իմ «Հայր մեր»-ս չե՛մ յիշեր
կոր» (Շ. Շահնուր):

2. Անկատար անցյալ

Կազմվում է **կը** մասնիկով և ըղձական անցյալի ապառնիի համապա-
տասխան ձևերով: Որոշ բայերի համար պահպանում է սահմանական
ներկային բնորոշ ձևակազմական յուրահատկությունները, որոնք վերը
նշվեցին:

Ե խոնարհում

կը գրեի	կը գրեինք
կը գրեիր	կը գրեիք
կը գրեր	կը գրեին

կ'երգեի	կ'երգեինք
կ'երգեիր	կ'երգեիք
կ'երգեր	կ'երգեին

Ի խոնարհում

կը սորվեի	կը սորվեինք
կը սորվեիր	կը սորվեիք
կը սորվեր	կը սորվեին

Ա խոնարհում

կը կարդայի	կը կարդայինք	կը զգայի	կը զգայինք
կը կարդայիր	կը կարդայիք	կը զգայիր	կը զգայիք
կը կարդար	կը կարդային	կը զգար	կը զգային

կու գայի	կու գայինք
կու գայիր	կու գայիք
կու գար	կու գային

Անկատար անցյալը արևմտահայերենում և արևելահայերենում իմաստային—կիրառական տարբերություն չունի. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում տևական, հարաձիգ, ընթացքի մեջ գտնվող գործողություն, ինչպես՝ «Քառսուն տարիներու կարոտը կ'ունեցնէր կուրծքը, եւ ինք վէս ու գոռոզ, **կը շարունակէր ճամբան**», «Արեւն հագիւ ամպերէն վար **կը մաղուէր**, Քամին **կու լար** իր տխրահունչ մեղեդին, **կը մօտենար** ծմեռը ցուրտ, ալեհեր, Ծաղկանց հոգին տանելու մութ անդունդին» (Ռ. Որբերյան), «**Լեցուէր էին** այս նաւուն մէջ — Նոյան տապան իրական... **կը պոռային կը պարէին կը երգէին կը սպառնային կը կռուէին կու լային**» (Զ. Խրախունի), «Մինչեւ 1830 թուականը լոյս տեսած աշխարհաբար գիրքերու ընդհանուր թիւը **կը հասնէր 40ի**»:

Այսպիսով՝ ներկա և անցյալ ժամանակները երկու գրականներում կազմությամբ խիստ տարբերվում են իրարից. արևելահայերենում ունեն վերլուծական կազմություն՝ **դերբայ + օժանդակ բայ**, իսկ արևմտահայերենում՝ համադրական՝ **կը(կ') + խոնարհված բայ**: Բացի այդ, արևմտահայերենում անկատար ներկայի ձևերը միմյանցից տարբերակ-

ված են ըստ **ի, ա, ե** խոնարհումների՝ **կը սորվ+իմ, կը կարդ+ամ, կը գր+եմ**: Արևելահայերենում **ա** և **ե** խոնարհման բայերը այդպիսի տարբերակում չունեն՝ **կարդ+ում եմ, գր+ում եմ, խոս+ում եմ**:

Արևմտահայերենում նույնպես մի քանի բայերի՝ **եմ, կամ, գիտեմ, ունիմ, արժեմ**, անկատար ներկան և անկատար անցյալը գրաբարածն են, այսինքն՝ ունեն համադրական կազմություն, ինչպես՝ **եմ, ես, է, էի, էիր, էր, էինք** են, **գիտեմ, գիտես, գիտե, գիտենք, գիտեք, գիտեն, գիտեի, գիտեիր, գիտեր** են, **կամ, կաս, կայ, կանք, կաք, կան, կայի, կայիր, կար** են, **ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, ունեի, ունեիր** են: Դրանց մասին հանգամանորեն կխոսենք անկանոն բայերը քննարկելիս:

3. Անցյալ կատարյալ

Կազմությամբ համադրական է բովանդակությամբ՝ անցյալ. ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն: Կազմվում է անցյալի հիմքով՝ ստանալով երկու տարբեր տիպի՝ **ի** և **ա** ծայնավոր ունեցող դիմային վերջավորություններ:

Ա տեսակ

–ի –ինք
–իր –իք
–օ –ին

Բ տեսակ

– այ – անք
– ար – արք
– աւ – ան

Պատճառական բայերի եզակի երրորդ դեմքում 0 վերջավորության փոխարեն արևելահայերենում լինում է **եց** (մոտեցր+եց), իսկ արևմտահայերենում՝ **ուց** (մոտեցր+ուց):

Ժամանակաձևի ընդհանուր կազմության մեջ և իմաստային դաշտում, ինչպես տեսնում ենք, արևմտահայերենում և արևելահայերենում չկան սկզբունքային տարբերություններ: Կազմության մասնակի տարբերությունները պայմանավորված են բայերի խոնարհմամբ:

Արևելահայերենում Ա տեսակի վերջավորություն են ստանում **ե, ա** խոնարհման աններածանց բայերը և պատճառական բայերը (ինչպես նշվեց՝ եզակի երրորդ դեմքի **եց** վերջավորությամբ), **Բ** տեսակի վերջավորություն են ստանում սոսկածանցավոր բայերը, իսկ **արևմտահայե-**

րենում Ա տեսակի վերջավորություն են ստանում ե, ա խոնարհման աններածանց բայերը և պատճառական բայերը (եզակի երրորդ դեմքում ուց), Բ տեսակի վերջավորություն են ստանում ի խոնարհման աններածանց և սոսկածանցավոր ու կրավորական բայերը: Հիմնական տարբերությունն այն է, որ արևմտահայերենում ի խոնարհման բայերը, գրաբարի ազդեցությամբ ստանալով Բ տեսակի վերջավորություն, ենթարկվում են կրավորածն խոնարհման: Բացի այդ, արևմտահայերենում կրավորական բայերը անցյալ կատարյալը կազմում են անցյալի հիմքից Բ տեսակի վերջավորություններով, ինչպես ի խոնարհման աններածանց բայերը:

Պատկերն այսպիսին է՝

գրեցի	մօտեցուցի	մոռցայ	սորվեցայ	գրուեցայ	թռայ
գրեցիր	մօտեցուցիր	մոռցար	սորվեցար	գրուեցար	թռար
գրեց	մօտեցուց	մոռցաւ	սորվեցաւ	գրուեցաւ	թռաւ
գրեցինք	մօտեցուցինք	մոռցանք	սորվեցանք	գրուեցանք	թռանք
գրեցիք	մօտեցուցիք	մոռցաք	սորվեցաք	գրուեցաք	թռաք
գրեցին	մօտեցուցին	մոռցան	սորվեցան	գրուեցան	թռան

Անցյալ կատարյալ ժամանակը իմաստային–կիրառական տարբերություն չունի արևելահայերենում և արևմտահայերենում. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում առանց որևէ տևականության կատարված, ավարտված գործողություն: Իմաստային ընդհանրություն ունենալով վաղակատար ժամանակի հետ (երկուսն էլ ցույց են տալիս անցյալում կատարված, ավարտված գործողություն)՝ ժամանակային իմաստով որոշակիորեն սահմանազատվում է նրանից. նախ ցույց է տալիս խոսելու պահին ավելի մոտ գործողություն, քան վաղակատարը (հմտ. ըրեց–ըրեր է), և երկրորդ՝ եթե վաղակատարը ցույց է տալիս ներկայի համեմատությամբ արդեն կատարված որոշակի տևականություն ունեցող գործողություն, որի մասին խոսողը պատմում է ոչ որպես ականատես, ապա անցյալ կատարյալը ցույց է տալիս անցյալում կատարված այնպիսի գործողություն, որին խոսողը կամ ականատես է եղել և կամ այնքան հավաստի և որոշակի գիտի այդ մասին, որ ներկայացնում է

իբրև ականատես, մտովի իրեն տեղափոխում է այդ գործողության կատարման իրադրության մեջ (տես **5, 372**) (հմմտ. «Սեմին վրայ հավաքուեցան բոլոր տնեցիք» և «Սեմին վրայ հավաքուեր են բոլոր տնեցիք»):

Օրինակ՝ «Զանգակներ, բարի, բարի՝ զանգակներ, Ի՞նչ բան կասեցուց ձեր զուժկան լեզուն» (Ռ. Սևակ), «**Փախաւ, սահեցաւ** մեր հայրենիքը մեր ոտքերուն տակէն, ծովին տալով մեզ» (Ա. Ծառուկյան), «Ի՞նչու այդպէս յանկարծ **անցաւ** Խինդն ու պարը ցաւի դարձաւ Ինչպէ՛ս ամէն ինչ **փոխուեցաւ**» (Զ. Խրախունի), «Այլ ժողովուրդներու պէս, հայերը **ունեցան** բարգաւաճումի, հզօրութեան, ինչպէս նաեւ մշակութային ու աշխարհաքաղաքական ծաւալումի հանգրուաններ» («Ազդակ»):

4. Ապառնի

Կազմվում է սահմանական եղանակի ներկա ժամանակից՝ **կը** մասնիկի փոխարեն **պիտի** (// **պետք է**) եղանակիչը ավելացնելով:

Կարծիք կա, որ արևմտահայերենում այս ժամանակածնը կազմվում է միայն **պիտի** մասնիկով՝ ի տարբերություն արևելահայերենի հարկադրական եղանակի **պիտի** և **պետք է** եղանակիչների (տես **15, 151, 38, 156**): Գրական արևմտահայերենի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքի վերաբերյալ մեր դիտարկումները, սակայն, այլ բան են ասում: Արևմտահայ, ինչպես նաև սփյուռքահայ մատենագրության մեջ վկայված են **պետք է** եղանակիչի գործածության բազմաթիվ օրինակներ, ինչպես «Իր մեծ մարդոցը դեմքը **պետք է** միշտ **ներկայ** ըլլայ ազգի մը աչքին» (Ա. Չոպանյան), «...Սերունդը **պետք է** զգայ իր ապրած օրերը եւ **աշխատի**» (Ա. Ծառուկյան), «**Հոն պետք է տաներ** իր տուած թուղթը եւ յանձներ պանդոկապետին» (Շ. Շահնուր), «**Պետք է սպաննենք** այդ կիները» (Մուշեղ Իշխան), «**Պետք է** նաեւ **ընդունինք**, թէ մենք չենք կրնար արգիլել անոր բերելիք վնասը» (Ա. Անդրեասյան), «**Մարդ պետք է սիրահարի** մեր տոհմիկ ու գրական–մշակութային ապրումներուն, **պետք է մտնէ** անոնց մէջ» (Ռ. Հատտեճյան), «**Պետք է** առաջնահերթութիւնը տան լուրջ պրպտումի ու խոր վերլուծման գիտական–քննական մօտեցումով... Մեր ուսանողները **պետք է** յատուկ շահագրգռութիւն ու

նախանձախնդրություն **ցուցաբերեն** հայագիտական նիւթերուն նկատմամբ» («Հասկ») են:

Սփյուռքահայ գրավոր աղբյուրներում ապառնի ժամանակաձևի կազմության մեջ **պէտք է** եղանակիչի հաճախակի գործածությունը (հավանաբար արևելահայերենի ազդեցությամբ կամ նմանությամբ) խոսում է արևմտահայերենում քերականական այդ ձևի կանոնարկման մասին:

Այսպես՝

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
պիտի գրեմ	պիտի սորվիմ	պիտի կարդամ
պիտի գրես	պիտի սորվիս	պիտի կարդաս
պիտի գրէ	պիտի սորվի	պիտի կարդայ
պիտի գրենք	պիտի սորվինք	պիտի կարդանք
պիտի գրեք	պիտի սորվիք	պիտի կարդաք
պիտի գրեն	պիտի սորվին	պիտի կարդան

5. Անցյալի ապառնի

Կազմվում է սահմանական եղանակի անցյալ ժամանակից՝ **կը** մասնիկի փոխարեն **պիտի** (// **պէտք է**) եղանակիչը ավելացնելով: Այսպես՝

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
պիտի գրէի	պիտի սորվէի	պիտի կարդայի
պիտի գրէիր	պիտի սորվէիր	պիտի կարդայիր
պիտի գրէր	պիտի սորվէր	պիտի կարդար
պիտի գրէինք	պիտի սորվէինք	պիտի կարդայինք
պիտի գրէիք	պիտի սորվէիք	պիտի կարդայիք
պիտի գրէին	պիտի սորվէին	պիտի կարդային

Սահմանական եղանակի ապառնի ժամանակի ձևերը արևմտահայերենում ցույց են տալիս ոչ թե հարկադրական կամ անհրաժեշտական գործողություն (ինչպես արևելահայերենի հարկադրական եղանակի համապատասխան ձևերը), այլ խոսելու պահից հետո խոսողի տեսանկ-

յունից ստույգ, հաստատապես կատարվելիք գործողություն: Իմաստով դրանք նույնանում են արևելահայերենի սահմանական եղանակի ապառնիի վերլուծական կամ բաղադրյալ ձևերին (**սորվելու է, կարդալու է**), որոնք ցույց են տալիս գործողություն, որ ստույգ պետք է կատարվի խոսելու պահից հետո, օրինակ՝ «Չրաքեանի բառերը կը մնան իր գիրքին մէջ, ոչ ոք **պիտի մօտենար** (= մոտենալու էր) անոնց» (Դ. Օշական): Մի շարք դեպքերում, սակայն, դժվար է միանշանակ պնդել, թե նշված բայաձևերը չեն արտահայտում հարկադրական, անհրաժեշտական գործողություն, ինչպես, օրինակ, հետևյալ կիրառության մեջ. «Հայ ոգին, ես ինձի, նմանեցուցած եմ միշտ նաւաբեկութենէ մը ազատող Ռոպէնսոնին: Անիկա **պիտի գիտնայ** ինքզինքը պաշտպանել ու իր խրճիթը շինել զանազան բեկորներով» (Ա. Ծառուկյան):

Վերլուծական կամ բաղադրյալ ժամանակաձևեր. դրանք արևմտահայերենում չորսն են:

1. Վաղակատար ներկա

Կազմվում է վաղակատար դերբայով և եմ օժանդակ բայի ներկայի ձևերով: Այսպես՝

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
գրեր եմ	սորվեր եմ	կարդացեր եմ
գրեր ես	սորվեր ես	կարդացեր ես
գրեր է	սորվեր է	կարդացեր է
գրեր ենք	սորվեր ենք	կարդացեր ենք
գրեր էք	սորվեր էք	կարդացեր էք
գրեր են	սորվեր են	կարդացեր են

2. Վաղակատար անցյալ

Կազմվում է վաղակատար դերբայով և եմ օժանդակ բայի անցյալի ձևերով: Այսպես՝

Ե խոնարհում

գրեր էի

գրեր էիր

գրեր էր

գրեր էինք

գրեր էիք

գրեր էին

Ի խոնարհում

սորվեր էի

սորվեր էիր

սորվեր էր

սորվեր էինք

սորվեր էիք

սորվեր էին

Ա խոնարհում

կարդացեր էի

կարդացեր էիր

կարդացեր էր

կարդացեր էինք

կարդացեր էիք

կարդացեր էին

Այս ժամանակաձևերը իմաստային–կիրառական որևէ տարբերություն չունեն արևելահայերենից. ցույց են տալիս խոսելուց առաջ ենթակայի կատարած, ավարտած գործողությունը (վաղակատար ներկա) կամ գործողություն, որ կատարվել, ավարտվել է անցյալ որևէ ժամանակակետից առաջ (վաղակատար անցյալ): Նրբիմաստային հատկանիշ է նաև այն, որ, ինչպես արդեն ասվել է, վաղակատար ժամանակի բայաձևերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որին խոսողն ինքը ականատես չի եղել, այլ պատմում է կա՛մ ուրիշներից լսելով, կա՛մ հետևանքի մասին դատելով՝ ի տարբերություն անցյալ կատարյալի ձևերի, որոնք երկու գրականներում էլ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես է եղել (տես նաև 17, 317–318) և իբրև ականատես՝ ավելի մոտ է կանգնած գործողության կատարման ժամանակակետին:

Օրինակ՝ «Լուռ էք, զանգակներ՝, Աստուած է մեռեր» (Ռ. Սևակ), «Երբ Ղուկաս էֆենտի մտեր էր գրասենեակէն ներս, ամենքը փութացեր էին յարգանքով ոտքի ելլելու» (Ե. Օտյան), «Բայց մենք ալ ունեցեր ենք մեր կարծատեսութեան մեղքը: Մեր միամիտ գոռոզութիւնը կը մատնէ նաեւ նեղմտութիւն մը» (Ա. Ծառուկյան):

Արևմտահայերենը նույնպես ունի արևելահայերենի այն յուրահատկությունը, որ պայմանական երկրորդական նախադասություններում վաղակատարը կարող է արտահայտել նաև ապագայում կատարվող գործողության իմաստ, ինչպես՝ «Եթե նրան նեղացրել ես, է՛լ ինձ մոռացիր» / «Եթէ անոր նեղացուցեր ես, ա՛լ ինձի մոռցիր»:

3. Հարակատար ներկա

Հարակատար դերբայը արևմտահայերենում ժամանակաձևեր կազմում է, ի տարբերություն արևելահայերենի, նաև ներգործական սեռի բայերից՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ: Երկուսն էլ անցյալ ժամանակի ձևեր են:

Առաջինը կազմվում է հարակատար դերբայով և **եմ** օժանդակ բայի ներկայի ձևերով: Այսպես՝

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
գրած եմ	սորված եմ	կարդացած եմ
գրած ես	սորված ես	կարդացած ես
գրած է	սորված է	կարդացած է
գրած ենք	սորված ենք	կարդացած ենք
գրած էք	սորված էք	կարդացած էք
գրած են	սորված են	կարդացած են

4. Հարակատար անցյալ

Կազմվում է հարակատար դերբայով և **եմ** օժանդակ բայի անցյալի ձևերով: Այսպես՝

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
գրած էի	սորված էի	կարդացած էի
գրած էիր	սորված էիր	կարդացած էիր
գրած էր	սորված էր	կարդացած էր
գրած էինք	սորված էինք	կարդացած էինք
գրած էիք	սորված էիք	կարդացած էիք
գրած էին	սորված էին	կարդացած էին

Հարակատար ներկան ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն, որ իբրև վիճակ հարատևում է մինչև խոսելու պահը. «Միջազգային փառքը մեր երազն է **եղած** ամեն ատեն: Հի մեղադրուիր: ...Անարդարութիւններ **գործուած են** միշտ ու կը գործուին» (Ա. Ծառուկյան), «Մ. Պէ-

շիկթաշլեանի բանաստեղծութիւններէն ոմանք երգի վերածուած են, ինչպէս «Գարունը» որուն եղանակը **յօրինած է Տիգրան Չուխաճեան**, «Դու գով խնդրես»ը, որուն եղանակն ալ **յօրինած է օրիորդ Սրբուհի Վահանեան (Տիւսաբ)**, որ լաւ դաշնակահար եւ երաժիշտ էր»:

Հարակատար անցյալը ցույց է տալիս այնպիսի գործողութիւն, որ իբրեւ վիճակ հարատեսում է մինչև մի անցյալ ժամանակակետ. «Ինք կը ճանչնար բոլոր իմաստասէրները եւ բոլոր վարդապետութիւնները. մէկ քանին կարդացած էր» (Շ. Շահնուր):

Հարկադրական եղանակ

Այս եղանակի բայածները ցույց են տալիս հարկադրական կամ անհրաժեշտական գործողութիւն: Ինչպէս արդեն ասել ենք, դրանք կազմվում են ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով:

Հարկադրական եղանակն ունի երկու ժամանակածն՝ **ապառնի և անցյալի ապառնի**:

1. Հարկադրական ապառնի

Կազմվում է ապառնի դերբայով և **եմ** օժանդակ բայի ներկայի ձևերով:

Ե խոնարհում

գրելու եմ

գրելու ես

գրելու է

Ի խոնարհում

սորվելու եմ

սորվելու ես

սորվելու է

Ա խոնարհում

կարդալու եմ

կարդալու ես

կարդալու է

գրելու ենք

գրելու էք

գրելու են

սորվելու ենք

սորվելու էք

սորվելու են

կարդալու ենք

կարդալու էք

կարդալու են

2. Հարկադրական անցյալի ապառնի

Կազմվում է ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի անցյալի ձևերով:

Ե խոնարհում

գրելու էի
գրելու էիր
գրելու էր

Ի խոնարհում

սորվելու էի
սորվելու էիր
սորվելու էր

Ա խոնարհում

կարդալու էի
կարդալու էիր
կարդալու էր

գրելու էինք
գրելու էիք
գրելու էին

սորվելու էինք
սորվելու էիք
սորվելու էին

կարդալու էինք
կարդալու էիք
կարդալու էին

Հարկադրական ապառնին և անցյալի ապառնին, ինչպես նշվեց, արտահայտում են արևելահայերենի հարկադրական եղանակի ժամանակաձևերի իմաստ, այսպես՝ **ուներնալու է = պիտի ուներնա, ըլլալու է = պիտի լինի** ևն: Սակայն արևմտահայերենում դրանք շատ ավելի քիչ են գործածվում, քան արևելահայերենի հարկադրականի համապատասխան (**պիտի** եղանակիչով) կազմությունները:

Օրինակ՝ «...Ալ հիմա ինձի հետ շատերն ալ համոզուած են որ մեր գրաբարը հասարակաց լեզու չենք կրնար ընել, այլ փոխաբերել մեր աշխարհաբար լեզուն **զարգացնելու եւ տարածելու է**» (Ն. Ջորայան), «Ազգ մը... միշտ իր յոյսը է՛ն առաջ իր վրայ **դնելու է**: Այս ճշմարտութիւնը վե՛ճ իսկ չի վերցնէր» (Ա. Չոպանյան), «—Հասկցայ, ի՞նչպէս **հանել տալու եմ** ուրեմն պատկերս, որ տարակոյս չմնայ, որ պզտիկ մարդ չեմ...» (Յ. Պարոնյան),
կամ՝

«Բազմութեան մէջ հարցուցէ՛ք, թէ ինչ պէտք է մէկու մը, որ արժանի ըլլայ քահանայութեան:

— Փառաւոր մօրուք մը,— պիտի ըսեն շատերը:

— Բարոյականութիւնը կարեւորութիւն չունի, աղէկ ախորժակ **ունենալու է**:

— Ուսումնական **ըլլալու է**, որ շնորհքով քարոզ խօսի:

— Ի՞նչ կ'ըսես պէ, ուսումնական **ըլլայ** նէ, անհաւատ կ'ըլլայ. տգէտ **ըլլալու է**, որ ճշմարիտ հաւատացեալ **ըլլայ...**» (Ե. Օտյան):

Դրամայական եղանակ

Արևմտահայերենում նույնպես հրամայական եղանակը ունի մեկ ժամանակ. ցույց է տալիս գործողություն, որի կատարումը հաջորդելու է խոսելու պահին, ունի մեկ դեմք. ցույց է տալիս խոսակցի կատարելի գործողություն, բոլոր դիմավոր ձևերի նման ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Եզակի հրամայականի վերջավորությունները չորս տեսակ են՝ **իր, ա, է, ուր** ի տարբերություն արևելահայերենի երեք տեսակ վերջավորությունների **իր, ա, ու**:

Ե և **ի** խոնարհման աններածանց, կրավորական և բազմապատկական բայերը եզակի հրամայականը կազմում են ներկայի հիմքից **է** վերջավորությամբ: **Ե** խոնարհման աններածանց բայերում հնչյունափոխական պարզ երևույթի արդյունքում սկսված իրողությունը (**գրե՛ա> գրե՛եա>է**) արդեն ուշ միջնադարում տարածվում է նաև **ի** խոնարհման աններածանց բայերի վրա՝ դուրս մղելով գրաբարածն **եաց** վերջավորությունը (**խորհիմ–խորհեա՛ց>խորհեա՛յ>խորհե՛**): Այսպես՝ **Ե** խոնարհում՝ **գրե՛, կտրե՛, կտրտե՛** (մանրել, ջարդել), **երգե՛, ազդե՛, ի** խոնարհում՝ **սորվե՛, ժպտե՛, վազե՛, գրուե՛, կտրտե՛** (մորմոքել, կսկծալ) ևն:

Ա խոնարհման աններածանց բայերի եզակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից **ա** վերջավորությամբ՝ **կարդա՛, գնա՛, խաղա՛**:

Ն, չ, ան, են սոսկածանց ունեցող բայերի հրամայականը կազմվում է անցյալի հիմքից **իր** վերջավորությամբ՝ **թռի՛ր, փախի՛ր, գտի՛ր, խոստացի՛ր, հասի՛ր, մոռցի՛ր, մօտեցի՛ր**:

Պատճառական բայերի եզակի հրամայականը կազմվում է **ուր** վերջավորությամբ, որ ավելանում է հիմքի **ցն** մասնիկի **ն–ի** տեղում՝ վերցնել – **վերցո՛ւր**, հարցնել – **հարցո՛ւր**, իջեցնել – **իջեցո՛ւր**:

Վաղ միջնադարի մատենագրության մեջ պատճառական բայերի եզակի հրամայականի գրաբարյան ո՛վ վերջավորությամբ ձևերին (**ուրախացո՛, անուշացո՛, աճեցո՛**) զուգահեռ հանդես են գալիս նաև ո՛ւր վերջավորությամբ նորակազմ ձևեր (**կակղացո՛ւր, կերցո՛ւր**. «Ապա թե բնութիւնն խիստ կակուղ լինի... զստամոքսն **գօրացո՛ւր** նռան ջրով», տես **7, 339**): Դրանք փոխանցվեցին գրական արևմտահայերենին:

Արևելահայերենում պատճառական բայերի եզակի հրամայականի ձևերում առկա է անցյալի հիմքի ր մասնիկի և ու վերջավորության դրափոխություն **հասո՛ւ – հասցո՛ւր–** (// հասցո՛ւ) – **հասցո՛րու**:

Հոգնակի հրամայականը բայակազմական բոլոր տիպերի դեպքում կազմվում է անցյալի հիմքից **էք** վերջավորությամբ՝ **գրել – գրեցէ՛ք**, սորվիլ – **սորվեցէ՛ք**, կարդալ – **կարդացէ՛ք**, թռչիլ – **թռէ՛ք**, դաչիլ – **դաչէ՛ք**, մտնել – **մտէ՛ք**, մօտենալ – **մօտեցէ՛ք**, գրուիլ – **գրուեցէ՛ք**, մոռնալ – **մոռցէ՛ք**, մոռցնել – **մոռցուցէ՛ք**, կարդացնել – **կարդացուցէ՛ք**, ջարդոտել – **ջարդոտեցէ՛ք**:

Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **ե** (նաև **ի**) խոնարհման աններառմանց բայերը հոգնակի թվում չունեն ներկայի և անցյալի հիմքերից կազմվող խոսակցական և գրական զուգահեռ ձևեր (**գրէ՛ք // գրեցէ՛ք**): Դրանց հոգնակի հրամայականը կազմվում է միայն ցոյական հիմքից՝ **գրեցէ՛ք**, **նկարեցէ՛ք**, **խօսեցէ՛ք** **ևն**: **Օրինակ՝** «Հոգի-իս հազար խուլ զանգակներով Գոռացէ՛ք, զանգեր, ու կատաղօրէն **Քա-հավիժեցէ՛ք** ձեր երկաթ թառէն, Ուրկէ միայն լալ գիտցաք դարերով...» (Ռ. Սևակ), «**Նստեցէ՛ք** ու **վայելեցէ՛ք**, դուք, որ կռուողներն էք կեանքի մեծ կռուին մէջ» (Լ. Շանթ):

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հրաման որևէ գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ: Դա սովորաբար արտահայտվում է հրամանի ձևով: Այս եղանակի բայերը երկրորդաբար կարող են արտահայտել նաև խնդրանք, հորդոր, կարգադրություն: Դա կախված է արտալեզվական գործոններից՝ խոսողների փոխհարաբերությունը, խոսքի կառուցվածքը **ևն**: Հրամայականին բնորոշ հատուկ հնչերանգը զրավոր խոսքում արտահայտվում է կետադրությամբ. սովորաբար հրամայականի ձևերի վրա դրվում է շեշտ: (Մեղմ հրամանի դեպքում շեշտը կարող է չդրվել):

Օրինակ՝ «**Տեսէ՛ք**, ի՛նչ կըսէ», «**Հարցուցէ՛ք** այդ բանաստեղծի ուրուականին, թե ինչո՞ւ գրած է իր քերթուածները» (Յ. Օշական), կամ՝

Շրջանն ըրէ մարմանդներուն ու ծաղկածին հովիտներուն
անցիր տըմոյն ըստուերներու մէջ աղօթող անտառներէն,

գօտի **հիւսէ** շուրջ ալեւոր քարշիպներուն ու գալարուն
գետին վրայ որ կը վազէ հըռընդալէն ու հեւալէն:

Անցիր փաղփուն հիւսիսայգէն բորբ աչքերու շամանդաղին,
մինչեւ Եդեմն արտոսրագօծ կանացի բոց հոգիներուն,
ըսէ կրակոտ նայուածքներուն թէ մանուկն եմ իրենց խաղին
ու տար անոնց դողն ըստուերոտ պաղատանքիս իմ մոլորուն:
(Ս. Մեծարենց)

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ (ԲԱՂԱԴՐՅԱԼ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ցույց են տալիս խոսելու պահին գլխավոր ժամանակների նկատմամբ համընկնող, նախորդող, հաջորդող գործողություն:

Արևելահայերենում սրանք կազմվում են համընթացական (–իս), հարակատար (–ած), ապառնի (–ու) դերբայներով և **լինել** բայի խոնարհված ձևերով: Համընթացականով ձևերը ցույց են տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը համընկնում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը՝ **աշխատելիս է լինում, աշխատելիս կլինի** ևն (համընկնող ժամանակաձևեր), հարակատարով ձևերը ցույց են տալիս նախորդող գործողություն՝ **աշխատած է լինում, աշխատած կլինի** ևն (նախորդող ժամանակաձևեր), ապառնիով ձևերը՝ հաջորդող գործողություն՝ **աշխատելու է լինելու, աշխատելու կլինի** ևն (հաջորդող ժամանակաձևեր): Այստեղից էլ դրանց անվանումները՝ **համընկնող ներկա**՝ գնալիս եմ լինում, **համընկնող անցյալ**՝ գնալիս էի լինում, **հաջորդող ներկա**՝ գնալու եմ լինում, **նախորդող ներկա**՝ գնացած եմ լինում ևն:

Արևելահայերենում գլխավոր ժամանակների 14 ձևերի դիմաց կան 42 երկրորդական վերլուծական ժամանակաձևեր ($14 \times 3 = 42$), թեև դրանց մեծ մասը սակավ գործածական է:

Արևմտահայերենում երկրորդական վերլուծական ժամանակաձևերի կազմության սկզբունքները նույնն են՝ **դերբայ + ըլլալ** օժանդակ բայի խոնարհված ձևեր: Տարբերություններ կան որոշակի ժամանակաձևերի կազմության և քանակի մեջ: Այստեղ քանի որ բացակայում

է համընթացականը, ուստի երկրորդական վերլուծական ժամանակաձևեր են կազմվում միայն հարակատար և ապառնի դերքայներով ցույց տալով հաջորդող և նախորդող գործողություններ: Այլ կերպ ասած եթե յուրաքանչյուր գլխավոր ժամանակային ձև արևելահայերենում ունի իրեն համապատասխան երկրորդական վերլուծական ժամանակային երեք ձևեր, ապա արևմտահայերենում դրանք երկուսն են **կը գրեն** – գրած կ'ըլլամ, գրելու կ'ըլլամ, **կը գրեի** – գրած կ'լլայի, գրելու կ'ըլլայի, **գրեր են** – գրած են եղեր, գրելու են եղեր, **գրեր էի** – գրած էի եղեր, գրելու էի եղեր ևն:

Ավելացնենք նաև, որ նշված կազմությունները արևմտահայերենում թեև քիչ են գործածվում, սակայն արևելահայերենի համեմատությամբ (որտեղ դրանք առավելապես դիտվում են որպես խոսակցական ձևեր), շատ ավելի գործուն են, մասնավաճող հարակատարով կազմությունները:

Օրինակ՝ «...Որպեսզի ծիուն տերը չելնէ իրեն ըսէ թէ՛ իմ ծիուն հարուածած անծին դուք պաշտպանութիւն **ըրած էք եղեր**, և ասիկա իմ ծիուն անպատուութիւն կը բերէ», «Անառակ կիճն մաքուր աղանի **պիտի դարձած ըլլար**, որովհետեւ նրբացուցիչ դէպք հանցանաց ունի եղեր, ...որովհետեւ չար նպատակով **սիրած չէ եղեր**, այլ բարի նպատակով **սիրած է եղեր**, որովհետեւ...» (Յ. Պարոնյան), «Աճնիկ պատասխանեց բարեկամիս. կարծեմ թէ տեղ մը **տեսած ըլլալու են էֆենտին**» (Գ. Ջոհրայ), «Վարդան զարմացաւ պահ մը. միգուցէ սխալ տեղ **մտած ըլլային**» (Համաստեղ), «Այս պատասխանը կարեւոր **գտած ըլլալու է**» («Հասկ»):

Արևմտահայ խոսակցականին բնորոշ է **եղեր** դերքայական ձևով վերլուծական երկրորդական ժամանակաձևի լրացուցիչ իմաստային առումը: Այն արտահայտում է մեկ ուրիշի՝ երրորդ անձի կողմից ասված, պատմված գործողության իմաստ, որով դրսևորվում է անվստահություն, կասկած ասվածի նկատմամբ կամ նույնիսկ հեզմանք ու ծաղր (տես **38, 150–152**), ինչպես՝ «Ցատկող լուրերուն նայելով՝ դեսպանաժողովը Վիեննա **պիտի տեղափոխուի եղեր** եւ հոն **պիտի ընէ եղեր** իւր նիստերը...», «Տէր ողորմեա՛, ըսաւ ինքնիրեն Աբիսողոմ աղա. **քաշելիք ունինք եղեր...**» (Յ. Պարոնյան), «Իբրեւ թէ ամէն օր և օրն ի բուն ջուր կը վազցնէ, տախտակ կը շփէ և բան **կը թօթուէ եղեր**» (Շ. Շահնուր), «Գիրքերն ու տետրակները ի՞նք եւ Շ. Շահնուրը **պատռեր են եղեր**», «Բրինձ, ոսպ,

սիսեռ եւ ծաւար ուտելու չենք եղեր», «Ալիսը տեսեր է կին մը, որ մէկ ձեռքը գաւազան մը ունի եղեր եւ միւս ձեռքը՝ հովանոց մը» (ՁՄ), «Ձահրատ կը նկարէ եղեր» («Մարմարա») նմ:

Նշված ձևերը (եղեր–ով) գրական արևմտահայերենում գործածական չեն:

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

ԱՆՆԵՐԱԾԱՆՑ (ՊԱՐԶ) ԲԱՅԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՅՈՒՄԸ

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
Ըղծական եղանակ		
Ըղծական ապառնի		
գրեմ	սորվիմ	կարդամ
գրես	սորվիս	կարդաս
գրէ	սորվի	կարդայ
գրենք	սորվինք	կարդանք
գրէք	սորվիք	կարդաք
գրեն	սորվին	կարդան

Ըղծական անցյալի ապառնի

գրէի	սորվէի	կարդայի
գրէիր	սորվէիր	կարդայիր
գրէր	սորվէր	կարդար
գրէինք	սորվէինք	կարդայինք
գրէիք	սորվէիք	կարդայիք
գրէին	սորվէին	կարդային

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

կը գրեմ

կը գրես

կը գրէ

կը սորվիմ

կը սորվիս

կը սորվի

կը կարդամ

կը կարդաս

կը կարդայ

կը գրեմք

կը գրեք

կը գրեն

կը սորվինք

կը սորվիք

կը սորվին

կը կարդանք

կը կարդաք

կը կարդան

Անկատար անցյալ

կը գրէի

կը գրէիր

վը գրէր

կը սորվէի

կը սորվէիր

վը սորվէր

կը կարդայի

կը կարդայիր

վը կարդար

կը գրէինք

կը գրէիք

կը գրէին

կը սորվէինք

կը սորվէիք

կը սորվէին

կը կարդայինք

կը կարդայիք

կը կարդային

Անցյալ կատարյալ

գրեցի

գրեցիր

գրեց

սորվեցայ

սորվեցար

սորվեցաւ

կարդացի

կարդացիր

կարդաց

գրեցինք

գրեցիք

գրեցին

սորվեցանք

սորվեցաք

սորվեցան

կարդացինք

կարդացիք

կարդացին

Ապառնի

պիտի գրեն
պիտի գրես
պիտի գրէ

պիտի սորվիմ
պիտի սորվիս
պիտի սորվի

պիտի կարդամ
պիտի կարդաս
պիտի կարդայ

պիտի գրենք
պիտի գրէք
պիտի գրեն

պիտի սորվինք
պիտի սորվիք
պիտի սորվին

պիտի կարդանք
պիտի կարդաք
պիտի կարդան

Անցյալի ապառնի

պիտի գրէի
պիտի գրէիր
պիտի գրէր

պիտի սորվէի
պիտի սորվէիր
պիտի սորվէր

պիտի կարդայի
պիտի կարդայիր
պիտի կարդար

պիտի գրէինք
պիտի գրէիք
պիտի գրէին

պիտի սորվէինք
պիտի սորվէիք
պիտի սորվէին

պիտի կարդայինք
պիտի կարդայիք
պիտի կարդային

Վաղակատար ներկա

գրեր եմ
գրեր ես
գրեր է

սորվեր եմ
սորվեր ես
սորվեր է

կարդացեր եմ
կարդացեր ես
կարդացեր է

գրեր ենք
գրեր էք
գրեր են

սորվեր ենք
սորվեր էք
սորվեր են

կարդացեր ենք
կարդացեր էք
կարդացեր են

Վաղակատար անցյալ

գրեր էի	սորվեր էի	կարդացեր էի
գրեր էիր	սորվեր էիր	կարդացեր էիր
գրեր էր	սորվեր էր	կարդացեր էր
գրեր էինք	սորվեր էինք	կարդացեր էինք
գրեր էիք	սորվեր էիք	կարդացեր էիք
գրեր էին	սորվեր էին	կարդացեր էին

Ֆարակատար ներկա

գրած եմ	սորված եմ	կարդացած եմ
գրած ես	սորված ես	կարդացած ես
գրած է	սորված է	կարդացած է
գրած ենք	սորված ենք	կարդացած ենք
գրած էք	սորված էք	կարդացած էք
գրած են	սորված են	կարդացած են

Ֆարակատար անցյալ

գրած էի	սորված էի	կարդացած էի
գրած էիր	սորված էիր	կարդացած էիր
գրած էր	սորված էր	կարդացած էր
գրած էինք	սորված էինք	կարդացած էինք
գրած էիք	սորված էիք	կարդացած էիք
գրած էին	սորված էին	կարդացած էին

Հարկադրական եղանակ

Հարկադրական ապառնի

գրելու	եմ	սորվելու	եմ	կարդալու	եմ
գրելու	ես	սորվելու	ես	կարդալու	ես
գրելու	է	սորվելու	է	կարդալու	է
գրելու	ենք	սորվելու	ենք	կարդալու	ենք
գրելու	էք	սորվելու	էք	կարդալու	էք
գրելու	են	սորվելու	են	կարդալու	են

Հարկադրական անցյալի ապառնի

գրելու	էի	սորվելու	էի	կարդալու	էի
գրելու	էիր	սորվելու	էիր	կարդալու	էիր
գրելու	էր	սորվելու	էր	կարդալու	էր
գրելու	էինք	սորվելու	էինք	կարդալու	էինք
գրելու	էիք	սորվելու	էիք	կարդալու	էիք
գրելու	էին	սորվելու	էին	կարդալու	էին

Հրամայական եղանակ

գրէ՛	սորվէ՛	կարդա՛
գրեցէ՛ք	սորվեցէ՛ք	կարդացէ՛ք

Համառոտության համար բերենք երկրորդական վերլուծական ժամանակաձևերի միայն եզակի առաջին դեմքի (բացառությամբ հրամայականի) օրինակներ:

Հարակատարով կազմություններ (ցույց են տալիս նախորդող գործողություն)՝ ըղծական ապառնի՝ **գրած ըլլամ**, ըղծական անցյալի ապառնի՝ **գրած ըլլայի**, անկատար ներկա՝ **գրած կ'ըլլամ**, անկատար անցյալ՝ **գրած կ'ըլլայի**, անցյալ կատարյալ՝ **գրած եղայ**, վաղակատար ներկա՝ **գրած եմ եղեր**, վաղակատար անցյալ՝ **գրած էի եղեր**,

հարակատար ներկա՝ գրած եղած են, հարակատար անցյալ՝ գրած եղած էի, ապառնի՝ գրած պիտի ըլլամ, անցյալի ապառնի՝ գրած պիտի ըլլայի, հարկադրական ապառնի՝ գրած ըլլալու են, հարկադրական անցյալի ապառնի՝ գրած ըլլալու էի, հրամայական եղանակ՝ գրա՛ծ եղիր, գրա՛ծ եղէք են:

Ապառնի դերբայով կազմութիւններ (ցույց են տալիս հաջորդող գործողութիւն)՝ ըղծական ապառնի՝ գրեւու ըլլամ, ըղծական անցյալի ապառնի՝ գրեւու ըլլայի, անկատար ներկա՝ գրեւու կ'ըլլամ, անկատար անցյալ՝ գրեւու կ'ըլլայի, անցյալ կատարյալ՝ գրեւու եղայ, վաղակատար ներկա՝ գրեւու են եղեր, վաղակատար անցյալ՝ գրեւու էի եղեր, հարակատար ներկա՝ գրեւու եղած են, հարակատար անցյալ՝ գրեւու եղած էի, ապառնի՝ գրեւու պիտի ըլլամ, անցյալի ապառնի՝ գրեւու պիտի ըլլայի, հարկադրական ապառնի՝ գրեւու ըլլալու են, հարկադրական անցյալի ապառնի՝ գրեւու ըլլալու էի, հրամայական եղանակ՝ գրելո՛ւ եղիր, գրելո՛ւ եղէք են:

ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Արևմտահայերենում ևս սոսկածանցավոր բայերը պատկանում են տարբեր լծորդութիւնների՝ **հագնել**, **հատնիլ**, **փախչիլ**, **զայրանալ**, **յագենալ**: Արևելահայերենի համեմատությամբ՝ կազմության սկզբունքները նույնն են: Արևմտահայերենում ե խոնարհման Գ և Ի խոնարհման Գ, չ ածանց ունեցող բայերի (արևելահայերենում ե խոնարհման Գ, չ ածանց ունեցող բայերի) անցյալի հիմքը արմատական է: ԱԳ, ԵԳ, Գ սոսկածանց ունեցող բայերի (արևելահայերենում՝ աԳ, ԵԳ սոսկածանց ունեցող բայերի) անցյալի հիմքը ցոյական է:

Ներկայի հիմքից կազմվում են Գ, չ սոսկածանց ունեցող բայերի ենթակայական դերբայը (մտնել–**մտնող**, փախչիլ–**փախչող**, հասնիլ–**հասնող**), բոլոր սոսկածանցավոր բայերի ըղծական և հարկադրական եղանակի ձևերը, հասկանալի է, ցան սահմանականի անկատար ներկա և անցյալ, ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը:

Անցյալի հիմքից կազմվում են բոլոր սոսկածանցավոր բայերի վաղակատար (**գտեր**, **հագեր**, **հատեր**, **փախեր**, **բարձրացեր**, **մերձեցեր**),

հարակատար (**գտած, հագած, հասած, փախած, բարձրացած, մերժեցած**) դերբայները, անցյալ կատարյալը, հրամայական եղանակի ձևերը և ա խոնարհման ան, են և ն սոսկածանց ունեցող բայերի ենթակայական դերբայը՝ **բարձրացող, մերժեցող, գիտցող**:

Դերբայական հիմքից կազմվում են բոլոր սոսկածանցավոր բայերի ապառնի՝ **գտնելու, փախչելու, բարձրանալու, մերժենալու**, և ընթացակցական՝ **գտնելեն, փախչելեն, բարձրանալեն, մերժենալեն** դերբայները:

Արևմտահայերենում ձևակազմական որոշակի յուրահատկություն է դրսևորում ժխտական դերբայը. կազմվում է դերբայական հիմքից (լ–ն փոխվում է ր–ի)՝ **գտներ, փախչեր // փախչիր, բարձրանար, մերժենար**:

Սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալի վերջավորություններն են՝ **այ, ար, աւ, անք, աք, ան**: Հրամայականի եզակին կազմվում է իր վերջավորությամբ, որ դրվում է կատարյալի հիմքի վրա:

ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Դերբայներ

Անոր.	գտնել	հասնիլ	փախչիլ
Հար.	գտած	հասած	փախած
Ընթաց.	գտնելեն	հասնելեն	փախչելեն
Ժխտ.	գտներ	հասներ // հասնիր	փախչեր // փախչիր
Ապ.	գտնելու	հասնելու	փախչելու
Վաղ.	գտեր	հասեր	փախեր
Ենթ.	գտմող	հասմող	փախչող

Անոր.	մոռնալ	մօտենալ	զարմանալ
Հար.	մոռցած	մօտեցած	զարմացած
Ընթաց.	մոռնալեն	մօտենալեն	զարմանալեն
Ժխտ.	մոռնար	մօտենար	զարմանար
Ապ.	մոռնալու	մօտենալու	զարմանալու
Վաղ.	մոռցեր	մօտեցեր	զարմացեր
Ենթ.	մոռցող	մօտեցող	զարմացող

Ըղծական եղանակ

Ըղծական ապառոնի

գտնեմ	հասնիմ	փախչիմ	մոռնամ	մօտենամ	զարմանամ
գտնես	հասնիս	փախչիս	մոռնաս	մօտենաս	զարմանաս
գտնէ	հասնի	փախչի	մոռնայ	մօտենայ	զարմանայ
գտնենք	հասնինք	փախչինք	մոռնանք	մօտենանք	զարմանանք
գտնէք	հասնիք	փախչիք	մոռնաք	մօտենաք	զարմանաք
գտնեն	հասնին	փախչին	մոռնան	մօտենան	զարմանան

Ըղծական անցյալի ապառոնի

գտնէի	հասնէի	փախչէի	մոռնայի
գտնէիր	հասնէիր	փախչէիր	մոռնայիր
գտնէր	հասնէր	փախչէր	մոռնար
գտնէինք	հասնէինք	փախչէինք	մոռնայինք
գտնէիք	հասնէիք	փախչէիք	մոռնայիք
գտնէին	հասնէին	փախչէին	մոռնային

Սահմանական եղանակ

Ըղծական անցյալի ապառոնի Անկատար ներկա

մօտենայի	զարմանայի	կը գտնեմ	կը հասնիմ	կը փախչիմ
մօտենայիր	զարմանայիր	կը գտնես	կը հասնիս	կը փախչիս
մօտենար	զարմանար	կը գտնէ	կը հասնի	կը փախչի
մօտենայինք	զարմանայինք	կը գտնենք	կը հասնինք	կը փախչինք
մօտենայիք	զարմանայիք	կը գտնէք	կը հասնիք	կը փախչիք
մօտենային	զարմանային	կը գտնեն	կը հասնին	կը փախչին

Սահմանական եղանակ
Անկատար ներկա

կը մոռնամ	կը մօտենամ	կը զարմանամ
կը մոռնաս	կը մօտենաս	կը զարմանաս
կը մոռնայ	կը մօտենայ	կը զարմանայ
կը մոռնանք	կը մօտենանք	կը զարմանանք
կը մոռնաք	կը մօտենաք	կը զարմանաք
կը մոռնան	կը մօտենան	կը զարմանան

Անկատար անցյալ

կը գտնեի	կը հասնեի	կը փախչեի
կը գտնեիր	կը հասնեիր	կը փախչեիր
կը գտներ	կը հասներ	կը փախչեր
կը գտնեինք	կը հասնեինք	կը փախչեինք
կը գտնեիք	կը հասնեիք	կը փախչեիք
կը գտնեին	կը հասնեին	կը փախչեին
կը մոռնայի	կը մօտենայի	կը զարմանայի
կը մոռնայիր	կը մօտենայիր	կը զարմանայիր
կը մոռնար	կը մօտենար	կը զարմանար
կը մոռնայինք	կը մօտենայինք	կը զարմանայինք
կը մոռնայիք	կը մօտենայիք	կը զարմանայիք
կը մոռնային	կը մօտենային	կը զարմանային

Անցյալ կատարյալ

գտայ	հասայ	փախայ	մոռցայ	մօտեցայ	զարմացայ
գտար	հասար	փախար	մոռցար	մօտեցար	զարմացար
գտաւ	հասաւ	փախաւ	մոռցաւ	մօտեցաւ	զարմացաւ
գտանք	հասանք	փախանք	մոռցանք	մօտեցանք	զարմացանք
գտաք	հասաք	փախաք	մոռցաք	մօտեցաք	զարմացաք
գտան	հասան	փախան	մոռցան	մօտեցան	զարմացան

Ապառնի

պիտի գտնեմ	պիտի հասնիմ	պիտի փախչիմ
պիտի գտնես	պիտի հասնիս	պիտի փախչիս
պիտի գտնե	պիտի հասնի	պիտի փախչի
պիտի գտնենք	պիտի հասնինք	պիտի փախչինք
պիտի գտնեք	պիտի հասնիք	պիտի փախչիք
պիտի գտնեն	պիտի հասնին	պիտի փախչին
պիտի մոռնամ	պիտի մօտենամ	պիտի զարմանամ
պիտի մոռնաս	պիտի մօտենաս	պիտի զարմանաս
պիտի մոռնայ	պիտի մօտենայ	պիտի զարմանայ
պիտի մոռնանք	պիտի մօտենանք	պիտի զարմանանք
պիտի մոռնաք	պիտի մօտենաք	պիտի զարմանաք
պիտի մոռնան	պիտի մօտենան	պիտի զարմանան

Անցյալի ապառնի

պիտի գտնեի	պիտի հասնեի	պիտի փախչեի
պիտի գտնեիր	պիտի հասնեիր	պիտի փախչեիր
պիտի գտներ	պիտի հասներ	պիտի փախչեր
պիտի գտնեինք	պիտի հասնեինք	պիտի փախչեինք
պիտի գտնեիք	պիտի հասնեիք	պիտի փախչեիք
պիտի գտնեին	պիտի հասնեին	պիտի փախչեին

պիտի մոռնայի
պիտի մոռնայի
պիտի մոռնար

պիտի մօտենայի
պիտի մօտենայի
պիտի մօտենար

պիտի զարմանայի
պիտի զարմանայի
պիտի զարմանար

պիտի մոռնայինք
պիտի մոռնայիք
պիտի մոռնային

պիտի մօտենայինք
պիտի մօտենայիք
պիտի մօտենային

պիտի զարմանայինք
պիտի զարմանայիք
պիտի զարմանային

Վաղակատար ներկա

գտեր եմ
գտեր ես
գտեր է

հասեր եմ
հասեր ես
հասեր է

փախեր եմ
փախեր ես
փախեր է

գտեր ենք
գտեր էք
գտեր են

հասեր ենք
հասեր էք
հասեր են

փախեր ենք
փախեր էք
փախեր են

մոռցեր եմ
մոռցեր ես
մոռցեր է

մօտեցեր եմ
մօտեցեր ես
մօտեցեր է

զարմացեր եմ
զարմացեր ես
զարմացեր է

մոռցեր ենք
մոռցեր էք
մոռցեր են

մօտեցեր ենք
մօտեցեր էք
մօտեցեր են

զարմացեր ենք
զարմացեր էք
զարմացեր են

Վաղակատար անցյալ

գտեր էի
գտեր էիր
գտեր էր

հասեր էի
հասեր էիր
հասեր էր

փախեր էի
փախեր էիր
փախեր էր

գտեր էինք
գտեր էիք
գտեր էին

հասեր էինք
հասեր էիք
հասեր էին

փախեր էինք
փախեր էիք
փախեր էին

մոռցեր էի
մոռցեր էիր
մոռցեր էր

մօտեցեր էի
մօտեցեր էիր
մօտեցեր էր

զարմացեր էի
զարմացեր էիր
զարմացեր էր

մոռցեր էինք
մոռցեր էիք
մոռցեր էին

մօտեցեր էինք
մօտեցեր էիք
մօտեցեր էին

զարմացեր էինք
զարմացեր էիք
զարմացեր էին

Հարակատար ներկա

գտած եմ
գտած ես
գտած է

հասած եմ
հասած ես
հասած է

փախած եմ
փախած ես
փախած է

գտած ենք
գտած էք
գտած են

հասած ենք
հասած էք
հասած են

փախած ենք
փախած էք
փախած են

մոռցած եմ
մոռցած ես
մոռցած է

մօտեցած եմ
մօտեցած ես
մօտեցած է

զարմացած եմ
զարմացած ես
զարմացած է

մոռցած ենք
մոռցած էք
մոռցած են

մօտեցած ենք
մօտեցած էք
մօտեցած են

զարմացած ենք
զարմացած էք
զարմացած են

Հարակատար անցյալ

գտած էի
գտած էիր
գտած էր

հասած էի
հասած էիր
հասած էր

փախած էի
փախած էիր
փախած էր

գտած էինք
գտած էիք
գտած էին

հասած էինք
հասած էիք
հասած էին

փախած էինք
փախած էիք
փախած էին

մոռցած էի	մօտեցած էի	զարմացած էի
մոռցած էիր	մօտեցած էիր	զարմացած էիր
մոռցած էր	մօտեցած էր	զարմացած էր
մոռցած էինք	մօտեցած էինք	զարմացած էինք
մոռցած էիք	մօտեցած էիք	զարմացած էիք
մոռցած էին	մօտեցած էին	զարմացած էին

Հարկադրական եղանակ

Հարկադրական ապառոնի

գտնելու եմ	հասնելու եմ	փախչելու եմ
գտնելու ես	հասնելու ես	փախչելու ես
գտնելու է	հասնելու է	փախչելու է
գտնելու ենք	հասնելու ենք	փախչելու ենք
գտնելու էք	հասնելու էք	փախչելու էք
գտնելու են	հասնելու են	փախչելու են
մոռնալու եմ	մօտենալու եմ	զարմանալու եմ
մոռնալու ես	մօտենալու ես	զարմանալու ես
մոռնալու է	մօտենալու է	զարմանալու է
մոռնալու ենք	մօտենալու ենք	զարմանալու ենք
մոռնալու էք	մօտենալու էք	զարմանալու էք
մոռնալու են	մօտենալու են	զարմանալու են

Հարկադրական անցյալի ապառոնի

գտնելու էի	հասնելու էի	փախչելու էի
գտնելու էիր	հասնելու էիր	փախչելու էիր
գտնելու էր	հասնելու էր	փախչելու էր
գտնելու էինք	հասնելու էինք	փախչելու էինք
գտնելու էիք	հասնելու էիք	փախչելու էիք
գտնելու էին	հասնելու էին	փախչելու էին

մոռնալու էի	մօտենալու էի	զարմանալու էի
մոռնալու էիր	մօտենալու էիր	զարմանալու էիր
մոռնալու էր	մօտենալու էր	զարմանալու էր
մոռնալու էինք	մօտենալու էինք	զարմանալու էինք
մոռնալու էիք	մօտենալու էիք	զարմանալու էիք
մոռնալու էին	մօտենալու էին	զարմանալու էին

Հրամայական եղանակ

գտի՛ր	հասի՛ր	փախի՛ր	մոռցի՛ր	մօտեցի՛ր	զարմացի՛ր
գտե՛ք	հասե՛ք	փախե՛ք	մոռցե՛ք	մօտեցե՛ք	զարմացե՛ք

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՅՈՒՄԸ

Պատճառական բայերը հայոց լեզվի երկու տարբերակներում էլ պատկանում են Ե լծորդության և իրենց խոնարհման հատկանիշներով ընդհանուր առմամբ նման են Ե լծորդության բայերի խոնարհմանը:

Անցյալի հիմքը արևելահայերենում **րեական** է և կազմվում է **ն / ր** հերթագայությամբ (զարմացնել – զարմացն / զարմացր, խոսեցնել – խոսեցն / խոսեցր), իսկ արևմտահայերենում ցոյական է և կազմվում է **ն / ուց** հերթագայությամբ (զարմացնել – զարմացն / զարմացուց, խօսցնել – խօսցն / խօսցուց): Անցյալ կատարյալն ստանում է **ի, իր, ուց** (արևել.՝ **եց**), **ինք, իք, ին** վերջավորությունները:

Երկու գրականներում սկզբունքային տարբերություններ չկան նաև պատճառական բայերի դերբայական հիմքերի կազմության մեջ:

Ներկայի հիմքից կազմվում են ենթակայական դերբայը (**զարմացնող**) ըղծական եղանակը և դրանից բաղադրվող կազմությունները:

Անցյալի հիմքից կազմվում են վաղակատար (**զարմացուցեր**), հարակատար (**զարմացուցած**) դերբայները, անցյալ կատարյալը, հրամայական եղանակը: Հրամայական եզակին կազմվում է **ուր** վերջավորությամբ:

Դերբայական հիմքից կազմվում են ընթացակցական (**զարմացնելեն**), ապառմի (**զարմացնելու**) և ժխտական (**լ>ր**) (**զարմացներ**) դերբայները:

Դերբայներ

Անորոշ՝	մօտեցնել
Ապառնի՝	մօտեցնելու
Վաղակատար՝	մօտեցուցեր
Հարակատար՝	մօտեցուցած
Ենթակայական՝	մօտեցնող
Ընթացակցական՝	մօտեցնելէն
Ժխտական՝	մօտեցներ

Ըղծական եղանակ

Ըղծական ապառնի

Ըղծական անցյալի ապառնի

մօտեցնեմ	մօտեցնենք	մօտեցնէի	մօտեցնէինք
մօտեցնես	մօտեցնեք	մօտեցնէիր	մօտեցնէիրք
մօտեցնէ	մօտեցնեն	մօտեցնէր	մօտեցնէին

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

Անկատար անցյալ

Անցյալ կատարյալ

կը մօտեցնեմ	կը մօտեցնէի	մօտեցուցի
կը մօտեցնես	կը մօտեցնէիր	մօտեցուցիր
կը մօտեցնէ	կը մօտեցնէր	մօտեցուց
կը մօտեցնենք	կը մօտեցնէինք	մօտեցուցինք
կը մօտեցնեք	կը մօտեցնէիրք	մօտեցուցիրք
կը մօտեցնեն	կը մօտեցնէին	մօտեցուցին

Ապառնի

Անցյալի ապառնի

պիտի մօտեցնեմ	պիտի մօտեցնէի
պիտի մօտեցնես	պիտի մօտեցնէիր
պիտի մօտեցնէ	պիտի մօտեցնէր
պիտի մօտեցնենք	պիտի մօտեցնէինք
պիտի մօտեցնեք	պիտի մօտեցնէիրք
պիտի մօտեցնեն	պիտի մօտեցնէին

Հարակատար ներկա**Հարակատար անցյալ**

մօտեցուցած եմ
 մօտեցուցած ես
 մօտեցուցած է

մօտեցուցած էի
 մօտեցուցած էիր
 մօտեցուցած էր

մօտեցուցած ենք
 մօտեցուցած էք
 մօտեցուցած են

մօտեցուցած էինք
 մօտեցուցած էիք
 մօտեցուցած էին

Վաղակատար ներկա**Վաղակատար անցյալ**

մօտեցուցեր եմ
 մօտեցուցեր ես
 մօտեցուցեր է

մօտեցուցեր էի
 մօտեցուցեր էիր
 մօտեցուցեր էր

մօտեցուցեր ենք
 մօտեցուցեր էք
 մօտեցուցեր են

մօտեցուցեր էինք
 մօտեցուցեր էիք
 մօտեցուցեր էին

Հարկադրական եղանակ**Հարկադրական ապառնի****Հարկ. անցյալի ապառնի**

մօտեցնելու եմ
 մօտեցնելու ես
 մօտեցնելու է

մօտեցնելու էի
 մօտեցնելու էիր
 մօտեցնելու էր

մօտեցնելու ենք
 մօտեցնելու էք
 մօտեցնելու են

մօտեցնելու էինք
 մօտեցնելու էիք
 մօտեցնելու էին

Հրամայական եղանակ

մօտեցու՛ր մօտեցուցե՛ք

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՅՈՒՄԸ

Կրավորական բայերը, անկախ այն Քանից, թե ներգործական ձևում որ խոնարհման են պատկանում, ունենում են ի լծորդը և խոնարհվում են ի լծորդության բայերի պես: **Դերբայական հիմքից** են կազմվում ապառնի, ժխտական և ընթացակցական դերբայները՝ **գրուելու, գրուեր, գրուելեն, իսկ մյուս՝ վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները** կազմվում են ներկայի հիմքից՝ **գրուեր, գրուած, գրուող:**

Դերբայներ

Անորոշ՝	գրուիլ
Ապառնի՝	գրուելու
Վաղակատար՝	գրուեր
Հարակատար՝	գրուած
Ենթակայական՝	գրուող
Ընթացակցական՝	գրուելեն (աղօթելեն)
Ժխտական՝	գրուեր // գրուիր

Ըղծական եղանակ

Ըղծական ապառնի

գրուիմ	գրուինք
գրուիս	գրուիք
գրուի	գրուին

Ըղծական անցյալի ապառնի

գրուի	գրուինք
գրուիր	գրուիք
գրուեր	գրուեին

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

կը գրուիմ
կը գրուիս
կը գրուի

Անկատար անցյալ

կը գրուի
կը գրուիր
կը գրուեր

Անցյալ կատարյալ

գրուեցայ
գրուեցար
գրուեցաւ

կը գրուինք
կը գրուիք
կը գրուին

կը գրուեինք
կը գրուեիք
կը գրուեին

գրուեցանք
գրուեցաք
գրուեցան

Ապառնի

պիտի գրուիմ
պիտի գրուիս
պիտի գրուի

պիտի գրուինք
պիտի գրուիք
պիտի գրուին

Անցյալի ապառնի

պիտի գրուէի
պիտի գրուէիր
պիտի գրուէր

պիտի գրուէինք
պիտի գրուէիք
պիտի գրուէին

Հարակատար ներկա

գրուած եմ
գրուած ես
գրուած է

գրուած ենք
գրուած էք
գրուած են

Հարակատար անցյալ

գրուած էի
գրուած էիր
գրուած էր

գրուած էինք
գրուած էիք
գրուած էին

Վաղակատար ներկա

գրուեր եմ
գրուեր ես
գրուեր է

գրուեր ենք
գրուեր էք
գրուեր են

Վաղակատար անցյալ

գրուեր էի
գրուեր էիր
գրուեր էր

գրուեր էինք
գրուեր էիք
գրուեր էին

Հարկադրական եղանակ**Հարկադրական ապառնի**

գրուելու եմ
գրուելու ես
գրուելու է

գրուելու ենք
գրուելու էք
գրուելու են

Հարկադրական անցյալի ապառնի

գրուելու էի
գրուելու էիր
գրուելու էր

գրուելու էինք
գրուելու էիք
գրուելու էին

Հրամայական եղանակ

գրուէ՛

գրուեցէ՛ք

Սոսկածանցավոր, պատճառական և կրավորական բայերի վերլուծական երկրորդական ժամանակների կազմության մեջ նույնությամբ պահպանվում են աններածանց բայերի երկրորդական ժամանակների կազմության սկզբունքները՝ **հարակատար կամ ապառնի դերբայ + ըլլալ** բայի համապատասխան ժամանակներ: Ուստի դրանք առանձին հարացույցով չենք ներկայացնում:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Արևմտահայերենում նույնպես բայերի որոշակի խումբ (անկանոն բայեր) խոնարհման համակարգում շեղվում է գործող ընդհանուր կանոններից⁶: Այդ շեղումներն ու յուրահատկությունները, ինչպես արևելահայերենում, սովորաբար դրսևորվում են անցյալի հիմքից կազմվող ձևերում: Անկանոն բայերի հիմնական մասը երկու գրականներում նույնն է, այն տարբերությամբ, որ արևմտահայերենում անկանոն բայերի թիվը որոշ չափով մեծ է. արևմտահայերենում կան անկանոն բայեր, որոնք արևելահայերենում ունեն կանոնավոր խոնարհում: Բացի այդ, դրանց մի մասը երկու գրականներում ունի խոնարհման, բայականության և առանձին ժամանակների կազմության էական տարբերություններ⁷:

⁶ Անկանոն և պակասավոր բայերի վերաբերյալ շարադրանքը հմմտ. **Գ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, **Ա. Մարգարյան**, Հայերենի անկանոն բայերի զարգացումը, Երևան, 1961:

⁷ Արևմտահայ քերականության մեջ ընդունված է իրարից առանձնացնել անկանոն և զարտուղի բայերը: Վերջիններս նույնպես անկանոն են, սակայն շեղվելով խոնարհման ընդհանուր հարացույցից՝ դրանք միասին դրսևորում են խոնարհման ընդհանուր հատկանիշներ, օրինակ՝ անցյալ կատարյալի եզակի թիվը կազմվում է **ի, իր, աւ** վերջավորություններով՝ **ըսի, ըսիր, ըսաւ** են: Արևմտահայերենի զարտուղի բայերն են՝ **ըսել, բերել, տալ, զարկել, առնել, կենալ**: Սակայն քանի որ այս աշխատանքում արևմտահայերենը ներկայացնում ենք՝ զուգադրելով արևելահայերենին, ուստի արևմտահայերենի զարտուղի և անկանոն բայերը նկարագրում ենք ըստ արևելահայերենի անկանոն բայերի համակարգի կամ դրանց համեմատությամբ:

Ե խոնարհման աններածանց բայեր՝

ըսել, բերել, զարնել, ուտել, ելլել

Այս բայերի անկանոնությունները սովորաբար դրսևորվում են վաղակատար և հարակատար դերբայներում, սահմանական եղանակի՝ այդ դերբայներով կազմված ժամանակածնեքում և անցյալ կատարյալում: Բացի արևելահայերենի Ե խոնարհման աններածանց անկանոն բայերից (**ասել, բերել, զարնել, ուտել**), արևմտահայերենում այս շարքում ավելացել է **Ելլել** բայը, որի համապատասխան ձևը արևելահայերենում Ե խոնարհման սոսկածանցավոր բայ է՝ **ելնել**:

Ըսել (արևել.՝ ասել)

Արևելահայերենում այս բայի անցյալի հիմքը, ի տարբերություն Ե խոնարհման աններածանց բայերի ցոյական հիմքի, կազմվում է **աց** բաղադրիչով՝ **ասաց**: Ըստ այդմ՝ անցյալ կատարյալի համար ունենում ենք՝ **ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին**: (Եգ բաղադրիչով «կանոնական» ձևերը՝ **ասեցի, ասեցիր** են, խոսակցական կազմություններ են, երբեմն հանդիպում են նաև գրավոր խոսքում): Անկանոն են նաև հրամայական եղանակի ձևերը, քանի որ կազմվում են **ա** խոնարհման աններածանց բայերի նման՝ **ասա՛, ասացե՛ք**: Ասել բայի մյուս բոլոր ձևերը արևելահայերենում կանոնավոր են:

Արևմտահայերենում այս բայի անցյալի հիմքը արմատական է՝ **ըս-**, որից կազմվում են անցյալ կատարյալի՝ **կանոնից շեղվող** ձևերը: Բացի այդ, եզակի երրորդ դեմքում այն ստանում է ի խոնարհման աններածանց բայերին հատուկ **ալ** վերջավորություն, այսպես՝ **ըսի, ըսիր, ըսալ, ըսինք, ըսիք, ըսին**: Անկանոն է նաև հրամայական եղանակի հոգնակի ժամանակածնը, քանի որ այն կազմվում է դարձյալ արմատական հիմքից՝ **ըսե՛ք** ի տարբերություն Ե խոնարհման աններածանց բայերի անցյալի ցոյական հիմքից կազմությունների, օրինակ՝ **գրեցե՛ք**: Մյուս բոլոր ձևերը կանոնավոր են և չեն շեղվում Ե խոնարհման աններածանց բայերի ձևակազմական կաղապարներից:

Բերել

Արևելահայերենում անցյալի հիմքը արմատական է՝ **բեր-**, որից կազմվում են անցյալ կատարյալի բերի, բերիո, բերեց, բերինք, բերիք, բերին անկանոն ձևերը: Այժմ տարածվում է նաև այս բայի «կանոնավոր» կատարյալը՝ **բերեցի, բերեցիր** ևն: Հրամայականի ձևերն են՝ **բե՛ր, բերե՛ք**: անկանոն է եզակիի արմատական ձևը, իսկ հոգնակին չունի զուգաձևություն:

Արևմտահայերենում անկանոնություն է այն, որ անցյալի հիմքը արմատական է՝ **բեր-**, որից կազմվում են անցյալ կատարյալի անկանոն ձևերը՝ **բերի, բերիո, բերաւ, բերինք, բերիք, բերին**: Արևմտահայերենում այս բայի «կանոնավոր» կատարյալը՝ **բերեցի, բերեցիր** ևն, գործածական չէ: Անկանոն են նաև այս բայի հրամայականի ձևերը. եզակին ունի արմատական կազմություն՝ **բե՛ր** (ի տարբերություն նույն կազմության *կանոնավոր* *բայերի է վերջավորությամբ գրէ՛լ*), *իմպ հոռմամիմ* կազմվում է արմատական հիմքից՝ **բերե՛ք**, փոխանակ անցյալի ցոյական հիմքով կազմության, ինչպես՝ **գրեցե՛ք**:

Ջարնել (արևել.՝ զարկել)

Արևելահայերենում անցյալի հիմքը արմատական է՝ **զարկ-**, որից կազմվում են անցյալ կատարյալի անկանոն ձևերը՝ **զարկի, զարկիո, զարկեց, զարկինք, զարկիք, զարկին**: Ե խոնարհման աններածանց բայերի համաբանությամբ՝ այս անկանոն ձևերը փոխարինվում են կանոնավոր ձևերով՝ **զարկեցի, զարկեցիր** ևն: Անկանոն է այս բայի եզակի հրամայականի ձևը՝ **զա՛րկ**՝ որպես արմատական կազմություն, բայց սա փոխարինվում է նաև կանոնավոր կազմությամբ՝ **զարկի՛ր**: Հոգնակին նույնպես ունի կանոնավոր զուգահեռ ձև՝ **զարկե՛ք // զարկեցե՛ք**:

Արևմտահայերենում **զարնել** բայի անցյալի հիմքից կազմվող ձևերում առկա է **զարկ-** արմատը: Դրանք ունեն հետևյալ պատկերը՝

Վաղակատար դերբայ՝

զարկեր

Հարակատար դերբայ՝

զարկած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա

զարկեր եմ զարկեր եմք
զարկեր ես զարկեր էք
զարկեր է զարկեր են

Վաղակատար անցյալ

զարկեր էի զարկեր էինք
զարկեր էիր զարկեր էիք
զարկեր էր զարկեր էին

Չարակատար ներկա

զարկած եմ զարկած եմք
զարկած ես զարկած էք
զարկած է զարկած են

Չարակատար անցյալ

զարկած էի զարկած էինք
զարկած էիր զարկած էիք
զարկած էր զարկած էին

Անցյալ կատարյալ

զարկի զարկինք
զարկիր զարկիք
զարկաւ զարկին

Չրամայական եղանակ

զա՛րկ զարկե՛ք

Այս բայի եզակի հրամայականը ունի արմատական ձև (**զա՛րկ**) և հոգնակին կազմում է արմատական հիմքից՝ **զարկե՛ք**:

Ուտել

Արևելահայերենում անցյալի հիմքից կազմվող ձևերում **ուտ**– արմատի փոխարեն առկա է **կեր**– արմատը: Դրանցից կազմվող ձևերը ունեն հետևյալ պատկերը՝ անց. կատ. **կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան, հրամ. կե՛ր, կերե՛ք**, վաղակ. դերբայ՝ **կերել, հարակ. կերած**:

Արևմտահայերենում անկանոնությունը արտահայտվում է դարձյալ տարարմատության մեջ. անցյալում և անցյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս **կեր**– արմատը: Չրամայականի եզակի ժամանակաձևը ունի պարզ արմատական կազմություն, իսկ հոգնակին կազմվում է արմատական հիմքից: Անցյալ կատարյալը կազմվում է ի խոնարհման աններածանց բայերի վերջավորություններով:

Ուտել բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	կերեր
Հարակատար դերբայ՝	կերած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

կերեր եմ	կերեր եմք՝	կերեր էի	կերեր էինք	կերած եմ	կերած եմք
կերեր ես	կերեր էք	կերեր էիր	կերեր էիք	կերած ես	կերած էք
կերեր է	կերեր են	կերեր էր	կերեր էին	կերած է	կերած են

Հարակատար անցյալ Անցյալ կատարյալ

կերած էի	կերած էինք	կերայ	կերանք
կերած էիր	կերած էիք	կերար	կերաք
կերած էր	կերած էին	կերաւ	կերան

Հրամայական եղանակ

կեր՛	կերե՛ք
------	--------

Ելլել (արևել. ելնել)

Արևելահայերենում անկանոն է այս բայի միայն եզակի հրամայականը՝ **Ե՛լ**. գործածական է սրա նաև կանոնավոր ձևը՝ **Ելի՛ր**:

Արևմտահայերենում անկանոնություն է այն, որ անցյալի հիմքից կազմված ձևերում **Ելլել**—ը դրսևորում է տարարմատության հատկանիշներ՝ **Ելեր**, **Ելած**: Բացի այդ, անցյալ կատարյալը կազմում է ի խոնարհման աններածանց բայերի վերջավորություններով՝ **Ելայ**, **Ելար**, **Ելաւ** նն: Անկանոն է նաև հրամայականում՝ **Ե՛լ**, **Ելե՛ք**:

Ելլել բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	ելեր
Հարակատար դերբայ՝	ելած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

ելեր եմ	ելեր ենք	ելեր էի	ելեր էինք	ելած եմ	ելած ենք
ելեր ես	ելեր էք	ելեր էիր	ելեր էիք	ելած ես	ելած էք
ելեր է	ելեր են	ելեր էր	ելեր էին	ելած է	ելած են

Հարակատար անցյալ

Անցյալ կատարյալ

ելած էի	ելած էինք	ելայ	ելանք
ելած էիր	ելած էիք	ելար	ելաք
ելած էր	ելած էին	ելաւ	ելան

Հրամայական եղանակ

Ել

Ել՛ք

**Ե խոնարհման և սոսկածանց ունեցող բայեր՝
ընել, դնել, առնել, տեսնել, թքնել, պագնել, խածնել**

Արևելահայերենում Ե խոնարհման և սոսկածանց ունեցող բայերից անկանոն են **անել, դնել, տանել, ելնել, առնել, տեսնել, թողնել** և **լինել** բայերը: Ըստ անցյալի հիմքի կազմության՝ դրանք ստորաբաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում **անել, դնել, տանել** բայերը, որոնց կատարյալի հիմքը **րեական** է և կազմվում է **ն // ր** հերթագայությամբ՝ **անել // ար–, դնել // դր–, տանել // տար–**: Երկրորդ խմբի մեջ են մտնում մնացած բայերը, որոնց հիմքը արմատական է՝ **ելնել // ել–, առնել // առ–, տեսնել // տես–, թողնել // թող–**: Լինել բայի անցյալի հիմքը տարարմատ է՝ **եղ–**:

Արևմտահայերենում Ե խոնարհման և սոսկածանց ունեցող նշված բայերից անկանոն են **ընել, դնել, առնել, տեսնել** բայերը:

Արևելահայերենի տանել բայը արևմտահայերենում ի լծորդության սոսկածանցավոր անկանոն բայ է՝ **տանիլ**: **Ելնել** սոսկածանցավոր բայը, ինչպես նշվել է, արևմտահայերենում անմերժանց անկանոն

բայ է՝ ելլել: Թողնել—ը արևմտահայերենում ու լծորդության աններածանց բայ է՝ թողուլ, իսկ լինել—ը՝ ա լծորդության աններածանց անկանոն բայ՝ ըլլալ: Արևմտահայերենում անկանոն բայերի այս շարքում ավելանում են սոսկածանցավոր **թքնել** բայը, որը արևելահայերենում է խոնարհման աններածանց կանոնավոր բայ է՝ **թքել**, **պագնել** (համբուրել) և **խածնել** (կծել) բայերը, որոնք արևելահայերենում բարբառային ձևեր են: Այսպիսով՝ ե լծորդության և սոսկածանց ունեցող անկանոն բայերը արևմտահայերենում յոթն են՝ **ընել**, **դնել**, **առնել**, **տեսնել**, **թքնել**, **պագնել**, **խածնել**:

Ընել (արևել.՝ անել)

Արևելահայերենում անկանոնություն է այն, որ անցյալ կատարյալի արի, արիր, արեց, արինք, արիք, արին անկանոն ձևերին զուգահեռ գործածական են նաև անցյալի ցոյական հիմքից անկանոն կազմությունները՝ **արեցի**, **արեցիր**, **արեց**, **արեցինք**, **արեցիք**, **արեցին**: Հրաձ.՝ **արա՛**, **արե՛ք**, վաղակ.՝ **արել**, հարակ.՝ **արած**, ենթ.՝ **անող** // **արող**:

Արևմտահայերենում այս բայը անցյալի հիմքում և նրանից կազմված ձևերում դրսևորում է տարարմատության հատկանիշներ. կատարվում է արմատի և // ռ հերթագայություն՝ **ըն** // **ըր**: Անցյալ կատարյալում, ի տարբերություն արևելահայերենի, չունի ցոյական հիմքով զուգահեռ կազմություններ: Բացի այդ, անցյալ կատարյալը կազմում է ոչ թե և սոսկածանց ունեցող բայերին բնորոշ վերջավորություններով՝ **այ**, **ար**, **աւ**, **անք**, **աք**, **ան**, **այլ** է խոնարհման աններածանց բայերի խոնարհման վերջավորություններով՝ **պահպանելով** առաջինների եզակի երրորդ դեմքի **աւ** մասնիկը, ինչպես մյուս անկանոն բայերը: Անկանոն են նաև հրամայական եղանակի կազմությունները՝ պայմանավորված հիմքի փոփոխությամբ և եզակի հրամայականի ոչ կանոնական վերջավորությամբ՝ **ըրէ՛**, **ըրէ՛ք**:

Ընել բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	ըրեր
Հարակատար դերբայ՝	ըրած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

ըրեր եմ	ըրեր ենք	ըրեր էի	ըրեր էինք	ըրած եմ	ըրած ենք
ըրեր ես	ըրեր էք	ըրեր էիր	ըրեր էիք	ըրած ես	ըրած էք
ըրեր է	ըրեր են	ըրեր էր	ըրեր էին	ըրած է	ըրած են

Հարակատար անցյալ

Անցյալ կատարյալ

ըրած էի	ըրած էինք	ըրի	ըրինք
ըրած էիր	ըրած էիք	ըրիր	ըրիք
ըրած էր	ըրած էին	ըրաւ	ըրին

Հրամայական եղանակ

ըրէ՛

ըրէ՛ք

ԴՆԵԼ

Արևելահայերենում անցյալ կատարյալում դրի, դրիր, դրեց, դրինք, դրիք, դրին անկանոն ձևերին զուգահեռ ունի նաև ցոյական հիմքից կազմված անկանոն ձևեր՝ դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին: Հրամայական դի՛ր, դրե՛ք, վաղակատար դրել, հարակատար դրած, ենթակայական դնող // դրող:

Արևմտահայերենում դրստորում է նույն անկանոնությունները, ինչ ընել բայը. անցյալի հիմքում և դրանից կազմված ձևերում դրստորում է տարարմատության հատկանիշներ. կատարվում է արմատի ն // ր հերթագայություն՝ դն // դր: Անցյալ կատարյալում, ի տարբերություն արևելահայերենի, չունի ցոյական հիմքով զուգահեռ կազմություններ: Բացի այդ, անցյալ կատարյալը կազմում է ոչ թե ն սուկածանց ունեցող բայերին բնորոշ վերջավորություններով՝ ալ, ար, աւ, անք, աք, ան, ալ ե խոնարհման աններածանց բայերի խոնարհման վերջավորություններով՝ պահպանելով առաջինների եզակի երրորդ դեմքի աւ մասնիկը, ինչպես մյուս անկանոն բայերը: Անկանոն են նաև հրամայական եղանակի

կազմությունները՝ պայմանավորված հիմքի փոփոխությամբ և եզակի հրամայականի ոչ կանոնական ձևով՝ **դի՛ր, դրե՛ք**:

ԴՆԵԼ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	դրեր
Հարակատար դերբայ՝	դրած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

դրեր եմ	դրեր եմք	դրեր էի	դրեր էինք	դրած եմ	դրած եմք
դրեր ես	դրեր էք	դրեր էիր	դրեր էիք	դրած ես	դրած էք
դրեր է	դրեր են	դրեր էր	դրեր էին	դրած է	դրած են

Հարակատար անցյալ Անցյալ կատարյալ

դրած էի	դրած էինք	դրի	դրինք
դրած էիր	դրած էիք	դրիր	դրիք
դրած էր	դրած էին	դրաւ	դրին

Հրամայական եղանակ

դի՛ր	դրե՛ք
------	-------

Առնել

Արևելահայերենում անկանոն է այս բայի միայն եզակի հրամայականը՝ **ա՛ռ**:

Արևմտահայերենում անկանոնություն է դրսևորում միայն անցյալ կատարյալում՝ ստանալով և խոնարհման աններածանց բայերին հատուկ վերջավորություններ. եզակի երրորդ դեմքում պահպանվում է անցյալ կատարյալի **Բ** խմբի վերջավորություններին բնորոշ **աւ** մասնիկը: Անկանոն է նաև եզակի հրամայականի կազմությունը՝ **ա՛ռ**:

Առնել բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Սահմանական եղանակ

Հրամայական եղանակ

Անցյալ կատարյալ

ա՛ռ

առե՛ք (կանոնավոր)

առի առինք

առիր առիք

առաւ առին

Տեսնել

Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում անկանոն է այս բայի միայն եզակի հրամայականը՝ տե՛ս:

Թքնել, պագնել, խածնել

Արևմտահայերենում անկանոն է **թքնել** բայի անցյալ կատարյալը, քա-
նի որ կազմվում է ե խոնարհման անցերածանց բայերի վերջավորություն-
ներով, իսկ եզակի երրորդ դեմքում պահպանում է աւ մասնիկը՝ **թքի, թքիր,**
թքաւ, թքինք, թքիք, թքին: Մնացած ձևերը, այդ թվում՝ հրամայական եղա-
նակի կազմությունները, կանոնավոր են. վաղակատար՝ **թքեր**, հարակա-
տար՝ **թքած**, ենթակայական՝ **թքնող**, հրամայական՝ **թքի՛ր, թքե՛ք:**

Արևմտահայերենում անկանոն են նաև **ն** սոսկածանց ունեցող **պագնել** և **խածնել** բայերը, որոնք խոնարհվում են **թքնել** բայի նման:

Ա խոնարհման անցերածանց բայեր՝

գալ, լալ, տալ, ըլլալ, երթալ

Արևելահայերենում ա խոնարհման անցերածանց բայերից անկանոն են **գալ, լալ** և **տալ** բայերը: Արևմտահայերենի **ըլլալ** անկանոն բային համապատասխանում է արևելահայերենի լի՛նել բայը, իսկ **երթալ** բային՝ **գնալ**–ը, որը կանոնավոր բայ է:

Արևելահայերենում այս բայերը (**գալ, լալ, տալ**) մյուս բայերից առանձնանում են նրանով, որ անկատար (ու՛մ–ով վերջավորվող) դեր-
բայ չունեն: Ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են հա-
մընթացական դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով՝
գալիս եմ – **գալիս էի, տալիս** եմ – **տալիս էի, լալիս** եմ – **լալիս էի:**

Ներկայի հիմքից կազմվող մյուս ձևերը կանոնավոր են: Անցյալի հիմքից կազմվող անկանոն ձևերի մասին կխոսենք ստորև:

Արևմտահայերենում գալ, լալ, տալ բայերը սահմանականի ներկան և անցյալը կազմում են ոչ թե կանոնական կը, այլ կու մասնիկով, որը գրվում է դերբայական հիմքից առանձին, ինչպես՝

Անկատար ներկա

կու գամ	կու լամ	կու տամ
կու գաս	կու լաս	կու տաս
կու գայ	կու լայ	կու տայ
կու գանք	կու լանք	կու տանք
կու գաք	կու լաք	կու տաք
կու գան	կու լան	կու տան

Անկատար անցյալ

կու գայի	կու լայի	կու տայի
կու գայի	կու լայի	կու տայի
կու գար	կու լար	կու տար
կու գայինք	կու լայինք	կու տայինք
կու գայիք	կու լայիք	կու տայիք
կու գային	կու լային	կու տային

Գալ, լալ, տալ բայերը անկանոնություններ ունեն մաս անցյալի հիմքից կազմվող ձևերում:

Գալ

Արևելահայերենում անցյալի հիմքը տարարմատ է՝ եկ—, և անկանոն են այդ հիմքից կազմվող ձևերը՝ անցյալ կատարյալ՝ եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան, հրամ.՝ եկ, եկե՛ք (խոսակց.՝ արի՛, արե՛ք), վաղակատար՝ եկել, հարակատար՝ եկած, ենթակայական՝ եկող:

Արևմտահայերենում նույնպես անցյալի հիմքը տարարմատ է՝ եկ՝ և անկանոն են այդ հիմքից կազմվող դերբայներն ու ժամանակաձևերը:

Պատկերն այսպիսին է.

Վաղակատար դերբայ՝	եկեր
Հարակատար դերբայ՝	եկած
Ենթակայական դերբայ՝	եկող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

եկեր եմ	եկեր եմք	եկեր էի	եկեր էինք	եկած եմ	եկած եմք
եկեր ես	եկեր էք	եկեր էիր	եկեր էիք	եկած ես	եկած էք
եկեր է	եկեր են	եկեր էր	եկեր էին	եկած է	եկած են

Հարակատար անցյալ

Անցյալ կատարյալ

եկած էի	եկած էինք	եկա	եկանք
եկած էիր	եկած էիք	եկար	եկաք
եկած էր	եկած էին	եկաւ	եկան

Հրամայական եղանակ

եկո՛ւր	եկե՛ք
--------	-------

Լալ

Արևելահայերենում անկանոնություն է այն, որ այս բայը անցյալի հիմքում ունի զուգաձևեր՝ **լաց**— // **լացեց**—: Անցյալ կատարյալում ունի այդ երկու հիմքերից կազմվող զուգահեռ ձևեր՝ **լացի** // **լացեցի**, **լացիր** // **լացեցիր**, **լացեց**, **լացինք** // **լացեցինք**, **լացիք** // **լացեցիք**, **լացին** // **լացեցին**: Ըստ որում, դրանք գրեթե անգործածական են և փոխարինվում են **լաց լինել** հարադիր բայի ձևերով՝ **լաց եղա**, **լաց եղար** ևն: Հրամայական եղանակ՝ **լա՛ց** (լաց եղիր), հարակատար՝ **լացած** (լաց եղած), վաղակատար՝ **լացել** (լաց եղել), ենթակայական՝ **լացող** (լաց լինող // **լաց եղող**):

Արևմտահայերենում անկանոն են անցյալի հիմքից կազմվող վաղա-կատար (**լացեր**), հարակատար (**լացած**), ենթակայական (**լացող**) դերբայները: Հետևաբար անկանոն են նաև վաղակատար ներկա (**լացեր եմ**), վաղակատար անցյալ (**լացեր էի**), հարակատար ներկա (**լացած եմ**) և հարակատար անցյալ (**լացած էի**) ժամանակածները:

Անցյալ կատարյալը կազմվում է ա խոնարհման կանոնավոր աննե-րածանց բայերի վերջավորությամբ. եզակի երրորդ դեմքում պահ-պանվում է աւ մասնիկը (փոխ. զրո վերջավորության), այսպես՝ **լացի, Լացիր, Լացաւ, Լացինք, Լացիք, Լացին:**

Անկանոն են նաև հրամայական եղանակի ձևերը՝ **լա՛ց, Լացե՛ք:**

Լալ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	լացեր
Հարակատար դերբայ՝	լացած
Ենթակայական դերբայ՝	լացող

Սահմանական եղանակ
Վաղակատար ներկա

Վաղակատար անցյալ

լացեր եմ	լացեր ենք	լացեր էի	լացեր էինք
լացեր ես	լացեր էք	լացեր էիր	լացեր էիք
լացեր է	լացեր են	լացեր էր	լացեր էին

Հարակատար ներկա

Հարակատար անցյալ

լացած եմ	լացած ենք	լացած էի	լացած էինք
լացած ես	լացած էք	լացած էիր	լացած էիք
լացած է	լացած են	լացած էր	լացած էին

Անցյալ կատարյալ

Հրամայական եղանակ

լացա	լացանք	լա՛ց	Լացե՛ք
լացար	լացաք		
լացաւ	լացան		

Տալ

Արևելահայերենում անցյալ կատարյալի հիմքը զուգածն է՝ **տվ–** // **տվեց–**: Անցյալ կատարյալի համար կան զույգ ձևեր՝ **տվի** // **տվեցի**, **տվիր** // **տվեցիր**, **տվեց**, **տվինք** // **տվեցինք**, **տվիք** // **տվեցիք**, **տվին** // **տվեցին**: Հրամայական՝ **տո՛ւր**, **տվե՛ք**, վաղակատար՝ **տվել**, հարակատար՝ **տված**, ենթակայական՝ **տվող**:

Արևմտահայերենում տալ բայը անցյալի հիմքում ունի մեկ տարարմատ ձև՝ **տու–** (**տվ–**): Հրանով կազմվող բոլոր ձևերը անկանոն են:

Պատկերն այսպիսին է.

Վաղակատար դերբայ՝	տուներ
Հարակատար դերբայ՝	տուած
Ենթակայական դերբայ՝	տուող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա

տուներ եմ	տուներ ենք
տուներ ես	տուներ էք
տուներ է	տուներ են

Վաղակատար անցյալ

տուներ էի	տուներ էինք
տուներ էիր	տուներ էիք
տուներ էր	տուներ էին

Հարակատար ներկա

տուած եմ	տուած ենք
տուած ես	տուած էք
տուած է	տուած են

Հարակատար անցյալ

տուած էի	տուած էինք
տուած էիր	տուած էիք
տուած էր	տուած էին

Անցյալ կատարյալ

տուի	տուինք
տուիր	տուիք
տուաւ	տուին

Հրամայական եղանակ

տո՛ւր	տուէ՛ք
--------------	---------------

Ըլլալ (արևել. լիներ)

Արևելահայերենում այս բայի անցյալի հիմքում հանդես է գալիս եղ–
արմատը: Անցյալ կատարյալը կազմվում է սոսկածանցավոր բայերին
բնորոշ վերջավորություններով (Ք տեսակ): Այսպես՝ եղա, եղար, եղավ,
եղանք, եղաք, եղան: Հրամայական եղանակ՝ եղի՛ր, եղե՛ք: Վաղակա-
տար՝ եղել, հարակատար՝ եղած, ենթակայական լինող // եղող:

Արևմտահայերենում նա անցյալի հիմքում և նրանից կազմված
ծներում հանդես է գալիս եղ– արմատը: Անցյալ կատարյալը կազմվում է
ի խոնարհման աններածանց կամ սոսկածանցավոր բայերին բնորոշ վեր-
ջավորություններով: Ենթակայական դերբայը, ի տարբերություն արևելա-
հայերենի, ունի միայն անկանոն ձև՝ անցյալի հիմքից կազմվող՝ եղող:
Անկանոն են նաև հրամայականի ձևերը՝ եղի՛ր, եղե՛ք:

Ըլլալ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	եղեր
Հարակատար դերբայ՝	եղած
Ենթակայական դերբայ՝	եղող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա **Վաղակատար անցյալ** **Հարակատար ներկա**

եղեր են	եղեր ենք	եղեր էի	եղեր էինք	եղած են	եղած ենք
եղեր ես	եղեր էք	եղեր էիր	եղեր էիք	եղած ես	եղած էք
եղեր է	եղեր են	եղեր էր	եղեր էին	եղած է	եղած են

Հարակատար անցյալ **Անցյալ կատարյալ**

եղած էի	եղած էինք	եղայ	եղանք
եղած էիր	եղած էիք	եղար	եղաք
եղած էր	եղած էին	եղաւ	եղան

Հրամայական եղանակ

եղի՛ր	եղե՛ք
-------	-------

Երթալ (արևել. գնալ)

Արևմտահայերենում **երթալ**–ը ա խոնարհման աններածանց բայ է, ինչպես արևելահայերենում դրա համարժեք **գնալ** բայը: Սակայն, ի տարբերություն վերջինի, արևմտահայերենում անցյալի հիմքը տարարմատ է՝ **գաց**–, որից էլ կազմվող ձևերը անկանոն են:

Անկանոնության յուրահատուկ դրսևորում է մաս այն, որ անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը կազմվում է արևելահայերենին բնորոշ կանոնական **գնաց** ձևով՝ **գացի, գացիր, գնաց, գացինք, գացիք, գացին**: Անկանոնության այդպիսի դրսևորում է մաս նույն **երթալ** բայի եզակի հրամայականի կազմությունը՝ **գնա՛**:

Երթալ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	գացեր
Հարակատար դերբայ՝	գացած
Ենթակայական դերբայ՝	գացող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա

գացեր եմ	գացեր ենք
գացեր ես	գացեր էք
գացեր է	գացեր են

Վաղակատար անցյալ

գացեր էի	գացեր էինք
գացեր էիր	գացեր էիք
գացեր էր	գացեր էին

Հարակատար ներկա

գացած եմ	գացած ենք
գացած ես	գացած էք
գացած է	գացած են

Հարակատար անցյալ

գացած էի	գացած էինք
գացած էիր	գացած էիք
գացած էր	գացած էին

Անցյալ կատարյալ

գացի	գացինք
գացիր	գացիք
գնաց	գացին

Հրամայական եղանակ

գնա՛	գացե՛ք
-------------	---------------

Ա խոնարհման սոսկածանցավոր բայեր՝

դառնալ, բանալ, լուանալ, կենալ, իյնալ

Արևելահայերենում ա խոնարհման սոսկածանցավոր բայերից անկանոն են **դառնալ, լվանալ, կենալ** բայերը: Որոշ քերականներ դրանց մեջ են զետեղում նաև **բանալ** և **բառնալ** բայերը: Բայց դրանք ժամանակակից լեզվում փոխարինվել են **բացել** և **բարձել** ձևերով, որոնք կանոնավոր են:

Արևմտահայերենում ա խոնարհման սոսկածանցավոր բայերից անկանոն են **դառնալ, բանալ, լուանալ, իյնալ** բայերը: **Կենալ** բայը կանոնավոր է. անցյալի հիմքում և դրանից կազմվող ձևերում այդ բայը ա խոնարհման սոսկածանցավոր բայերի խոնարհման ընդհանուր հարացույցից շեղումներ չի դրսևորում, այսպես՝ անցյալի հիմքը ցոյական է՝ **կենալ** – **կեց**–, վաղակատար՝ **կեցեր**, հարակատար՝ **կեցած**, ենթակայական՝ **կեցող**: Անցյալ կատարյալ՝ **կեցայ, կեցար, կեցաւ, կեցանք, կեցաք, կեցան**: Հրամայական՝ **կեցի՛ր, կեցե՛ք**:

Իյնալ բայը արևելահայերենում՝ **ընկնել**, և սոսկածանցով է խոնարհման կանոնավոր բայ է:

Դառնալ

Արևելահայերենում անցյալի հիմքն է **դարձ**–, այսինքն՝ կազմվում է ոչ կանոնական ձևով՝ **ռն** // **րձ** հերթագայությամբ: Այդ հիմքով կազմվող ձևերը անկանոն կազմություններ են. անցյալ կատարյալ՝ **դարձա, դարձար, դարձավ, դարձանք, դարձաք, դարձան**, հրամայական եղանակ՝ **դարձի՛ր, դարձե՛ք**, վաղակատար՝ **դարձեր**, հարակատար՝ **դարձած**, ենթակայական՝ **դարձող**: Կան նաև անցյալ կատարյալի և հրամայականի ձևեր, որոնք բարբառային են, ինչպես՝ **դառա, դառար, դառավ, դառանք, դառաք, դառան, դառի՛ր, դառե՛ք**:

Արևմտահայերենում անկանոն է այս բայի անցյալի հիմքի յուրահատուկ կազմությունը՝ **ռն** / **րձ** հերթագայությամբ՝ **դառնալ**>**դարձ**: Անկանոն են այս հիմքից կազմվող ձևերը:

Դառնալ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	դարձեր
Հարակատար դերբայ՝	դարձած
Ենթակայական դերբայ՝	դարձող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա

դարձեր եմ	դարձեր ենք
դարձեր ես	դարձեր էք
դարձեր է	դարձեր են

Վաղակատար անցյալ

դարձեր էի	դարձեր էինք
դարձեր էիր	դարձեր էիք
դարձեր էր	դարձեր էին

Հարակատար ներկա

դարձած եմ	դարձած ենք
դարձած ես	դարձած էք
դարձած է	դարձած են

Հարակատար անցյալ

դարձած էի	դարձած էինք
դարձած էիր	դարձած էիք
դարձած էր	դարձած էին

Անցյալ կատարյալ

դարձայ	դարձանք
դարձար	դարձաք
դարձաւ	դարձան

Հրամայական եղանակ

դարձի՛ր	դարձե՛ք
---------	---------

Բանալ

Արևմտահայերենում այս բայն ունի ներկայի հիմքից կազմվող կա-
նոնավոր ձևեր՝ կը բանամ, կը բանայի, պիտի բանամ, պիտի բանայի,
բանալու եմ, բանալու էի, բանամ, բանայի նմ: Կանոնավոր է նաև
անցյալի հիմքում և դրանից կազմվող ձևերում՝ վաղակատար՝ բացեր,
հարակատար՝ բացած, ենթակայական՝ բացող:

Անկանոն են անցյալ կատարյալը և եզակի հրամայականը. առաջինը
կազմվում է ոչ թե ա խոնարհման սոսկածանցավոր բայերին բնորոշ վեր-
ջավորություններով՝ ա, ար, աւ, անք, աք, ան, այլ ե խոնարհման
աններածանց բայերի վերջավորություններով (Ա տեսակ)՝ եզակի երրորդ

դենքում պահպանելով առաջինների աւ մասնիկը՝ **ի, իր, աւ, ինք, իք, ին:**
 եզակի հրամայականը ունի արմատական կազմություն՝ **բա՛ց:**

Բանալ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Սահմանական եղանակ		Հրամայական եղանակ	
<i>Անցյալ կատարյալ</i>		բա՛ց	բացե՛ք (կանոնավոր)
բացի	բացինք		
բացիր	բացիք		
բացաւ	բացին		

Լուանալ

Արևելահայերենում այս բայի անցյալ կատարյալը կազմվում է **ի** ծայնավոր ունեցող վերջավորություններով՝ **լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին,** որոնք պակասավոր լվալ բայի բարբառային ձևերն են: Հրամայական՝ **լվա՛, լվացե՛ք,** վաղակատար՝ **լվացել,** հարակատար՝ **լվացած,** ենթակայական՝ **լվացող:**

Արևմտահայերենում այս բայը բանալ բայի նման անկանոն է անցյալ կատարյալում. կազմվում է **ի** ծայնավոր ունեցող **Ա** տեսակ վերջավորություններով՝ **լուացի, լուացիր, լուացաւ, լուացինք, լուացիք, լուացին:** Անկանոն է նաև եզակի հրամայականը՝ **լուա՛:**

Իյնալ (արևել. ընկնել)

Արևմտահայերենում այս բայի անցյալի հիմքը տարարմատ է՝ **իյնալ** – **ինկ**–: Այդ հիմքից կազմվող ձևերում պատկերն այսպիսին է.

Հարակատար դերբայ՝	ինկած
Վաղակատար դերբայ՝	ինկեր
Ենթակայական դերբայ՝	ինկող

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա Վաղակատար անցյալ Հարակատար ներկա

ինկեր եմ	ինկեր ենք	ինկեր էի	ինկեր էինք	ինկած եմ	ինկած ենք
ինկեր ես	ինկեր էք	ինկեր էիր	ինկեր էիք	ինկած ես	ինկած էք
ինկեր է	ինկեր են	ինկեր էր	ինկեր էին	ինկած է	ինկած են

Հարակատար անցյալ

Անցյալ կատարյալ

ինկած էի	ինկած էինք	ինկայ	ինկանք
ինկած էիր	ինկած էիք	ինկար	ինկաք
ինկած էր	ինկած էին	ինկաւ	ինկան

Հրամայական եղանակ

ինկիր	ինկէք
-------	-------

Ի խոնարհման աններածանց բայեր

Ի խոնարհման աններածանց բայերից անկանոն են **նստիլ, սկսիլ, ծնիլ, փրթիլ, պրծիլ** բայերը, որոնք արևելահայերենում կանոնավոր են և պատկանում են ե խոնարհման:

Արևմտահայերենում այս բայերը անցյալ կատարյալը բաղադրում են անցյալի ոչ թե ցոյական հիմքից, ինչպես ի խոնարհման կանոնավոր բայերը (օրինակ՝ **խօսիլ – խօսեց+այ, խօսեց+ար, խօսեց+աւ**), այլ արմատական հիմքից՝ **նստիլ – նստ+այ, նստ+ար, նստ+աւ**:

Ընդհանուր պատկերն այս է.

Անցյալ կատարյալ

նստայ	սկսայ	ծնայ	փրթայ	պրծայ
նստար	սկսար	ծնար	փրթար	պրծար
նստաւ	սկսաւ	ծնաւ	փրթաւ	պրծաւ

նստանք	սկսանք	ծնանք	փրթանք	պրծանք
նստաք	սկսաք	ծնաք	փրթաք	պրծաք
նստան	սկսան	ծնան	փրթան	պրծան

Ի խոնարհման սոսկածանցավոր բայեր

Ի խոնարհման ն սոսկածանցավոր բայերից անկանոն է **տանիլ** բայը:

Տանիլ (արևել. տանել)

Արևելահայերենում անկանոն ձևեր են անցյալ կատարյալը՝ **տարա**, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան, հրամայականը՝ **տա՛ր**, տարե՛ք, վաղակ.՝ **տարել**, հարակ.՝ **տարած**, ենթակայ.՝ **տանող** // **տարող**:

Արևմտահայերենում անցյալի հիմքում ն նրանից կազմված ձևերում դրսևորում է տարարմատության հատկանիշներ. կատարվում է արմատի ն // ր հերթագայություն՝ **տան – տար**: Անցյալ կատարյալը կազմում է ոչ թե ի խոնարհման ն սոսկածանց ունեցող բայերին բնորոշ վերջավորություններով՝ **այ, ար, աւ, անք, աք, ան, այլ** ե խոնարհման աններածանց բայերի նման՝ պահպանելով առաջինների եզակի երրորդ դեմքի **աւ** մասնիկը, ինչպես մյուս անկանոն բայերը: Անկանոն են նաև հրամայական եղանակի կազմությունները՝ պայմանավորված հիմքի փոփոխությամբ ն եզակի հրամայականի ոչ կանոնական ձևով՝ **տա՛ր, տարե՛ք**:

Տանիլ բայի անկանոն ձևերը ունեն հետևյալ պատկերը.

Վաղակատար դերբայ՝	տարեր
Հարակատար դերբայ՝	տարած

Սահմանական եղանակ

Վաղակատար ներկա

Վաղակատար անցյալ

տարեր եմ	տարեր եմք	տարեր էի	տարեր էինք
տարեր ես	տարեր էք	տարեր էիր	տարեր էիք
տարեր է	տարեր են	տարեր էր	տարեր էին

Հարակատար ներկա

տարած են	տարած ենք
տարած ես	տարած էք
տարած է	տարած են

Հարակատար անցյալ

տարած էի	տարած էինք
տարած էիր	տարած էիք
տարած էր	տարած էին

Անցյալ կատարյալ

տարի	տարինք
տարիր	տարիք
տարաւ	տարին

Հրամայական եղանակ

տա՛ր	տարե՛ք
------	--------

Առանձին քերականներ արևմտահայերենում անկանոն են համարում չ սոսկածանց ունեցող բայերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք (փախչիլ, թռչիլ, դաչիլ) մի շարք ժամանակածներ՝ սահմանա- կան ներկան և անցյալը, ապառնին և անցյալի ապառնին, ըղծական ապառնին և ըղծական անցյալի ապառնին, արգելական հրամայականը, կարող են կազմել սոսկածանցով կամ առանց դրա, ինչպես՝ կը փախիմ // կը փախչիմ, փախիմ // փախչիմ, պիտի փախիմ // պիտի փախչիմ, մի՛ փախիր // մի՛ փախչիր, կամ՝ կը դպէի // կը դաչէի, դպէի // դաչէի, պիտի դպիմ // պիտի դաչիմ, մի՛ դպիր // մի՛ դաչիր ևն։ Առավել սովորական են առանց ածանցի կազմությունները։

Անկանոն բայերի դրական խոնարհման մյուս ժամանակածները, այդ թվում՝ երկրորդական վերլուծական ժամանակները, որոնք այստեղ չնշվեցին, ինչպես նաև դրանց ժխտական խոնարհումները կազմվում են կանոնավոր բայերի խոնարհման ընդհանուր սկզբունքներին համապա- տասխան։

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Արևմտահայերենում և արևելահայերենում պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք չունեն խոնարհման բոլոր ձևերը։ Այդ ձևերը լրացվում են ուրիշ բայերով։

Արևելահայերենում կան մի քանի բայեր, որոնք ունեն միայն սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը, ըստ որում, դրանք կազմվում են ոչ թե դերբայով և օժանդակ բայով, այլ բախտիմքով և վերջավորություններով. ունեն գրաբարածն կազմություն: Այդ բայերն են **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ:**

Պակասավոր են նաև **ցանկալ, հուսալ, լվալ** բայերը. առաջին երկուսը (**ցանկալ, հուսալ**) ունեն ըղծական եղանակի (և դրանից կազմվող ենթադրական և հարկադրական եղանակների) ժամանակաձևերը՝ **ցանկամ, ցանկայի, հուսամ, հուսայի:** Երկրորդը՝ **հուսալ** բայը, ունի նաև հրամայականի ձևեր՝ **հուսա՛, հուսացե՛ք:**

Լվալ բայն ունի միայն անցյալ կատարյալի և հրամայականի ձևեր՝ **լվացի, լվացիր, լվաց** նն, և **լվա՛, լվացե՛ք:**

Պակասավոր այդ բայերի մյուս ձևերը լրացվում են համանիշ բայերի ձևերով:

Արևմտահայերենում նույնպես կան մի քանի բայեր, որոնք ունեն միայն սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը, որոնք կազմվում են ոչ թե **կը (կու)** եղանակիչով և խոնարհված բայի ձևերով, ինչպես կանոնավոր բայերը, այլ բախտիմքով և վերջավորություններով: Այդ բայերն են՝ **եմ, կամ, գիտեմ, ունիմ, պարտիմ, կրնամ (կարենալ):**

Արևմտահայերենում պակասավոր են համարվում նաև **երելիլ, թողուլ, երդնուլ** բայերը:

Յուսալ և **ցանկալ** բայերը արևմտահայերենում ունեն սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ, ապառնի, անցյալի ապառնի և ըղծական եղանակի ժամանակաձևերը՝ **յուսամ, ցանկամ, յուսայի, ցանկայի, կը յուսամ, կը ցանկամ, կը յուսայի, կը ցանկայի, պիտի յուսամ, պիտի ցանկամ, պիտի յուսայի, պիտի ցանկայի:**

Լուալ բայի ձևերը արևմտահայերենում գործածական են՝ **լուամ, լուայի, կը լուամ, կը լուայի, պիտի լուամ, պիտի լուայի** նն:

Յուսալ բայն ունի նաև հրամայականի ձևերը՝ **յուսա՛, յուսացե՛ք:**

Պակասավոր բայերի խոնարհման ընդհանուր պատկերը արևմտահայերենում հետևյալն է.

Եմ

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

եմ	ենք
ես	եք
է	են

Անկատար անցյալ

էի	էինք
էիր	էիք
էր	էին

Խոնարհման պակասը լրացվում է **ըլլալ** բայի համապատասխան ձևերով:

Կամ

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

կամ	կանք
կաս	կաք
կայ	կան

Անկատար անցյալ

կայի	կայինք
կայիր	կայիք
կար	կային

Խոնարհման պակասը լրացվում է **ըլլալ** բայի համապատասխան ձևերով:

Գիտեմ

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

գիտեմ	գիտենք
գիտես	գիտեք
գիտէ	գիտեն

Անկատար անցյալ

գիտի	գիտինք
գիտիր	գիտիք
գիտէր	գիտին

Խոնարհման պակասը լրացվում է **գիտնալ** բայի համապատասխան ձևերով. վաղակատար՝ **գիտցեր**, հարակատար՝ **գիտցած**, ենթակայական՝ **գիտցող**, անցյալ կատարյալ՝ **գիտցայ**, հրամայական՝ **գիտցի՛ր**, **գիտցէ՛ք**:

Ունիմ

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

ունիմ	ունինք
ունիս	ունիք
ունի	ունին

Անկատար անցյալ

ունեի	ունեինք
ունեիր	ունեիք
ուներ	ունեին

Խոնարհման պակասը լրացվում է **ունենալ** բայով, որը խոնարհվում է **կենալ** բայի պես. վաղակատար՝ **ունեցեր**, հարակատար՝ **ունեցած**, ենթակայական՝ **ունեցող**, անցյալ կատարյալ՝ **ունեցայ**, հրամայական՝ **ունեցի՛ր**, **ունեցե՛ք**:

Պարտիմ

Ըղծական եղանակ

Ըղծական ապառնի

պարտիմ	պարտինք
պարտիս	պարտիք
պարտի	պարտին

Ըղծական անցյալի ապառնի

պարտեի	պարտեինք
պարտեիր	պարտեիք
պարտեր	պարտեին

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

կը պարտիմ	կը պարտինք
կը պարտիս	կը պարտիք
կը պարտի	կը պարտին

Անկատար անցյալ

կը պարտեի	կը պարտեինք
կը պարտեիր	կը պարտեիք
կը պարտեր	կը պարտեին

Ապառնի

պիտի պարտիմ	պիտի պարտինք
պիտի պարտիս	պիտի պարտիք
պիտի պարտի	պիտի պարտին

Անցյալի ապառնի

պիտի պարտի	պիտի պարտինք
պիտի պարտիր	պիտի պարտիք
պիտի պարտեր	պիտի պարտին

Խոնարհման պակասը լրացվում է **պարտաւորութիւն** (կամ **պարտաւոր ըլլալ**) բայով, որ խոնարհվում է կրավորական բայերի նման. վաղակատար՝ **պարտաւորութեւր**, հարակատար՝ **պարտաւորուած**, ենթակայական՝ **պարտաւորուող**, անցյալ կատարյալ՝ **պարտաւորուեցայ**, հրամայական՝ **պարտաւորուէ՛**, **պարտաւորուեցէ՛ք**:

Կրնամ, կարենամ

ենթակայական դերբայ՝	կրցող
վաղակատար դերբայ՝	կրցեր
Հարակատար դերբայ՝	կրցած

Այս բայն ունի բոլոր ժամանակաձևերը՝ բացի հարկադրական եղանակի ապառնի և անցյալի ապառնի, ըղծական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերից, որոնք լրացվում են **կարենալ** բայի համապատասխան ժամանակաձևերով: Այս երկու բայերը լրացնում են մեկը մյուսին, քանի որ **կարենալ**–ը չունի այն ժամանակաձևերը, որոնք ունի **կրնամ** բայը: Այսպես՝

Ըղծական եղանակ

Ըղծական ապառնի

կարենամ	կարենանք
կարենաս	կարենաք
կարենայ	կարենան

Ըղծական անցյալի ապառնի

կարենայի	կարենայինք
կարենայիր	կարենայիք
կարենար	կարենային

Սահմանական եղանակ

Ապառնի

պիտի կարենամ
պիտի կարենաս
պիտի կարենայ

Անցյալի ապառնի

պիտի կարենայի
պիտի կարենայիր
պիտի կարենար

պիտի կարենանք
պիտի կարենաք
պիտի կարենան

պիտի կարենայինք
պիտի կարենայիք
պիտի կարենային

Երեւիլ

Այս բայն ունի սահմանական ներկա և անցյալ, ապառնի և անցյալի ապառնի, ըղծական ապառնի և ըղծական անցյալի ապառնի, ինչպես նաև հրամայականի ժամանակաձևերը:

Այսպես

Ըղծական եղանակ

Ըղծական ապառնի

երեւիմ
երեւիս
երեւի

երեւինք
երեւիք
երեւին

Ըղծական անցյալի ապառնի

երեւէի
երեւէիր
երեւէր

երեւէինք
երեւէիք
երեւէին

Սահմանական եղանակ

Անկատ. ներկա

կ'երեւիմ
կ'երեւիս
կ'երեւի

կ'երեւէի
կ'երեւէիր
կ'երեւէր

Ապառնի

պիտի երեւիմ
պիտի երեւիս
պիտի երեւի

Անցյալի ապառնի

պիտի երեւէի
պիտի երեւէիր
պիտի երեւէր

կ'երեւինք
կ'երեւիք
կ'երեւին

կ'երեւէինք
կ'երեւէիք
կ'երեւէին

պիտի երեւինք
պիտի երեւիք
պիտի երեւին

պիտի երեւէինք
պիտի երեւէիք
պիտի երեւէին

Հրամայական եղանակ

երեւէ՛ երեւ(ե)ցէ՛ք

Խոնարհման պակասը լրացվում է երեւնալ բայով:

Թողուլ

Ինչպես արդեն նշվել է, **թողուլ**–ը արևմտահայերենում ու խոնարհում ունեցող միակ բայն է, որ ունի գրեթե բոլոր ժամանակածները: Այսօր գործածական չեն այդ բայի անկատար անցյալը (**կը թողուի, կը թողուիր, կը թողուր, կը թողուինք, կը թողուիք, կը թողուին, անցյալի ապառնին (պիտի թողուի, պիտի թողուիր նն) և ըղծական ապառնին (թողուի, թողուիր, թողուր, թողուինք, թողուիք, թողուին):**

Գործնական նկատառումներով ներկայացնում ենք այդ բայի խոնարհման ընդհանուր հարացույցը՝ դրական և ժխտական խոնարհմամբ:

Պատկերն այսպիսին է.

Դերբայներ

Անորոշ՝	թողուլ	Ենթակայական՝	թողող
Ապառնի՝	թողելու	Ընթացակցական՝	թողելէն
Հարակատար՝	թողած	Ժխտական՝	թողեր
Վաղակատար՝	թողեր		

Դրական խոնարհում

Ըղծական եղանակ	Սահմանական եղանակ
Ըղծական ապառնի	Անկ. ներկա Վաղակ. ներկա Վաղակ. անցյալ

թողում	կը թողում	թողեր են	թողեր էի
թողուս	կը թողուս	թողեր ես	թողեր էիր
թողու	կը թողու	թողեր է	թողեր էր
թողունք	կը թողունք	թողեր ենք	թողեր էինք
թողուք	կը թողուք	թողեր էք	թողեր էիք
թողուն	կը թողուն	թողեր են	թողեր էին

Հարակ. ներկա	Հարակ. անցյալ	Ապառնի	Անցյալ կատ.
թողած են	թողած էի	պիտի թողում	թողուցի
թողած ես	թողած էիր	պիտի թողուս	թողուցիր
թողած է	թողած էր	պիտի թողու	թողուց
թողած ենք	թողած էինք	պիտի թողունք	թողուցինք
թողած էք	թողած էիք	պիտի թողուք	թողուցիք
թողած են	թողած էին	պիտի թողուն	թողուցին

Հարկադրական եղանակ

Հարկադրական ապառնի	Հարկադրական անցյալի ապառնի
թողելու են	թողելու էի
թողելու ես	թողելու էիր
թողելու է	թողելու էր
թողելու ենք	թողելու էինք
թողելու էք	թողելու էիք
թողելու են	թողելու էին

Հրամայական եղանակ

թո՛ղ թողէ՛ք // թողուցէ՛ք (հնց.)

Ժխտական խոնարհում

Ըղծական եղանակ	Սահմանական եղանակ	
Ըղծական ապառնի	Անկատար ներկա	Անկատար անցյալ
չթողում	չեն թողուր	չէի թողուր
չթողուս	չես թողուր	չէիր թողուր
չթողու	չի թողուր	չէր թողուր

չթողունք	չենք թողուր	չէինք թողուր
չթողուք	չէք թողուր	չէիք թողուր
չթողուն	չեն թողուր	չէին թողուր

Վաղակ. ներկա	Վաղակ. անցյալ	Հարակ. ներկա	Հարակ. անցյալ
չեմ թողեր	չէի թողեր	չեմ թողած	չէի թողած
չես թողեր	չէիր թողեր	չես թողած	չէիր թողած
չէ թողեր	չէր թողեր	չէ թողած	չէր թողած
չենք թողեր	չէինք թողեր	չենք թողած	չէինք թողած
չէք թողեր	չէիք թողեր	չէք թողած	չէիք թողած
չեն թողեր	չէին թողեր	չեն թողած	չէին թողած

Հարկադրական եղանակ

Ապառնի	Անցյալ կատ.	Հարկ. ապառնի	Հարկ. անց. ապառնի
պիտի չթողում	չթողուցի	թողելու չեմ	թողելու չէի
պիտի չթողուս	չթողուցիր	թողելու չես	թողելու չէիր
պիտի չթողու	չթողուց	թողելու չէ	թողելու չէր
պիտի չթողունք	չթողուցինք	թողելու չենք	թողելու չէինք
պիտի չթողուք	չթողուցիք	թողելու չէք	թողելու չէիք
պիտի չթողուն	չթողուցին	թողելու չեն	թողելու չէին

Հրամայական եղանակ

մի՛ թողուր մի՛ թողուք

Պակաս ծները լրացվում են **թողնել** բայով:

Երդնուլ

Գործածական են այս բայի միայն անկատարի հիմքից կազմված սահմանական ներկայի և ապառնիի, ինչպես նաև ըղծական ապառնիի ձևերը: Կազմության սկզբունքները նույն **թողուլ** բայի նման են: Այսպես՝

Ըղծական եղանակ	Սահմանական եղանակ	
Ըղծական ապառնի	Անկատար ներկա	Ապառնի
երդնում	կ'երդնում	պիտի երդնում
երդնուս	կ'երդնուս	պիտի երդնուս
երդնու	կ'երդնու	պիտի երդնու
երդնունք	կ'երդնունք	պիտի երդնունք
երդնուք	կ'երդնուք	պիտի երդնուք
երդնուն	կ'երդնուն	պիտի երդնուն

խոնարհման պակասը լրացվում է **երդում ընել** հարադիր բայի ժամանակաձևերով. «Ձինուորները **երդում ըրին** և գացին բռնելու իրենց դիրքերը» (Մուշեղ Իշխան):

Կա նաև **երդուիլ** սովորական ձևը, որը խոնարհվում է **սորվիլ** բայի օրինակով:

Պակասավոր բայերի երկրորդական վերլուծական ժամանակաձևերը և ժխտական խոնարհման ձևերը կազմվում են նշված խոնարհումների ընդհանուր սկզբունքներին համապատասխան:

Օրինակներ անկանոն և պակասավոր բայերի գործածության՝ «—Բարեկամ,— **ըսի**,— ինչո՞ւ **կու լաք**... Հայրենիքի կարօ՞տն է արդեօք...», «Հշարունակեց. ու գլուխը **ինկաւ կուրծքին վրայ ու աչքերը նայեցան ծովուն**», «Որքան մօտ **գացինք** իրենց, նոյնքան հեռացան անոնք մենէ, միշտ միեւնոյն անջրպետը պահելով մէջերնիս» (Երուխան), «**Թողէ՛ք, թողէ՛ք կորչի**: Ես ձօն ունիմ ձօնելու: **Առէ՛ք** թասերը», «**Գացէ՛ք... թաղեցէ՛ք...** ձեր եկեղեցիի սեմին. հին աստուածներու սեմին», «**Մի՛ ըներ**: Իշխա՛ն, մի՛ ըներ: Անգամ մը միայն լսէ՛ կնոջդ խօսքին: Մի՞թէ **չե՞ս տեսներ** հոգիիս խռովքը», «**Գնա՛**, դուն ալ գնա փորէ՛

քու փոսդ ու թող իմինս ինձի» (Լ. Շանթ), «Ծերունին լուսակալին վրայ դրաւ ճրագը ու գնաց պատուհանին հայեց ճակատը» (Ս. Մեծարեան), «Այսպէս ծներ ենք: Քսան դար մեր երկիրը չկրցաւ գիտնալ թէ որո՞ւ մաս կը կազմէր, արեւելքի՞ն թէ արեւմուտքին... Անիկա չի կրնար զատուիլ մեծ քաղաքակրթութեան փէշէն» (Ա. Ծառուկյան), կամ «Առանց շեշտի՝ ալ կը դադրի մակբայ ըլլալէ եւ կը դառնայ շաղկապ», «Աղուեսը խակ է գտեր խաղողը, որուն չէ կրցեր հասնիլ», «Ոչ մէկ բանաստեղծ չի կրնար ըլլալ աւելի մեծ քան կեանքը»:

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայի ժխտական խոնարհման ձևերը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում կազմվում են չ, իսկ հրամայականի դեպքում մի՛ մասնիկների միջոցով: Տարբերությունները դրսևորվում են կոնկրետ ժամանակաձևերի կազմության և առանձին ձևերի կիրառության մեջ:

Ծանդակ բայի ժխտականը կազմվում է՝ դրական ձևերի վրա չ ժխտական մասնիկը ավելացնելով. ներկայի եզակի երրորդ դեմքը ունի չի մասնիկը: Այսպես՝

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

չեմ	չենք
չես	չեք
չի	չեն

Անկատար անցյալ

չէի	չէինք
չէիր	չէիք
չէր	չէին

Սահմանական եղանակի անկատար ներկան և անկատար անցյալը բոլոր բայերի համար կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և ժխտական դերբայով: Վերջինը, ինչպես նշվել է, արևմտահայերենում կազմվում է անորոշ դերբայի լ—ն ր—ի փոխելու միջոցով. ի խոնարհման բայերը ունենում են զուգաձևեր՝ ի և ե խոնարհմամբ: Ի—ով ձևերը գործածվում են անկատար ներկայի, իսկ ե—ով ձևերը՝ անկատար անցյալի կազմության մեջ: Արևելահայերենում այս ժամանակաձևերը և՛ դրական, և՛ ժխտական խոնարհման դեպքում ունեն վերլուծական կազմություն. ժխտական օժանդակ բայը դրվում է նախադաս՝ դերբայից առաջ՝ գրում եմ —

չեն գրում, խոսում են – չեն խոսում: Արևմտահայերենում այս ժամանակածների դրականը ունի համադրական, իսկ ժխտականը՝ վերլուծական կազմություն. բաղադրվում են ժխտական դերբայից և օժանդակ բայի ժխտական ձևերից, որոնք դրվում են դերբայից առաջ՝ **կը գրեն – չեն գրեր, կը գրէի – չէի գրեր, կը խօսին – չեն խօսիր, կը խօսէի – չէի խօսեր:**

Օրինակ՝ «Աբիսողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանաւորի ալ չէր նմաներ, արիեստաւորի ալ չէր նմաներ, գործաւորի ալ չէր նմաներ, եւ վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չկայ» (Յ. Պարոնյան), «Շուտ չի փախչիր մութը» (ՍՍ), «Գեղեցիկ եւ արժեքաւոր թատերգութիւններ չեն ստեղծուիր, որովհետեւ հասարակութեան ճաշակը ցած էր»:

Պատկերն այսպիսին է.

Անորոշ դերբայ՝	գրել	սորվիլ	կարդալ
Ժխտ. դերբայ՝	գրեր	սորվիր (սորվեր)	կարդար
Անկ. ներկա՝	չեն գրեր	չեն սորվիր	չեն կարդար
Անկ. անցյալ՝	չէի գրեր	չէի սորվեր	չէի կարդար
Անորոշ դերբայ՝	թռչիլ	մոռնալ	մտնել
Ժխտ. դերբայ՝	թռչեր (թռչիր)	մոռնար	մտներ
Անկ. ներկա՝	չեն թռչիր	չեն մոռնար	չեն մտներ
Անկ. անցյալ՝	չէի թռչեր	չէի մոռնար	չէի մտներ

Արևմտահայերենում օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի չի–ն ծայնավորով սկսվող բայերից առաջ ենթարկվում է հնչյունափոխության. ի–ն սղվում է, և դրա փոխարեն գրավոր խոսքում դրվում է ապաթարց, ինչպես՝ **չի երգեր – չ'երգեր, չի երթար – չ'երթար, չի ըլլար – չ'ըլլար:** **Օրինակ՝** «Ամուսնական կեանքին համար անբաւական յատկութիւն մըն է աս՝ եւ չնչին անհամաձայնութիւններ, որոնց պատճառը չ'ըմբռներ, անպակաս են մեր մէջ...» (Գ. Զոհրապ), «Եւ ալ չ'երգեր արիւնիս մէջ, Կախարդ երգը Լիբանանի քնարերգակ շոճիներուն» (Լ. Շանթ):

Բացառություն են կազմում ունիմ և կամ բայերը, որոնք սահմանական ներկան և անցյալը բաղադրում են չ մասնիկի կցումով. ունիմ բայը չի ունենում ապաթարց, քանի որ կազմվում է չ մասնիկով, ինչպես՝

Սահմանական եղանակ

Անկատար ներկա

չունիմ չկամ

չունիս չկաս

չունի չկայ

չունինք չկանք

չունիք չկաք

չունին չկան

Անկատար անցյալ

չունեի

չունեիր

չուներ

չունեինք

չունեիք

չունեին

չկայի

չկայիր

չկար

չկայինք

չկայիք

չկային

Չարակատար ներկա և հարակատար անցյալ ձևերի ժխտականը կազմվում է համապատասխան դերբայով և օժանդակ բայի ժխտականի ձևերով, ինչպես՝ **չեմ գրած, չէի գրած, չեմ սորված, չէի սորված** ևն:

Չարակատարով ժխտական կազմություններում կանոնական է օժանդակ բայի նախադաս կիրառությունը՝ **չեմ գրած, չեմ սորված, չեմ կարդացած**, թեև ինչպես ցույց են տալիս արևմտահայ և սփյուռքահայ գրականությունից քաղված օրինակները, օժանդակ բայի ժխտական ձևերը դրվում են նաև վերջադաս, ինչպես՝ «Երբ մեկն ձեր պատկերն ունենալ փափաքի, եւ դուք պատասխանէք, թէ պատկերս քաշել տուած չեմ, խաւարեալ մարդու տեղ կը դնեն ձեզի» (Յ. Պարոնյան), «Իր փոքրիկ աղջկան՝ Սիրվարդի վիճակը թէւ փոփոխութիւն մը **չէր կրած**, բայց միշտ տկար ու նիհար կը մնար» (Ե. Օտյան), «Նուազք շարքին մէջ Ալիշանի զգայնութիւնը **չէ գտած** տպաւորիչ, ինքզինքը պարտադրող կշիռ» (Յ. Օշական), «Բայց շարականներու մէջ անիկա երբեք խնդիր **չէ եղած**» («Հասկ»):

Մի կարևոր յուրահատկության մասին եւս. ինչպես վերը նշվեց, օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի **չի**—ն ձայնավորով սկսվող բայերից առաջ ենթարկվում է հնչյունափոխության. **ի**—ն սղվում է, որը գրավոր խոսքում արտահայտվում է ապաթարցով, ինչպես՝ **չի երգեր — չ'երգեր, չի ըներ — չ'ըներ, չի օգներ — չ'օգներ**, մինչդեռ ըզմական անցյալի ապառնիի եզակի երրորդ դեմքի կազմության մեջ **չ** ժխտական մասնիկը ուղղակի ավելանում է բայահիմքին և, բնականաբար, առանց ապաթարցի, ինչպես՝ **չերգեր, չըներ, չօգներ** (իբրև անցյալի ձևեր սրանք գրվում են է—ով). բանավոր խոսքում արտասանվում են առանց

դադարի: **Օրինակ՝** «Պիտի **չօգնէր** ինձի վրանը լարելու, եւ **չօգնեց**: Խմբապետը արդէն յաճախ **չ'օգնէր** մեզի. կը ձգէ մեզ առանձին, ու այդպէս է որ պիտի վարժուինք ըլլալ ինքնաբաւ» (ՀԹ): Դժվար չէ նկատել նաև, որ ներկայի ժխտականի կազմութեան մեջ արտասանութեան ժամանակ շեշտվում է բառի ոչ թե վերջին (ինչպես ըղձականի դեպքում), այլ առաջին վանկը. հմմտ.՝ **չ'ը'ներ** (չի անում) – եթէ **չընէ'ր** (չաներ), **չ'ուզեր** (չի ուզում) – թող **չուզէ'ր** (թող **չուզեր**):

Այոս համադրական ժամանակածների (անցյալ կատարյալ, ապառնի, անցյալի ապառնի, ըղձական անցյալի ապառնի և ըղձական ապառնի) ժխտականը նույնպես կազմվում է՝ չ մասնիկը ավելացնելով դրական բայածներին: Ըստ որում, եթե արևելահայերենում գործածական են հարկադրականի ժխտական կազմության երկու տարբերակներն էլ՝ եղանակիչին կամ բայածինն միացած չ ժխտական մասնիկով (**չպիտի գրեմ** // **պիտի չգրեմ**), ապա արևմտահայերենի քերականության դասագրքերում նշվող կանոնների համաձայն՝ նույն ձևերի համար (ապառնի և անցյալի ապառնի) ընդունելի են բայածնի չ ժխտականով կազմությունները՝ **պիտի չգրեմ**, ինչպես՝ «Երբ չգրեմք, կը մթագնինք, իսկ երբ գրեմք, ըսենք մանաւանդ խօսքեր, զոր մեր խելքովը կը երեւկայենք, թէ ուրիշ մը **պիտի չկրնար** գտնել, ըսել, կը պայծառանանք, կը ճառագայթենք» (Մնձուրի), «Գիտեմ, որ բան մը **պիտի չշահիմ**» (Ռ. Հատտեճյան):

Գրավոր խոսքում, սակայն, հաճախ են հանդիպում նաև եղանակիչին միացած չ ժխտական մասնիկով կազմություններ՝ **չպիտի գրեմ**, ինչպես՝ «Թողէ՛ք, որ յանձնուիմ սիրած պատրանքներուս և երջանկանամ՝ մտածելով, որ հայերէնս **չպիտի մոռնամ** ես, իբրեւ բացառութիւն: **Չպիտի մոռնամ, չպիտի մոռնամ**» (Շ. Նարդուհի), «Երդում ընենք որ բնաւ **չպիտի բանանք** բերդին դռները» (Մուշեղ Իշխան), «Յաղթականը ե՛ս եմ. երբէ՛ք, երբէ՛ք **չպիտի համարձակիս** ոչ իսկ բառ մը արտասանել», «Անշուշտ, չե՞ս հասկնար, որ ճիշդ հակառակը ըսել կ'ուզէ, թէ ալ բան մը **չպիտի կորսուի**, քանի որ կին կայ, եւ սէր, եւ մերկութիւն, եւ լռութիւն...», «Այդպէս **չպիտի լար** անշուշտ, եթէ քիչ մը գոնէ կարենար ինքզինքը պարպել» (Շ. Շահնուր):

Այս հանգամանքը խոսում է արևմտահայերենում ապառնիի այդ կազմության կանոնարկման մասին:

Ընդհանուր պատկերն այսպիսին է՝

Անցյալ կատարյալ՝	չգրեցի	չսորվեցայ
Ըղծական ապառնի՝	չգրեմ	չսորվիմ
Ըղծ. անցյալի ապառնի՝	չգրեի	չսորվեի
Ապառնի՝	պիտի չգրեմ	պիտի չսորվիմ
Անցյալի ապառնի՝	պիտի չգրեի	պիտի չսորվեի
Անցյալ կատարյալ՝	չկարդացի	չմոռցայ
Ըղծական ապառնի՝	չկարդամ	չմոռնամ
Ըղծ. անցյալի ապառնի՝	չկարդայի	չմոռնայի
Ապառնի՝	պիտի չկարդամ	պիտի չմոռնամ
Անցյալի ապառնի՝	պիտի չկարդայի	պիտի չմոռնայի

Սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակները չունեն ժխտական ձևեր, քանի որ դրանք համանուն կլինեին անկատարի ձևերին: Դրանց փոխարեն գործածվում են հարակատարի ժխտական ձևերը:

Գործածական չէ նաև հարկադրական եղանակի ժամանակաձևերի ժխտականը՝ **գրելու չեմ, գրելու չես, գրելու չէ, գրելու չէի, գրելու չէիր, գրելու չէր:** Դրանց իմաստն արտահայտվում է ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերով:

Ծանոթություն: Գրական լեզվից դուրս են մղվել բարբառային և հնացած մի շարք կազմություններ՝ կամ բայի ժխտական ձևերը՝ **չը կար, չի կար, չըկայ, ինչպես նաև չի (չը) մասնիկի զուգահեռ գործածությունը** դերբայական ձևերում, հարկադրական և սահմանական եղանակի ժամանակաձևերում, հիմնականում անկատար ներկայում և անցյալ կատարյալում, որոնցում գրական լեզվի կանոնով պետք է լիներ **չ, ինչպես՝ չը պատմած, չի կրցայ, չի պիտի գար, չի պիտի թողում, չի հատնող, կամ՝ «Լոյսը չի ծագած կ'երթար հեռաւոր...» (Ռ. Սևակ), «Այս դռնակէն մինչեւ այսօր ներս չի մտած» (Սիմանթո)** ևն:

Արգելական հրամայականը կազմվում է **մի** մասնիկով, որ եզակի թվում ավելանում է ոչ թե դրականի ձևերի վրա, ինչպես արևելահայերենում է, այլ անորոշ դերբայի այնպիսի ձևի վրա, որի լ—ն փոխված է ր—ի (ժխտական դերբայ)՝ **մի՛ կարդար, մի՛ խօսիր, մի՛ երգեր, մի՛ թողուր,**

մի՛ հարցուր, մի՛ մօտենար, մի՛ խոստանար ևն: Օրինակ՝ «Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ. ե՛կ, մի՛ դողալր, մօտեցի՛ր հոս, Անլաց աչօք դիտե՛ զորդիդ, Ու իւր վերքերն արիւնահոս» (Մ. Պեշկեթաշլյան), «Մի՛ տրտնջար. քիչ ունի թէ շատ, ինչ որ ունի քեզի տըւեր է» (Լ. Շանթ):

Հոգնակի արգելականը կազմվում է՝ մի մասնիկը ավելացնելով ըղծական ապառնիի հոգնակի երկրորդ դեմքի վրա՝ մի՛ գրեք, մի՛ խօսիք, մի՛ կարդաք, մի՛ մոռնաք, մի՛ գրուիք, մի՛ փախչիք: Օրինակ՝ «Բայց բանաստեղծութեան մը կէսը լեզուն է, մի՛ մոռնաք ասիկա» (Հ. Օշական):

Անցերաժանց բայերի ժխտական խոնարհման ընդհանուր պատկերը

**Ըղծական եղանակ
Ըղծական ապառնի**

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
չգրեմ	չսորվիմ	չկարդամ
չգրես	չսորվիս	չկարդաս
չգրե	չսորվի	չկարդայ
չգրենք	չսորվինք	չկարդանք
չգրեք	չսորվիք	չկարդաք
չգրեն	չսորվին	չկարդան

Ըղծական անցյալի ապառնի

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
չգրեի	չսորվեի	չկարդայի
չգրեիր	չսորվեիր	չկարդայիր
չգրեր	չսորվեր	չկարդար
չգրեինք	չսորվեինք	չկարդայինք
չգրեիք	չսորվեիք	չկարդայիք
չգրեին	չսորվեին	չկարդային

**Սահմանական եղանակ
Անկատար ներկա**

Ե խոնարհում

չեմ գրեր
չես գրեր
չի գրեր

չենք գրեր
չեք գրեր
չեն գրեր

Ի խոնարհում

չեմ սորվիր
չես սորվիր
չի սորվիր

չենք սորվիր
չեք սորվիր
չեն սորվիր

Ա խոնարհում

չեմ կարդար
չես կարդար
չի կարդար

չենք կարդար
չեք կարդար
չեն կարդար

Անկատար անցյալ

Ե խոնարհում

չէի գրեր
չէիր գրեր
չէր գրեր

չէինք գրեր
չէիք գրեր
չէին գրեր

Ի խոնարհում

չէի սորվեր
չէիր սորվեր
չէր սորվեր

չէինք սորվեր
չէիք սորվեր
չէին սորվեր

Ա խոնարհում

չէի կարդար
չէիր կարդար
չէր կարդար

չէինք կարդար
չէիք կարդար
չէին կարդար

Անցյալ կատարյալ

Ե խոնարհում

չգրեցի
չգրեցիր
չգրեց

չգրեցինք
չգրեցիք
չգրեցին

Ի խոնարհում

չսորվեցայ
չսորվեցար
չսորվեցաւ

չսորվեցանք
չսորվեցաք
չսորվեցան

Ա խոնարհում

չկարդացի
չկարդացիր
չկարդաց

չկարդացինք
չկարդացիք
չկարդացին

Ապառնի

Ե խոնարհում

պիտի չգրեմ
պիտի չգրես
պիտի չգրէ

պիտի չգրենք
պիտի չգրեք
պիտի չգրեն

Ի խոնարհում

պիտի չսորվիմ
պիտի չսորվիս
պիտի չսորվի

պիտի չսորվինք
պիտի չսորվիք
պիտի չսորվին

Ա խոնարհում

պիտի չկարդամ
պիտի չկարդաս
պիտի չկարդայ

պիտի չկարդանք
պիտի չկարդաք
պիտի չկարդան

Անցյալի ապառնի

Ե խոնարհում

պիտի չգրէի
պիտի չգրէիր
պիտի չգրէր

պիտի չգրէինք
պիտի չգրէիք
պիտի չգրէին

Ի խոնարհում

պիտի չսորվէի
պիտի չսորվէիր
պիտի չսորվէր

պիտի չսորվէինք
պիտի չսորվէիք
պիտի չսորվէին

Ա խոնարհում

պիտի չկարդայի
պիտի չկարդայիր
պիտի չկարդար

պիտի չկարդայինք
պիտի չկարդայիք
պիտի չկարդային

Չարակատար ներկա

Ե խոնարհում

չեմ գրած
չես գրած
չէ գրած

չենք գրած
չէք գրած
չեն գրած

Ի խոնարհում

չեմ սորված
չես սորված
չէ սորված

չենք սորված
չէք սորված
չեն սորված

Ա խոնարհում

չեմ կարդացած
չես կարդացած
չէ կարդացած

չենք կարդացած
չէք կարդացած
չեն կարդացած

Հարակատար անցյալ

Ե խոնարհում	Ի խոնարհում	Ա խոնարհում
չէի գրած	չէի սորված	չէի կարդացած
չէիր գրած	չէիր սորված	չէիր կարդացած
չէր գրած	չէր սորված	չէր կարդացած
չէինք գրած	չէինք սորված	չէինք կարդացած
չէիք գրած	չէիք սորված	չէիք կարդացած
չէին գրած	չէին սորված	չէին կարդացած

Հրամայական եղանակ

մի՛ գրեր	մի՛ սորվիր	մի՛ կարդար
մի՛ գրեք	մի՛ սորվիք	մի՛ կարդաք

Երկրորդական վերլուծական ժամանակների ժխտական խոնարհումը

Կազմության սկզբունքները նույնն են, ուստի համառոտության համար ներկայացնում ենք միայն **հարակատարով** կազմության եզակի առաջին դեմքի օրինակները:

Ըղծական եղանակ

Հարակատար ներկա՝ գրած չըլլամ սորված չըլլամ կարդացած չըլլամ
Հարակատար անցյալ՝ գրած չըլլայի սորված չըլլայի կարդացած չըլլայի

Սահմանական եղանակ

Հար. անկատար ներկա՝	գրած չեմ ըլլար	սորված չեմ ըլլար
Հար. անկատար անցյալ՝	գրած չէի ըլլար	սորված չէի ըլլար
Հար. ապառնի՝	գրած պիտի չըլլամ	սորված պիտի չըլլամ
Հար. անցյալի ապառնի՝	գրած պիտի չըլլայի	սորված պիտի չըլլայի
Հար. ներկա՝	գրած չեմ եղած	սորված չեմ եղած
Հար. անցյալ՝	գրած չէի եղած	սորված չէի եղած
Հար. անցյալ կատարյալ՝	գրած չեղայ	սորված չեղայ

Հար. անկատար ներկա՝	կարդացած չեմ ըլլար
Հար. անկատար անցյալ՝	կարդացած չէի ըլլար
Հար. ապառնի՝	կարդացած պիտի չըլլամ
Հար. անցյալի ապառնի՝	կարդացած պիտի չըլլայի
Հար. ներկա՝	կարդացած չեմ եղած
Հար. անցյալ՝	կարդացած չէի եղած
Հար. անցյալ կատարյալ՝	կարդացած չեղայ

Հարկադրական եղանակ

Հար. հարկ. ապառնի՝	գրած ըլլալու չեմ	սորված ըլլալու չեմ
Հար. հարկ. անց. ապ.՝	գրած ըլլալու չէի	սորված ըլլալու չէի
Հար. հարկ. ապառնի՝	կարդացած ըլլալու չեմ	
Հար. հարկ. անց. ապ.՝	կարդացած ըլլալու չէի	

Հրամայական եղանակ

Արգելական հարակատար

գրած մի՛ ըլլար	սորված մի՛ ըլլար	կարդացած մի՛ ըլլար
գրած մի՛ ըլլաք	սորված մի՛ ըլլաք	կարդացած մի՛ ըլլաք

Սոսկածանցավոր, բազմապատկական և կրավորական բայերի համադրական և վերլուծական ժամանակների ժխտական խոնարհման ընդհանուր պատկերը չենք ներկայացնում, քանի որ կազմության սկզբունքները նույնն են, ինչ աններածանց բայերինը⁸:

⁸ Արևմտահայերենի բայական համակարգի մասին տե՛ս նաև Յովի. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, Զ. Մելքոնեան, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրուս, 1987, Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Զոսեան, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1968, Կ. Առաքելեան, Արդի հայերէնի քերականութիւն, Բ. Գիրք, Բէյրութ, 1998, Ռ. Սպարապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:

ՄԱԿԲԱՅ

Արևմտահայերենում և արևելահայերենում մյուս խոսքի մասերը իրենց դրսևորումներում սկզբունքային տարբերություններ երևան չեն հանում: Իմաստային համակարգում դրանք ամբողջությամբ համընկնում են: Նկատվող տարբերությունները, այսպես կոչված, բառային և հնչյունական մակարդակի են*:

Նյութական իմաստ արտահայտող խոսքի մաս է. հայոց լեզվի երկու տարբերակներում էլ **մակբայները** գործողության հատկանիշ ցույց տվող բառեր են: Նախադասության մեջ դառնում է հիմնականում պարագա: Արևմտահայերենում առկա են մակբայների իմաստային նույն խմբերը, ինչ արևելահայերենում՝ ծնի՝ **աղէկ, արագ, առանձնաբար, որոշապէս, գաղտուկ, ահագնօրէն, տեղի՝ անդին, քովէ-քով, տուն առ տուն, ամէնուր, ժամանակի՝ վաղը, կանուխ, առտու, հիմակուրնէ, չափի ու աստիճանի՝ զգալաբար, ամբողջապէս, յոյժ** են: Տարբերությունները բառակազմության կամ հնչյունական ոլորտում են կամ առանձին բառերի կազմության ու կիրառության մեջ, ինչպես (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները)՝ այժմվանից – **հիմակուրնէ**, այստեղ-այնտեղ – **հոս-հոն**, այլևս – **ա՛լ**, ամենուր – **ամէնուր**, առայժմ – **հիմակուհիմա**, առավոտյան – **առտու**, առնվազն – **առ նուազն**, այս կողմը, այս կողմ – **ասդի, ասդին**, գաղտնի – **գաղտուկ**, դմնեդուռ – **դմնէ-դուռ**, դեմ հանդիման – **դէմ-յանդիման**, երեկվանից – **երեկուրնէ**, կողք կողքի – **քովէ-քով**, հետո – **ետքը**, ժամանակ առ ժամանակ – **ատեն ատեն**, ժամանակով – **ատենօք**, իզուր – **ի զուր**, լավ – **աղէկ**, կամաց – **կամաց // կամացուկ**, մի կողմ – **մէկդի**, միանգամից – **մէկէն // մէկէնիմէկ**, միշտ – **յար**, հաճախ – **յաճախ**, նախապես // սկզբից – **առաջուրնէ**, շուտ –

* 9 Այս հատվածի շարադրանքը հիմն. Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը... ժամանակակից հայերենում, Երևան, 1965:

կանուխ, սաստիկ – յոյժ, սկզբից, նորից – նորէն, առջևից – առաջուց,
վաղուց – շատոնց, փոքրուց – պզտիկուց, օրերից մի օր – օրին մէկը,
էգուց – վաղը են:

Բնագրային օրինակներ՝ «Ինքը շատոնց է, որ կը ճանչնար Նորայրը»
(Շ. Շահնուր), «Ցաւալին այն է, որ «Բարեկարգ» վարժարանին տնօրի-
նութիւնը առաջուց իմաց չի տար տղոց, թէ վարժարանը գոց է...» (Ե. Օտ-
յան), «**Յիմակ** աչքիս առջեւն էր ան, գաւառի մեծ գրագէտը, լուրջ, խո-
հուն, անժպիտ...» (Վահե Յայկ), «**Օր մ'օրանց** իր կնոջ երեսին չխնդաց.
օր արև չտեսաւ Թամար» (Համաստեղ), «Ան գրած է **քիչիկ մը** ընդառա-
ջելու համար զինքը պարուրող հիացումը» (Հ. Օշական), «Այնպէս ըրէք
...**ասդին** ցանեն, **անդին** քաղեն» (Հ. Պարոնյան), «Իմ մասիս խօսած էր
այնպէս, ինչպէս **ատենօք** կը խօսէր Պետրոս Դուրեանի վրայ», «Տղան
ինքզինքը գտաւ առանձին, **միս միմակ**, օդին, պարապին, անեզրութեան
մէջ» (Շ. Շահնուր), «**Ատենին** մեզի թելադրուած էր, որ մաքուր պահենք
մեր թաղը», «**Առջի օր** գացի հոն առաջին անգամ եւ տեսայ զայն», «Հոգ
չէ, **գալ տարի** շատ պիտի յոգնիմ» (ՀՔ):

Կամ՝

Ի՞նչ արբեցութեամբ ծովերն են կապոյտ,
Գետերն՝ հորդաջուր, աղբիւրներ՝ զեղուն,
Լիճեր՝ խաժագոյն, առուն՝ շուտափոյթ,
Լոռածամ առուն՝ որ կ'անցնի քովէն
Ուռեստաններու գեջ, լսնակապոյտ:

(Մ. Մեծարեմց)

Որպէս բառային կամ բառակազմական բնութի տարբերություն է
նշվում նաև այն, որ «Հայերենի երկու տարբերակները, պահպանելով
իմաստային նույնությունը, ցուցաբերում են նախընտրելի մոտեցում
մակբայակերտ այս կամ այն ածանցի կիրառության հարցում, ինչպես,
օրինակ (թավ տառերով տրվում են արևմտահայերեն օրինակները)
ահեղ – **ահեղապէս**, **ահեղօրէն**, առանձնապէս – **առանձնաբար**, կա-
մայականորեն – **կամայապէս**, կրկին – **կրկնապէս**, կանացիորեն – **կա-
նացիաբար**, հայավարի – **հայաբար**, պատահաբար – **պատահօրէն**,
պարզապէս – **պարզօրէն**, վստահաբար – **վստահորեն** – **վստահապէս**,

որոշակիորեն – որոշապես և այլն» (38, 174): Նույն ձևով նաև արագորեն – արագաբար, զանգվածաբար – զանգուածօրէն, արքայաբար – արքայօրէն, հայրաբար – հայրօրէն, միամտաբար – միամտօրէն, անհրաժեշտաբար – անհրաժեշտօրէն, եղբայրաբար – եղբայրօրէն ևն: Մակբայակերտ ածանցները արևմտահայերենում և արևելահայերենում այսպիսով ունեն նույն գործածությունը՝ միայն այն տարբերությամբ, որ առանձին դեպքերում դրանք կարող են մեկը մյուսին փոխարինել:

Բնագրային օրինակներ՝ «Պարզօրէն, ան ժամանակ եւ միջոցներ չունէր երկրորդական եւ անշահ գործերով զբաղելու» (Գ. Աճեմյան), «Թըքահայութեան մնացորդները, որ զանգուածօրէն խուճապային փախուստով եկած են ապաստանիլ այս կամ այն օտար երկիրը, իրենց ետեւ արհաւիրքի եւ սուգերու յիշատակն ունին գրեթէ միայն, ու ոչ մէկ կարելիութիւն իրենց երկիրը դառնալու» (Ա. Չոպանյան), «Ալիս միմակը հագուեցաւ, արագաբար սանտրուեցաւ, մտաւ ճաշասենեակ» (ԶԱ), «Այս պարագան կ'ուզենք անհրաժեշտօրէն ընդգծել», «Անկկա եղբայրօրէն վարուեցաւ» (ԵՏ):

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բայի չրացում կարող է դառնալ և մակբայաբար գործածվել նաև որակական ածականների մի զգալի մասը՝ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ «Լաւ աշակերտ» – «Վահանը լաւ կը խօսի»:

Ըստ կազմության լինում են ածանցավոր և քարացած հոլովական (քերականական) ձևերից ու նախդիրներից (ի, ընդ, ըստ, ց, գ) կազմված մակբայներ: Անիսկական բարդություններից առավել մեծ թիվ են կազմում կրկնավորները: Շատ են նաև այն մակբայները, որոնք կազմվում են գոյականների կրկնությամբ առ նախդրով՝ ըրպէ առ ըրպէ, կաթիլ առ կաթիլ, տուն առ տուն ևն:

Արևելահայերենում ավելի հաճախ են գործածվում նաև այնպիսի կրկնավոր մակբայներ, որոնց առաջին բաղադրիչը գրաբարյան կամ արևմտահայերենի բացառական բառածն է: Դրանք արևմտահայերենում համարվում են բառերի հարադրավոր կապակցություններ և գրվում են գծիկով՝ տնէ – տուն, ծորէ – ծոր, աշխարիէ – աշխարհ,

քարէ – քար, դռնէ – դուռ են: Այդ բարդությունների՝ առանձին բաղադրիչներով գրությունը (**քարէ քար, դռնէ դուռ, աշխարհէ աշխարհ**) այսօր հնացած է:

Հիշենք նաև, որ արևմտահայերենում կրկնավոր բարդությունները գրվում են նաև առանձին բաղադրիչներով՝ **տուն տուն, գյուղ գյուղ, դանդաղ դանդաղ, գոյգ գոյգ, կամաց կամաց, ատեն ատեն, ստեպ ստեպ** են:

Մակբայների են վերածվել նաև որոշ քերականական, հիմնականում հոլովական ծներ: Հասկանալի է, որ արևմտահայերենում դրանցից մի քանիսը ունեն համապատասխան քերականական կազմություններով պայմանավորված տարբերություններ, օրինակ՝ **առ նուազն, ատենօք, դժուարաւ, դիւրաւ, ըստ կամս, կամաւ, կարգաւ, հազիւ, հեռվից / հեռուրէն, մեկից / մէկէն, մէջէ մէջ, մէկէն ի մէկ, յառաջուց, նորից / նորէն, շտապով, ցկեանս, սկզբում / սկիզբը, վերիվարոյ, փոքրուստ, փոքր ի շատէ** են:

Օրինակ՝ «Խեղճ անասունը **դժուարաւ** կը ծամէր բերած դալար խոտս» (ՀՔ), «...Կարգ մը արտայայտութիւններ, այլապէս կրկնաբանութիւններ, **շատոնց ի վեր** սխալ չեն նկատուիլ», «Ձին **սկիզբը** դանդաղ կ'երթար, յետոյ սկսաւ արշաւել...» (ՊՊ), «Շաբաթ մը առաջ, **ետեւէ ետեւ** կարդացինք Եգիպտոսի մէջ խօսուած քանի մը ճառեր այս նիւթին շուրջ» (Ն. Սարաֆյան), «Ու քաղցրութիւն, ու գինովութիւն է մտքիդ առջեւ կեցնել այն աղջիկը, որ **օրին մէկը** նայեցաւ քեզի, որ քաշուեցաւ քու աչքերուդ հովէն...», «Դժբախտութիւնը կանուխէն ազդած էր նկարագրին վրայ. **պզտիկուց** կրած էր իր վրայ ինկող նայուածքներուն եսապաշտ կարեկցութիւնը» (Հ. Օշական), «Իրիկուան դէմ, երբ ստուերներ կը սեւնային ու կ'երկնմային ու արեգակը **Մարիամ** լերան ետեւը պահուըտուք կը խաղար ու նոր հարսի պէս **հեղ մը** կը կարմրէր, **հեղ մը** կը դեղնէր, թադին փոքրիկ աղջիկները աղբիւրին քով՝ բաց գետնին վրայ կը խմբուէին ու մանկական պար կը բռնէին» (Բ. Նուրիկյան), «Կ'ուզէի ըսել ձեզ **առաջուրէն**, որպէսզի չնեղուիք, բայց կարելի չեղաւ, մի՛ մեղադրէք զիս», «Գրական եւ գուտ երեւակայական գործերը սիրած էր **ատենօք**, բայց հիմայ չէր կրնար հանդուրժել անոնց» (Շ. Շահինուր), ««Կաթնապուր» կ'ըսէինք մենք **ատենին** ինծպէսներուն» (Գ. Սևան):

ԿԱՊ

Կապերը երկու գրականներում էլ իմաստաբանորեն բնորոշվում են նրանով, որ նյութական իմաստից զուրկ են և քերականական հարաբերություններ են արտահայտում: Որպես այդպիսին՝ կապերը հոլովական ձևերի համարժեքներ են և առանձին դեպքերում կարող են նրանցով փոխարինվել: Բայց և տարբերվում են դրանցից ոչ միայն նրանով, որ բառապաշարային համակարգի միավորներ են, այլև նրանով, որ, արտահայտելով քերականական հարաբերություններ, հիմնականում պահպանում են իրենց բառային անկախությունն ու նշանակությունը: Այս և իմաստային ու գործառական այլ հատկանիշներով կապերը երկու գրականներում տարբերություններ չեն դրսևորում: Ձևաբանորեն բնորոշվում են նրանով, որ դրանց մեծամասնությունը զուրկ է թեքման ձևերից: Շարահյուսական բնորոշ հատկանիշն այն է, որ նախադասության անդամ լինել չեն կարող. միշտ գործածվում են գոյականների ու գոյական իմաստ արտահայտող բառերի հետ: Կապերը միայն ստորադասական հարաբերության արտահայտիչներ են և կապում են միայն բառեր, իսկ շաղկապներն արտահայտում են և՛ համադասություն, և՛ ստորադասություն, կարող են կապել և՛ նախադասության անդամներ, և՛ բառեր:

Կապերի առաջացման ուղիները և կազմությունը արևմտահայերենում և արևելահայերենում սկզբունքային տարբերություններ չունեն: Պատմականորեն դրանք առաջացել և առաջանում են նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից՝ դրանց նյութական իմաստին զուգահեռ կամ դրա փոխարեն հարաբերության իմաստի զարգացմամբ: Հայտնի է, որ կապի կարող են վերածվել այն բառերը, որոնց մեջ առկա է հարաբերության իմաստ:

Կազմության մասնակի տարբերություններ կան գոյականի քերականական ձևերից առաջացած կապերի կազմության մեջ: Այսպես՝ երկու գրականներում էլ մի քանի բառերի բացառական հոլովածները, զրկվելով նյութական իմաստից, զուգահեռաբար արտահայտում են նաև հարաբերության իմաստ. արևելահայերենում՝ **ից**, արևմտահայերենում՝ **է(ն)** վերջավորությամբ, ինչպես՝ **երեսից / երեսէն**. «Նրա երեսից շատ են տուժել», «Անոր երեսէն շատ տուժած են», **ձեռքից / ձեռքէն**. «Քանի՞ ձեռքից են տանջվել», «Քանի՞ **ձեռքէն** տանջուած են»:

Արևելահայերենում կապերի դեր են կատարում մի քանի բառերի ներգոյական հոլովածներ՝ **ընթացքում, պարագայում, դեպքում, գործում, հարցում**: Արևմտահայերենում իբրև կապեր են գործածվում դրանց սեռական–տրականի ձևերը կամ սեռական–տրական և մէջ կապով կազմությունները՝ **ընթացքին** («երկու օրուան **ընթացքին**»), **պարագային** («հարցը քննարկելու **պարագային**»), **գործին մէջ** («միջոցներ ձեռնարկելու **գործին մէջ**»): **Դեպքում** կապի համարժեքը՝ **դեպքին**, արևմտահայերենում գործածական չէ և փոխարինվում է **պարագային** կապով, ինչպես՝ «ընդունվելու **դեպքում**» – «ընդունուելու **պարագային**»:

Կապերը արևմտահայերենում և արևելահայերենում բաժանվում են տարբեր տեսակների՝ նույն հիմունքներով. 1. ըստ կազմավորման աստիճանականության՝ **խսկական կապեր, անխսկական կապեր, կապական բառեր**, 2. ըստ կապերի՝ կապվող բառի նկատմամբ ունեցած շարադասության՝ **նախադրություններ, ետադրություններ և երկդիրք կապեր**, 3. ըստ արտահայտած հարաբերության բնույթի՝ **տարածական, վերաբերության, պատճառի, հիմունքի, նպատակի, ժամանակային, փոխարինության, ձևի և նմանության, միասնության, չափի** ևն:

Տարբերությունները դրսևորման ձևի և իմաստային–գործառական ոլորտներում են և խիստ մասնակի բնույթ են կրում:

Արևմտահայերենում գործածվում են կապեր, որոնք արևելահայերենում գործածական չեն, օրինակ՝ **քով** («Անոր **քով** երթալու էիր»), **ատեն / ատենին**, «Մեկնելու **ատեն** հանդիպեցանք»), **ետք** («Կաղանդէ առաջ կամ **ետք**»), **ասդին, անդին** («Լեռներէն **անդին** Եփրատն է, իսկ **ասդին** Արաքսը»):

Վրայ կապը գրաբարում (**վերայ**) չի ունեցել **մասին**, **վերաբերյալ** կապերի նշանակությունը: Արևմտահայերենում կապի՝ բարբառից ավանդված այդ նշանակությամբ գործածությունը օրինաչափ երևույթ է ասացական և զգացական բայերի հետ կապակցություններում՝ «**Դեռ կը խորհին լեռներու իրենց ազատ կեանքին վրայ**» (Դ. Վարուժան), «**Մի՛ խօսիր ինձի Աստուծոյդ վրայ**», «**Խորհեցալ Ոյժին վրայ մըտովի**» (Ռ. Սևակ), «**Երբ կը խորհին քու վրադ՝ Շուրջս երգի հին ծուեններ կը յածին...**» (Մուշեղ Իշխան):

Արևմտահայերենում համեմատաբար գործուն են գրաբարից փոխանցված քերականական քարացած ձևերը, որոնք գործածվում են որպես կապեր, ինչպես՝ **սկսեալ, ձեռամբ, ի խնդիր, ի տրիտուր, հանգոյն, առ ի, վասն, զերդ, միջոցաւ, պատճառաւ** ևն: Հնացած է և գրական լեզվում սովորական կիրառությամբ չի հանդիպում **ինչուան** կապը (ըստ կիրառության՝ նաև շաղկապ), որ ունի արևելահայերենի **մինչեւ** շաղկապի նշանակություն, ինչպես հետևյալ օրինակում՝ «**Չորրորդէն ինչուան եօթներորդ տները նոյն մէկ իմաստին կրկնութիւնն են**» (Դ. Ալիշան):

Պետք է նշել նաև, որ արևմտահայերենում անիսկական կապերը կարող են նաև որոշիչ հոդ ստանալ, ինչպես՝ «**ձեռքերուս մէջը**», «**արեւուն դէմը**», «**Աստծուս հետը տեսայ**» (Սիամանթո): Այսպես է նաև հոլովական քեք ձևերում՝ «**Անոր քովովը անցաւ**», «**Պարտեզի մէջէն քաղէք**» ևն:

Էական տարբերություններ չեն արձանագրվում կապերի խնդրառության մեջ. կապվող բառերի հոլովական կիրառությունները հիմնականում ունեն նույն դրսևորումները.

Ուղղական—հայցական հոլովով կապի խնդիր են պահանջում **ի, առ, քան, դէպի, մինչ, մինչեւ, նախքան, ինչպէս, իբրեւ, որպէս, ի վար, ի վեր, զերդ** կապերը, ինչպես՝ **մինչեւ իրիկուն, իբրեւ ուսուցչապետ, որպէս խօսնակ**:

Ինչպես արևելահայերենում, **առաջ և յետոյ** կապերը ուղղ. — հայց. հոլովի հետ են գործածվում միայն **Ժամանակ ցույց** տվող բառերի դեպքում՝ **եօթը վայրկեան առաջ, հինգ օր յետոյ**:

Հետո կապի հետ արևելահայերենում հավասարապես գործածական է նաև բացառականը՝ **հինգ օրից հետո**: Արևմտահայերենում, սակայն, սո-

վորական է բացառական հոլովի հետ **յետոյ**–ի փոխարեն **ետքը** կապի գործածությունը՝ **հինգ օրեն ետք, ատկե ետքը**, կամ՝ «...որոնք յեղափոխութիւնը ջատագովելով զայն **շահագործել ետքը** հիմակ սկսած են յեղափոխութեան հակառակորդ ծեւանալով ապրիլ, տեսնելով որ այդ միջոցը աւելի **շահաբեր է**» (Ե. Օտյան), «Յոտնկայս եւ միաբերան ըսուած այդ աղօթքն **ետք**, նորէն կը խառնուէինք իրարու» (Ա. Ծառուկյան) են:

Սեռական–տրական հոլովով կապի խնդիր է պահանջում կապերի ճնշող մեծամասնությունը՝ **մօտ, քով, վրայ, մէջ, պէս, համար, չափ, նման, հետ, միջեւ, ինչպես նաև՝ առանց, յանուն, ըստ, համաձայն, հակառակ, ընթացքին, առթիւ** են՝ **կերակուրին հետ, ստուերներու պէս, ձկնորսին համար, տարիներու ընթացքին, իմ քովս, համալսարանին մէջ, քրոջը հետ, անոր սիրոյն, կաթողիկոսի ձեռամբ, իմ կողմէ // կողմանէ**:

Նշված կապերից մի քանիսը՝ **վրայ, պէս, հետ, յանձինս, յօգուտ, ի դէմս, յանուն** են, անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հետ գործածվելիս, ինչպես արևելահայերենում, պահանջում են տրական հոլովով կապի խնդիր, ինչպես՝ **մեզի պէս, քեզի հետ, ձեզի նման, յանուն ինձի, յանձինս ձեզի** են, օրինակ՝ «Իրաւունք ունիմ, կարծեմ, **ինձի համար** տրուելիք ներկայացման **ձեզի պէս** ազնիւ մէկն ալ հրաւիրել», «Վնաս չունի, ես լեզուագէտ պիտի ըսեմ **ձեզի համար** եւ ծեր վրայօք գովեստով պիտի խօսիմ» (Դ. Պարոնյան), «**Ինձի համար** ամէն մէկ բառ պարտքին տակն է ինքզինքը անհրաժեշտ ընծայելու» (Դ. Օշական):

Բացառական հոլովով կապի խնդիր են պահանջում **աադին, անդին, դուրս, հեռու, զատ, վեր, վար, վերեւ, ներքեւ, բացի, ի վեր, յետոյ, սկսած // սկսեալ** կապերը **Վահանէն զատ, դռնէն դուրս, այսօրուրէն սկսեալ**:

Բացի կապի հետ **այս, այդ, այն** դերանունները և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում կարող են գործածվել ուղղական–հայցական հոլովով՝ **բացի այս, բացի այդ, բացի այն**:

Երկու գրականներում էլ գործիական հոլովով կապի խնդիր է պահանջում միայն **հանդերձ** կապը՝ «Համերգին եկած էր **հանդերձ ընտանեօք**»:

Կան մի քանի կապեր, որոնք հայերենի երկու տարբերակներում էլ կարող են դրվել տարբեր հոլովներով բառերի վրա: Այդպիսի կապեր են՝

առաջ, որպես, իբրեւ, ինչպէս, ի վեր սն՝ երկու *օր* առաջ, *դրան* առաջ, *ջոյեղեղէն* առաջ, կամ *Ձեզ՝* իբրեւ *տնօրէն*, *Ձեզի՝* իբրեւ *տնօրէնի*, *Ձեզմով՝* իբրեւ *տնօրէնով* են:

Արևմտահայերենում **համար** կապի խնդիր կարող է դառնալ **ինչո՞ւ** հարցական դերանունը, որ բնորոշ չէ գրական արևելահայերենին և դիտվում է ոճական ավելադրություն: **Օրինակ՝** «Հիմայ պարապ խօսքերով ժամանակ չանցընենք, քեզի լուր դրկեցի եւ բերել տուի՝ **ինչո՞ւ համար**, գիտե՞ս» (ՍԱ):

Բնագրային այլ օրինակներ՝ «Ուրիշներու պէս մենք ալ մեր կրօնքը ու հաւատը թաղեցինք պատերազմի **ընթացքին**», «Կռիւղ սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու **պարագային** ալ դուրս կու գայ» (Շ. Շահնուր), «Չորրորդ անգամ՝ ծնեռ **ատեն**, զնաց համալսարան, որովհետեւ իր սենեակին մէջ ցուրտ էր, ու վառելանիւթը կը պակսէր» (Ե. Օտյան):

Կամ՝

Ու լոյսերով պարածածկել հիւանդ հոգին.

Քոյր ունենալ ջուրին կարկաջն ու կապոյտ բալ,

Եւ ունկնդրել ճամբուն **քովերն** երգող սիւքին,

Մեծ քաղցրութեան մը խառնըուիլ, ու մենանա՛լ:

(Մ. Մեծարենց)

ՇԱՂԿԱՊ

Շաղկապը նույնպես նյութական իմաստից զուրկ և հարաբերությունն արտահայտող խոսքի մաս է: Ի տարբերություն կապերի, որոնք ցույց են տալիս գերադաս կամ խնդրառու բառի հարաբերությունը ստորադաս բառի նկատմամբ, շաղկապները կապում են նաև բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասության բաղադրիչներ, ինչպես նաև նախադասության համադաս անդամներ՝ արտահայտելով և՛ բառերի, և՛ նախադասությունների հարաբերություններ: Շաղկապների դերով հաճախ խոսքի մեջ գործածվում են նաև հարաբերական դերանունները: Տարբերությունն այն է, որ դերանունները ունեն նյութական իմաստ, կարող են դառնալ նախադասության անդամ: Շաղկապները նախադասության անդամ չեն դառնում, կատարում են սոսկ շարահյուսական, կապակցական դեր:

Շաղկապների՝ որպես քերականական հարաբերությունն արտահայտող բառերի փոխհարաբերությունը այլ խոսքի մասերի (կապ, դերանուն, մակբայ, եղանակավորող բառեր են) հետ երկու գրականներում էլ ունի նույն յուրահատկությունները:

Արևմտահայերենում և արևելահայերենում շաղկապը բնութագրվում է խոսքիմասային նույն հատկանիշներով.

ըստ շարահյուսական կապակցության եղանակի՝ դրանք լինում են համադասական՝ եւ, ու, բայց, իսկ, սակայն, կամ, նաեւ, այլեւ, նոյնիսկ, անգամ, թէ..., թէ..., բայց եւ, հետեւապես նն, և ստորադասական՝ որ, թէ, եթէ, որպեսզի, քանի որ, մինչեւ, մինչեւ որ, թէեւ, թեկուզ, որովհետեւ, առանց որ նն,

ըստ իմաստի՝ միավորիչ՝ եւ, ու, ալ, նաեւ, այլեւ, թէ..., թէ..., ոչ..., ոչ..., ոչ միայն ..., այլեւ նն, հակադրական՝ իսկ, բայց, սակայն, այնինչ, մինչդեռ, ոչ թէ..., այլ, թէ չէ, ապա թէ չէ նն, ժամանակային՝

երբ, երբ որ, մինչեւ, մինչեւ որ, քանի, քանի դեռ, որ, թէ չէ նմ, մեկ-
նական որ, թէ, պայմանի՝ եթէ, թէ, որ, միայն թէ, թէ որ, եթէ միայն
նմ, պատճառի և հիմունքի՝ քանի որ, որովհետեւ, չէ՞ որ, մանաւանդ
որ նմ, համեմատության՝ ինչպէս, ինչպէս որ, ասես, ասես թէ,
կարծես նմ,

ըստ կառուցվածքի՝ պարզ՝ որ, թէ, իսկ, բայց, մինչ, սակայն, մա-
նաւանդ նմ, և բաղադրյալ՝ միայն, որովհետեւ, եթէ, քանի որ, մինչդեռ,
որպէսզի, չնայելով որ նմ,

ըստ գործածության՝ մենադիր՝ իսկ, թէ, որ եթէ, բայց նմ, զուգահիժ՝
ոչ թէ..., այլ, չնայած..., բայց, թէեւ..., սակայն նմ, կրկնադիր՝ կա՛մ...,
կա՛մ, ե՛ւ..., ե՛ւ..., ...ալ, ...ալ նմ:

Կան առանձին շաղկապների կազմության ու կիրառության տարբե-
րություններ:

Արևմտահայերենում էլ շաղկապի փոխարեն գործածվում է գրաբար-
յան այլ շաղկապի հնչյունափոխված տարբերակը՝ ալ, օրինակ՝ «Իսկ
աննշան եթէ մնայ երկրի մէկ խորշն հողակոյտն իմ, Եւ յիշատակս ալ
թառամի, Ա՛խ, այն ատեն ես կը մեռնիմ» (Պ. Դուրյան), «Պիտի այլասե-
րինք ամենքս ալ, պիտի կորսուինք բոլորս ալ» (Շ. Շահնուր), «Ձգուշա-
ցիր այն բարեկամէդ որ քու թշնամիներուդ ալ կը յաճախէ» (ՀԳ):

Արևմտահայերենում գործածական է **առանց որ** շաղկապը, որը ար-
տահայտած իմաստով համընկնում է արևելահայերենի **չնայած, չնա-
յած որ** շաղկապներին՝ «Աչքերս կը լեցուէին, **առանց որ** ուզէի զգացած
յուզումս մատնել»: Արտահայտում է նաև **առանց** կապի նշանակություն
«Երբ հեղինակը կը փորձէ մեր առջեւ պարզել դէպքեր եւ տիպարներ,
առանց որ հանդիպած ըլլայ անոնց ապրող օրինակներուն, իր գործը
ծախողած է արդեն» (ԵՏ):

Արևելահայերենի **չնայած, չնայած որ** շաղկապների փոխարեն
արևմտահայերենում սովորաբար գործածվում է **չնայելով որ** շաղկա-
պը՝ «**Չնայելով որ** առտուընէ ի վեր բերանը բան չէր դրած, (այսուհան-
դերծ) անօթութիւն չէր զգար» (ԵՏ):

Արևելահայերենի **պայմանով որ** շաղկապը արևմտահայերենում
ծնափորվում է նաև գրաբարի քարացած քերականական ձևով՝ **պայմանաւ
որ**՝ «Երթամ պիտի անոր քով, **պայմանաւ որ** դուն ալ գալու ես»:

Երբ որ շաղկապը արևմտահայերենում գործածվում է նաև բաղադրիչների միասին գրությամբ՝ «Այն նաւը, որուն վրայ կնոջ պաշտամունքը կայ, այն նաւը չի կորսուիր նոյնիսկ **Երբոր** ընկղմի» (Շ. Շահնուր), «Մեր կիրքերը կը նմանին մեր զաւակներուն, կը սիրենք ու կը շոյենք զանոնք երբ տղայ են. բայց **Երբոր** մեծնան՝ կը նեղուինք անոնցմէ» (ԴԳ):

Կամ՝

Երբոր բացուին դռներն յուսոյ

Եւ մեր երկրէն փախ տայ ծմեռ...

Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,

Երբոր ծառերն հագնին տերեւ,

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա....

(Ն. Ռուսինյան)

Արևմտահայերենում համեմատաբար գործուն է **վասն զի** շաղկապը՝ «Կայարան փութացած էի զինքը ողջագուրելու, **վասն զի** մեր մանկութեան եւ պատանեկութեան մօտիկ ընկերներ եղած էինք» (ԵՏ):

Ձի և **քանզի** շաղկապները համարվում են հնացած:

Արևմտահայերենում չեն գործածվում արևելահայերենի **հենց, հենց որ, ոնց, ոնց որ** շաղկապները:

Արևմտահայերենում պայմանի շարահյուսական հարաբերություն են արտահայտում նաև բարբառներից փոխանցված **նէ** մասնիկով (ավելանում է բայի վերջում՝ **եթէ** նշանակությամբ) բաղադրված կառույցները՝ «Գրելու ըլլայի **նէ**, քեզի չէի հարցներ», կամ «Քիչ մը առաջ ժամուն բաւկը ըլլայիր **նէ**՝ եղածը կը տեսնայիր» (Ե. Օտյան), «Ըսոնք ամենը հայ ըլլային **նէ**, ի՞նչ կըլլար» (Վ. Մավյան):

Այդ մասնիկը չհաստատվեց գրական լեզվում՝ սխալմամբ ընկալվելով որպես թուրքերենից փոխանցված: Արևմտահայերենի քերականության առաջին օրինակներից մեկում դրա ձևավորման մասին կարդում ենք. «...կայ ստորադասականի յատուկ **նէ** մասնիկը (օրինակ՝ **թէ որ երթամ ճէ, տեսնես ճէ** եւն), որ սակայն արդի գրական լեզուի մէջ բոլորովին դադրած է գործածութենէ եւ կը կիրարկուի խօսուած լեզուի մէջ միայն: Այս **նէ** միջին հայերէնի մէջ ընդհանուր գործածութիւն ունէր նա ծելով, օրինակ՝ «Եւ **թէ** այսպէս չլինի զոր ասացաք, **նա** լաւ է այնպիսոյն որ բժշկութիւն չայնէ» (19, 163):

Ի դեպ, նույն **նէ** մասնիկը բարբառներում, մասամբ նաև խոսակցական լեզվում գործածվում է նաև հաստատական նշանակությամբ՝ «է», ես աշխօվս դեսա **նէ**» (տե՛ս 10, 139):

Երբեմն հանդիպում է նաև **նէ** մասնիկի շաղկապական կիրառությունը՝ **երբ** կամ **ոչ...**, **ոչ...**, շաղկապների նշանակությամբ, որ ակնհայտորեն խոսակցական լեզվի տարր է, ինչպես՝ «Յելէ հացերնիս ուտենք, ատենը ուշ է, ճրագը մարենք, ելլենք մէկտեղ, պառկինք, լուսնայ **նէ** կ'ըսեն» (Մճծուրի), «—Նէ՛ դուն հարցուր, **նէ**՛ ալ ես քեզի բացատրեն,— ըսաւ տղան» (Շ. Շահնուր):

Բանավոր խոսքում տարածված սխալ է **եթէ**—ով պայմանական նախադասություններում **նէ** մասնիկի գործածությունը, ինչպես՝ «**եթէ** տեսնես **նէ**, անոր փոխանցէ ըսածներս», «**եթէ** ասանկ շարունակես **նէ**, դժուարութիւններ կ'ունենաս կեանքիդ ճանապարհին»:

Հայտնի է, որ երբ նախադասությունը ստույգ, հավաստի միտք է արտահայտում, ապա նրա մաս կազմող երկրորդական նախադասությունը միանում է որ շաղկապով, իսկ երբ նախադասության միտքը թեական է, կասկածելի, գործածվում է **թե** / **թէ** շաղկապը, ինչպես՝ «Համոզուած եմ, որ հանդիպելու ենք», «Կը տարակուսէի, **թէ** հանդիպելու ենք»: Կարծիք կա, որ «արեւմտահայերէն խօսքի մէջ այս երկու շաղկապներուն գործածութեան սահմանը միշտ յստակ քաշուած չէ. «Կը նկատեմ որ կը կասկածիս ըսածիս ճշդութեան» ճիշդ է, սակայն **եթէ** հոս որ—ի փոխարէն **թէ** գործածեինք, սխալ պիտի չհամարուէր: Այդպէս նաեւ՝ վստահ է որ — վստահ է **թէ**, գիտէ որ — գիտէ **թէ** եւայլն» (տե՛ս 33, 54):

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Եղանակավորող բառերը (վերաբերականները) և ծայնարկությունները առանձին խումբ են կազմում այն իմաստով, որ երկուսն էլ խոսողի վերաբերմունքի արտահայտիչներ են: Դրանք տարբեր խոսքի մասեր են համարվում այն հիմքով, որ եղանակավորող բառերն արտահայտում են դատողական, մտածական վերաբերմունք, իսկ ծայնարկությունները՝ զգացական վերաբերմունք, հույզ: Հենց այդ տարբերություններով էլ պայմանավորված են դրանց կիրառությունները: Արևմտահայերենում և արևելահայերենում այդ երկու խոսքի մասերին պատկանող բառերը իրարից տարբերվում են նաև գործածության ոլորտով (եղանակավորող բառերը ավելի շատ գործածվում են գիտական, իսկ ծայնարկությունները՝ գեղարվեստական գրականության մեջ), կազմությամբ և ծագումով (ծայնարկությունները երբեմն հնչյունակապակցություններ են և կարճ բառեր, իսկ եղանակավորող բառերն առաջացել են նյութական իմաստ ունեցող բառերից և հիմնականում քերականական ձևերից), առոգանությամբ (ծայնարկություններին բնորոշ է երկարացնելով արտասանելը, առանձնանում են դադարով, իսկ վերաբերականները հնչերանգով կարող են նաև չառանձնանալ) ևն:

Հայերենի երկու տարբերակներում էլ գործածվում են հիմնականում նույն վերաբերականները (տրվում են միայն արևմտահայերեն ձևերը)՝ **ահա, ահաւասիկ, արդեօք, ի դէպ, իրաւամբ, երնէ՛կ, ցաւօք, գէթ, գոնէ, գուցէ, իրաւ, իրօք** ևն, հանդես են գալիս նույն իմաստային խմբերով կամ տեսակներով՝ **հաստատական** (արդարեւ, ապաքէն, անշուշտ, հարկաւ, իրօք, հաւաստեաւ, իրաւ, ի հարկէ), **կամային** (թող, դեհ), **սահմանափակման** (գէթ, միայն, գոնէ, լոկ, միմիայն), **երկբայական** (կարծեմ, կարծեմ թէ, դժուար թէ, կարծեօք, միգուցէ, թերեւս, իբր թէ,

գուցէ, միթէ, արդեօք), **ցուցական** (ահա, ահաւասիկ), **զիջական** (ինչ որ է, ինչեւիցէ, յամենայն դէպս, ինչեւէ), **սաստկական** (նոյնիսկ, անգամ, մինչեւ իսկ, մինչեւ անգամ, մանաւանդ) են:

Առանձին դեպքերում ի հայտ են գալիս բառային կամ բառածնային որոշ տարբերություններ՝ պայմանավորված գրաբարի, մասամբ նաև բարբառների ազդեցությամբ կամ հենց արևմտահայերենի քերականական իրողություններով, ինչպես՝ **ապաքէն** (= իրոք, իսկապես), **գոգցես** (= կարծես թե, իբր), **հաւաստեաւ**, **չըլլա՞յ թէ**, **ցաւ ի սիրտ**, **իցի՛ւ թէ** (= երանի թէ), **հաճիս** (=բարեհաճիր, կխնդրեի, խնդրում եմ), **կարծեօք**, **կ'երեւայ**, **կը թուի** են:

Արևմտահայերենում գործածական չէ արևելահայերենի **հենց** վերաբերականը:

Ընդհակառակը վերաբերականը (նաև **ընդհակառակը** շաղկապը) արևմտահայերենում սովորաբար գործածվում է ն հոդով՝ «Չգնաց տուն, **ընդհակառակը** մնաց մեզի հետ», կամ՝ «**Ընդհակառակը**, ես պիտի ուզեի, որ մեր աղաները իմանային այս ըսածները», «**Ընդհակառակը** փոխանցեցին որդիէ որդի, արիւնէ արիւն, ու ան եկաւ մինչև մեզ» (Շ. Շահնուր), «Դաշնակցութիւնը, **ընդհակառակը**, օգտուեցաւ նմաններէն ինչպէս եւ չեզոք հայդուկներէն, որոնք իր փառքը հիւսեցին», «**Ընդհակառակը**, անոնք իրենց փղոսկրէ աշտարակին մէջէն տեսան շատ աւելի անդին» (Ն. Սարաֆյան), բայց՝ «**Ընդհակառակը**՝ շատ բնական է կարծեմ յեղափոխութեան մակաբոյծները նկատել այն տեսակ մը տիպարները, որոնք 96-էն ի վեր մեջտեղ եկած են» (Ե. Օտյան):

Այլ օրինակներ՝ «**Կ'երեւայ** գլուխս կախեր եմ քիչ մը երկար ատեն» (Երուխան), «Այն ատեն տասը տարեկան էի, եւ **իրաւցնէ** ամօթալի էր ինծի համար չկրնալ օրական հինգ բառ գոց ընելը» (Ե. Օտյան), «**Ի՞նչ փոյթ**, թէ զիս չհասկընան, դատապարտեն ալ ուրիշներ, **Ի՞նչ փոյթ**, եթէ զիս քարկոծեն, ճամբուս վրայ հայիուչ բառնան» (Վ. Թեքեյան):

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն ասվեց, ծայնարկությունները արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը: Դրանք պարզ բառեր են և ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում ըստ իրենց արտահայտած իմաստների բաժանվում են երկու խմբի՝ **կոչական** (հէ՛յ, է՛յ, օ՛շտ, փի՛շտ նն) և **բացականչական** (ա՛խ, աւա՛ղ, մե՛ղք, փիե՛, հա՛, ո՛ւ, հը՛, հը՛մ, ա՛հ, ամա՛ն նն):

Արևելահայերենում քիչ գործածվող մի քանի ծայնարկություններ արևմտահայերենում համեմատաբար հաճախ են հանդիպում: Այդ ծայնարկություններից են՝ **բաբէ՛** (ավա՛ղ, ափսոս), **եղո՛ւկ** (վա՛խ, ափսո՛ւս, ավա՛ղ), **չա՛թ** (կոտորվելու ծայն), **օ՛շտ** (շանը քշելու բացականչություն), **օշօ՛շ** (շանը կանչելու բացականչություն), **օ՛շ** (ցանկության բացականչություն), **օ՛ն** (հորդոր, կարգադրելու բացականչություն), **իցի՛ւ // իցի՛ւ թէ** (երանի՛ թէ), **ծօ՛** (դիմելու կոչ, բացականչություն), **թաա՛** (բացականչական ծայնարկություն հեռու տարածություն նշելու համար), **քա՛** (կոչական ծայնարկություն, որով սովորաբար կանայք են իրար դիմում), **մե՛ղք** (ափսո՛ւս), **ո՛հ** (օ՛հ), **փիւ՛ֆ** (փի՛ֆ), **իւ՛ֆ** (օ՛ֆ) նն:

Օրինակ՝ «Է՛յ, ի՞նչ պատահեր է,— հարցուցի Գուրգենին, որ կաղալով մեզի կը մօտենար» (Լ. Բաշալյան), «Այս եռանկեան մէջ անվերջ կը վազվզեմ ես, **բաբէ՛**» (Վ. Թեքեյան), «Այն բազմաթիվ հօտէն, զոմին մէջ, **եղուկ** մնացեր է խոյ մը միայն քաջարի» (Դ. Վարուժան), «**Շա՛չ**, ապտակ մը կը զարնէ մերթ երեսիս, Նոյն վայրկեանին կը փախչի...» (Ս. Մեծարենց), «**Ա՛**, կարո՛ղ են, հօգօր, այդ հին աստուածները. դեռ շատ են հօգօր...», «**Է՛**, կեանքը որքա՛ն քիչ բան ունի մեզի տալու» (Լ. Շանթ), «**Ծօ** տղայ, դուն ե՛րբ դերձակ եղար», «Քոյրիկդ քեզմէ մե՞ծ է... կարգուա՞ծ է... **Քա՛**, ես խե՛նթ եմ...» (Շ. Շահնուր), «**Փա՛թ**, երեսիս, քիս վրայ ինկայ, ճոպնուեցայ» (Բ. Նուրիկյան):

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Լեզվական այս մակարդակում արևմտահայերենի և արևելահայերենի տարբերությունները անհամեմատ ավելի քիչ են, քան ձևաբանության մեջ: Առհասարակ լեզվի շարահյուսական կառույցը շատ ավելի կայուն է և ավանդապահ, քան մյուս մակարդակները: Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները արևելահայերենում և արևմտահայերենում սկզբունքորեն նույնն են: Եվ ընդհանրապես, շարահյուսական հարաբերությունների և՛ արտահայտության, և՛ մանավանդ բովանդակության պլանում էական տարբերություններ չեն արձանագրվում. «Չկա շարահյուսական որևէ կարգ, որ առկա լինելով մեկում, բացակայի մյուսում և հակառակը» (34, 244): Սակայն կան առանձին տարբերություններ շարահյուսական միավորների կազմության և գործածության, շարահյուսական հարաբերությունների կոնկրետ դրսևորումների, բառերի դասավորության (շարադասության) մեջ նմ:

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայոց լեզվի երկու ճյուղերի պարզ նախադասության կառուցվածքային տիպերը (միակազմ և երկկազմ, համառոտ և ընդարձակ, լրիվ և թերի են) ամբողջությամբ համընկնում են: Դրանք էական տարբերություններ չեն դրսևորում նաև գործածության հաճախականությամբ և խոսքի մեջ կատարած ոճական—արտահայտչական դերով: Մասնակի տարբերություններից պետք է առանձնացնել հետևյալները:

Երկու գրականներում էլ նախադասությունները, ըստ հաղորդվող մտքի նկատմամբ խոսողի վերաբերմունքի բնույթի (կամ ուղղակի՝ ըստ բնույթի), բաժանվում են չորս հիմնական խմբի՝ պատմողական, հարցա-

կան, բացականչական, հրամայական: Մասնակի տարբերություններ կան հարցական նախադասության հնչերանգային կաղապարներում և հրամայական նախադասության կազմության մեջ: Հայերենի երկու ճյուղերում էլ «հարցական նախադասության ստորոգյալը առանձնակի դիրք ունի. նա համեմատաբար ավելի շատ է հանդես գալիս որպես հարցում կրող անդամ» (8, 151): Արևմտահայերենի և արևելահայերենի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ այս հատկանիշը ավելի քիչ է բնորոշ արևմտահայերենին. ստորոգյալը իր այդ դերով, այսինքն՝ որպես հարցական նախադասության մեջ հարցում կրող հիմնական անդամ, արևմտահայերենում մասամբ զիջում է արևելահայերենին, ինչը միջին հայերենին խիստ բնորոշ երևույթ է. «XII–XVII դարերի մատենագրության մեջ շատ քիչ օրինակներ կարելի է գտնել, որտեղ հարցական նախադասության հարցումը արտահայտվի ստորոգյալով» (նույն տեղը): Արևմտահայերեն–արևելահայերեն զուգադրության մեջ, սակայն, այդ յուրահատկությունը ունի խիստ մասնակի դրսևորումներ: Այսպես՝ Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» և Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» գործերից վերցված հավասար քանակությամբ (61–ական) հարցական նախադասությունների համեմատական դիտարկման արդյունքներով՝ հարցումը ստորոգյալով է արտահայտված արևմտահայ հեղինակի 18, իսկ արևելահայ հեղինակի 24 նախադասություններում:

Հրամայական նախադասության ստորոգյալը և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում առավելապես հրամայական եղանակի բայ է և հազվադեպ է արտահայտվում բայական այլ ձևերով, սակայն արևելահայերենում հրամայական նախադասության մեջ բայական մյուս ձևերը (ինչպես՝ անորոշ դերբայ, անկատար ներկա, ըղծական ապառնի են) փոքր–ինչ ավելի ակտիվ գործածություն ունեն, քան արևմտահայերենում:

Ստորոգյալ

Հայերենի երկու տարբերակներում էլ ստորոգյալը արտահայտվում է հիմնականում բայով: Ստորոգյալի կազմության և գործածության մեջ սկզբունքային տարբերություններ չկան: Կան մասնակի տարբերություններ, որոնք կապվում են ստորոգյալի բաղադրիչների շարահասության և նախադասության առանձին յուրահատուկ կառույցների հետ:

Բայական պարզ ստորոգյալի բաղադրիչների շարահասական փոփոխությունը երկու գրականներին էլ բնորոշ իրողություն է. «Թեև բայական ստորոգյալը շարահյուսական մեկ միավոր է՝ նախադասության մեկ անդամ, բայց գլխավոր բաղադրյալ ժամանակներով կազմված ստորոգյալները հատուկ նպատակներով, նախադասության որևէ անդամը շեշտելու անհրաժեշտությամբ, հաճախ տրոհվում են. օժանդակ բայը կամ անցնում է դերբայից առաջ,՝կա՛մ հեռանալով նրանից՝ դրվում է այն անդամից հետո, որը շեշտվում է, որն իր վրա է կրում տրամաբանական շեշտը» (32, 113–114): Օրինակ՝

արևել.՝ «Նա գնում է տուն» / «Նա տուն է գնում», «Մայրդ շատ համով կերակուր է պատրաստել» / «Մայրդ պատրաստել է շատ համով կերակուր», «Նստած էր աթոռին» / «Աթոռին էր նստած»,

արևմտ.՝ «Մայրդ շատ համով կերակուր է պատրաստեր» / «Մայրդ շատ համով կերակուր պատրաստեր է (>պատրաստած է)¹⁰», «Աթոռին էր նստած» / «Աթոռին նստած էր»:

Բայական պարզ ստորոգյալի բաղադրիչները, սակայն, արևմտահայ–արևելահայ զուգադրության մեջ առանձին կազմություններում երևան են հանում շարահասական որոշ յուրահատկություններ: Այսպես՝ **արևելահայերենում** երբ ստորոգյալն արտահայտված է վաղակատար դերբայով, իսկ նախադասությունը հարցական բնույթի է՝ հարցական դերանվամբ, օժանդակ բայը դերբայական մասի նկատմամբ չի կարող

¹⁰ Վաղակատարով ստորոգյալների համեմատությամբ արևմտահայերենում առավել գործածական են հարակատարով կազմությունները՝ գրել է — գրած է, նստել է — նստած է, կարդացել է — կարդացած է:

գործածվել հետադաս դիրքով: Օրինակ՝ չենք կարող ասել՝ «Ինչո՞ւ նստել ես»: Մինչդեռ **արևմտահայերենում** ստորոգյալի բաղադրիչների այդպիսի շարադասությամբ գործածությունը միանգամայն կանոնական է, այսինքն՝ նույն կառուցվածքում օժանդակ բայն ունի կայուն հետադաս դիրք, ինչպես՝ «Ինչո՞ւ անշարժ **նստեր էք**» (Սիամանթո), «Այնպէս խոր **գծեր էր** դնքին ճամբան» (Ռ. Սևակ), «Եւ երբ իրեն հարցուցի՝ **ինչո՞ւ խորհեր է**, թէ կրնայինք իրենց երթալ...» (ԶՄ) ևն: Այս յուրահատկությունը բնորոշ է նաև բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչների դասավորությանը, ինչպես՝ «Ինչո՞ւ այսքան **տխուր ես**» (ԴՀ):

Պարզ ստորոգյալի բաղադրիչների շարադասական յուրահատկություն պետք է համարել նաև հետևյալը. **արևելահայերենում** վաղակատարով և առանց հարցական հնչերանգի նախադասությունները ունեն գուգահեռ տարբերակներ. օժանդակ բայը գործածվում է ն՝ նախադաս, և՝ հետադաս դիրքով՝ «Եղբայրս **եղել է քիմիկոս**» / «Եղբայրս **քիմիկոս է եղել**»: Դրանք ունեն իմաստային որոշակի տարբերություն. օժանդակ բայի նախադաս դիրքով կառույցը («Եղբայրս քիմիկոս է եղել») իր բովանդակային առումով «չեզոք» է և ընդգծում է ենթակայի՝ առհասարակ այսինչ կամ այնինչ լինելու գաղափարը, երկրորդում («Եղբայրս քիմիկոս **եղել է**») ընդգծվում է ենթակայի՝ ինչ-որ մի ժամանակ հենց այդ հատկանիշը (քիմիկոս լինելը) կրելու գաղափարը: Մինչդեռ **արևմտահայերենում** սովորական է օժանդակ բայի հետադաս դիրքով գործածությունը՝ «Եղբայրս քիմիագետ **եղեր է**»: Սա իմաստով համընկնում է արևելահայերենի օժանդակ բայի նախադաս դիրքով կազմությանը՝ «Եղբայրս քիմիկոս է **եղել**», այսինքն՝ ունի, այսպես կոչված, չեզոք բովանդակություն:

Ստորոգյալի բաղադրիչների շարադասական յուրահատկություն է նաև այն, որ արևմտահայերենում հարակատար դերբայ-ստորոգյալով ժխտական կառույցների օժանդակ բայը կարող է և՝ հետադաս դիրքում լինել, և՝ տեղափոխվել դերբայից առաջ, ինչպես՝ «Անիկա **նստած չէ** ծառին տակ» / «Անիկա **չէ նստած** ծառին տակ», կամ՝ «Ո՞րն է այս երկիրը: Երբեք **եղած չեմ** հոս, բայց անծանօթ **չէ** ան ինձի: ...Ես հոս **մազլցած չեմ** այդ լեռներն ի վեր, աղբիւրին մէջ **չեմ լողցած**, եկեղեցիին բակը իմ խաղերս **չէ տեսած**, դաշտերուն մէջ ծաղիկ **չեմ քաղած**, ու այդ

տանիքները իմ խոնջ մարմինը **չեն պատսպարած»** (Լ. Բաշալյան),
 ««Կարաւամներով» Դուք գրած էք մեծապէս թանկագին գիրք մը... Ըն-
 թերցողը որ եմ, և որ դժուարայաճի իր համբաւը ուրիշէն **չէ չորթած**,
 պիտի ուզէր չափազանցել իր ներբողները, զանոնք լաւագոյնս լսելի
 ընելու համար» (Շ. Շահինուր), «Կեանքի թէ գրականութեան մէջ թէքէեան
 հեռու եղած է ցուցական փորձութիւններէ, **չէ քանաքած** ան հրավառու-
 թիւններով հրապուրել իր ընթերցողը» (Թ. Ազատյան), «Գասպար Եմինց
այցելած չէր» (Համաստեղ):

Ստորոգյալի հետ կապված յուրահատկություն է նաև այն, որ արևմտա-
 հայերենում ապառնի դերբայով կազմված ժխտական կառույցներում
 օժանդակ բայը չի ունենում **է>ի** հնչյունափոխություն և չի տեղափոխվում
 դերբայից առաջ, ինչը բնորոշ է արևելահայերենին, օրինակ՝ «Ատանկ
 խօսքեր **ըսելու է**» = «Ատանկ խօսքեր **ըսելու չէ**», արևել.՝ «Այդպիսի
 խոսքեր է **ասելու**» = «Այդպիսի խոսքեր **չի ասելու**»:

Արևմտահայ գրական լեզվում օրինաչափ է ժխտական դերանուն +
 դրական բայ կաղապարը: Ինչպես՝ «Չրաքեանի բառերը կը մնան իր
 գիրքին մէջ, **ոչ ոք պիտի մօտենար** անոնց» (Հ. Օշական), «Ճշմարտու-
 թիւնը կը յաղթանակէ. **ոչինչ կրնայ** զայն ընկճել», կամ՝ «Վերադառնա-
 ւով մեզի, մեր ազգային թոյնին, պէտք է գիտնալ, որ **ոչ մէկ** գաղթակա-
 նական զանգուած **կրնայ ապրիլ** երկար ժամանակ զայրագնաց
 վիճակի մէջ» (Շ. Շահինուր): Նմանապես՝

ոչ ոք	 ըսած է
ոչ մէկ բան	
ոչ մէկ պարագայի	
ոչ մէկ անգամ	
ոչ մէկ կերպով	
ո՛չ ես ըսած եմ, ո՛չ ալ ինք	

Ի դեպ, դիտարկումները ցույց են տալիս, որ վերը նշված սկզբունքը գոր-
 ծում է գերազանցապէս առաջին բաղադրիչի, այսինքն՝ ժխտական դերան-
 վան նախադաս կիրառության դեպքում, ինչպես վերը նշված օրինակնե-
 րում է, հակառակ դեպքում, այսինքն՝ երբ կառույցում ստորոգյալը նախա-

դաս՝ է (որ հազվադեպ գործածություն է), կանոնը չի գործում, ինչպես հետևյալ օրինակներում՝ «...Որ չի կրցաւ զայն սրբել ո՛չ մի բան» (Ռ. Սևակ), «Կամ չուզեց Ռչինչ լսել», «Զինք չի լար ոչ ոք» (Ղ. Վարուժան), «Ես չի հաճեցայ՝ հիւսել խարտեաշ եղեգներէն ո՛չ դափնի և ո՛չ պսակ» (Սիամանթո), «...և որմէ գերծ չէ ոչ մէկ ազգ» (Շ. Շահնուր):

Այս իրողության վերաբերյալ արևմտահայերենի քերականության մեջ չենք հանդիպում մշտնջենի, սակայն լեզվական փաստերը վկայում են տարածվող և կանոնարկվող շարահյուսական կառույցի մասին:

Արևմտահայ բնագրերում հազվադեպ հանդիպում են մաս արևելահայերենին հատուկ կառույցներ՝ «Ահաւասիկ... ալ չեն լար եւ ալ ոչինչ չեն խնդրեր» (Վ. Թեքեյան), «Ոչ ոք դուրս չի գար» (Շ. Շահնուր):

ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Գոյական անդամի լրացումներ

Որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ

Ածականներից բացի՝ որոշիչ պաշտոնով հանդես եկող բառախմբերում մեր լեզվի երկու տարբերակներում էլ առանձնանում են ածականանիշ կամ առարկայի հատկանիշ մատնանշող դերանունները՝ ցուցական դերանունների մեծ մասը, որոշյալ, անորոշ, հարցական—հարաբերական, ժխտական դերանուններից մի քանիսը են: Նկատվող տարբերությունը երկու գրականներում այն է, որ առանձին դերանուններ իրենց շարահյուսական դերով երևան են հանում յուրահատկություններ: Այսպես՝ արևմտահայերենում, ի թիվս այլ ցուցական դերանունների՝ **այս, այդ, այն, աս, այսպիսի, ասանկ, նոյն, այսքան** են, որոշչային կիրառություն ունի մաս սա դերանունը, օրինակ՝ «Դարձիդ քիչ մըն ալ ժպտէ սա՛ լուսաբաղձ հիւանդին», «Սա իրիկունն ըլլայի ես, եւ հըպէի ճակտին ամէն անցորդի. Զըքնաղագեղ ու մըլաղուն, յամուրդի Սա իրիկո՛ւնն ըլլայի ես» (Մ. Մեծարենց), «Ու կը ծայնէ մատուռն յստակ. — Սա ծերունի ծառերուն տակ» (Ռ. Սևակ):

Կամ՝

— Ընկեր, խորտակէ խաչդ սա՛ քու յոգնած եւ ապաժամ
քնարիդ հետ,

Եւ գլուխդ հողաթմբիս՝ մըտիկ ըրէ շիրիմներէն

հասնող աղաղակին...

(Սիամանթո)

Դա, նա դերանունների որոշչային կիրառությունը («**նա** մարդը», «**դա** գիրքը») արդի գրական արևմտահայերենում հնացած է և խիստ հազվադեպ է հանդիպում, ինչպես՝ «Կարելի՞ է, որ մարդ սա կամ նա աս-պարեզին մեջ իրմէ աւելի յաջող, իրմէ աւելի կաբող մէկը գտնէ» (Ռ. Հատտեճյան):

Խոսելով պոլսահայ բարբառում **աս, սա, ան, նա** և **ադ, դա** դերանունների զուգահեռ գործածության մասին Հր. Աճառյանը անում է հետաքրքիր մի դիտարկում. «Պոլսի բարբառը,— գրում է նա,— յուրաքանչյուր երկուսի մեջ դրել է նուրբ զանազանություն: Աս՝ ցույց է տալիս իրոք առաջին դեմքի մոտիկ առարկան, բայց այնպես՝ որ առաջին դեմքի ուղղակի ձեռքի տակն է, ու ձեռքով էլ չըշփվում է այն. մինչդեռ սա, թեև ցույց է տալիս դարձյալ առաջին դեմքի յոտիկ առարկան, բայց մի քիչ հեռու, այնպես որ ձեռքով կարելի չէ շոշափել և միայն մատով է ցույց տրվում. ուրիշ խոսքով՝ առաջին դեմքի և երկրորդ դեմքի միջև է գտնվում, մի քիչ ավելի մոտ առաջինին՝ քան երկրորդին: Օր. ասում ենք **աս ձեռքս, աս աշկս, աս օտկս, բայց սա դիմացի դուռը, սա դուռը բաց ևն**» (10, 112):

Գրական լեզվում **աս** տարբերակը գործածության հաճախականությամբ զիջում է իր զուգահեռին. **սա**—ն անհասկանալի գործուն է: Որոշչային կիրառությամբ գործածական չեն **նա, ադ, դա** ձևերը: Դրան հակառակ՝ կենսունակ են նաև գրաբարից ավանդված **այս, այդ, այն** հոմանշային տարբերակները: Այս հարաբերության մեջ դժվար է պնդել, որ պոլսահայ բարբառին հատուկ նշված երևույթը փոխանցվել է գրականին, թեև չի բացառվում, որ չափածոյի լեզվում **սա** դերանվան որոշչային խիստ հաճախակի գործածությունը պայմանավորված էր նաև բարբառում օրինաչափ դարձած հենց այդ յուրահատկությամբ: Ինչևէ, գրական և խոսակցական լեզուների այսօրինակ փոխհարաբերությունը վկայում է աստիճանաբար և օրինաչափ կերպով զարգացող գործընթացի մասին, մի բան, որ այնքան էլ բնորոշ չէ գրական արևելահայերենի զարգացման միտումներին:

Մասնակի տարբերություն է նկատվում մաս գոյական որոշիչի հոլովական ձևերի կազմության մեջ: Արևմտահայերենում գործածվում են տրական հոլովով ձևավորվող որոշիչներ, որոնք համապատասխանում են արևելահայերենի ներգոյականով կամ տրականով որոշիչներին, ինչպես՝ «**Ֆրանսիայում մեր ներկայացուցիչը**» (արևել.) / «**Ֆրանսայի մեր ներկայացուցիչը**» (արևմտ.): Ըստ որում, արևմտահայերենում այդպիսի որոշիչը ունի կայուն շարադասություն՝ նախադաս դիրքով:

Ծանոթություն: Նշված կառույցները վերջին տարիներին սկսել են գործածել մաս արևելահայերենում, ինչպես՝ «ԱՄՆ–ի մեր դեսպանը այդ հարցի քննարկումներին չի մասնակցել»:

Հատկացուցիչը արևելահայերենում, ինչպես հայտնի է, որոշիչ հոդ չի ստանում, մինչդեռ արևմտահայերենում, ինչպես արդեն նշել ենք, պատկերը փոքր–ինչ այլ է. այստեղ հատկացուցիչը որոշիչ հոդով գործածվում է որոշյալ առման դեպքում կամ կապ գերադաս անդամով կապակցություններում, ինչպես՝ «**ուռենիին տակ**», «**Թաղականին կնիկը**», «**քաղաքներուն բոլոր մահազանգերը**»:

Կամ՝

Ու **բոժոժին** ծայնեղ գանգիւնն արծաթէ...

Ու **սայլորդին** ըստուերն որ՝ գո՛րշ՝ կ'երկարի՛,

Ու **սիկառին** ծուխն՝ որ բիլ բիլ կ'ամպանայ՝

Ու լազուարթ գիծը **ճամբուն** հեռացող...

(Ս. Մեծարենց)

Բազմակի հատկացուցիչների առկայության դեպքում, ինչպես նշվել է, արևմտահայերենում սովորական է վերջինին նախորդող դիրքում գտնվողի անհոդ գործածությունը (հոդով ձևը չի բացառվում)՝ «**ջութակի սարսուռին գիծը**», «**ցորենի ցանքին զոզն ինկած**», կամ «**Վարուժանի պաշտամունքին խունկը քնքշօրէն պարուրեց Անահիտին արծանին մարմարեայ իրանը...**» (Թ. Ազատյան): **Ն**–երի կուտակումը ստեղծում է անբարեհնչություն:

Կանոնական է մաս կապի խնդրի պաշտոնում սեռականի՝ որոշիչ հոդով գործածությունը, ինչպես՝

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդես.
Երթա՛լ առուի՛ց պէս՝ մարգերու տակ անտես.
Կապոյտի՛ն մէջ՝ հե՛զ, հողմավար ամպի՛ն պէս...
Աննիւթանա՛լ, անրջանա՛լ, վըսե՛մ, վե՛ս.
Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթա՛լ վերջապէս՝
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճի՛ն պէս...

(Ռ. Սևակ)

Քացահայտիչը գրական հայերենի երկու տարբերակներում արտահայտության ու գործածության տարբերություններ չի դրսևորում:

Քայական անդամի լրացումներ

Խնդիրներ

Արևմտահայերենում, ինչպես արդեն ասվել է, ն' անծի, ն' ոչ անծի առման դեպքում **ուղիղ խնդիր–հայցականը** ձևով միշտ նման է ուղղականին, կամ այլ կերպ ասած՝ ուղիղ խնդիրը միշտ դրվում է ուղղական–հայցականով, ինչպես՝ «Այն երիտասարդը տեսաւ ֆրանսացի աղջիկը, գերմանացին, իտալացին, հոյնը, ռուսը...» (Շ. Շահնուր), կամ «Յակոբ իր **ծնողները** շատ կը սիրէ»:

Արևմտահայերենում ենթական և ուղիղ խնդիրը ձևաբանորեն տարբերակվում են երկու դեպքում. առաջին՝ երբ ուղիղ խնդիրն արտահայտված է լինում հայցական հոլովածն ունեցող դերանուններով՝ «Անահիտը կը հաւնէ **զանոնք**», երկրորդ՝ երբ ենթական և ուղիղ խնդիրը արտահայտված են անձնանուններով, քանի որ այս դեպքում ենթական սովորաբար դրվում է առանց հոդի՝ «**Վահան** աշակերտները հանդիմանեց»։ Եթե այդ տարբերակվածությունը բացակայում է, ենթական և ուղիղ խնդիրը տարբերակվում են շարահասութամբ: Այսինքն՝ այս դեպքում շարահասությունը դառնում է շարահյուսական իմաստի դրսևորման միջոց. ենթական միշտ նախադաս է, ինչպես՝ «**Քոյրը** ճանչցաւ իր **եղբայրը**» / «**Եղբայրը** ճանչցաւ իր **քոյրը**»:

Հանգման անուղղակի խնդրի իմաստային տարաբնույթ առումները երկու գրականներում էլ ձևավորվում են բուն տրական հոլովով կամ

սեռական—տրականով և կապային կապակցություններով: Գրաբարյան և արևելահայերեն առանձին կապային կազմություններ արևմտահայերենում ձևավորվում են միայն հոլովական ձևերով՝ բարբառային—խոսակցական լեզվին բնորոշ առանց կապի կազմություններով՝ ինչպես՝ «որո՞ւ կը խօսիմ», «եկայ **քեզի**», «**Մեզի** եկէ՛ք» (Դ. Վարուժան), «ես **քեզի** վաղը պիտ' գամ», «Խօրհեցայ նաև սէզ **սատանային**» (Ռ. Սևակ), «Սիրահար մը, մանաւանդ դժբախտ եւ զգայնոտ սիրահար մը, զոնէ մէկ անգամ **մահուան** պիտի խօրհի անխուսափելիօրէն» (Շ. Շահինուր), «Վազգէն խոստացած էր իր **դասերուն** աշխատիլ», «Պրն. Աւետիսը՝ հօրեղբայրդ, **մեզի եկած էր**» (ԶՄ), «Յաւեցայ շատ անգամ վատնած **ժամանակիդ**» (Ն. Սարաֆյան), «Դուն ալ քու բոլոր հաճոյքներուդ և տենդերուդ մէջ մտածեցիր իմ հոգիիս» (Վ. Շուշանյան), «Բայց ժողովուրդը ամենէն ուշ կը մտածէ **բառերուն**: Անոր համար մշտապէս կարեւորը զգացումն է» (Հ. Օշական), «Զեմ աշխատիր **դասերուս**» (ՀՔ), «**Յաջողելուդ** տարակոյսը չունիմ» (ԵՏ):

Կամ՝

Այս իրիկուն **ձեզի** կու գանք, ե՛րգ երգելով,

Լուսնակ ճամբով...

Այս իրիկուն **ձեզի** կու գանք, սէ՛ր երգելով,

Սարի ճամբով...

(Դ. Վարուժան)՝

Պետք է ավելացնել նաև, որ արևմտահայերենում սեռական—տրականը դրսևորում է խնդրառական ավելի մեծ հնարավորություններ, քան արևելահայերենում. այդ հոլովը շարահյուսական առանձին կառույցներում (ժամանակի, տեղի կամ ձևի պարագա, միջոցի կամ վերաբերության խնդիր են) ազատ փոխարինում է նաև գործիական հոլովին, ինչպես՝ «Նոյնքան անիրական է իմ գնացքս Ոսկեղջիւրի **երկայնքին**, ուր օրինաւոր կաշառակերութիւնը դիզած է ժանգոտ մարտանաւեր» (Շ. Շահինուր), «Կինս եւ ես կ'ուրախանանք տղոց **նախածեռնութե-**

11 Կարծիք կա, որ սխալ կազմություններ են՝ «բանի մը կամ մէկու մը մտածել, ես **քեզի** կը մտածեմ կամ ես **ատոր** կը խորհիմ» (տե՛ս 33, 87): Սակայն դրանք, ինչպես վերը բերված օրինակներից տեսանք, շատ տարածված կառույցներ են արևմտահայ գրավոր խոսքում և հազիվ թե կարող են համարվել անկանոն կամ սխալ կազմություններ:

ան», «Թիավարեցինք դէպի նաւը, որ խարիսխ նետած էր դէմի նաւա-
մատոյցի երկայնքին», «Մենք հիացանք քու արագութեանդ եւ
ուժիդ», «Հանգիստ քուն մըն ալ քաշել անկարելի է ցերեկին» (ՀԶ),
«Ցերեկին հանդիպած էինք «Մարմարա» օրաթերթի խմբագրատունը
եւ Ռոպէր Հատտէճեանին հետ խօսած մարդոց այլազան բնաւորու-
թիւններուն մասին, մեր մտաւորականութեան համակեցութեան եւ ու-
ժերու համախմբման մասին» (Թ. Թորանյան):

խնդրառական տարբերություններ ունեն նաև առանձին բայեր: Դա
առավելապես պայմանավորված է այդ բայերի՝ գրաբարից ավանդված
իմաստային յուրահատկությամբ, ինչպես՝

հաւանիլ (= համաձայնել, հավանություն տալ) **բանի մը** (գործունե-
ութեան, գաղափարին, մէկու մը առաջարկութեան),

համոզուիլ **բանի մը** (ըսածին ճշդութեան, սխալ ըլլալուն),

գիտակցիլ **բանի մը** (պարտականութիւններուն = պարտականութե-
անց, իր սխալին, իրենց ըրածներուն),

սկսիլ **բանի մը** (աշխատելու, սորվելու, գործեր ընելու),

հանդուրժել **բանի մը** կամ մէկու մը (ըսածներուն, անոր ըրածին,
բարեկամներուն) ևն (տես 33, 86—87):

Հայ քերականագիտության մեջ նկատված իրողություն է, որ բայի
խնդրառությունը արևմտահայերենում կայուն կամ հետևողական չէ: Մի
շարք բայեր, օրինակ, պահանջում են մերթ տրականով, մերթ ուղղա-
կան—հայցականով խնդրառություն: Վ. Քոսյանը այդ բայերի շարքում
առանձնացնում է հետևյալները՝ երազել, զարնել, խնայել, ցանկալ, թա-
փանցել, տիրապետել, նայիլ, սկսիլ, նմանիլ, փափաքիլ, կարենալ,
աշխատիլ, մտածել, կարօտնալ, մեղքնալ, ունկնդրել, սպասել ևն:

Բնագրային օրինակներ.

տրականով խնդիր՝ «Ես առանկ բաներու չեմ նայիր», «Մարդիկ, սկ-
սեցէք ապաշխարելու», «Համբերելու ստիպուած է», «Կը փափաքին
գերապատիւ թարգմանչին հայերէն ու ֆրանսերէն գործը քննադատե-
լու» (Հ. Պարոնյան), «Մենք ձեր ազատութեան, ձեր կենաց
խնայեցինք» (Շերենց), «Հիմա ալ կը մտածէր երկարաշունչ վէպի մը»
(Օ. Հիֆթե—Սարաֆ),

ուղղական—հայցականով խնդիր՝ «Սկսաւ սնտուկները կապել», «Երկինք նայեցէ՛ք», «Անասուն կը մմանի», «Անոնց վերանալը կը փափաքին աշխարհիս վրայ» (Յ. Պարոնյան), «Կը խրատէր, որ կերակուր ու հագուստ չմտածեն» (Ե. Օտյան), «Ան իր զաւակը ոչնչացուց այդ Աննայի սիրուն, իշխանուհի՞ս պիտի խնայէ, թէ ինծի ու քեզի» (Լ. Շանթ), «Կարօտցած եմ Արեւելքը, Արեւելքին կռիւը նոյնիսկ» (Վ. Մավյան) են: «Խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ նույն բայը տրականով և հայցականով տարիմաստ լրացումներ է ունենում: Օրինակ՝ «Ձիս Հայաստան պիտի դրկես, Դրկէ ինծի..., Ինչ բանի կը սպասես, ուրկէ ինչ կը սպասես» են (41, 96–97):

Արևմտահայերենում, ինչպես նշվել է, ընդլայնված է վրայ կապի իմաստային—շարահյուսական գործառույթը. վրայ կապի՝ բառակապակցությունների մեջ արտահայտված առանձին իմաստներ (հանգում, վերաբերություն են) արևելահայերենում կա՛մ գործածական չեն, կա՛մ ընկալվում են որպես՝ խոսակցական կառույցներ, մինչդեռ արևմտահայերենում դրանք ընդհանուր գործածական ձևեր են, ինչպես՝ «Դուք յանցանք չունիք եւ թերեւս իրաւունք ունիք... ոտանաւորներ ունի՛մ գրած հայրենիքի վրայ, սքանչելի կտորներ, պատուական տողեր, որոնց մէջ երեակայութիւնը, աւիւնը, խանդն, հուրն ու բոցը սաւառնաթել կը սլանան» (Յ. Պարոնյան), «Ամէն անգամ, որ այդպէս հաւաքուին Հրաչին սենեակը, նախ կը խօսէին «տունէ» եկած նամակներու և գործի վրայ» (Շ. Շահնուր), «Ես կը հիանամ վրադ.. Կ'ուզեմ քեզի չափ ու քեզի պէս լըլլալ» (Լ. Սյուրմենյան), «Այդ օրը նախանձեցայ իր վրան» (Գ. Ջոհրապ) են:

Պարագաներ

Հայտնի է, որ ժամանակակից հայերենի երկու ճյուղերում առանձին խումբ են կազմում այն պարագաները, որոնք հանդես են գալիս գոյականի հոլովական ձևերով կամ հոլովակապային կառույցներով (պարագայական խնդիրներ): Եվ քանի որ արևմտահայերենը և արևելահայերենը հոլովական համակարգում ունեն նկատելի տարբերություններ, ուստի որոշակի տարբերություններ են ենթադրվում նաև գոյականի հոլովաձևերով արտահայտված պարագաների արտահայտության և կիրառության մեջ:

Ուշագրավ տարբերություն է արևմտահայերենում գործողության տեղի նշանակությամբ ուղղական–հայցականի գործածությունը, որի դեպքում բայը ոչ թե ուղևորություն է ցույց տալիս, այլ մի տեղում կենտրոնացող, ամփոփվող եղելություն (արևելահայերենում այն արտահայտվում է ներգոյական հոլովով), ինչպես «**Պոլիս** զինքը ճանչնալէ ետքը հետզհետէ զինք պատահեր էի **Աթենք, Եգիպտոս, Բարիզ, Լոնտոն**, վերջապէս քիչ մը ամէն կողմ, որ բախտը քաուչուքէ գնդակի մը պէս նետեր էր զիս» (Ե. Օտյան), «Գիշեր մը այս **պանդոկը** մնաց», «Ան կը բնակէր բարձր սարահարթի մը վրայ կառուցուած մեծ **պալատը**» (Շ. Շահնուր), կամ «Ձաւակիս հետ, այդ **գիւղերը**, կարծեմ այսօր դեռ կ'ապրին...» (Սիւսաննոյ): Ըստ որում, երբ դրանք հասարակ գոյականով են արտահայտվում, պահանջում են որոշիչ հոդ, ինչպես բերված երկրորդ օրինակում: Հատուկ անունների դեպքում սովորաբար հոդ չեն առնում՝ «Անիկա **Մուշ** ծնած է»:

Սեռական–տրականով բայածները, ինչպես արդեն նշվել է, արևմտահայերենում երբեմն գործածվում են նաև արևելահայերենի՝ ներգոյականով դրվող ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոնով «**Անցեալին** սառնարան չկար» (ԴՀ), «Հայր Դեւոնդ Ալիշան... ծնած է 1820ին **Պոլիս**: Բուն անունով Քերովբէ՝ զաւակն էր հնահաւաք դրամագէտի մը: ...Տասներկու **տարեկանին** կ'երթայ Վենետիկ, Ս. Ղազար կղզին եւ վաճառէր դասընթացքը աւարտելէ ետք, 1840ին կը ձեռնադրուի վարդապետ, դառնալով միաբան Մխիթարեան ուխտին» (Մուշեղ Իշխան), «Պետրոս Դուրեան **13 տարեկանին** կը գրէ իր առաջին բանաստեղծութիւնը, ...**15 տարեկանին** կը գրէ «Վարդ եւ Շուշան» թատերախաղը»:

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերենում և արևմտահայերենում տարբերություններ չեն արձանագրվում բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակների ու միջոցների, կառուցվածքային ընդհանուր հատկանիշների, նախադասությունների կապակցության և բարդ նախադասության կազմության ու կիրառության հետ կապված շարահյուսական այլ իրողություններում:

Ինչ վերաբերում է այդ ոլորտում նշմարվող երկու գրականների առանձին յուրահատկություններին, դրանցից պետք է նշել հետևյալը:

Ինչպես արդեն այլ առիթով ասվել է, արևմտահայերենի սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալները գրական արևմտահայերենում, նաև միջին հայերենում և արևմտահայ բարբառներում իմաստով համապատասխանում են ոչ միայն արևելահայերենի սահմանական եղանակի անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերին **կ'երթամ – գնում եմ, կը խօսիմ – խոսում եմ**, այլև ենթադրական եղանակի բայաձևերով արտահայտված ստորոգյալներին, բայց սա այն դեպքում, երբ գործածվում են այնպիսի գլխավոր նախադասության ստորոգյալի պաշտոնում, որին ստորադաս է պայմանի պարագա երկրորդական նախադասություն, ինչպես՝ «Եթե գաս մեզի, միասին **կ'երթանք**»: Ինչպես նկատվել է հայ քերականագիտության մեջ, այս երևույթը խորթ չէր նաև գրաբարի սահմանական ներկային. «Մատենագրութեան սկիզբները՝ բուն ընտիր գրոց մեջ,— գրում է Ա. Այտընյանը,— բաւական յաճախեալ ոճ է՝ Եկ առաքեմ զքեզ. գնամք աստի. գնամք, եկ երթամք շրջիմք. թող անիծանէ. Ասեմք զի իջցէ («ըսեմք որ իջնայ»)» (14, 74): Իսկ Ջր. Աճառյանը խնդիրը բացատրում է հետևյալ կերպ. «Գրաբարը թեև ստորադասականի ներկա ժամանակը ուներ, բայց ստորադասականի անց. անկատարի համար առանձին ձև չուներ, և այդ պակասը լրացնում էր՝ նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը: Սահմանականի անկատարը իբրև ստորադասական գործածելու այս ձևը ազդեց նաև ներկայի վրա, և շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իբրև ստորադասական ներկա, և սրա հետ նաև իբրև ապառնի, որ հաճախ նույնանում էր ստորադասականի ներկայի հետ... Այսպիսով՝ գրաբարի սահմանական ներկան դարձավ միաժամանակ թե՛ սահմանական ներկա, թե՛ ապառնի և թե՛ ստորադասական: Երեք տարբեր պաշտոններով գործածությունը բնականաբար տեղիք պիտի տար շփոթության և իմաստի երկդիմության: Այս խառնակության առաջն առնելու և լեզվի գոնե երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարվեց կու մասնիկը...» (13, 385–389):

Նշված ժամանակաձևերի գործածության այս յուրահատկությունը գրաբարից, միջին հայերենից և արևմտահայ բարբառներից փոխանցվեց գրական արևմտահայերենին. կը (կ', կու)—ով կազմությունները նշված շարահյուսական կառույցներում պահպանում են գրաբարի ներկային բնորոշ քերականական յուրահատկությունը:

Արևմտահայերենում գործուն են խոսակցականից ավանդված ու գրական լեզվի կանոն դարձած շարահյուսական մի շարք այլ կառույցներ, որոնց մասին արդեն խոսվել է:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կետադրության հարցում արևմտահայերենը ավելի ազատ է. կետադրական նշանի գործածությունը երբեմն պայմանավորվում է խոսքի բովանդակությամբ կամ խոսողի անհատական ընկալման ու մտածողության յուրահատկություններով: Դա է պատճառը, որ արևելահայերենում, որպես կանոն, հաստատված կետադրական առանձին կանոններից արևմտահայերենը դրսևորում է զգալի տարբերություններ: Դրանցից են՝

ա) Եթե ստորադաս (երկրորդական) նախադասությունը նախադաս է, ապա գլխավորից կարող է բաժանվել բութով. «Քանի չըսիմ՝ ինձի տերտ պիտի ըլլի» (Յամաստեղ), «Ես հայ եմ, տեր իմ, ես կը սիրեմ կրթութիւնը ու չեմ ալ վախճար աշխատանքէ: Եթէ պէտք ըլլա՝ թէ՛ կ'աշխատիմ ու թէ՛ դպրոց կ'երթամ» (Բ. Նուրիկյան), «Եթէ գիրք կարդալ կ'ուզես՝ սենեակդ գնա՛», «Երբ ժողովի կ'երթայի՝ հանդիպեցայ Աւետիսին», «Քու ունեցածդ այնքան է՝ որքան իմ ունեցածս» (ԶՄ), «Ինչ որ գիտես՝ մէկ մասն է հարցին» (ՅԲ), «Որ ասիկա չտեսայ՝ արինս գլուխս ցատքեց» (ԵՏ):

Բութ կարող է դրվել նաև երկրորդական նախադասության հետադաս դիրքով գործածության դեպքում՝ մեկնական շաղկապի վրա, ինչպես՝ «Ծովը ինկողը օձին կը փաթթուի, կ'ըսէ առածը, մեր մէջ ալ կարելի է ըսել թէ՛ անօթի մնացողը յեղափոխական կ'ըլլայ» (Ե. Օտյան):

բ) Երբ ծայնարկությունը գործածվում է կոչականի հետ, ապա ծայնարկությունից հետո ստորակետ չի դրվում. «Ո՛վ անմման աղջիկ, ինչո՞ւ չես խօսիր», կամ «Էյ ջա՛ն հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես» (տե՛ս 30):

գ) Գաղափարը մասնավորող արտահայտությունը (արևելահայ քերականություններում մասնական բացահայտիչը) երկու կողմից բաժանվում է ստորակետերով. «Ասդին, պատին տակ, խարխլիկ շէնք մը կ'երեւար», «Երէկ, կէսօրէ ետք, մեր խանութին առջեւ, մայթէն քիչ մը անդին, խոշոր ինքնաշարժ մը տապալեցաւ»:

դ) Եթե կամ շաղկապը միացնում է ճշգրտող բառը և ունի այսպիսին շաղկապի նշանակություն, ապա կամ-ից առաջ և ճշգրտող բառից հետո դրվում է ստորակետ՝ «Վանայ լիճը, կամ Բզնունեաց ծովը, Արեւմտեան Հայաստանի գեղատեսիլ վայրերէն մէկն է»:

ե) Շեշտ է դրվում ա՛լ (= այլեւս, աւելի), ո՛չ մէկ, գո՛նէ, մա՛նաւանդ բառերի վրա. «Ա՛լ ուրիշ դուռ մը չի գարներ» (Թկատինցի), «Հիշատակներս ալ կը փախչին ա՛լ հեռուն», «Ո՛չ մէկ կրցած էր անոր հարցումներուն պատասխան տալ»:

Երբ մի՛ արգելականի շեշտակիր ծայնավորը՝ ի-ն, սղվում է, նրա շեշտը հաճախ փոխանցվում է ծայնավորով սկսվող հաջորդ բառի առաջին վանկի վրա, օրինակ՝ մ'ա՛ռներ, մ'ը՛ներ, մ'է՛րթար, մ'ո՛ւտեր, կամ՝ «Մ'ի՛շխեր գոնէ տկար սրտիս...»:

Ձայնավորը չի սղվում այն դեպքում, երբ արտասանվում է ընդգծված շեշտադրությամբ. «Մի՛ ըսեր այդ խօսքը խայթող» (ՍԱ):

զ) Ապաթարց է դրվում կը և չը (չի) մասնիկների ծայնավորի գեղջման դեպքում՝ կը>կ', չը (չի)>չ', այսպես՝ չ'ըսեր, կ'ընէ, չ'ուզէր ևն, օրինակ՝

Լանջն է յուզեալ Ովկեանի մը նման.

Կ'ուզէ սիրել... համբոյրի մ'հետ նուաղիլ...

(Ս. Մեծարենց)

Արևմտահայերենում կետադրական անմիօրինակությունը, իհարկե, չպետք է վերագրել միայն լեզվի կանոնարկման կամ մշակման վիճակին: Խնդիրը, ինչպես վերը նշվեց, նաև բովանդակային և տրամաբանական շարժառիթներ ունի և ոչ զուտ լեզվական-շարահյուսական: Այդպիսին է, օրինակ, նաև հետևյալ հատվածի կետադրությունը, որը վերցված է արևմտահայ ճանաչված մտավորական գործիչ Արշակ Զոպանյանի խոսքից՝ նվիրված Խաչատուր Աբովյանին. «Այն կիներուն որոնք մայր պիտի ըլլան՝ գեղեցիկ պատկերներ կը ցուցնեն, որպէսզի նորածինը՝ գեղեցկութեան ցոլքին տակ՝ գեղեցիկ ծնի: Իր մեծ մարդոցը դէմքը պէտք է միշտ ներկայ ըլլայ ազգի մը աչքին, որպէսզի նոր սերունդները, անոնց ճաճանչումին տակ, ցեղին շնորհը անկորուստ պահեն: Ու չեմ գիտեր աւելի գեղեցիկ եւ գեղեցկացնող դէմք քան այս դիւցազնական գեղջուկին որ ամբողջ կեանքին մէջ գաղափարի մը սիրոյն

մաշեցաւ, եւ որ, հայրենի երկրին ծոցէն տաք տաք ժայթքած, շղթաներէն դեռ կասկապուտ ձեռուըները արիւնով շաղախուած հողին մէջը խրեց ու անո՛վ, այդ ցաւի ու կորովի հողով՛ը, կանգնեց իր անմոռանալի յիշատակարանը»¹²:

12 Արևմտահայերենի շարահյուսական առանձնահատկությունների մասին տե՛ս նաև Եղ. Տասնապետեան, Քերականութիւն, Անթիլիապ, 1990, Կ. Առաքելեան, Արդի հայերենի քերականութիւն, Գ Գիրք, Պէյրուս, 1998, Ա. Սարգսյան, Գրական արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական համակարգերի զուգադրական քննություն (սեղմագիր), Երևան, 1998:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղեան Մ., Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արարատ», Էջմիածին, 1897:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
4. Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը... Ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հատոր II, Երևան, 1974:
6. Աբրահամեան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ., Հայերեն լեզուի դասագիրք, Երևան, 1966:
7. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Երևան, 1972:
8. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Երևան, 1975:
9. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, 1951:
10. Աճառյան Հր., Քննություն պոստհայ բարբառի, Երևան, 1941:
11. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր I, Երևան, 1952:
12. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր II, Երևան, 1954:
13. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր IV, Ա մաս, Երևան, 1959:
14. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
15. Առաքելեան Վ., Արդի հայերենի քերականություն, Բ Գիրք, Պէյրուք, 1998:
16. Առաքելեան Վ., Արդի հայերենի քերականություն, Գ Գիրք, Պէյրուք, 1998:
17. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983:
18. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
19. Գազանճեան Յովհ., Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910:
20. Գազանճեան Յովհ., Լեզուաբանական, «Մասիս», Կ. Պոլիս, 1901:
21. Գայաեան Հ., Բառարան-գանձարան հայ լեզուի հոմանիշներու, Գահիրե, 1938:
22. Ջապել Հ. Ասատուր, Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, Բ գիրք, Կ. Պոլիս, 1915:
23. Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը XVII–XVIII դդ., Երևան, 1979:

24. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978:
25. «Ծաղիկ», Կ. Պօլիս, 1895, թիւ 1:
26. Մարգարյան Ա., Հայերենի անկանոն բայերի զարգացումը, Երևան, 1961:
27. Մելքոնեան Զ., Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրուս, 1987:
28. Նազարյանց Ստ., Վարդապետարան կրոնի, հասարակաց հայախոսությամբ, մաս առաջին, Մոսկվա, 1953:
29. Շահբազյան Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Երևան, 1963:
30. Չոլաքեան Յ., Հայերենի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000:
31. Պաղտասար Դպիր, Գիրք քերականութեան, Կ. Պօլիս, 1760:
32. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:
33. Պետիրեան Պ., Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Պոստոն, 1993:
34. Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985:
35. Սարգսյան Ա., Գրական արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական համակարգերի զուգադրական քննություն (սեղմագիր), Երևան, 1998:
36. Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Թուրքերենի դասագիրք, Երևան, 2001:
37. Սաքապետոյան Ռ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004:
38. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
39. Տասնապետեան Եդ., Քերականութիւն, Անթիլիաս, 1990:
40. Քիրքճեան Յ., Նոր քերականութիւն հայերէն լեզուի, Աթէնք, 1989:
41. Քոսյան Վ., Արևմտահայերենի բառակապակցությունները, Երևան, 1986:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԴՂ — Կ. Առաքելեան, Ա. Ֆլստըզեան, Դիւրին հայերէն, Ա մաս, Բ մաս, Պէյրութ, 2004:
- ԶՍ — Զ. Մելքօնեան, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրութ, 1987:
- ԵՏ — Եդ. Տասնապետեան, Քերականութիւն, Անթիլիաս, 1990:
- ԿԱ — Կ. Առաքելեան, Արդի հայերէնի քերականութիւն, Ա, Բ, Գ, Պէյրութ, 1998:
- ՀԳ — Յովհ. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:
- ՀԶ — Յ. Զիւրքճեան, Նոր քերականութիւն հայերէն լեզուի, Աթէնք, 1989:
- ՀԶ — Յ. Չոլաքեան, Հայերէնի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000:
- ՇՇ — Շահին Շահնուր, Քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի, Իսթանպուլ, 1970:
- ՊՊ — Պ. Պետիրեան, Եկէք ճիշդ խօսիմք ու գրեմք, Պոստոն, 1993:
- ՍԱ — Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1968:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ներածություն	4
Գրական արևմտահայերենի ձևավորումը	4
Արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերությունը և դրանց մերձեցման խնդիրը	13
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	16
Ներածական մաս	16
Խոսքի մասեր	27
Գոյական անուն	36
Գոյականի թվի քերականական կարգը	39
Գոյականի առկայացման քերականական կարգը	44
Գոյականի հոլովի քերականական կարգը	54
Հոլովում	66
Ածական անուն	86
Թվական անուն	93
Դերանուն	99
Բայ	125
Բայի կազմությունն ըստ խոնարհումների (լծորդությունների)	126
Բայի սեռը	139
Բայահիմքեր	146
Բայի արտահայտության ձևերը. անդեմ և դիմավոր ձևեր	150

Բայի անդեմ ձևեր կամ դերբայներ	151
Բայի դիմավոր կամ եղանակային ձևեր	164
Ըղծական եղանակ	165
Սահմանական եղանակ	168
Չրանայական եղանակ	184
Երկրորդական վերլուծական (բաղադրյալ) ժամանակներ	186
Բայի խոնարհման հարացույցի ընդհանուր պատկերը	188
Աններածանց (պարզ) բայերի դրական խոնարհումը	188
Սոսկածանցավոր բայերի խոնարհումը	193
Սոսկածանցավոր բայերի դրական խոնարհման ընդհանուր պատկերը	194
Պատճառական բայերի խոնարհումը	201
Կրավորական բայերի խոնարհումը	204
Անկանոն բայեր	206
Պակասավոր բայեր	227
Ժխտական խոնարհում	237
Մակբայ	247
Կապ	251
Շաղկապ	256
Եղանակավորող բառեր	260
Չայնարկություն	262
ՇԱՐԱՋՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ	263
Պարզ նախադասություն. տեսակները	263
Բարդ նախադասություն	275
Կետադրություն	278
Գրականություն	281
Համառոտագրություններ	283

ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Համակարգչային ձևավորումը՝
Վիտալի Ասրինի**

**Սրբագրությունը՝
Լիանա Սիքայելյանի
Գոհար Կիրակոսյանի**

**Տպագրությունը օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը օֆսեթ: Ծավալը՝ 18 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ:**

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ

**0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am**